

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16556

361

2.25

1913

20847



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԳՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

[1906-1913]

Միո-Մի-նջ
Չոր-Մի-ն է

ԳԱՀԻՐԸ



≡ 1 MAR 2010

361
Հ-25

Կր



ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹԵԱՆ

Ո Ս Կ Ե Մ Ա Տ Ե Ա Ն Ը

1906—1913



Տ Պ Ա Ր Ա Ն
Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

20847


361
2-25

2002



ԵՐԹՆԱՄԵԱԿ
Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Ե Օ Թ Ն Ա Մ Ե Ա Կ

Հ . Բ . Ը . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Եօթը տարի առաջ . . .

Հայկական ճգնաժամին ամենէն մասշտաբային ու յուսակաւոր շրջանն էր :

Հայութիւնը, սարուածակորոյց նաւու մը պէս, անողոր ճակատագրականութեան մը երկնած անվերջ ալեկոծումներուն մասնուած, Երկրին մէջ իր յաւերժացող հոգեվարքին խուլ հռչակներովը հազիւ կը խզէր իր խեղդուած բողբոջին եղբրական լուսթիւնը, մինչ Արտասահմանի հեռուոր հանդրուաններուն վրայ ան կ'ապրէր խրոջմը մըտանքի ամենէն ահաւոր տագնապը որ երբէք արուած ըլլար իրեն կրել . . .

Հայրենի հորիզոնները մթամած, անոնց վրայ հորանոր աղէտներու պակուցիչ մղձաւանջը միայն կը յածէր, սպաննական :

Յոյսի ս'չ մէկ նշոյլ, ս'ր կողմ ալ դառնար հոգեհեռու. ամենքէն լքուած, ուրացուած, դատապարտուած, Հայութիւնը միւ միւսակ կը մնար՝ Համիտեան Բռնապետութեան անաղորոյց հալածանքին տակ, և ի զուր գօտեպնդման ու կազդուրումի նոր կուտան մը կը փնտռէր իր շորակին :

Ետին, թաղուած երազներու գերեզմաննոց մըն էր ամբողջ անցեալը, սպարզիւն զոհողութիւններու, վատնուած անձնուիրութիւններու, խորատուած կորովներու վիթխարի աւերակոյց մը . . . Իսկ ապագան՝ ալքամերձ գերիկն էր միշտ անծանօթ արհաւիրքին :

Քանն տաժանակիր տարիներու արիւնագանդ փորձաութիւն մը կը ճնշէր Հայ Մասնուին վրայ՝ խուճապական զանազանքի ու ցաւազին չուարումներու ենթարկելով զայն յաճախ :

Ի՞նչ ընել, ս'ր գիմել, ս'ր ճամբան ընարել, կը թուէր հարցնել Հայ Ազգին ինքզինքին, և չէր գտներ ստոյգ ուղեգիծ մը փրկութեան տաճնորդող կամ գէթ իր պարտաճամ ու խարխափուն քայլերը վաւանդներէն ու դարաններէն զերծ պահող . . .

57569-ան



2932-յ1

Ո՛չ մէկ յե՛նարան, ո՛չ մէկ հաստատուն կայան, ամէն քայլի՛ անդո՛ւնող . . . Հարիւր հազարներու մարտիրոսացեալներ նուիրազործեալ մեր Դատին հետապնդման մէջ նահանջը անօգուտ ու անպատիւ դատաւարութիւն մըն էր, անընդունելի՛ զէթ այն սերունդին համար որ 95—96 ի աղէտներէն վերապրեցաւ, զաղարները նուազումներ էին, իսկ խիզախումները՝ կամաւոր մահացումներ . . .

Խեղայեղ, Հայն ինքն իր մէջ կը դարձնէր մերթ իր նայուածքը, աղւաղին ներքին կեանքի իրականութեան խորքը կ'որոնէր անձկազին, և հոն ալ, արի ու անձնազո՛ւ փոքրամասնութեան մը յուսահատական մաքառումէն զատ, զրեթէ ոչինչ կը գտնէր սրտապնդող ու խրախուսիչ:— Յեղին կենսունակութիւնը ջլատուած, իր խաղաղ-զարդացման ու վերականգնումի գործը խախտուած, անբարոյացումն ու աշխատութեամբ իր հողին մէջ բոյն դրած, հայրենի սահմաններէն ներս՝ զլիւնն ու մէջքէն զարնուած, ընկճուած, անտեսապէս քայքայուած ու մտաւորապէս սնանկ, իսկ Արտասահմանի մէջ՝ պառակտած, խրամատուած: Ամէն կողմ կուսակցական կիրքերու խժաւուր ու անուշիկ չզլծաղերծում մը, որուն հետապստ արտայայտութիւնը միայն կը բերէին մեր սարսաղի մամուլին օրկանները: Եղբայրաբաւ աստուութեան պոռչառքներ՝ Օտարութեան ազատ ճամբաներէն իրարու դէմ արձակուած, ու կոյնի եղբունական սուսուերը կուգար կ'անցնէր երբեմն բոլոր այդ ճղճիմ՝ գլուրառքներուն վրայէն, դա՛ւ փարի անունով Հայուն արիւնը Հայո՛ւ ձեռքով ալ թափել տալու համար . . .

Յեղափոխական երիտասարդութիւնը, իր ձեռնարկած հակայարման գործին սուջու իր զոնաբերած ուժերուն անբաւականութենէն յաճախ շայրացած, ա՛լ «կարմիր կը տեսնէր», և անձնատուր կ'ըլլար ժխտական մոլեղնութիւններու, որոնք կը յանդէն մինչեւ «քանդումը քանդումին համար» ոչնչապաշտ վարդապետութեան դաժան ու դժբաղդ սայթաքումներուն . . .

Իսկ, անդին, Ապահովութեան հանգստաւէտ կայքերու վրայ, ժողովրդային զանգուածեղ մեծամասնութիւն մը, հայրենիքին և անոր բաղմնակուտակ կարօտութեանց հանդէպ հեղզ, լճացած ու եսամոլ պլուրութեան մը մէջ, հեռոյձեռե՛ կ'ուժանար, կը խորթանար ցեղին համակրութիւններէն, կը քաշէր անկէ իր հուսկ յետին արմատներն ալ, և իսպառ կը գոցէր իր սիրտը անոր աղերախն ու կողկողանքներուն:

* *

Հայկական գիտակցութիւնը, իր այս գերազայն ստղծողին մէջ, ինքզինքը չի կորսնցուց, սակայն, բոլորովին անխիա չի խրեցաւ, անկանդնելիօրէն, այս նաւարկելութեան մէջ: Հայութիւնը՝ դարերու անարկու փորձանքներուն ու փոթորիկներուն մէջէն ապրեցնող խորհրդաւոր ուժը, անգամ մըն ալ, գորտլիկ եղաւ իրեն՝ կասեցնելու համար զինքը գահավեժներու եղերքին վրայ:

Յեղային այդ ինքնապահպան գիտակցութիւնն էր որ շատ անգամ հեղինակաւոր անհատներ ու ազգեցիկ խմբակներ կը ներշնչէր, կը մղէր հակազգելու, զէթ բարոյապէս, աղբային ներքին քայքայումի հոսանքներուն դէմ:

Ատենը մէջ մը, ասկէ, անկէ, աղպարար, զրեթէ մարդաբէական ձայներ կը լսուէին՝ հայկական կեանքը լեցնող քառսին մէջէն:

Ուժերու խտացման, ներդաշնակման, համագործակցութեան կամ հաւաքական ազգաշէն գործունէութեան մը պահանջը շեշտակի կ'արտայայտուէր, երբեմն, զանազան կողմերէ:

Արտասահմանի Հայութիւնը ինքնամիտիտումի այս անսխալական համազգային շարժումը կրնար իրադործել՝ եթէ ոչ պայքարի գեանի մը վրայ, բայց դանկ հայրենի գարմանումի, ամերմանն ու վերանորոգման բանաւոր ու արգաւանդ ծրագրի մը շուրջը:

Արտասահման տեղափոխուած թրքահայ մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչները սկսած էին խանդավառուիլ «ազգային մեծ կազմակերպութիւն մը» մարմնաւորելու գաղափարով . . . : Արիւար — «կուսակցական» ոգորուններու դառն բաժակը ցմբուր քամելէ վերադարձին — վենետիկի իր լքումին ու մենութեան մէջ, առաջին անգամ, ողկելից ու փայլալեց այդ գեղեցիկ խոնավը, որուն արձագանդ տուին, սրբերարար, եղիպտահայ հմայքատ հրատարակագիրներէն ոմանը:

Անա՛ թէ քաղաքական ի՛նչ պայմաններու և ազգային-հոգեբանական ի՛նչպիսի բնորոշ շրջանի մը մէջ, կատարուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան երկուսքը:

Անոր ծնունդը, սր տեղի ունեցաւ 1906 ի Հայկական Զատիկի օրը, Արտասահմանի Հայութիւնը, մօտէն թէ հեռուէն, հանդիսատես ըրաւ հասարակական հոյակապ երևոյթի մը, որուն նախընթացը գտնելու համար պէտք է կէս դար ետ երթալ մեր սրտամութեան մէջ, մինչեւ թրքահայ վերածնութեան վաթսուհական թուականները՝ երբ Ազգային Սահմանադրութիւնը ստեղծագործուեցաւ ի Պոլիս, մեր մտաւորական ռահիլերայ սերունդին և օրուան ակամաւոր ազգայիններուն միահամուռ գործակցութեամբը:

* *

1906 Ապրիլ 15 ի կիրակի օրը, Պօղոս փաշա Նուպարի նախաձեռնութեամբ և իր իսկ ապարանքին մէջ եղիպտահայ խումբ մը ջոջերու և մտաւորականներու անմուսանալի համախմբումը, որ հիմնարկէքն ըրաւ Հ. Բ. Ը. Միութեան, ապաքէն խորհրդահանչական արտայայտութիւնն էր հայ հաւաքական կամքին՝ ամէն հնարաւոր միջոցներով պահպանելու, ապահովելու ցեղին գոյութիւնը իր միակ հաստատուն կուուանին՝ հայրենի հողին վրայ:

Հ. Բ. Ը. Միութիւնը կուգար Ալիանս Իզրայէլիթի նախախնամական դերն ստանձնել հայ կեանքի անագնակարօտ իրականութեան մէջ: Իր այս կոչումը այնքան վճարոշ ու զերակիլ էր Միութեան հիմնադիրներուն մտքին մէջ, որ անոնք կանխախորապէս ուսումնասիրած էին Ալիանս Իզրայէլիթի կազմն ու գործունէութիւնը, և անոր վրայ ձեւած, մշակած՝ Հայկական «Ալիանս»ին Հիմնական կանոնադիրը:

Հ. Բ. Ը. Միութեան գոյատուութիւնը, սակայն, չի ստեղծեց, 1906ին, համազգային զրայացուց խանդավառութիւնը, որուն արժանի էր այդպիսի մեծ երևոյթի մը: Եւ այս պարագան ոչինչ ունի գարմանալի՝ երբ նկատի սունէնք հայկական ճգնաժամային կացութիւնը, և ատոր հանդէպ հայ պայքարող տարրերու տարամբժ մտայնութիւնը՝ Օմանեան Սահմանադրութեան նախընթացին:

Համիտեան բռնապետութեան պատերն ու պարխաղները ամէն կողմէ կը բանտաէին երկրի Հայութիւնը, և զայն կ'արդիլէին հաղորդուելէ ի՛ր իսկ ճակատագրին բաւրելաւման համար յլացուող խորհուրդներուն ու ջանքերուն: Անոր համար, Հ. Բ. Ը. Միութիւնը շրջափիւռ խաւարին մէջէն նշուող հեռաւոր փարոս մըն էր՝ որուն լոյսը հազիւ կը նշմարուէր իր խոչտանդուած, ճգնաժամ գիտակցութեան սրտոր աչքերէն:

Ասդին, Արտասահմանի հայ տարազիր համայնքները գիտակցական նուազ միլին միթնուրտ մը չէին պարզեր՝ հակառակ իրենց վայելած օտարախ «ազատութեան»,

և իրենց անջատ-անջատ լճացումին մէջ յարաշարժ ու ջրածագական գործունէութեան նօթ մը դնող «Յեղափոխականութիւնն» ալ խէթիւ կը նայէր («Բարեգործական»)ին, զոր տարապարտուց կը փորձուէր նկատել եզրափակայ նիւթազօր դասակարգին կողմէ ա- նուղղակի հնարք մը՝ զերծ մնալու իր նպաստապահանջ ամենի թախանձանքէն, ինչպէս նաև իրմէ դարձնելու ժողովրդային օժանդակութեան աղբերակները :

Հ. Բ. Ը. Միութիւնն, ուրեմն, իր ջերմեանդ ակոյեաններուն ու անձնուէր յարողներուն հետ՝ աւելի կամ նուազ յայտնի հակակիրներ ու հակառակորդներ ալ ու- նեցաւ, իր սկզբնաւորութեան այդ կարճատեւ շրջանին :

Բայց զորքը սովոր հիմերու վրայ դրուած էր, և անոր գործաւորները ցոյց տուին թէ՛ կանխատեսուած ու պատահական խոչընդոտներու առջև ընդկրկիլ չի գիտ- ցող հաւատքով մը ճամբայ ելած էին :

1906էն մինչև 1908, Հ. Բ. Ը. Միութեան առաջին մէկ ու կէս-երկու տար- ուան գործունէութիւնը չէր կրնար ունենալ, անչուչտ, այն ծաւալն ու շտապիք, որ վերջէն պիտի դային արդարացնել ու պահել իր վրայ դրուած յոյսերը :

Պարագաները ամենեւին ձեռնուռ չէին Հ. Բ. Ը. Միութեան բո՛ւն ծրագիրը կազմող հայրենաշէն ու ստեղծագործ աշխատանքին : Եւ եթէ տակաւին բաւարար մի- ջոցներն ալ չի պակսէին իրեն՝ «Բարեգործական»ը ուրիշ կամ աւելի բան մը պիտի չի թողատրուէր ընել, բայց միայն Ազգ. Պատրիարքարանի և Օտար Հիւպատոսարան- ներու միջոցով, յոյժ խորհրդապահօրէն, օդնութիւններ հասցնել մեր աղէտեալներուն, սովեալներուն ու որբացեալներուն :

Ազգային կրթական ու մշակութական գործը դադրած, խտիւսուած էր : «Միաց- եալ»ը թաղուած կը մնար 95-96ի մոխրակոյտերուն տակ . . .

Հազիւ, երբեմն, առիթներ կը ներկայանային Հ. Բ. Ը. Միութեան իր ճշմարիտ կոչումին համապատասխան ու վայել ժեպեր ուրուագծելու, սատարելով Հայաստանի ու Կիլիկիոյ կարգ մը գաղտնիներուն, կամ եղբայրական նպաստ մը հասցնելով կովկասի հայ-թաթարական ընդհարումներէն սպաւորուած աղղակիցներու :



Օսմանեան Մահմանադրութեան 1908ի անակնկալ յանուամը՝ երեսուներկու տարի առաջուան մեռելածնի իր գերեզմանէն՝ եկաւ յեզաշրջել հայկական կեանքի ճըզ- նաժամային ընթացքը, և մեզի համար բանալ, պահ մը, խաղաղ-դարդացման նոր շըր- ջանի մը փորձիչ հեռապատկերը :

Արտասահմանի մեր բոլոր կազմակերպութիւնները, յանկարծ, բաց գտան իրենց առջև ներսահմանի ճամբաները, և խելայեղ ոգևորութեան մը անտեղիտալի մղում- ներէն տարուած՝ գէպի հոն խուժեցին, երթալ խառնուելու համար ազգային մեծ գանդուածին, որուն անունով պայքարեր էին տանեակ տարիներ :

Արտասահմանեան յեղափոխականութիւնը «օրինակահաւորութեան» մարզին մէջ կը յայտարարէր մանկէ՛ թօթափելով իր վրայէն «գաւաղբական» սև վերարկուն, որուն տակ այնքան ատեն քանդուումն գործինները կրեր, տարեր էր :

Ազգային գտանքին ժամն էր որ կը հնչէր հիմա :

Եւ Հ. Բ. Ը. Միութիւնը, անխառն ու անվերապահ երանութեամբ մը, սղջունեց այդ ժամը :

Ուրեմն, ա՛լ վերջացած էր արիւնին մզձաւանջը, ա՛լ Հայկական Միութեան

ամբողջ ճիւղը պիտի չի կեդրոնանար, պիտի չի վասնուէր, սոսկ հայրենի անօթութեան, թշուառութեան ու որբութեան պատառ մը հացով կամ ծուէն մը լաթով օգնութիւն հասցնելու ապերախտ ու վերջապէս ապարդիւն գործին մէջ :

Հ. Բ. Ը. Միութիւնը — ի՛նչ կազդուր ու սրտապնդում իր հիմնադիրներուն համար — պիտի կրնա՛ր այնուհետև իր խակական ծրագրին իրագործմանը ձեռնարկել, շինել, կերտել, ստեղծագործել, փոխանակ դարմանելու, միւլթարելու, ողորմութիւն բաշխելու : Միութիւնը պիտի կրնա՛ր անմիջապէս նուիրուիլ հիմնովին վերականգնելու և ամբարանելու հայկական գոյութեան խախտած, փլիլած յինարանները, զօրավիզ կանգնելու հայ հողի աշխատաւորութեան, հզօրապէս օժանդակելու հայրենի կրթական գործին ու Հայաստանի տառապեալ ժողովուրդին տնտեսական, մտաւորական ու բա- րոյական դարգացման, պիտի կրնա՛ր, մէկ խօսքով, հայկական ընդլ մշակոյթին ամենէն ուժեղ աղղակներէն մին հանդիսանալ :

Վայրկեանը հանդիսաւոր էր ու արբշտիչ : Ազատութեան արշալոյսին առաջին հրաշափառ շողերուն տակ՝ հայ հանրային կիսամեռ կեանքը կը խմորուէր ու կը խալ- տար : Զարթօնքի ու վերկենցաղման տարերային շունչ մը կը փչէր, կը փոթորկէր մեր երէկին հակայական աւերակոյտը, դամբանաքարեր մեկդի կը գլորէր, և կորովի, հաւատքի ու խոնարհ անվթար մնացորդներ, սուրբ մասունքներ երեւան կը հանէր, ասպարէզ կարգալով անոնց՝ նորանոր թոխներու և բարոյական բեղմնաւոր նուա- ձումներու համար . . .

Ահա՛ «Միացեալ»ը — հին հերոսական օրերու այդ արի ու երախտաւոր ոահ- վերան — որ յարութիւն կ'առնէր Պոլսոյ վաղնջուց խանի մը մութ նկուղներէն, և եղբայրական գործակցութեան ձայն կուտար առոյգ ու անախական միութեան . . . Ահա՛ «Ազգանուէր Հայուհեաց»ն ու «Գպրեցասէր Տիկնանց»ը, որ անբը ետեւէն իրենց քը- րոջական աղու աղբերը կը հնչեցնէին, կը հասցնէին Եզրապոսի նորակազմ այլ խոստ- մընալից «Բարեգործական»ին, որուն հմայքը արդէն թափանցեր էր թրքահայ գեռ աղօտ դիտակցութեան մէջ :

Եւ Հ. Բ. Ը. Միութիւնը այդ արդար ու արժանաւոր հմայքին բարձրութեանը վրայ գտնուեցաւ առաջին օրէն, որ ազատ ու համարձակ մուտք գործեց մեր հայրենի իրականութեան մէջ :

Օսմանեան Մահմանադրութեան վաղորդայնին՝ ան իր առաջին թափով շուրջ 100,000 փրանքի նպաստ մը փութացուց բնագաւառի ամենէն անհրաժեշտօրէն օգ- նութեան կարօտ համայնքներուն :

Բայց Հայկական Միութիւնը, ազգաշինարեան իր երազուած, փայտալուծ մեծ առաքելութեան ճամբուն մէջ, հազիւ իր սկզբնական քայլերն առնել սկսեր էր՝ երբ յանկարծ ինքզինքը գտաւ Կիլիկեան Աղէտքին հանդէպ որ քստմնելի վայրագութեամբ մը կուգար մահացու հարուածը տալու ազատագրումի մեր խանդարտը պատրանքնե- րուն, հայկական վերածնող կեանքի շնչառութիւնն իսկ կասեցնել, վայրկեան մը, եւ մեզ ազդովին բռնադատել՝ վերականգնումի մեր կաթոլին ջանքերն ընդհատելով՝ նորէն մեր բոլոր անբաւական ուժերը փոխադրելու սուրներու և դիակներու վրայ, վերապրող- ներու գոյութիւնը գէթ ապահովելու համար :

Պէտք է խոստովանիլ թէ Հ. Բ. Ը. Միութիւնը ճշմարտապէս նախախնամա- կան պաշտպանութիւն մը հասցուց, տարածեց Կիլիկեան եզրաբաղդ աղէտեալներուն վրայ : Ինքն եղաւ Աստանայի գեռ միացող փլատակներուն շուրջ՝ հուրէ ու սուրէ ճու- դողբած հազարաւոր սովեալներուն օգնութեան առաջին ձեռք կարկառող : Հ. Բ. Ը.

Միութեան կեդր. վարչ. ժողովը՝ ազգային ահաւոր համեմատութեան առջև ստորա-
կան դարմանատար միջոցներուն անզորութիւնը նկատի ունենալով՝ ժողովրդային հան-
գանակութեան մը ձեռնարկեց նոյն հետայն, և աւելի քան 140,000 ֆրանքի դումար մը
զոյացուց ի նպատակ ազգային կրթիկոյ :

Բայց Հ. Բ. Բ. Միութիւնը՝ անխախտ ու անյեղլի սկզբունքներու վրայ կա-
ռուցուած՝ ամենազգուշորին յանձնառութիւններու հարկին տակ անգամ՝ չի շեղեցաւ
իր կանոնադրէն : Եւ հո՛տ էր, արդէն, դազանիքը իր տեւականութեան և իր ճիշդին
անսայթաք արդիւնաւորման : Ատոր շնորհիւն էր որ «Բարեգործական»ը՝ արհաւիրքի
ու անձկութեան օրերուն՝ կրկնակի սրբունքը սրբելէ և անոր անմիջական ամենէն
անհրաժեշտ կարիքները հոգալէ յետոյ՝ կարող եղաւ իր բաժինը արամազրել անոր որ-
բերուն ու որբեւայրիներուն համար ալ ստեղծելու ապրուստի մնայուն աղբիւրներ,
արհեստանոցի, որբանոցի և այլ ձեւերու տակ :

Դարձեա՛լ, շնորհիւ իր խնամտուն կողմակերպութեան և իր մեթոտիկ ու կան-
խատեաղ գործունէութեան էր որ Հ. Բ. Բ. Միութիւնը կարող եղաւ՝ հինգ տարիէ
ի վեր՝ կարգ մը կրթական ու բարեգործական հաստատութիւններ նպաստաւորելէ զատ՝
իր հաշտոյն հիմնել վարժապետանոց մը՝ վանի մէջ, Հայաստանի սիրտին վրայ, Որբա-
նոց մը՝ կրկնակի ամենէն քաջարի կեդրոններէն Տէօթ-Եօլի մէջ, վերջերս կեդր. Բարձր-
Նախակրթարան մը՝ Միւֆարդինի մէջ, ինչպէս նաև 34 Նախակրթարաններ, մեծ մա-
սամբ քրդախօս, արբախօս և թրքախօս հայ գիւղերու մէջ, առանց հաշուելու դրամի,
սերմոցի, կենդանիի, գործիքի ու հողի ձեւերուն տակ՝ հարկւրաւոր գեղջուկ համայնք-
ներու յատկացուցած իր բարերար, յաճախ փրկարար օժանդակութիւնները :

* *

Բայց Օսմանեան «Սահմանադրութեան» վերահաստատումէն ի վեր Հ. Բ. Բ. Միութեան ամենէն փառաւոր գործը, և ա՛յն որ բոլոր միւսներուն վերեւ կը սաւառ-
նի տիրական, անոնց հնարաւորութիւնն ու շարունակութիւնն իսկ երաշխաւորելով,
Հ. Բ. Բ. Միութեան այդ գերազանց գործը նոյն ի՛նքն եղաւ, անտարակոյս :

Հ. Բ. Բ. Միութիւնը ինքզինքը հրաշակերտեց, հզորացուց, հիմնապնդեց ու
ընդհանրացուց, և ասով անվիճելիօրէն՝ մեծագոյն բարեգործութիւնը կատարած եղաւ
Հայ Ազգին համար :

Արդարեւ, Օսմանեան Սահմանադրութեան վաղորդայնին էր որ «Բարեգործա-
կան»ը դուրս եկաւ Եգիպտոսէն տեսակ մը «Ազգատախտակ»ի իր բնագոտեւ սահ-
մանափակումէն և Հայկական «Ալիանս»ի իր համազգային հանգամանքն ստացաւ :

Եւ այդ բարձր ու պատասխանատու գերին ստանձմանը մէջ Հ. Բ. Բ. Միութիւնը
գուրկ չի մնաց բարոյական ու նիւթական թանկագին աջակցութիւններէ,
որոնք ամէն կողմէ իրեն արամազրուեցան, ինքնամատոյց :

Երէկուան անխուսափելի թիւրմացութիւնները՝ իրերու յեղակարծ բերումով վեր-
ցեր էին մէջտեղէն, և իրերաջլատ անջատումները գոյութեան իրաւունք հունէին այլևս :

Այս առաջ ու անխարդախ գիտակցութեան թելադրուած էր որ մեր պայքա-
րող մտաւորականութեան շարքերէն այնքան գործն ու ազգու ուժեր անշահախնդրօրէն
կը նուիրուէին հիմա Հ. Բ. Բ. Միութեան փրօփակմանին, դաւանելով ու հռչակելով
զայն իրերու թրքահայ խաղաղ-զարգացումին սատարել սահմանուած ամենէն նպաս-
տակարար հաստատութիւնը :

Ի՛նչ սխրանք ու խանդաղատում, Հ. Բ. Բ. Միութեան հիմնադիրներուն հա-
մար, լսել այդ համերգը Երկրէն թէ Արտասահմանէն ինքնաբերաբար բարձրացող
կղերայական ձայներու . . .

Ու Հայկական Միութեան շքեղ երազը հետզհետէ մարմին կ'առնէր, կ'իրականա-
նար, հայրենի ողորմուկ անկիւններէն մինչև անդրապարտեան մեր հեռաւոր տարա-
գրութեան հանգրուանները :

Կուգային, կուգային, ամէն կողմէ, համախմբուելու Միութեան անդորրաւէտ
զրօշին տակ, արձանագրուելու անոր ստեղծման մէջ, մեծ ազգաշէն համազոր-
ծակցութեանը համար :

«Բարեգործական»ին անձնուէր առաքեալները՝ Թուրքիա, Եւրոպա, Ամերիկա՝
ամէն ուր որ ներկայացան, սիրայօժար յարումներ ու սրտագին նուիրումներ գտան
կամ յարուցին, ապահովեցին իրենց քարոզած գաղտին : Ամենուրեք կազմուեցան Հ. Բ. Բ. Միութեան Մասնաժողովներ, որոնց թիւը 128ի կը հասնի այսօր, ճշտուած անդամ-
ներու ամբակուստ օգտակարութեամբ մը՝ Խաղաղականէն մինչև վասպուրական :

Հայկական Միութեան բանակին է ասիկա, կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝
Մեծ Բնասանիքը մեր Միութեան . . .

* *

Եւ ա՛հա՛ այդ բանակին, բարոյական այդ հսկայ ընտանիքին կամ այդ գաղափա-
րական կղերայակցութեան Ուրեւնաճեալն է զոր — Հ. Բ. Բ. Միութեան Եօթնամեա-
կին առթիւ — Միութեան անդամիկ Մասնաժողովս կուգայ ի լոյս ընծայել, արժանա-
ւորապէս յիշատակելու համար բոլորուած արդաւանդ շրջանը, իր լրիւ գեղեցկութեան մէջ
պատկերացնելու կատարուած եօթնամեայ գործը և անոր երախտաւոր գործաւորները :

Հ. Բ. Բ. Միութեան ՈՍԿԵՄՍՏԵԱՆԸ իցի՛ւ թէ ներշնչարանն ըլլայ անոնց
որոնք անդխտակ կը մնան կենսական գերին զոր հայ կեանքի պահպանման, ամբա-
պընդման ու վերածնութեան մէջ ստանձնած է Միութիւնը, և որուն աւելի ընդարձակ
ու խորունկ չափերով կիրարկման համար՝ տակաւին պէտք ունի ազգովին զո՛նորու-
թիւններու և անհատական մեծամեծ նուիրաբերումներու :

Հ. Բ. Բ. Միութեան ՈՍԿԵՄՍՏԵԱՆԸ իցի՛ւ թէ ներշնչարանն ըլլայ՝ մանա-
ւա՛նդ անոնց, որոնք, կենսապայքարի յաղթական նուաճողներ, կամ ի ծնէ՛ր ըսողա-
ւորուածներ, կեանքին վայելքներէն ու ետական գոհացումներէն իրենց բաժինը լայնօ-
րէն ստան են արդէն, և ամէն բանէ յախրացումը անխուսափելի տաղտուկին մէջ,
կրքեմն, անդխտակցօրէն իսկ, կ'երազեն, կ'ոգեկոչեն իրենց սեփական շրջանէն դուրս՝
անխառն պայծառութեամբ հանրային միջնորդ մը, ազնուական այլասիրութիւններու
չունչովը կազմուելու, խանդավառուելու համար :

Հ. Բ. Բ. Միութեան ՈՍԿԵՄՍՏԵԱՆԸ, քաղցր է մեզի մտածել, ամէն հայ
տան մէջ գուրգուրանքով բացուող գիրքը պիտի ըլլայ՝ որուն վրայ պիտի հակին, խան-
դաղատ նայուածքներով, ընտանեկան սեզանին շուրջ բոլորուող հայ երիտասարդ մայրն
ու իր մատող զաւակները, աշխատանքէն դարձող հայրն ու զպրօցական իր սղան, ա-
մենքը միասին, լամբարին մեղմուշ լոյսին տակ, դարձնելու համար այս հատորին
էջերը, անկէ ներշնչուելով աւելի խորապէս, աւելի հաւատարմօրէն սիրել իրենց ցեղը,
այլ մանաւանդ աւելի ջերմասանդ, աւելի ուխտուած անձնուիրութեամբ մը ծառայել
անոր . . . :

Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ
ԳԱԶԻՐԷԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ



ԵՂՆԱՅԻ ԵՄՔ ՄԵՆՔ...

Ի թիւ ձայնից բնութեան ձեկ,
 Թէ երգ բոլին սրտոգար,
 Մասուն կուսին ամենազեկ
 Թէ որ զերնն փափուկ էրնար,

Զունին ձայն մի այնքան սիրուն,
 Գան զանձկալի եղբայր անուն :

Տու՛ր ինձ քո ձեռնդ, եղբայր եմ մեն,
 որ մեղիս կին զատած,
 Բազդին ամեն սիւ չարաննեց
 Ի մի կամբոյր ցուին ի բաց.

Ընդ առեղոփ ի՞նչ կայ սիրուն
 Գան զանձկալի եղբայր անուն :

Մէկեկ յոգնիմ, մէկեկ ցաննիմ,
 Մէկեկ բափիմ մեր քեթններ,
 Ըզուուն բարեաց յեղինս հաննիմ
 որ կեանք առնուն Հայոց դաճեք.

Ընդ առեղոփ ի՞նչ կայ սիրուն
 Գան զանձկալի եղբայր անուն . . . :

Շք տվեալ Մայրն Հայասան
 Տեսնէ զորդիս իւր ֆոլէ ֆոլ,
 Մեքին խորունկ զերեքն դաման
 Գայրդ առաւուտաց բուծին ցոլով.

Ընդ առեղոփ ի՞նչ կայ սիրուն
 Գան զանձկալի եղբայր անուն :

Մէկեկ լացիմ մեն ի կրնում,
 Եկէ դարձեալ յար անբաւան
 Խառնենք զարտուր եւ զկեղուտ,
 որ բազմաճնունդ ըլլայ մեր ջան .

Ընդ առեղոփ ի՞նչ կայ սիրուն
 Գան զանձկալի եղբայր անուն :

Մ. ՊԵՆՏԵՔՍՏԻՆՆԱՆ

ԿՈՆԴԱԿՆԵՐ

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ

ՄԿՐՏԻԶ Ա. (ՀԱՅՐԻԿ)

ՄԱՏԹԷՈՍ Բ. (ԻԶՄԻՐԼԵԱՆ)

Վ.Ե.Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ





ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ
ՎԵՀԱՓԱՌ ՄԿԻՅԻԶ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-

ՄԱՆԵԼԻ ԿԱՏՔԷՆ ԱՏՈՒԻՈՅ ԵՊԻՍԿՈՍՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ԱՏԵԱՅՆ ՎԱՅՈՅ ԵՄՅՐԱ-
ԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՆԵՍԱՐ ԱՐՈՈՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՈՒՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԼԻԿԷ ԷԶՄԻԱՏԻՆԻ *Վերջապահ Կատարելու*
հայրերու Բարձրագոյն զորեանց Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու:

Գրով Եւրոպայի Երազմանք Կատարելու Ի Գաղտ
Եւ Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ

Գրով Եւրոպայի Երազմանք Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ

Գրով Եւրոպայի Երազմանք Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ

Գրով Եւրոպայի Երազմանք Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ

Տ

Գրով Եւրոպայի Երազմանք Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ

Մ. Կ. Կ.

Գրով Եւրոպայի Երազմանք Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ
և Երուսաղիմ Երկրի Երազմանք Եւրոպայի Եւ Երկրի Երազմանք
և Կայսրադրութեան Կատարելու Ի Գաղտ



2. Բ. Ը. Միութեան կեդրոնական դեմքը, անոր վերև սաւառնող և գալն նովանաւորող աննաւական բարձր նեղինակութիւնը կամ նրմայքն է նորին Վսեմութիւնը:

Անձնաւորութիւններ կան որոնց բարոյական նշանակութիւնը մեծական, գրեթէ նախախնամական բնոյք մը կ'ունենայ՝ իրենց վարկին կրքնամ նանրային նաստատութիւններու նամար: Այսպիսի բացառիկ անձնաւորութիւն մը կը ներկայանայ Վսեմ. Պօղոս փաշա Նուպար՝ 2. Բ. Ը. Միութեան տեսակետով: Բայց, նակատակ իր մեծանշան անունին, Ն. Վ. Պօղոս փաշա Նուպարի ցարտուն աննաւականութիւնը շատ քիչ ձանցեցուած, գրեթէ անձանօր մնացած էր, մինչև այս վերջին ատեններս, նայ ժողովուրդին, նոյն իսկ նայ մտաւորական ու առաջնորդող շրջաններուն:

Մեծ Նուպարին անդրանիկ զաւակը, հեռուէն, փարբամութեան, բնշեղութեան խորհրդապատկերի մը տպաւորութիւնը՝ գործած էր, ոսկի կուռք մը, ուսանց նամար, մեծանարուատ բարեբար մը՝ ուրիշներու աչքին: Մեր «բանասեր» նեղինակները մեկնեաւ մը երագած են իր մեջ, նանրային ծրագիրներու և ճարտարական «գիւտ»երու մեր զարմանազան ննարիչները, իր նասցեն կամ դուռք ափ առած են՝ իրենց վիթխարի և յանախ ունայն ըյացումներուն իրականացման միջոցներն ապահովելու նամար, նայկական պատրուկութեան ու բոնտութեան բոլոր ուխտաւորները անոր ուղղած են միշտ իրենց ամենէն պաղատագին ու անձկայրեաց կոչերն ու կողմուղանքները:

Եւ այսչափ:

Ո՛չ որ նետաքրքրուած էր գիտնայ, ճիշդիչ, ստուգել, քե անձնական ի՞նչ արժէք կը ներկայացնէր այս մարդը, որ նոյնպէս նոր մը տիեզերական նամարը ժառանգած է:

Կը բաւեր, սակայն, մեզի-երկու անգամ տեսած ըլլայ զինքը, փարջական ժողովներու կամ նանդիական նաւարումներու մեջ, կը բաւեր լսած ըլլայ իր խօսակցութիւնը՝ նաստատելու նամար քե Պօղոս փաշա Նուպար՝ նանձարեղ Նուպարին արժանաւոր զաւակի ըլլալի յետոյ՝ ի՞նչ գիճճճ այ է, մանաւանդ:

Ձինքը չի ձանցեցողներուն նամար խոյտ-

նորին մը կ'ըլլայ ան, առաջին նպումն իսկ: Երբէք չիք տպանր, կարծես, իր մեջ տեսնել մարդու այն տիւրարը որ ամենէն աւելի կը պակսի մեր ազգին: Հայ փաշաներ, պետական բարձր պաշտօնատարներ շատ ունեցած ենք, բայց մէկը չենք յիշեր անոնցմ: Գոր կարելի ըլլար Պօղոս փաշային նմանցնել: Բոլորն ալ արեւելեան ծանրութեան աւելի կամ նուազ քնեած կրեւոյրով մը կը ներկայանան, կը սողանցնին մեր մտածումին առջեւէն, ծանրութիւն՝ որ պիտի բուեր իրջութիւն, խոնարհութիւն բարգմանուիչ, բայց որ իսկապէս մտաւորական յուշութիւն, դանդաղութիւն, այլ մանաւանդ միջակութիւն կ'ներադրէ պարզօրէն:

Պօղոս փաշա Նուպարի իմացական ու ֆիզիքական գլխաւոր յատկանիշը անդային, անխոնջ, անդուլ, լսափիչ-ձակփիչ գործունեութեան իր արեւակարգ ու շուարեցուցիչ բնույնակութիւնն է:

Իր կեցուածքին, քայուածքին, նիստուկացին, մեքերուն ու մինչև իր քիճերուն մեջ կը տեսնէս մարդը—նամակ ջիւ, կորով, շարժում—որուն միտքը անդադրում նետապնդումի մը վազքին մեջն է, և որ վայրկեան մը իսկ պիտի չի կրնար լսմենայ անգրաղ, անխոյր կամ երագուն:

Գործ տեսնելու, այլ մանաւանդ նկայ գործեր վարելու նամար շինուած մարդն է ան, գերագանցապէս:

Տիրական բան մը կայ իր անձին վրայ, իր վարմունքին մեջ, որ անտար ուժի մը ներկայութիւնը կը զգացնէ քեզի: Հեղինակութիւնը բունի նագցուած վերարկուի մը պէս չի բաւիիր իր ուսերուն վրայէն, ինչպէս պատահած է ու կը պատահի բնկերային ու պաշտօնական բարձունքներուն վրայ այնքան ուրիշներու, այլ մեծավայելչօրէն պատշաճած է իրեն, մարմնացած, տարբարցած է իր խառնուածքին մեջ:

Հրամայական շեշտը այնքան բնական, ինքնարեր ու արժանաւորութեան նշանն է իր կողմն, որ չի վիբուտեր, չի խրաչեցնէր, չբող-վրդեցնէր, ինչպէս մեր միւս անցեալ ու ներկայ փաշաներու, պէլերու և մենծ-աղաներու պարագային մեջ:

Պօղոս փաշան իր փառայութիւնը իսկա-

պէս վայելցուցած է, ուսմկօրէն խօսելով:

Անիկա, բնա՛ւ Արեւելիցի, քիչ Հայ է,— անպատենութիւն մը բերես ազգային տեսակետէն, փանցի ասով Փաշան անկարող կ'ըլլայ երբեմն բախանցելու մեր մանաւոր նոգերանական վիճակներուն,— բայց՝ ինչ որ իր աննաւական արժանիքին նամար անմխտելի առաւելութիւն մըն է՝ Պօղոս փաշա, իմացականօրէն, կատարեալ երոպացիի, իմա՛ Ֆրանսացիի, տիպար մը կը ներկայանայ:

Ճարտարագետ, նախկին **Սանքրայիէն**, Պօղոս փաշա Նուպար անշուշտ ու յամառ աշխատող մը եղած է, այն տարիքէն իսկ ուր իրեն բողջակից կրիտասարդներ փայլքի ու յղիացման դիւրին ճամբաներուն մեջ կը փրնարուեն կեանքին իմաստը: Հնարած է կրկնագործական մեքենայ մը, որ զինքը Պատուոյ Լեգէոնի գնահատման արժանացուցած է՝ Ֆրանսական Կառավարութեան կողմէ, և իրեն ոսկի մետալներ արժած է երոպական գանազան ցուցանանդեաներու մեջ:

Էսպէս դրական միտք, Պօղոս փաշա Նուպար նետամուտ չէ եղած այս կրկին մեջ քաղաքական սոսկ **«Էֆօրաթիճ»** դերերու. իր ամենի գործունեութիւնը, կէսմտագետի և վարչագետի իր նուկու տաղանդը, տնտեսական, ճարտարարտեսական ու շանագիտական մարգերէն ներս, նակարական ձեռնարկներու մեջ փնտռած է միշտ իր կուռանը: Հոտ, մեծ ըյացումներու, յանդուզն խիզախումներու, անագին ծրագիրներու և յարթական նուաճումներու մարդն եղած է Պօղոս փաշան, նարստութիւն բտեղծագործող մը, ինչք կերտող (**Ֆօրչըն պիլիքըր**) մը՝ արեւմտեան ուժեղ **քրամքով**:

Իրրե պետական պաշտօնատար՝ կոչուած է գլուխ նանելու Եգիպտական Երկարուղիներու կազմակերպութիւնը, գոր փարած է մեծ ձեռննասութեամբ: Հիմնած է Աղեքսանդրիոյ Թրամպիչներու, Մենգալի նոյային շանագործութեան և Հեյիօթոյիսի նկայ բնկերութիւնները, այս վերջինը Պէյճիքացի նշանաւոր կէսմտագետ և միջինատեր Պառ.օն Անրէնի գործակցութեամբ: Ատնցմէ զատ՝ երկար տարիներէ ի վեր՝ իրրե ամենամեծ բաժնետէր և տնօրէն՝ կը վարէ Գանիրի Զուրբու Ընկերութիւնը, և խոշոր դեր ունի Եգիպտոսի գլխաւոր դրամատանց փարջական ժողովներուն մեջ, Պօղոս փաշա իր նօրնէն ժառանգած նարստութիւնը պատկառելի նամեմատութիւններու նասցուցած է իր իմացական կորովովն ու իր անխոնջ շանագործութեամբը:

Իրրե պետ Գանիրի Հայ Հասարակութեան և իրրե բարերար՝ իր ամենէն նշանակելի մեքն եղած է Գանիրի Գալուստեան Ազգ. Վարժարանի նոր շէնքին կառուցումը, որուն նամար մօտ 20,000 ոսկի գոնարեբած է: Ասիկ գատ իր նաշույն միշտ մեկ քանի նայ ուսանողներ գտնուած են Երոպայի և Ամերիկայի մեջ, շնորհի 20,000 ոսկի դրամագլուխի մը գոր այդ նպատակին յատկացուցած է: Մեր տեղական նպատամատոյց մարմիններն ալ շարունակ փայլած են Պօղոս փաշա Նուպարի կանոնաւոր օժանդակութիւնը:

Իսկ իր նանրային-բարեխրական գլուխգործոցը պիտի ըլլայ 2. Բ. Ը. Միութիւնը, որուն նիմնադիրն եղաւ, և որուն՝ իր նիւթական գոնողութեան կարեւոր բաժինէն զատ՝ իր անունին անագին վարկը բերաւ՝ իրրե գերագանցօրէն ապահովիչ ու անաւարկելի երաշխիք մը:

2. Բ. Ը. Միութեան 1912ի Ընդհանուր Ժողովը, Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի այս դերին՝ Միութեան գերագոյն շաներուն տեսակետով ունեցած կարեւորութեանը խորապէս գիտակից, միանամուտ խնդրեց նորին Վսեմութեան ընդունիլ **ցիլեան** նախագանդութիւնը իր նիմնած բարեգործական մեծ նաստատութեան, խնդիրք՝ որուն նաւանցաւ Պօղոս Փաշա, առանց կեղծ նամատարեան մը պայմանադրական առարկութիւններուն գիջանելու, ամենէն աւելի իր սրտին մօտ ունենալով գործին յարատեւութիւնը:

* * *

Ըսինք քե մտայնութեամբ ու խառնուածքով քիչ Հայ է Պօղոս փաշա Նուպար, ինչ որ չարգիլէր զինքը անկեղծ նայրենասէր մը ըլլալէ: Ուժացում մը չէ ասիկա, այլ դաստիարակութեան ու միջավայրի բերում մը: Յանցառ ու մակերեսային նամակրութիւններ միայն իր ցեղին նետ կը կապէին Պօղոս փաշան, որ խիստ սակաւ—ու պէտք է բսել նակ—քիչ մը գեշ կը ձանջնար իր ազգակիցները: Աւելի խորունկ ու գիտակից ծանօտութիւն մը—գեք իրեն նետ անմիջական մերձաւորութեան մեջ գտնուող ազգայիններու—անշուշտ շատ բան բարեխրած է վերջերս իր փոստութեան մեջ՝ նանդեպ իր նայրենակիցներուն և մասնաւորապէս Եգիպտանայ Համայնքին, որուն նամար յաւագոյն զգացումներ կը տաժէ:

Այս ճշմարիտ մտաւորականին կողմէ—որուն նամար երոպական մշակոյթը գաղտնիք մը բունի—իր ցեղին մտաւորական արժէքներուն

ու նոգեկան վիճակներուն անգիտուէր վերագրելի չէ, տեսակ մը մեծամիտ արհամարհանքի, որուն ճիշդ ծամածռութիւնները, դժբաղդարար, տեսած ենք Արտասանմանի մէջ մեր բազմադասներէն ոմանց վրայ—այլ պարզապէս նախքէն լեզուի և ազգային կեանքի անբաւական նշանաւորման:

Ու մարդը, յանձին Ն. Վ. Պօղոս փաշա Նուպարի, իր յատկանշական այս ընդհանուր գիծերուն մէջ ճանչնալէ ետքն է որ՝ մեր աչքին՝ վերին աստիճան տպաւորիչ, բնադրական, գրեթէ աշխարհը բան մը կ'առնէ իր ներկայ պարագան:

Յեղէն ու անոր անմիջական նամակներէն անկախաբար մեծցած, բարձրացած աննաան է, որ՝ ճակատագրական վայրկեանի մը՝ կը մօտենայ անոր սրտին, անոր յոյսերուն ու անձկութիւններուն խորնորանշանը կը դառնայ, և անոր արիւնքները ու եղբրական Գառը կը մարմնաւորէ աշխարհի գորաւորներուն առջև:

Ո՛րքան յոգիչ, ո՛րքան սրտագրաւ ու խանդաղատիչ է Մալք-Հալուրեան կարեւոր բանջըն ի վեր այս փարուքը իր մեկ փայլուն, շատ փայլուն զաւկին . . .

Երեսուեր նինգ տարիներ առաջ, այլ միևնույն ներքին ինքնաբեր ու անտեղիտայի մշտնջոյն էր որ եզիպտոսի օրուան մեծագոյն մարդը, Նուպար փաշա, իր փառքի պատուանդանէն վար կ'իջներ, խոնարհաբար դիմելու համար Գառ-Գառուի Պատրիարքարանը՝ որպէսզի իրեն իրաւաստիքն արուի Պերլինի վեհաժողո-

վին առջև ստանձնելու Հայկական Գառին պաշտպանութիւնը: Այն ատեն, մեր ազգային կասկածամտութիւնն ու ամբարտաւանութիւնը գրացան այդ մահաւան Մեծ Նուպարին, որ բերեա անփառունակ 61-րդէն տարբեր ու աչապէս դրական արդիւնք մը պիտի կրնար ձեռք բերել Պերլինէն, և որ մինչև իր կեանքի մայրամուտին՝ նոզիին խորքը պահնց այդ մերժման դատարարները:

Բայց, նո՛յնիսկ, երէ Նուպար իր այդ առաքելութեանը մէջ վարժապետեանէն աւելի բարեխառոյ արդիւնքի մը յանգած ջրլար, աստով պիտի չի դադրէր ազգային երախտագիտութեան արժանանալէ՝ անձնուիրութեան այն պատմական ապացոյցին համար գոր տուած պիտի ըլլար իր ցեղին:

Եւ նիմա, երեսուերինգ տարուան ժամանակամիջոցէ մը ըտույ, այդ ցեղին ձայնն է կրկին որ կը խօսի Նուպարի անդրանի՛ղ որդւոյն մէջ, զայն կը ստիպէ ամբողջ ձմեռ մը նրաժարիչ եզիպտոսի արեւէն, այնքան անըրածկա իր փափուկ առողջութեանը, և տարիէ մը ի վեր ձեռք առնել ազգային փրկութեան ուխտաւորի ցուպը, երբայ բաղխելու համար Գիւանապիտութեան դռներն ու ատեանները:

Ինչ փոքր, երէ այս անգամ այ փայփայտած, նետապնդուած յոյսերը իրականացանք չի պատկուին: Ազգը ձեռք բերուած առդիւնքին վրայ չէ՛ որ պիտի ջատի իր շնորհաբարտութիւնը՝ անո՛նց նանդկայ որոնք իր փրկագործումին աշխատեցան:

Հ Ի Մ Ն Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Կ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Դ Հ . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Բ Ն Ա Գ Ի Ի Պ Ա Տ Ա Լ Ե Ն Ը

Միաց, 15 Ապրիլ, 1906. Ա. Գառուի աստիճանից, այսպիսով
 իմ կեանքովս, ի Պերլինէն, Նուպար փաշայի հետ
 զանգուր, կարծիքով յանձնելու իմ հայրական իրաւունքս
 յայն համար միայն իմ կողմէն, անհրաժեշտ, լայն շնորհակցութեամբ և
 պայմանաւ միայն իմ կողմէն որ իմ կողմէն պարտաւոր իմ կողմէն
 և իմ այսպիսովս իմ կողմէն:

Եւ իմ կողմէն իմ կողմէն անհրաժեշտ իմ կողմէն
 Գառուի 10¹⁵ շնորհակցութեամբ իմ կողմէն 10 անգամ իմ կողմէն
 այսպիսովս իմ կողմէն կարծիքովս իմ կողմէն և
 ի Պերլինէն, 15 Ապրիլ, 1906:

Եւ աստիճանից իմ կողմէն իմ կողմէն

Ստորագրութիւններ
 Ա. Արտատար
 Ա. Արտատար
 Ա. Արտատար
 Ա. Արտատար
 Ա. Արտատար



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Ն Պ Ա Տ Ա Կ

- Ա.— Բնագաւառի հայ ժողովուրդին մտաւոր եւ բարոյական զարգացմանը նպաստել.
- Բ.— Անոր նիւթական եւ սննեսական կացութիւնը բարւոյնելու աշխատել.
- Գ.— Այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որ եւ է ձեռնարկ կամ երասարակութիւն բազայիւրել:

Ընկերութիւնը կապէս մարդասիրական է. որ եւ է քաղաքական հանգամանք չունի: Այս պայմանը երկնական է:

Ծ Ա Ն . — Հ. Բ. Ը. Միութիւնը, յօգուտ հայրենի հողին հաւատարիմ մնացած հայ ժողովուրդին, կը հիմնէ կամ նպաստով կ'օժտէ վարժարաններ, մատենադարաններ, արհեստանոցներ, աշխատանքի տուններ, հիւանդանոցներ, խնամատուններ, որբանոցներ և ուրիշ նմանօրինակ ազգ. հաստատութիւններ: Կ'օգնէ բնագաւառի կարօտ Հայերուն՝ առանց դաւանանքի և այլ խտրութեան: Կը պաշտպանէ զիւրացիները, անոնց հայթայթելով հող, սերմնացու, կենդանի և գործիք: Կը քաջալերէ տեղական արհեստագործութեանց զարգացումը, կը տարածէ զիւրասնտեսական արդիական գիտելիքները, կը ստեղծէ աշխատութեան և արդիւնաբերութեան նոր միջոցներ: Սովէ, հրդեհէ և ուրիշ ո և է աղէտքէ արկածեալներուն անմիջական օգնութիւն կը հասցնէ:

Մէկ խօսքով, իր միջոցներուն ներսը չափով, և իր բացորոշ նպատակին սահմանին մէջ, Միութիւնը կ'աշխատի Հայ տարաբախտ ժողովուրդին վիճակը բարւոյնելու, ապահովելով անոր կրթական զարգացումը և անտեսական բարգաւաճումը: (ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ, 30Դ. 1 ԵՒ 14)

Ա Ն Գ Ա Մ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հ. Բ. Ը. Միութեան կարող է անդամակցիլ, առանց սեռի, դաւանանքի, դասակարգի և կուսակցութեան խտրութեան, ամեն Հայ որ յանձն կ'առնէ յարգել Հիմնական Կանոնագիրը և կանոնաւորապէս նստուցանել իր անդամովնարը:

Ամեն անդամ, իր ընդունելութեան ժամանակ, պարտաւոր է վճարել մուտքի տուրք մը, որ 10 դրուշէ պակաս չի կրնար ըլլալ, և որ մաս կը կազմէ Հիմնական Գրամագլուխին, ինչպէս նաև անդամովնար մը, որ ամսական 5 դրուշէ պակաս չի կրնար ըլլալ, և որուն 5|6 ը մաս կը կազմէ Հիմնական եկամուտին: Արտասահմանի նամար նամարժէք տակ:

Առնուազն 1000 ոսկի նուիրողները «Բարեկար Անդամ», իսկ զեր 400 ոսկի նուիրողները «Պատուոյ Անդամ» կը նշանակուին: Միութեան բացառիկ ծառայութիւններ մատուցանող անձերուն եւս այս տիտղոսներէն մին կրնայ տրուիլ: (ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ, 30Դ. 3, 4 ԵՒ 5)

Կ Ե Դ Ր. Վ Ա Ր Գ. Ժ Ո Ղ Ո Վ

Կեդր. վարչ. ժողովը ներկայիս ունի 10 անդամ: Իր իննամեայ պաշտօնը կը կրնայ 1915 Մայիսին:

ՊՊՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ	Ա.Տեմապետ (ցիւանս)
ԵՍԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ	Փոխ-Ա.Տեմապետ
ԵՐՈՒՍԵՎ ԱՂԱԹՓՆ ՊԷՅ	» »
ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ	Ա.Տեմապիւր
ՄԿՐՏԻՉ ԱՆԳԲԱՆԿԱՆ	Գանձապետ
ԱՌԱՔԵՆ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	Խորհրդակալ
ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ՇԷՐԻՏՆԵԱՆ	»
Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՊԷՅ	»
ՏԻՐԱՆ ՓԻՆԿՊՈՍԵԱՆ	»
ՏԻՐԱՆ ԽԱՆ ՔԷՆԷԿԵԱՆ	»

}} Հաշուեցնելի.— Տ. ԷՏԿԱՐ ՓԱՓԱՋԵԱՆ
}} Գրամատուց.— ԳՐԷՏԻ ԼԷՓՆԷ



Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Գ Է Ո Ր Գ Ե.

Կ Ա Ռ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ

[Ն. Ս. ՓՅՈՒԹԵՒՆԸ ՄԱՍՆԱԻՐ ԿՈՆԳՐԵՍՈՎ, ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՆԵՆՅ ՎՍԵՄ. ՊՊՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՎՍԵՄ. ԵՍԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ, Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐԸ]

Վ ա յ Ր Կ Ե Ա Լ Ի Ր

Ազգերու գոյութեան ընթացքին՝ վայրկեաններ կուզան ուր անցեալն իր փլատակ երազներովը կը յառնէ ու թափահար կը խուժէ մեր յիշողութեան մէջ, մինչ ապագան յոյսի նոր հորիզոններ ու փորձիչ հեռապատկերներ կը բանայ մեր մտածումին առջեւ :

Այդպիսի վայրկեան մըն է զոր կ'ապրինք ազգովին :

Խռովքի ու ակնկալութեան այս օրերուն, երբ ցեղին հաւարական գիտակցութիւնը կը լարուի, կը սեւեռուի, երբ անոր սրտին զարկը, անոր հոգիին հերքը, աւելի ներսո՞վ կրաւորականութեամբ մը, կը զգանք մեր ներսիդին ու կարծես մեր քամակին վրայ, ս'վ է այն Հայը որ պիտի կրնար անայլալ աշխարհեան մը մէջ մեկուսանալ, կղզիանալ, եւ խուսափիլ կամ անմասն մնալ՝ ազգային ճակատագիրը վճռել սահմանուած վերահասութիւններուն անտեղիտալի սարսուռէն :

Հայկական ժամանակակից պատմութեան վերջին բաղորոշ վայրկեանն է ասիկա, խոտվազին վերյիշումի ու ինքնաբեր ոգեկոչումի գերագոյն վայրկեան, ուր գրեթէ կէս դարու մեր նախընթաց ձիգերն ու խանդավառ խոյանքները—յուսավերականներով ու դառնաժոյն վիժուածքներով միշտ պատկուած, աւաղ—կուզան կը տողանցին մեր առջեւէն... Վարձապետեան, Խրիմեան, Նուպար փաշա, Իգմիրեան, եւ ամբողջ թափօրները իրերայաջորդ մեր երիտասարդ երկու սերունդներուն... :

Ինչպէս չի յիշել բոլոր այս հոյակապ ետ-Կարծողները հայրենասիրական մեծ Պատանքին եղերական ճամբաներէն, ինչպէս, անգամ մըն ալ, չի վազել անոնց ետեւէն ու չի կառչիլ այդ նուիրական ուրուականներուն... :

Բայց ահա՛ կենդանի ու յարգուած սիւնէթներ կը ցցուին մեր առջեւ այդ նոյն պատմական ճամբաներուն վրայ՝ ուրիշ երբեմն Հայկական Գատին յուղարկաւորութիւնն անցաւ : Իսկ այսօր յաջողութեան դրական հաւաստիքներ, յոյսի ու հաւատքի խրատուսիչ ճայներ կը հասնին մեզի այդ կողմէն, նոյն իսկ Հայկական Ընդհանուր Միութեան Մեծ-Աշխատաւորներուն հեղինակաւոր բերնէն... :

Ի՞նչ կը վերապահէ մեզի Վաղը, որ մեր առջեւ ահաւոր ու առեղծուածային Սփինքսի մը պէս կը ցցուի, եւ որուն այսօրուան բարե-

գուշակ ժպիտը մեզ չի կրնար դեռ արգիլել համակուելէ՛ դաժան ու ցաւագին հնարաւորութիւններու անդոհովը :

Բայց մեր նպատակէն բոլորովին դուրս է հոս քաղաքական տեսարանի դերն ստանձնել, եւ անձնատուր ըլլալ Հայութեան բաղդը շքրջապատող վաղուան խորհուրդին խորը թափանցելու :

Թո՛ղ պահ մը լաւատեսութեան կազդուրիչ շունչ մը անցնի մեր ազգային միմտւորութեն, եւ մենք սարսուզին հեշտանքով մեր թորքերն ու հոգիները բանանք հաւատքի վերանորոգիչ ու կենարար այդ շունչին, որուն ա՛ն յնքան կարօտը բաշեցինք ազգովին տառապանքի երկտանեակ տարիներէ ի վեր :

Այժմ Համերաշխութեան սրտաուռչ ու կազդուրիչ համերգն է որ ահա՛ կը բարձրանայ մեր շուրջը, պայծառացնելով հայկական կեանքի ներքին իրականութիւնը՝ զայն երբեմն մըթագնող ատելութեան ու պառակտումի մուայլ, ջլատիչ ու հեղձուցիչ ամպերէն : — Ողջո՛յն հայ մտածումներու, կամքերու եւ կորովներու այդ արգաւանդ ու եղբայրական մերձեցումին, որ կրնայ մեծագոյն ազդակն ըլլալ մեր հայրենի ժողովուրդին անդորրացման ու բարօրութեան :

Հայ ժողովուրդին բարոյական, մտաւորական ու տնտեսական վերածնութեան ջերմեռանդ աշխատաւորներ, մեզի համար մէկ քաղաքականութիւն, մէկ բարենորոգում, մէկ վիճակի բարեշրջում կայ միայն, — ա՛յն որ պիտի կրնայ ապահովել մեր ցեղին խաղաղ զարգացումը, անոր անխափան ու հզօր վերկենցաղումն ու ստեղծագործ աշխատանքը :

Հ. Բ. Բ. Միութիւնը՝ հայրենի արհաւիրքի ու աղէտքի օրերուն՝ Թրքահայ տանջանահար համայնքներու համար դարձանումի ու օգնութեան անխոնջ ու փութաջան գործաւոր մը եղաւ, առանց երբէք մոռնալու թէ իր գերազանցապէս մշակութական դերը չէր սկսեր ու վերջանար քաղաքականապէս բացուած վէրքեր ու կարօտութեան վիհեր գոցելու մէջ :

Հ. Բ. Բ. Միութիւնը, որ իր հիմնական դաւանանքին զլիսաւոր սկզբունքներէն մին զըրած է քաղաքականութենէ հեռու մնալ, պիտի չի բաղձար, անշուշտ, ստիպուիլ ոճիրի քաղաքականութեան մը բռնաստեղծած ցաւերն ամորկելու մինչեւ վերջը :

Այս տեսակէտով՝ Օսմ. Սահմանադրութեան վերահաստատումը գործունէութեան ցանկալի թուական մը բացած պիտի ըլլար մեր առջեւ, եթէ Ատանան իր խուժողով զարհուրանքովը չի գար, յանկարծ, մեզ վերադարձնել համիտեսն անագորոյն օրերուն, եւ եթէ Հայաստանի ներսերը չի յաւերժացնէր գրկանքի, խոշտանգումի ու սպանդի չարաշուք բէժիմը :

Դէպքերու աննախընթաց գահավիժում մը մեր հայրենիքը կը դնէ, այս վայրկեանիս, նոր կացութեան մը առջեւ՝ որմէ կարելի է մեզի բանաւորապէս յուսալ թէ մեր ցեղին ինքնամփոփ ու անարգել բարգաւաճման բնականոն պայմանները պիտի ապահովուին վերջապէս :

Այս իրաւացի ու սրտագին ակնկալութեան մէջ՝ Հ. Բ. Բ. Միութեան շարքերը կը մտղմեն ողջունել ազգաշէն գործունէութեան աւելի լայն ու արգաւանդ ապարէզ մը, իրենց վաղուան ջանքերն ու զոհողութիւնները՝ հայկական իրականութեան մէջ՝ դրականօրէն արդիւնաւորուած տեսնելու միակ հոգեւին տենջանքովը :

Թո՛ղ գայ, Թո՛ղ գայ, ուրեմն, անդորրութեան ու խաղաղացումի մեծ առաւօտը, եւ իր անսահման լուսաւոր ժպիտը տարածէ մեր տարաբաղ ու տանջարեկ երկրին վրայ, որպէսզի, վերջապէս, հայ գեղջուկ օճախներուն ծուխը՝ գուլայ գուլայ՝ դէպի երկինք բարձրանայ օրհնութեան ու գոհաբանութեան խունկի մը հանգոյն, որպէսզի հայ մշակը՝ աւետաբեր արշալոյսներու պայծառութեանը մէջ՝ կարենայ իր արտերն երթալ աներկիւղ սրտով, իր գութանին լծուիլ եւ աւելի խորունկ հերկել իր արգասաբեր ակօսները, որպէսզի հայրենի ուստաններու անվրդով ծոցին մէջ հայ քաղաքակրթութիւնը վերստին փթթի անկաշկանդ, հայ գեղեցկութիւնը ծաղիկ եւ ուռճանայ, հայ ձեռքերը կերտեն ու հրաշակերտեն, եւ որպէսզի հայ հոգին խայտայ նորանոր կենսունակ ու յուռթի երկունքներու երանութեանը մէջ... :

Ահա՛ թէ ինչ խանդաղատագին թելադրանքներով ու անծկայրեաց եւ սարսուռ կարօտանքով կը համակէ մեզ ներկայ պատմական ու բաղորոշ վայրկեանը :

Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Ք Ա Յ Լ Ե Ր Գ Ը

Սովն էր սիրած ինչն Հայոցդուն ճեակը,
Հացի վերջին պատան հասած էր արդև,
Եւ յուսանաս՝ դիմումներէ դէս ու դէն,
Հէկն էր քաղուած սեւ մտածմանց յասակը :

— Վեր կաց, բռուս՛ս, վիճի գաւակ,
Վանէ քախիժդ անյուսութեան,
Շուս կը հասնի քեզ երկնատախ
Ձեռնն Հայկական սուրբ Միութեան :


Սովն է սիրած ինչն Հայոցդուն արհիկը,
Չուրում սուրբ անգալաւս էր գլխն յար,
Գեռ նոր լծվարն էին սարեք բռնավար,
Ձիկար նոյն իսկ սերմեցուի հասիկը :

— Վեր կաց, բռուս՛ս, հոգի գնակ,
Վանէ սարսուղ բռնութեան,
Շուս կը հասնի քեզ երկնատախ
Ձեռնն Հայկական սուրբ Միութեան :

Մուրն էր պատած ինչն Հայոցդուն նազը,
Գէք հուրն ուսման բոցավառէր իր հնոց,
Ձի պակսէր գէք մըքսի լոյսը իր սրոց,
Որ չի մարէր ցեղին հաւաստն ու կրակը :

— Վեր կաց, բռուս՛ս, լոյսի գաւակ,
Վանէ խաւարն սգիսութեան,
Շուս կը հասնի քեզ երկնատախ
Ձեռնն Հայկական սուրբ Միութեան :

Գ.Ա.ՌԻԷԼ, ԽԱՆՃԵԱՆ



Հայ եկեղեցականության ամենն պատկառելի դեմքերն մին, վերջին ներկայացուցիչը, բերես, նայկղերականներու այն նմաչրոս շարքին որ Շնորհախներով ու Լամբրոնացիներով սկսաւ:

Իբրև Երուսաղէմի նախկին միաբան՝ Խապետան Սրբազան այն նագուագիտներն եղաւ որոնք Ս. Յակոբի մտաւորական ամոնչն ամաչութեան մեջ գիտութեան ու գրականութեան ջանք շոյացուցին:

Պերճախօս, ինչպէս քիչերն են մեր բարձրաստիճան կրեան, իր բանին, ժեսերուն ու ընթացքին մեջ օժտուած է մարգարեական շնչով մը, որ զինք նին մեծվայելուչ ոճով Հայրապետ մը կը կացուցանէ:

Կիլիկիոյ Վեճ. Կարողիկոսը՝ ամեն յատկութենէ առաջ՝ կ'ընծայէ յանկուցիչ պատկերը նոգի մը, որուն կշռոյքը համակ օծուրիւնու աղապատանք կ'արտայայտէ իր հօտին:

Իր դերին վերջին կասկա յարմարած, իր նայրապետական պատուանդանին վրայ տիրականորէն կանգնած՝ նուրբանմարդն էան, որուն բեւերը անհունօրէն կը տարածուին, կարծես, Կիլիկիան աւերներուն, ցաւերուն ու որբութիւններուն վերեւ: Մեծ դեպքերն են որ կը յայտնագործեն մեծ նկարագիրները:

Ն. Ս. Օծուրիւն Սանակ Կարողիկոս՝ խաղաղ շրջանի մեջ կրնար պատուական հովուապետ մը ըլլալ: Բայց Կիլիկիան Աղէտն էր որ

դուրս ցարտեցուց իր նոգիկն այն գեղեցիկ առաքիւնութիւնները որոնցմով ամբարուած էր անհանձնախնովի գործունէութեան ու անձնուէր ծառայութեան ամբողջ համետ աչք արգասանք կեանքի մը ընթացքին:

Ծերացած արծիւի խելայելոց բեւարախում մը եղաւ ասիկա:

Աղէտքին վաղորդայնին էր:

Սոյ իր Վեճատունէն արիւնազանգ Կիլիկիոյ Հայրապետ ճամբայ ինկաւ իր ջարդուած հօտին վերապրոյ թեկորներուն օգնութեան հասնելու համար:

Իր սպիտակ ձիուն վրայ, իր սեւ վեղարին տակ պետք էր իրեն նանդիլաւած ըլլալ՝ Արնաւիքին ամաչացած ճամբաներուն վրայ, ճանչնալու համար զինք՝ իր խոխորեանը մեջ...

Կ'երբար լայնն ու գոռային՝ դեպի ամեն ուր որ արիւնին ցոյքը կամ ողջակեցին ծուխը կը կանչէր զինքը, կ'երբար բեատարած, արցունքի վերք դարձած աչքերով, իր դողդոջուն բռունցքը մերթ կարկառելով եղերական հորիզոններուն ու ճամբուն վրայ երբեմն կանգ առնելով՝ ծուխու համար դիակներուն վրայ մարդ գազաններէ յօշոտուած իր ցաւակներուն, որոնք փողոտուեր ու լափուեր էին գայլերն ու գիշակեր բուհուններն...

Ու կ'երբար, կ'իյնար իր ճողոպրած ժողովուրդին գիրկը, անոր հետ նեճկըտալու մեծ վիշտը ջարդուած Կիլիկիային:



Վ Ե Հ Ա Վ Պ Ա Ռ Ս Ս Հ Ա Վ Բ.
Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Ս Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ

Սանակ Կարողիկոս, վստմ կեցուածքով մը, տարաւ իր ծերունագարդ ճակտին վրայ Կիլիկիան մարտիրոսութեան փուշէ պատկը, և իր կրտս ուսերովը կրեց անոր խաչը...

Բայց Ն. Ս. Օծուրիւնը չընկճուցաւ աղէտքին անագնութեան առջեւ: Անկիւա մարտուեցաւ ջարքի մուսչ գորբիւններուն դեմ որ իր հօտին վերականգնումը անկարելի դարձնել կը նկրտէին. պատերազմական ատեաններու և անոնց հրամանով ցցուած կախաղաններու շուքն մինչև որբանոցներու ողորմուկ յարկերուն տակ՝ տիրութիւն ըրաւ Կիլիկիցիին: Եւ րադումի ու դարմանումի աղէկարշ շրջանէն վերջն ալ՝ իր բոլոր նոգեան ջանքերովը նուիրուցաւ Կիլիկիոյ Հայրեան տեսնական, բարոյական ու կրթական վերածնութեան գործին, որ այսօր բաւական միջրարական վիճակ մը կը ներկայացնէ:

Կիլիկիան աղէտին մեջէն է որ Ն. Ս. Օծուրիւնը հաջորդուցաւ ու յարեցաւ Հ. Բ. Բ. Միութեան: Եւ Հայ Հայրապետին ու Հայ Բարեգործականին այս նանդիլուծմը՝ ազգային վերաշինութեան ճամբուն վրայ՝ խորհրդաւոր սկիզբն եղաւ փոխադարձ անասման համակ-

րութեան մը և յարասն գործակցութեան մը:

Սանակ Կարողիկոս այնքան աւելի սրտագին փարեցաւ Հ. Բ. Բ. Միութեան որբան անոր մեջ կը տեսնէր իր աղէտեայ հօտին փրկագործմանը շուսպող առաջին կազմակերպուած ազգային մարմինը, այն որ ճշմարիտ նախանամութիւն մը հանդիսացաւ Ատանայի գարնութեան վերապրոյ սովեայներուն, որբերուն ու որբուայրիներուն համար:

Կիլիկիոյ Կարողիկոսը, ի վիճակի ըլլալով ամենն աւելի իրագելորէն գնահատելու Հ. Բ. Բ. Միութեան գործը, ուզեց իր անձնական օրինակովն աջակցել անոր փրօփականտին, և իր ամբողջ «դրամը», 200 ոսկի, դրա Բարեգործականի սեղանին վրայ: Չոնարեւութեան այս սրտաշարժ ժեսը Ն. Ս. Օծուրիւնը կը դասեր վերջապէս Միութեան Պատուոյ Անդամներուն ընտանիքին մեջ:

Եւ այսօր Հ. Բ. Բ. Միութիւնը, ամեն անգամ որ իր նոգածու նալուածքը կը դարձնէ դեպի Կիլիկիա, խանդաղատագին նպարտութեամբ մըն է որ՝ իր գործիչներուն, իր ատոյկաններուն առաջին շարքին վրայ՝ կ'ողջունէ այլուր Հայրապետ մը...



Հ Ա Յ Ե Բ Ա Ր Ե Պ. Ը Ն Պ Հ. Մ Ի Ո Ղ Ի Ք Ս Ա Ն
Տ Է Օ Ր Թ - Ե Օ Լ Ի Բ Է Լ Է Կ Ե Ա Ն Ո Ր Բ Ա Ն Ո Ց - Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ը

Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնական Վարչութեան ամենէն պատկառելի դէմքն է— երբ ոչ ամենէն իրականը — Ե. Վ. Եագուպ Արքին Փաշան, որ՝ նիւնարկէրի առաջին օրէն՝ կարողին նոգածութեամբ մը քայլ առ քայլ նետեամբ է Միութեան աշխատանքին, և օրէնքի ու գիտութեան մարդու կրկնակ գերագանց քմախնդրութեամբ մը, նկատ է անոր կանոնադրական ուղղութեան ու նիւնական սկզբունքներուն անբերի ու անխտոր կիրարկումին:

Միութեան վարիչ շրջանակին մէջ իր դերը շատ մեծ է բարոյական տեսակետով. անկէկա հոյակապ Մենտոր մըն է որուն քեյաղբութիւնները պայծառ իմաստութեան մը դրոշմը կը կրեն միշտ, և որուն նեղինակութիւնը երբեմն կը փոխարինէ անձնական նմայքը բացակայ Նախագահին, և կ'ամբողջացնէ անոր նոգելան ու մտաւոր բոխքներն՝ երբ ներկայ է ան:

Վ. սեմ. Եագուպ Արքին Փաշա ուրիշ մեծանուն ու մեծարժէք անձանք մը մնացած է, սակայն իր ցեղին ստուար մեծամասնութեան նամար:

Գահիրեցիները միայն մտեռն կը ճանչնան իր ինքնատիպ ու առինքնող դիմաստուերը, վասնզի յաճախ կը տրուի իրենց նամդիպիլ. քաղաքին կեդրոնական փողոցներուն մէջ, Եագուպ Արքին Փաշային, որ ձեռքերը ետին միացուցած՝ ձիգ ու կորովի քայլածքով մը՝ կ'անցնի կ'երբայ, իր շարժի ժխտին անուշաղիք, իր ակնոցներուն տակէն յոգնած աչքերը, կարծես, նորիզոնին սեւեռած . . .

Բարձր նստակի մը վրայ— որ նստակալ ետրանսանմանայ տարիքին՝ կը մնայ գեղարդէ տակալին— գիտնականի յատկանշական գլուխ մը:

Գիմագծերով քիչ մը նանգուցեալ Նուպար փաշային կը նմանի, նուպա նանձարեայ, բայց աւելի soft, խոնուն ու ինքնամիտի արտայայտութեամբ մը. իր շիտակ դրուած մեծ գէշին տակ՝ մեր կրկնման մտածման վարպետներուն՝ պատկերներուն երեւոյթը կը փշեցնէ:

Ե. Վ. Եագուպ Արքին Փաշա եզիպտոսի պետական շրջաններուն մէջ ամենէն աւելի յարգանք ու ժողովրդականութիւն վայելող դէմքերէն մին նամդիսացած է: Եկող գացող Անգլիական Ներկայացուցիչներու և նիւն Լորտ Բիչներին մտերիմ բարեկամը եղած է ան:

Երկար տարիներ վարած է Հանրային կրթութեան Նախարարութեան Սու-Սըբիէքէն:

Տ'Էրսի բարձր պաշտօնը, որմէ ինք նրամարած է՝ զգալով քէ այլես նկարագիրն ու արժանիքը չէ՝ որ պիտի գերակշռեն եզիպտոսի վարչական մարզին մէջ, Անգլիական նամագրաւ ու տարամերձ ազդեցութեան տակ:

Մեծ նկարագիր մըն է Եագուպ Արքին Փաշան: Բաղաքական պարկեշտութեան, ուղղամտութեան ու արժանապատուութեան նագուագիւտ տիպար մը, մանաւանդ այս կրկին մէջ, ուր պետական մարդոց նամար՝ աշխարհն նշտ են խոջմտանքի սակարկութիւնները: Եագուպ Արքին Փաշայի բարոյական այս անկաշտուելի անկախութեան մեծագոյն ապացոյցն է արդէն իր խրոխտ մեկուսացումը պաշտօնական սակարկէզէն, երբ՝ քիչ մը դիւրարեքութեամբ, քիչ մը նաճոյակատար գիշոյութեամբ՝ կրնար դեռ փառաւոր ու շանարեք արոսներ գրաւել նոն, շնորհիւ այն անասնման նամակրանքին գորտեղացի ժողովուրդը իրաւամբ կը տածէ իր անձին նկատմամբ:

Բաղաքացիական շիտակութիւնը այնքան շեշտուած է իր մէջ, որ երբ վերջերս Ե. Վ. Պօղոս Փաշա Նուպար, Փարիզէն, իմացուցած էր իրեն քէ անյապաղ իր ներկայութեանը պետք պիտի ունենար Ազգային Պատուիրակութեան մէջ, Եագուպ Արքին Փաշայի առաջին խնամքն եղաւ՝ իրեն նախկին պետական պաշտօնատար տեղական կառավարութեան նաշորդը քէ կոչուած է եւրոպա մեկնիլ իր ազգակիցներուն դատին ծառայելու նամար, ինչ որ՝ աշխարհն նամակի չէր կրնար բլլայ եզիպտական վերին շրջաններուն:

Հնագեռ գիտունի միջազգային նամար մը կը վայելէ: Նախագահն է կարգ մը գիտնական ընկերութիւններու, մասնակցած է գանուզան գիտնական նամածողութիւններ, և բրած է ննագիտական դասախօսութիւններ, որոնք մեծ գնանատման արժանացած են՝ ժամանակին տեղական մամուլին կողմէ նրատարակուելով: Արեւելեան գրոյցներու և աւանդակներու քրքրանակրէն նատորիկ մըն այ յոյս ընձայած է, որ՝ զուրկ չէ շանէլանութենէ— մանաւանդ օտարներուն նամար— և նրապոյրէ այ՝ իրեն գիտնականի մը գրական քմայքը:

Եագուպ Արքին Փաշա խիստ ինքնուրոյն աննատականութիւն մըն է: Իրմէ խոնարհներուն նետ իր վարուելակերպին մէջ նեղինակատրբան մը կայ, որ ոմանց գարմանք պատճառած

է. բայց գիտնականներն ունին յաճախ այդ անմեղ ու վերջապէս նանդութեան տարօրինակութիւններէն, որքան այ աննաճոյ բլլան:

Իր կեանքը իմաստունի մը, յարատե ու անխոնջ ուսումնասիրողի մը կեանքն է, որ մեծ մասամբ կ'անցնի իր նոյակապ մատենադարանէն ներս, զիրքերու և ձեռագիրներու մէջ խորասուզուած: Ընկերային անխուսափելի պարտաւորութիւններն ու առօրեայ առողջապահիկ պտոյտները միայն գիւնքը կը բամեն իր սիրական գրադումներէն: Կ'ըսեն քէ Նորին Վսեմութիւնը գիտնականներու ընտանիք մը կազմած է, քէ իր իմաստնափայլ կիներն ու դուտորն այ ամեն օր՝ իրեն նետ՝ երկար ժամեր կը բամեն իր շքեղ գրաստան մէջ, ուր ճաշի ժամերու զանգակը կուգայ սրափեցնել գիրենք ջերմեռանդ ընթերցանութիւններու խորասուզումէն՝ երբայ բոլորուելու նամար ընտանեկան սեղանին շուրջը:

Եագուպ Արքին Փաշա այն է եզիպտանայ կարողիկ Հասարակութեան նամար, ինչ որ Պօղոս Փաշա Նուպար՝ մեր մէջ, լուելայն նսկըցուած, ընդունուած, նուիրագործուած Ազգայեռ մը:

Այս գերագանց դիրքը երբ այլապէս բացառիկ իրաւատրութիւններ չընձայեր միշտ ենրակային, կը դէն անոր վրայ՝ նամայնքին նանդեպ՝ բարոյական մասնաւոր պարտաւորութիւններ, որոնցմէ խուսափող մը չէ Եագուպ Արքին Փաշա: Հակառակ իր նամատ նարատութեան՝ Նորին Վսեմութիւնը՝ դեռ վերջին ծնունդին՝ 1000 ոսկիի նուիրատուութեան մը ժեսն բրաւ, ի նպատտ տեղոյս Հայ-Կարողիկ եկեղեցոյ շինութեան:

Հին նարագատ Հայու տունիկ շնորն մը կը պարտը իր բովանդակ անձը: Մխիբարեաններու նոգին կը բնակի իր ներսիդին: Բաւական տեղեակ է նախերեմին, մանաւանդ անոր գրաւոր դարձուածքներուն, գորս կը սիրէ երբեմն գլորել իր խօսակցութեանը մէջ:

Եւ երբ մարդս իր ոճին կամ գրաւոր արտայայտութեանը մէջ է որ ամենէն աւելի յոտուկորեն կը ցուցադրէ իր ներքին եռարիւնը՝ այդ

տեսակետով խիստ բնորոշ են նետեալ տողերը գորս Եագուպ Արքին Փաշա կ'ուղղէր Ամենայն Հայոց Վեմ. Կարողիկութին, ի պատասխան գիւնք Ազգային Պատուիրակութեան մասնակցելու նրախրող Հայրապետական Կոնդակին.

- «Վեհափառ Հայրապետ,
- «Պատիւ ունեցայ ստանալու Ձեր Սրբու-»
- «Սեան Յունուար 4 թուականաւ ինձ ուղղած
- «օրհնածիր Կոնդակը:
- «Խորապէս զգածուած եմ և երախտա-»
- «պարտ այն բարձր վստահութեան նամար,
- «զոր Ձեր Վեհափառութիւնը բարեհաճած է
- «յայտնել ինձ նկատմամբ՝ կողելով զիս մաս-»
- «նակցիլ իր հեղինակաւոր նախաձեռնութեամբ
- «կազմուած Ազգային Պատուիրակութեան:
- «Որքան այ փափուկ ըլլայ այս առա-»
- «բելութիւնը, սիրայժար կը համակերպիմ
- «Ձեր Հայրապետական նրամանին, բաղձալով
- «խնովանն օգտակար ըլլալ տառապեալ ազ-»
- «գիս, և՛ Ձեր օրհնութեամբը զօրացած՝ կը
- «ստանձնեմ այդ նուիրական պարտականու-»
- «թիւնը, և կը մեկնիմ դէպի Փարիզ՝ միանա-»
- «լու նամար պաշտօնակիցներուս:
- «Մաղթելով որ Ձեր աղօթիւր և Բարձե-»
- «լոյն հովանաւորութեամբ արգասաւորուին
- «մեր դժբաղդ ժողովուրդին փրկութեան սան-»
- «մանուած ջանքերը,
- «Որդիական ամենայնորն ակնածանօք
- «մատչիմ ի համբոյր Սուրբ Օծութեանդ Աշոյն:

«ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ»:

Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութեան, ինչպէս Ազգային Պատուիրակութեան մէջ, Եագուպ Արքին Փաշայի ներկայութիւնը՝ Պօղոս Փաշա Նուպարի աւրերը՝ կը ձեւացնէ ազգային անխորականութեան, նաչկական անկեղծ նամեքաշխտութեան գեղեցկագոյն խորնդանշաններէն մին, որով՝ երբեք ամրապնդուած ու խանդաղատած բլլայ մեր նուատքը՝ ցեղին անբաժանելի ու անբախտելի եղբայրակցութեան նկատմամբ:



«ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ»

ԿԷՍ ԴԱՐ ԱՌԱՋ ԵՒ ԿԷՍ ԴԱՐ ՎԵՐՋԸ

Կէս դար առաջ . . .

Այո՛, կատարելապէս ստոյգ իրողութիւն մըն է կէս դար առաջ գոյա-
նորթիւնը «Բարեգործական» ին որ մենէ
շատերուն համար վերջին եօթը տարիներու
իր գոյութեամբը միայն ծանօթ էր :
Փաստաթուղթը աչքերու առջևն է :
մոխրագոյն, բայց ժամանակէն աւելի
դունստած կողքով գրքոյկ մը, որուն վը-
րայ կը կարդանք :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԳ, ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ 1861, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՆԵՆՏԻՍԵԱՆԻ

Հին դէպքերու և դէմքերու ծա-
նօթ հաւաքիչ-հրատարակիչ վաճանքար-
դարեան անցեալին փոշիներուն ու մո-
խիրին տակէն ժողովրդի բերք էր մեզի
այս մասունքի մը պէս նուիրական տե-
արակը, որուն մէջ հրաշալի, գրեթէ
մարգարէական յատկատեսութեամբ մը
ամփոփուած են Հայութեան ճակատագիրը
բնորոշող էական ճշմարտութիւնները :

Կէս դար առաջ . . .

Երկիւղածութեամբ կը բանանք
հնօրեայ գրքոյկը, և անոր առաջին էջե-
րէն, առաջին սողերէն իսկ ապշահար կը
համակուինք այն հօգը ու հեռահաս խնաս-
տութենէն և այն կտորով ու վճռական
մտածողութենէն որով խումբ մը Հայեր
կրցեր են տեսնել մեր ազգային գոյու-
թեան ապահովագոյն ճամբան, և տի-
րաբար գծել հայկական կեանքի բնա-
շըջման անվրիպելի ուղեցոյցը :

Ու, յանկարծ, անաւոր, խոտլագին
հարցումն է որ կը ցցուի մեր մտածումին
մէջ : — Փալեցի՞նք մենք այդ ճամբէն,
հետեւեցա՞նք այդ ուղեցոյցին, կէս դարէ
ի վեր, որ սայթաքումէ սայթաքում,

դահալիժումէ դահալիժում կը քաշկը-
տըինք ազգովին . . .

Հոս չենք յամենար այդ հարցումին
պատասխանը փնտռելու : Պատմութեան
փիլիսոփայութեան դրուագի մը անդուն-
դը պիտի բանար ատիկա մեր առջև :

Երես մը, երես մըն ալ կը դարձ-
նենք կիսադարեան տեսրակին մէջ, և
ան՝ կանգ կ'առնենք ջերմեռանդ յափըշ-
տակութենէ մը համադրաւուած : — Թրքա-
հայ մտաւորական ու հանրային վերած-
նութեան հոյակապ ու անմոռանալի սե-
րունդն է որ իր ամենէն հեղինակաւոր
ու հմայքոտ անունները՝ կրսնիդէ անվը-
կանդ քարերու պէս՝ բերեր զեանդեր է
հոտ, «Բարեգործական» ին այդ առաջին
հիմնարկութեան իբրև խարխալ . . . Գրի-
գոր Աղաթօն, Գրիգոր Օտեան, Տօքթ .
Յովսէփ Շիշմանեան, Մկրտիչ Պէշիկթաշ-
լեան, Տիգրան Եռասուֆեան, Սաղըզ
Յովհաննէս, Յարութիւն Սըլաճեան,
Վարդան փաշա Լեն, Լեն : Հոն են, ա-
մենքն ալ, սխրալի համերաշխութեան
մը մէջ ներկայ, ազգային վերականգնու-
մի այդ մեծ հիմնարկէքին :

Ազգ. Սահմանադրութեան բիւրիցս
երախտաւոր սերունդն՝ ազգային ներքին
օրինական կազմակերպութեան հետ ու
անոր չափ անհրաժեշտ դաւաներ էր,
ուրեմն, զարգացական զօրեղ հաստատու-
թեան մը գոյութիւնը Ազգին ծոցին մէջ, և
առ այդ իր բոլոր հնարաւոր ճիգն ու կո-
րովը թափեր էր արդէն վաթսուհական
թուականներուն :

Չենք գիտեր թէ՛ ս'րքան և ի՞նչ
կեանքով ապրեցաւ Հայոց առաջին «Բա-
րեգործական»ը : Բայց եթէ բան մըն ալ
մնացած չըլլայ անկէ, իր դաւանանքը
խտացնող այդ յիշատակարան-գրքոյկը

կը բաւէ, որ մենք անգամ մըն ալ ու-
յաւէտ օրհնենք յիշատակը թրքահայ այն
ռահվիրայ սերունդին, որ մեզի տուաւ
Ազգ. Սահմանադրութիւնը, և որ մեր
առջև բացեր է եղեր ազգային վերա-
կանգնումի ճամբան, զոր պիտի վերա-
դրանենք, որուն պիտի վերադառնանք
եղեր՝ կէս դար պատիպատ խարխալիկէ,
քայլամուրթ թափառելէ, յիտրքին բոլոր
անկներէն վերադառնալէ ու պատրաս-
քին բոլոր դատիթափներէն դալարա-
տանջ թաւալելէ վերջը . . . :

Պիտի ուղէինք մշտնջրութեան
ընել հոս այդ թանկագին տեսրակէն,
զոգցես անըրչ իրիմէն հնչեցնելու հա-
մար աղեխարջ ձայնը «Բարեգործակա-
ն» ին առաջին անմահ հիմնարկներուն,
և զուրս ցայտեցնելու համար մտածումի
ու զղացմանց այն ինքնաբեր ու թեւադ-
րական հանդիսութիւնը, որ «Բարեգոր-
ծական» ին գործն ու գործիչները կը բը-
նորոշէ կէս դարու անջրպետի մը ընդմէջ :
Բայց կը վախնանք որ ատիկա խոտել պի-
տի ըլլար մտաւորական անբաղդատելի
վայելք մը : Պէտք է ամբողջութեամբ
կարգալ «Բարեգործական» ին կէս դար
առաջուան ծրարները, հաստատուու հա-
մար ողի ու ձգտումներու զմայելի
նմանութիւնը, որուն մէջ իրար կը
դանեն և իրարու կը գիրկընդխառնուին՝
յիսուն տարուան միջոցով մը իրարմէ
անջատ, այլ ցեղին գոյութեան անցելի
պայմաններուն զիտակցութեանը մէջ
կարծես իրարու հանդիպած հոգիներ . . .

Ու մէկէ աւելի անուններ, մէկէ
աւելի յատկանշական պարագաներ չեւ
գիտեր ի՞նչ սրտաշարժ, ողեկոչական բնոյթ
մը կուտան այն նմանութեան որ կը
սենտուի «Բարեգործական» ին կէս դար
առաջուան ու կէս դար վերջի կազմին վրայ :

Թրքահայ միջակորեաբին ու մտա-
ւորականութեան ամենէն ակաւաւոր
զէմքերն այսօր ալ կը գանուին «Բա-
րեգործական» ին վարիչ շարքերուն մէջ :

Պոլսահայ երբեմնի երեւելիներու, էֆէն-
տիներու, պէյերու, փաշաներու տեղ՝
Եգիպտահայ պէյեր ու փաշաներ, որոնց
զուտ կը կենան Պօղոս Նուպար ու Եա-
գուպ Արթին փաշաները : Աղաթօն Գրի-
գոր Էֆէնտին կը վերապրի իր զաւկին Ե.
Աղաթօն պէյի մէջ : Օտեանի կամ Նուր-
եանի զաղխարով օսմանեան պետական
մարդերու տեղ կը ներկայանայ Գաբրիէլ
էֆ. Նորատունկեան մը : Տօք. Շիշման-
եանի դերին մէջ մեր առջև կը կանգնի
Տօք. Տաղաւարեան մը : Եւ մեր ուշադ-
րութիւնը կ'երթայ կանգ կ'առնէ մինչև
սա յանկուցիչ մանրամասնութեան վրայ .
— Կէս դար առաջուան «Բարեգործա-
կան» ին Ատենադպիրը բանաստեղծ մըն
էր, Մկրտիչ Պէշիկթաշլեանը . . . Կէս
դար վերջի «Բարեգործական» ին Ատե-
նադպիրն ալ կը պատահի ըլլալ բանաս-
տեղծ մը, Վահան Մալեղեանը . . .

Վերջապէս նոյն բարոյական մթնո-
լորան է որ վերստեղծուած է, միևնոյն
վիճազոյն զաղախարէն, միևնոյն սրբա-
զան նպատակին շուրջը, միայն թէ՛ այս
անգամ՝ աւելի հոծ, աւելի վստացող,
աւելի ներուժ կեանքով մը առլի, այլ
մանուանդ աւելի լայնատարած ու հա-
մապարփակ սահմաններու վրայ :

Հայկական կեանքի իրականութեան
մէջ դուն ուրեք — չըսելու համար եր-
բեք — տեսնուած էր բարի կամքերու,
անձնուէր կորոյներու, բոլորանուէր ա-
ջակցութիւններու, այնպիսի շքեղ հա-
մանուազ մը, համակրութիւն մը, համա-
զըրութիւն մը, որպիսին կը պարզէ այ-
սօր Հ. Բ. Ը. Միութիւնը :

Հայ տառապակոծ աշխարհը միայն
օգնութիւն չսպասեց «Բարեգործական»
էն, միայն ձեռք չի կարկտեց անոր, այլ
նաև բերաւ անոր իր կարելի օժանդա-
կութեան սրտաբուխ բաժինը : Արիւնա-
զանդ ու սգաւոր կիլիկիան իր ձերունա-
զարդ Հայրապետին զողովուն ու օրհ-
նատիւն թեւերովը երկնցաւ զէպի Հ.

Բ. Ը. Միութեան զօրնկալ բազինը, և անոր ի սպաս դրաւ առաքելական անբաւարար աւելնն իր արի եպիսկոպոսներուն, որոնցմէ Մուշեղ Սրբազան՝ ինքնամատոյց անձնուիրութեամբ մը՝ «Բարեգործական» ին ամենէն արգելնաւոր գործիչն ու աւետարերը հանդիսացաւ՝ տարազիր հայութեան մինչև ամենէն հետաւոր հանդուաններուն վրայ:

Եւ այսօր Ամերիկահայը Հ. Բ. Ը. Միութեան կեանքովն ու գործովը կը խանդաղատի ու կը խանդաղատուի՝ Գալիֆօրնիայի իր Եղևմէն — Օտարութեան անդիլի ծայրը կերտուած փոքրիկ ածու Հայկազէն ուր նորածիններն իսկ Միութեան կ'ուխտուին — մինչև Նիւ-Եօրքի համայնակուլ սոսկալիթիսար ուստանը, ուր Ամերիկահայ Գաղութին ալեւոր նահապետը՝ բարի ու պատուական Տօք. Ա. Այվաղեանը՝ գուրգուրտ հոգածութեամբ մը կը հսկէ «Բարեգործական» ին Ազլանտեան մակնթացութեանը վրայ:

Հ. Բ. Ը. Միութիւնը հայրենի մեր գրեթէ բոլոր աւելի կամ նուազ կարեւոր կեդրոններուն մէջ իր հաւատարմներն ու ջերմասանդներն ունի՝ ժողովուրդին առաջնորդող ու զարգացեալ տարրերէն սիրայօժար յառաջ նետուած իր անխտրական զբօշը վեր բռնելու համար:

Թրքահայ ամենէն կարողականացեալ գաղութին՝ Իզմիրի մէջ, «Բարեգործական»ը ազգային հաւատքի ու ոգևորութեան նոր ազդիւր մը ժայթքեցուց, այն օրէն՝ երբ Տօք. Կոստանդի պէս աննման Հայ մը, «Մէթատ»ի նշանաւոր ու հալածեալ հեղինակին եզրայրը, տեղւոյն Մանաստողովին անդամատու մարը անութիւն տակ առած՝ պաշտելի եռանդով մը փողոց իջաւ, դռնէ դուռ, խանութէ խանութ փութալու և Հայկական Միութեան նորանոր յարումներ ու զոհարարումներ արձանագրելու: Ու

Իզմիրէն էր, դարձեալ, որ հայ բանասիրութեան բազմաբղիւն վարպետ մը, Մեսրոպ Նուպարեան՝ մեր գրական տարեգրութեանց մէջ աննախընթաց ժխթով մը՝ «Բարեգործական» ին կը նուիրաբերէր իր միակ կալուածը:

Ինչ որ վերջապէս Հ. Բ. Ը. Միութեան փրօխականալին սնունդն էր ու անտեղիտալի ուժը պիտի կազմէր — բոլոր պատրիշ յոյսերուն մեծաշառաչ փլուզումէն յետոյ —, յեղին խճճասնքին մէջ սեւեռուող անվերապահ վատահոլութիւնն էր անոր հետապնդած գրական, անմիջական վախճաններուն և անոր ներկայացուցած բարոյական անմխտելի վարկին:

Ու եղաւ որ ամենքն ալ, տրուած պահու մը, իրենք զիրենք գործիչները գտան Հ. Բ. Ը. Միութեան, ամենքն ալ որոնց գրչին կամ խօսքին տարողութիւնը կրնար սատարել «Բարեգործական» ին աղղազէն գործունէութեան:

Թրքահայ մտաւորականութիւնը այնքան աւելի հողելին պիտի փարէր Հ. Բ. Ը. Միութեան, որքան անոր հետապնդած գեղեցիկ սառձաղրութիւններուն մէջ պիտի գտնէր հայկական կեանքի ներկայ ստոյգ խոնարհ, — աղղազին ինքնամիտումի, նիւթական, բարոյական ու մտաւոր վերանորոգման ու զարգացման անխտրական խոնարհ:

Ասոր կոտորել, այդ խոնարհ կողմադարձիւ, — հոգեկան պետք մը չէ՞ առիկա, քիչ մը ամենուս համար:

Որովհետեւ աւել անթիմուկ ալ իրապաշտ խոնարհ կուգայ այսօր աղատել մեզի նիւթիկոյն յուսահատութեան մը ցաւազին հոգեկոտորէն, մեր անձկոտ աչքերուն առջև պարզելով հնարաւոր, տեւական ու ստեղծագործ ճիւղերու սրբատապնդող, հոգեպարար ապացոյցը:

Եւ սախկա արդէն անագին բարիք մըն է ինքնին:

— ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՒՆ ԶԱՂՈՒԱԾ

«... Յայտնի է որ Ազգ մը հարուստ ու լուսաւորեալ կ'ըլտի եւ հետեւաբար հզօր երբոր զայն կազմող անհատները հարուստ ու ուսաւորեալ են, եւ ընդհակառակն Ազգ մը աղքատ ու ազէտ կը կոչուի եւ հետեւաբար տկար երբ աղքատ ու ազէտ անհատներէ բաղկացած ըլլայ:

«... Եւ որովհետեւ Հայ Ազգը Օսմ. Պետութեան հասարակութեանը մէկ մեծ մասն է, ինչպէս ըսինք վերը, ուրեմն եթէ Հայ Ազգը իր նիւթական ու բարոյական վիճակին բարելաւութեանը աշխատի անուղղակի կերպով օժանդակած կ'ըլլայ Օսմանեան Տէրութեան պայծառութեանն ալ եւ երախտագիտութեան նուիրական պարտք մը հատուցած կ'ըլլայ:

«... Ազգի մը նիւթական վիճակին բարելաւութեանը որչափ որ կ'օգնէ իր բարոյական վիճակը, նոյնչափ ալ նիւթական վիճակը կը նպաստէ իր բարոյական զգացմանց զարգացմանը. մէկը ստանց միւսին չի կրնար լուսնալ կամ երբ մէկին աշխատինք, միւսին ալ աշխատած կ'ըլլանք:

«Ասոր համար ալ ազգին ընկիւրը յայտնի կեցած է. — Ազգին աղքատ ու խեղճ մասին կազմեմքն առնել ու պոփոխուց անոնց գաւազան արհեստներ ու մանաւանդ երկրագործ»

ճուրխն սորվեցնել՝ զիտութեան ընծայած նոր լոյսերուն համեմատ, միանգամայն հնարել, գտնել ու հայթայթել այն միջոցները որոնցմով կարենան զրաղիլ այն արհեստներուն ու եկրագործութեան եւ սարիլ անոնցմով:

«... Ժամանակնիս սուղ եւ աշխատութիւննիս ծանր է: Ասանկ ժամանակներու մէջ եւ ասանկ գործ մը զլուխ հանելու համար ընդհանուր Ազգին բոլոր նիւթական, մտաւորական ու բարոյական գործութիւնները պէտք է միանան ու ի մի ձուլվին. նոյն իսկ հետաւոր ապագայէ մը մտած ու նսեմ ներկային վրայ ցոլացեալ յուսոյ նշոյններուն առջև, յոյս մտաւորական յառաջդիմութեան եւ բարեկեցիկ վիճակի մը, խորշակահար ըյնին անձնական կիրքերը, կուսակցութեան ոգին, կրօնական խտրութիւնները, եւ իւրաքանչիւրն իր նիւթական ու բարոյական լուսնալ բերէ՝ ձգէ ազգային լուսաւորութեան գանձանակին մէջ:»

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՅՅՈՒՈՒՅՈՒ

«Բարեգործական Ընկերութեան նպատակն է, Ազգին որք, անկէր եւ չհաւոր տղաք երկրագործութեան եւ արուեստից գրադեցնելու միջոցներ ի գործ դնել:»

«ALLIANCE ISRAËLITE UNIVERSELLE»

Թեղադրական է վեր հանել նպատակը «Ալիանս Իզրայէլի Ինիվերսէլ»ի, 1860 ին հիմնուած հզօր ընկերութեան, որ Հրեայ ցեղին համար նախախնամութիւն մը եղած է ցարդ, եւ որուն հիմնական սկզբունքները ուղեցոյց եղած են Հ. Բ. Ը. Միութեան հիմնադիրներուն:

- Ա. Յօդ. — «Ալիանս Իզրայէլի Ինիվերսէլ»ի նպատակն է՝
- 1. — Աւխտալի ամէն տեղ Հրեաներուն ձերբագասմանն եւ բարոյական յառաջդիմութեանը:
- 2. — Օգնել արդիւնաւոր օժանդակութեամբ մը անոնց որ կը տառապին Հրեայ ըլլալուն համար:
- 3. — Քաջալերել ու եւ է հրասարակութիւն որ այս արդիւնքը յառաջ բերելու կը ծառայէ:

Հ. Բ. Ը. Միտրեան Կեղր. Վարչ. Ժողովին Փոխ-Աստուծակար, միշտ օրուան մարդն է Բարեգործականի լայն շրջանակին մեջ, շնորհիւ իր անխնայ ու անդադրում գործունեութեան:

Առաջին ապաւորութիւնը գոր կը կրէր Ե. Աղաթոն պէշին՝ ինն տոնիկ Հայու արդիականացած նագուազիւտ տիպարի մը բարեանցող, նամակող նմայքն է: Աղա մարդու, Բիպար մարդու, պապա մարդու շնորհն է որ կ'արտացոլայ իր անձնէ:

Լեզուանի, տաքարին, դիւրանադորը, Ե. Աղաթոն պէշ իտեպ փրօփականտիսըն է Հայկական Միութեան: Ու փրօփականտիսըն աւելի բան մը եղաւ անոր, — ճշմարիտ առաքնայ մը:

Հ. Բ. Ը. Միտրեան նիմարկութենէն ի վեր տարի չէ անցած որ Աղաթոն պէշ նուիրատուութեան նոր նունձրով մը Միութեան կեդրոնը չի վերադառնայ իր բացակայութիւններէն, երբեմն իր մասնաւոր ճամբորդութիւններէն՝ գորս անձնուիրարար կը կատարէ դէպի գանազան նայ գաղաբավայրեր, և որոնք մէյմէկ նուաճումներ եղած են Միութեան նամար :

Ինք կազմակերպեց Իզմիրի Մասնաժողովը՝ տեղացի գմայկի Հայու մը՝ Տօրր. Պ. Կաստանդի աջակցութեամբ, ինչպէս նաև ուրիշ կարևոր Մասնաժողովներ եւրոպայի մեջ :

Հ. Բ. Ը. Միտրեան Կեղր. Վարչ. Ժողովը, գնահատելով իր մատուցած անգին՝ ծառայութիւնները, անցեալ տարի, Միութեան Բարեբար Անդամ նշանակեց զինքը:

Կարելի չէ խանդաղասանքով չի լեցուիլ ի տես այս մարդուն, որ անձնուիրարար ու անասնման նաւատքով ու ինքնավստահութեամբ կ'երբայելիլը երկիր նորանոր սրտեր նուաճելու, անասիկ նոգիներն իսկ գրաւելու և անոնց գոնարեութիւնն ապանովելու Միութեան նուիրական րազինին: Անկարելի է չի նամակը ինչ այս մարդուն, որ իր կեանքին երազն ըրած է Բարեգործականին բարգաւաճումն ու անոր նայրենաշէն գործին վախճատար իրականացումը, որուն նամար տարիանք մը, մտորելն մը, արբշտանք մը

գարձած է այլևս Միութեան գաղափարը, և որուն աչքերը կը կայծկրտան ու ամբողջ էութիւնը կը բրբռայ, կ'ոգևորուի, կը վերանայ՝ երբ խօսիլ կը սկսի իր բոլորանուէր պաշտումին առարկան եղող այն մեծ նաստատութեան վրայ :

Ու այնքան սուղի սրտաշարժ կը բուի Ե. Աղաթոն պէշի այս նոգեբանական պարագան՝ որքան նկատի ունենաս րէ անիկա կեանքի պաշարին մեջ միշտ նարր ու նեշտին ճամբաներէ քալած չէ՝ նասնելու նամար ընկերային այն դիրքին ուր կը գտնուի այսօր, րէ անիկա՝ տարի-պատի դիմագրաւած մարդ՝ իր կորովին ու կարողութեանը աւելցուքն չէ՝ որ ինքզինքը կը վստահ իր ստանձնած նանրանուէր դերին մեջ :

Այս «Պէշ» տիտղոս մը ժառանգած չէ, այլ տիտղոսէ աւելի ու բաւազոյն բան մը միայն, — **անուն** մը:



ԵՐՈՒԱՆԴ ՊԷՅ ԱՂԱԹՕՆ
ԲԱՐԵՐԱՐ ԱՆԳԱՄ Հ. Բ. Ը. ՄԻՏՐԵԱՆ
ՓՈՒՍՏԵՆԱՊԵՏ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՂՈՎԻՆ

Բարեխշատակ անուն, որ նայկական վերածնութեան մեծ ու երախտաւոր սերունդը ոգևորեց կուտայ մեզի, և որուն բարոյական աւանդը արժանաւորապէս կը կրէ Գրիգոր Էփ. Աղաթոնի որդին Ե. Աղաթոն պէշ:

Բազանմուտ գիւղատնտես, անիկա արհամարհած է բրբրական պիւրօքրասիին մեջ իրեն սանձանուած պատիւներն ու ստոխձանները, և իր ուշիմութեան ու ձեռներեցութեան ապաւինելով՝ եզրկուտական նոյնի բանջրէն եկած է քաղեց իր և իրեններուն բարօրութիւնը: Ու նոյն մարդն է ան քիչ մը իր բոլոր կեցուածքներուն մեջ, նոյն մարդուն նարագատ, աշխոյժ ու առողջ նրատրոյն ունի, նոյն դատանքին, նոյն վրայ բափուած քրտինքին եփուն դրոշմը կայ իր արեւակեզ ու առնագեղ դէմքին վրայ՝ որուն մշտադաւար երիտասարդութիւնը չեն գօրեր ներքեղ կանուխ աղբրեկեպ մագերը:

«Մենք Ճէլլահ մարդիկներ ենք», կ'ըստան յաճախ նոյնագործի տղուոր ու ժպտուն նարատութեամբ մը:

«Միութեան Կեդրոնական Ժողովին մեջ մեր ամենէն երիտասարդն է Աղաթոն պէշը, ինչ՝ ալ երիտասարդ, զի ամենէն աւելի կը խանդավառուի ու ամենէն առաջ կը նետուի, կը վագէ ան», իրաւամբ կ'ըստ յաճախ Մէրր Մալեգեան :

Ասոնք յատկանշական զիծերն են Ե. Աղաթոն պէշի բարոյական կերպարանքին:

Բայց ուրիշ նուազ ցայտուն, այլ ոչ նուազ ընտրող զիծեր ալ ունի այս դէմք՝ նակառակ իր երեսուրական պարզութեան:

Միութեան դատին որքան անձնուէր, կեանքի սպաշարին մեջ որքան բարբաջ ու կորիճ, նանրային մարզին վրայ Ե. Աղաթոն պէշ կը գզուշանայ տարագրման խիզախումներէ. րեւես իրեն կը սրակի պաշարի ջիւղը, որ գերագանց արժանիքը կը կազմէ Միութեան Կեդրոնական Ժողովոյ իր միւս գլխաւոր գործակցին՝ Տիար Մ. Անդրանիկեանի:

Իր խառնուածքը չի կրնար նանդութեղ նանրային բուռն նակառակորդութիւններու:

Ե. Աղաթոն պէշ մոզական յատկութիւնն ունի ժողովուրդին բարձրագոյն դասերէն մինչև խոնարհագոյն խաւերն ինքզինքը սիրցնելու, ամենուն սրտին ճամբան գտնելու, ամենուն լսելի ընելու իր կողքը, որ նոգեգրաւ ու անվնաս նրաւէր մըն է Հայկական Միութեան շուրջը բոլորուելու ազգովին:

Ե. Աղաթոն պէշ՝ ունենալով նանդերձ

ազգային քաղաքական իր որոշ նամոգումներն ու դաւանանքը՝ պիտի չի կրնար ըլլալ գաղափարական որոշ նոսանքի մը կամ կուտակցութեան մը մարդը: Անիկա պիտի նախընտրէր միշտ ամբողջ ազգին նետ նաշտ ու նամերաշխ ըլլալ:

Այս նանգամանքը կրնայ ոմանց աննաճոյ ընծայած ըլլալ զինք, բայց պետք է լաւ ճանչնալ մարդը իր մտերմութեանը մեջ, նասկնայու նամար իր սրտին գերագանց ազնուութիւնը, իր բնութեան անապառ ու սխարայի վեճանձնուներինը:

Ետականութեան ու քարացած անտարբերութեան այս օրերուն՝ քանի՞ նոգի կրնաք նամը մեր միջակորեարին մեջ որ ունենար Ե. Աղաթոն պէշի փարեղի ընդունակութիւնը նանրային իրովը խելալեղօրէն խանդավառուելու...


Եւ լետոյ, պետք է նկատի ունենալ որ՝ երէ քաղաքացիական տիրոջին մեջ կամաւորներն ու պաշարողները աննրաժեշտ են Ազգին, կան ուրիշ ազգային մեծ շաներ ալ որոնք աննուորէն պիտանի կ'ընծայեն նաշտարար ու սիրաշանող գործիչներու գոյութիւնը: Կիրքերու ամենի ընդարումներուն միջեւ քամբօք մարդիկը կ'ըլլան ասոնք, որոնց կը վիճակուի խիստ բարեբար դեր մը կատարել յաճախ ժողովուրդի մը կեանքին շփոր ու խոռովայոյզ շրջաններուն: Եւ Ե. Աղաթոն պէշ այս ողորջը դերին մեջ կը բուի տեսնել իր ճշմարիտ կողմը, ինչպէս նաև իր ներկայացուցած նամագանուէր նաստատութեան գերագոյն շանը:

Եւ իրաւունք ալ ունի րեւես: Արդարեւ, ի՞նչ մնաց, ի՞նչ կը մնայ այնքան պայքարներէն, որ մոլեցան գաղափարի ու սկզբունքի անուճով... Դատնութիւններ, արիւնի նետքեր, վատնուած անագին կորովներու մորմոքք, և նագիւ դոյզն գիտակցութիւնը Ազգը շիտակ ճամբէն առաջնորդած ըլլալու...

Բայց Հայկական Միութիւնը ոչ միայն մնաց, կը մնայ, այլ նետգնետէ աւելի ամբակուռ ու բարձրարեւը կը կանգնի, կը կորոյրի Համանայ իրականութեան մեջ:

Ե. Աղաթոն պէշ անոնցմէ է, նանրային կեանքի մեջ այն շատ սակաւարի քաղաւորներէն, որոնք իրենց երկնած, փայլալայած, մեծցուցած Գործին վրայ մինչև վերջը պիտի կրնան նայիլ խորունկ սփովանքով, սրտապինդ երանութեամբ, անողոր խոջմտանքով ու արդար նպարտութեամբ . . . :





“ՄԻ ՈՒԹ ՅԻ Ն” Ը

Բարեկամներէս շատերը, որ ինձի հետ հիմնեցին Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւնը, փափաքեցան որ մեր Ընկերութեան անդամներուն ինքս ներկայացնեմ մեր «Միութիւն» հանդէսին առաջին թիւը. այնքան աւելի սիրով ընդունեցայ, որքան օգտակար եւ նոյն իսկ անհրաժեշտ կը նկատեմ այս հրատարակութեան ուղղութիւնը որոշապէս գծել, բացատրելով իր վաղուան ընթերցողներուն՝ ինչ որ պիտի ըլլայ անիկա, ինչ որ անոր մէջ պիտի կարդան եւ ինչ որ պէտք չէ սպասեն զրտնելու անոր մէջ: Միութեան անդամները որ, անդամակցելէ առաջ, անշուշտ անոր կանոնները աչքէ անցուցած են, գիտեն ամէնքնին ալ թէ՛ մեր Ընկերութեան նպատակը,—այնպէս ինչպէս յայտագրուած է Կանոնագրին առաջին յօդուածին մէջ,—ամէն բանէ առաջ մարդասիրական է, եւ թէ՛ Միութիւնը ինքզինքին բոլորովին արգիլած է գործել քաղաքական գետնի վրայ:

Ստուգիւ, առաջին օրէն համոզում գոյացուցած է ինք որ, մեր ուժին եւ միջոցներուն չափով, բնագաւառի մեր հայրենակիցներուն բարոյական եւ նիւթական վերականգնումին օգտաւորապէս աշխատելու համար, պէտք է նախ եւ առաջ միացնել մեր ջանքերը, եւ թէ՛ մեր ձեռնարկին յաջողութիւնը աւելի կամ պակաս պիտի վտանգուէր, եթէ, բոլոր բարի կամեցողութեանց եւ բոլոր անձնութեանց կուռ միացումին տեղ՝ մեր անդամներուն մօտ հանդիպէինք կուսակցական մըտահոգութեանց, ինչպէս եւ քաղաքական կամ կրօնական տարակարծութեանց:

Յաջողութեան համար, պէտք էր մտնալ բաժանումներու եւ պառակտումներու բոլոր պատճառները եւ աչքի առջեւ ունենալ միմիայն այն ազգօգուտ նպատակը որուն հասնիլ առաջադրուած էր: Այդ պարագան է որ մեր Ընկերակցութեան առաջին գաղափարը ներշնչեց մեզի եւ առաջնորդեց մեզ բացայայտօրէն սահմանելու իր պաշտօնը եւ բնորոշելու իր նպատակը՝ իր Կանոնագրին նախատն իսկ:

Դէպքերը ցոյց տուին որ սխալած չէինք: Իր գոյութեան վերջին շուրջ վեց տարուան ընթացքին, Միութիւնը աւելի քան 5000 անդամներ ունեցաւ եւ 1.200.000 ֆրանքի գումար մը ստացաւ, զոր գործածեցինք Կանոնագրին տրամադրութեանց համաձայն:

Մեր «Միութիւն» հանդէսը պիտի համակերպի հետեւաբար այս հիմնական պայմանին. պիտի խոյս տայ ամէն կարգի բանավէճներէ—ինչ որ զիւրին պիտի ըլլայ, բանի որ ոչ մէկ կուսակցութեան կը պատկանի. անիկա պիտի հրատարակէ այնպիսի գրութիւններ որ ըլլան համապատասխան այն ձեռնարկին որուն օրկանը ըլլալ կոչուած է, եւ աւելի մասնաւորապէս՝ բնոյթը ունենան օգնելու կրթութեան ծաւալումին, հողագործութեան, եւն. եւ այս բանիս համար անիկա պիտի դիմէ բոլոր տաղանդներուն, որ, փառք Աստուծոյ, մեր ազգին մէջ չեն պակսիր:

Բայց «Միութիւն» ոչ նուազ պիտի ըլլայ նաեւ տեղեկութեանց միջնորդ մը, Հայկական Միութեան անդամներուն ծանօթացնելու համար մեր Ընկերութեան զլիսաւոր գործողութիւնները, անիկա պիտի հրատարակէ անդամագրական ցուցակները, հաշուեկշիռները, եւն.: Մէկ խօսքով, այս

§§ «ՄԻՈՒԹԻՒՆ» ԱՄՍՕՐԵԱՅ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻՆ ԱՌԱՋԻՆ ԹԻՒՆ ԿՈՂՔԸ §§

Թերթը պիտի ըլլայ տեսակ մը միութեան գիծ՝ կեդր. վարչ. ժողովին եւ Միութեան անդամներուն միջեւ, որ այսպէսով մտնէ իրազեկ պիտի ըլլան իրենց Ընկերակցութիւնը շահագրգռող բոլոր կարեւոր գործողութեանց : Հարկ է արդարեւ որ անոնք կանոնաւորապէս իմանան ինչ որ պիտի կատարուի, մանաւանդ՝ գիտնան թէ մեր տրամադրութեան ներքեւ զրուած բոլոր հասոյթները ինչպէս կը գործածուին, եւ վերջապէս՝ մեզի վստահուած վարչութեան մասին տեղեկութիւն ստանան օրը օրին : Որովհետեւ, — եթէ ներուի ինձի կրկնել հոս պատկեր մը՝ զոր ուրիշ առթիւ մը արդէն պարզած եմ եւ զոր կը փորձուիմ հոս յիշատակել անգամ մըն ալ, անոր համար մանաւանդ որ իմ մտածումս հաւատարմօրէն թարգմանելու մեծ առաւելութիւնը ունի, — մեր անդամներուն վստահութիւն ներշնչելու եւ անոնց թիւը աւելցնելու համար՝ պէտք է որ Միութեան Տունը ապակիէ տուն մը ըլլայ. « որպէսզի ամէն անոնք որ կը շահախնդրուին անոր յառաջդիմութեամբն ու ապագայովը՝ կարենան լոյս արելով տեսնել ինչ որ հոն կ'անցնի կը դառնայ » :

ՊՕԳՈՍ ՆՈՒՊԱՐ

ԾԱՆ. — « Միութիւն » ամսօրեայ պաշտօնաթերթի առաջին քիւիկն յառաջարակն է, յատկապէս գրուած **Հ. Բ. Ը. Միութեան Վսեմ. Ասեկնապետին** կողմէ եւ **Քրանտերէն Բնագրէն** հայերէնի բարգմանուած :



Փ Ա Ռ Ք Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Աւետիս, Հայեր, ա՛լ սուրբ մեկոյի,
Նոր արեւ ծագեց մեր ազգին վերեւ.
Հայութիւնն ամբողջ կուսայ ձեռք ձեռքի՝
Հայկական Միութեան դրօշին ներեւ :

Հարուստ ու ազնաւ, սնուս քէ գիտուն,
Երբանք կանգնելու օճախը կործան,
Երբանք հիմնելու դրօշոց, գործատուն,
Երբանք մըտակին տալ ցանք ու լըծկան :

Հայեր, միանա՛նք մեկ սիւր մեկ հոգի՝
Ազգաթիւնութեան վրանք գործին շուրջ.
Մոռնալով վերեւն եւ սիւն երկի,
Ժամ է որ ըլլանք վաղուան աշախուրջ :

Եթէ ճիշդ է որ միութիւնն է միայն
Վերջին գորութիւնն ազգիս փառախանդ,
Մեկ սիւր մեկ հոգի՝ փութանք Միութեան
Սուրբ գործին բերել մեր ուխտն ու եռանդ :

Եւ դուն ա՛լ մի լար. քրքուտ Հայրենիք,
Քանգի հրաւճով Հայր միացաւ.
Քանգի վաղն ամէնքս՝ գոհ եւ երջանիկ՝
Միութեան փառքը պիտի երգենք կարգաւ :

ՎԱՀԱՆ ՄԱԼԻՋԵԱՆ

« Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ը »

Հ Ա Յ Մ Տ Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ե Տ

Ե Ի Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ Ի Ն Հ Ա Մ Ա Ր

(ԳՐՈՒՄԾ՝ «ՄԻՈՒԹԻՒՆ»-Ի ՀԻՄՆԱԲԱՐՄՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒՆ)

Տառապանքին մասյլ արահետներէն ու Աւերին մահաշուք տարածութիւններէն հազիւ քիչ մը աչք բացած, ու նորէն դէպի հոն, դէպի հայրենի թշուառութիւններն ու որբութիւնները վերադառնալու հարկին երկիւղն ու անդոհը սրտին մէջ՝ Հայկական Ընդհանուր Միութիւնը ցեղին մտաւոր ու հոգեկան կենսաւէտումին համար վաղուց փայփայած իր դեղեցկագոյն գաղափարն է զոր իրագործել կը սկսի այս հրատարակութեան ձեռնարկելով :

Մեծ երկունքի մը համեստ սկիզբն է ուրեմն ասիկա :

Ու ամէն նոր հանդէսի ճակատը զարդարող սովորական խօսքերը չեն բաւեր «Միութիւն»ի դերն ու նշանակութիւնը խոսացնելու, սեւեռելու համար :

Ամենէն խոստմնատառ ու պերճախօս յայտագիրն անգամ յուսախաբ պիտի թողուր այս թերթին սպասող անձկալրեաց հողիները, եթէ յայտագրէ տարբեր ու աւելի բան մը իրենց չաւետարներէր Հայկական Միութեան օրկանը, — մտաւորական եղբայրակցութեան ազալան՝ մը, բարոյական համերաշխ գործակցութեան նշանաբան մը . . .

Ո՞րն է ասիկա :

Մենք թերեւս մասամբ ամփոփած, բանաձեւած կղանք գայն մեր խորագրին մէջ լակ, — «Միութիւն»ը հայ մտաւորականութեան հետ եւ ժողովուրդին հաւատ :

Ու այժմէն մեր յուզուած մտածումն ընդ առաջ կը փութայ անոնց ինքնամատոյց տողանցին, անոնց խանդալատ ու խուճուկամ փութումին՝ պիտի ըսէինք՝ դէպի «Միութիւն»ի կոյս սիւնակները, բոլոր անոնց, որոնք լոյս մը ունին բերելիք, բարեբար բան մը ունին ըսելիք, ազնիւ խորհուրդ մը ունին թելադրելիք, վնասոյցն ու անդորրիչ, չքեղ ու աղնուացուցիչ երգ մը ունին երգելիք՝ իրենց ցեղին :

Ա՛հ, կը տեսնենք գանձեր, ահա՛ կուզան իրարու ետեւէ, եւ անոնց կը զայրահան թափօրը մեր սիրտն արդէն կը լեցնէ երանութեամբ ու խանդաղատանքով . . . : Պայծառ ճակատներ, լուսաշող աչքեր, խոհուն ու ատոյզ դէմքեր կը պարզեն մեզի անոնք, որոնց վրայ խայտանքով կը կարգանք ցեղին բարոյական ու մտաւոր վերականգնումին նուիրուելու սխրալի կամաւորութիւնը . . . : Ծերունազարդ ու զողջօջուն զըլուխներ ալ կան անոնց մէջ՝ խնաստութեան ու կեանքի բեռին տակ կըքած . . . : Կ'ազաչէ՛նք, ճամբայ տուէ՛ք անոնց որ առաջ անցնին, նուիրական այդ ձերունիները, որոնք փորձառութեան գանձեր կը տաճարակրեն, ձայն տուէ՛ք որ խօսին, զի անոնք մեր ամենէն աւելի լաւ գիտեն ազգին վէրքերն ու կարիքները . . . : Ողջո՛յն ձեզի, ո՛վ պատուական ձերունիներ, որ միշտ երիտասարդ կը մնաք ձեր ազգին ճակատագրովը զբաղելու, անոր բարոյական փրկութիւնը հոգալու համար . մենք մեր զլխարկները կը հանենք ձեր առջեւ, ու խօսքի իրաւունքը ձեզի կուտանք սիրայօժար, ամէն անգամ որ ձեր հեղինակաւոր ձայները բերէք այս բեմին :

Ու Հայկական Միութեան մտաւորական գործիչներուն ղրմաստուերներն են որ աշխարհիս բոլոր ծագերէն կուզան իրենց կարգին ներկայանալ մեր մտքին՝ երբ կը խորհինք թէ «Միութիւն»ը հայ մտաւորականութեան ամենէն սիրելի ու վնասուած

ժամագրավայրն ըլլալու է, որպէս զի ան կարենայ ազդուապէս ծառայել իր կոչումին : Ասիկա ինքնին բարոյական մեծ գեղեցկութեան մը կերտումը պիտի պատկերացնէ հայկական գիտակցութեան առջեւ :

Ասով բնէ չենք ուզեր, սակայն, որ հայ մտաւորականութիւնը պերճանքի ցուցադրութիւն մը ընելու կը հրաւիրուի հոս :

Հայրենի մեր ցաւոտ իրականութեան պահանջներէն ըզխած՝ այս օրիակը իր խրաքանչիւր երեսին վրայ պէ՛տք է կեանքի բարախումը կրէ ու զգացնէ : Գրական ճիշդեանքիզմը մշակելու չէ որ պիտի ձգտին հոս բոլոր անոնք որ իրենց գրիչն ի սպաս պիտի դնեն «Միութիւն»ին : Հայ գրողէան ու հրատարակողը՝ Հայութեան սրտին զարկն աւելի ճիշդ ու աւելի ուժգնօրէն արտայայտելով, անոր մտաւոր քաղցածութեան աւելի առատ ու աւելի անարատ սնունդ ընծայելով է որ պիտի արժեցնեն հոս իրենց տաղանդը : Ու միշտ ջանադիր պիտի ըլլան անոնք ազգային մեծ ու ընդհանրական համակրութիւններու շեշտն ու շունչը դնել ու թրթռացնել իրենց այն աշխատութիւններուն մէջ որոնք այս սխնակները պիտի գեղազարդեն :

Եւ ո՛վ է մեր ազգային գրական եզրայրակցութենէն՝ որ պիտի չուզէր իր բաժինը բերել «Միութիւն»ին : Ո՛վ է որ՝ կորուստի դատաարարուած ճիղերու այս տնայն ու շիօթ շրջանին՝ իր հոգիէն անկորնչելի բան մը, ճիշ մը, վշատակ մը պիտի չի բազձար ձգել այս մասունքարանին մէջ, ուր վաղուան Հայութիւնը իր երախտաւորներուն նտիրական նշխարները պիտի վնասէ, անոնց անունները պիտի սերտէ, իր պաշտամունքին խորանները ձօնելու համար անոնց :

Յեզին էութեանը հազարգուելու ինչքան ուղղակի միջոց մըն է զոր պիտի տայ «Միութիւն»ը, Հայաստանի ամենէն յետին անկիւններէն Արտասահմանի ամենէն հեռու որ հանգրուանները, միութեան կապ մը դառնալով Հայութեան ցիրուցան զանգուլձներուն ու բեկորներուն միջեւ :

Թերեւս եղած պիտի չըլլան հայերէն սպազրուած թուղթի թերթեր որ այնքան լայն ծաւալում մը ու սաւառնում մը անեն հայկական կեանքի իրականութեան մէջ՝ որքան «Միութիւն»ը սահմանուած է ունենալ իրրեւ բերանը ազգային այն հաստատութեան, որուն արմատը կը ձիւղաւորուի Բուրգերէն միջեւ Տարօնի սարերը, և որ իր ոյժը կը քաղէ մինչեւ Ամերիկայի մեր ամենահեռու որ գաղութներէն :

«Միութիւն»ը գերազանց յատկութիւնը պիտի ունենայ Հայը Հայուն կապելու, որովհետեւ անկիւն Հայուն պիտի մօտենայ, անոր ցաւերն ու կարօտները պիտի վնասէ, անոր կեանքը պիտի սպրի թէ՛ հայրենի հողին վրայ և թէ ի տար աշխարհ :

«Միութիւն»ը թեւատարած ու անվճատ կուտնիւր պիտի ըլլայ որուն հաւասարապէս պիտի դիմեն հայ տարազիրն ու հայ գիւղացին : «Մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս», պիտի հարցնէ հայ նժդեհը : «Տար աշխարհէն խապրիկ մը չունի՞ս», պիտի հարցնէ հայ գեղջուկը : Ու կուտնիւր երկուքին ալ սրտասնդող պատասխան մը պիտի ունենայ միշտ տալիք :

«Միութիւն»ը կոչուած է առողջ ու սնուցիչ Բանին բարիքները բաշխելու մեր մտքի անժառանգ հայրենի ժողովուրդին : Գրագէտը շինարար ճշմարտութիւններն ու ստեղծագործ գեղեցկութիւնները պիտի տարփողէ հոս, հրատարակողը հայ կեանքի խաղաղ զարգացման երեւոյթները պիտի վերլուծէ և ընկերային-բարոյական բնաշրջում մը պիտի ուսումնասիրէ, գիտնականը՝ անտեսական, գիւղատնտեսական, առողջապահական ու այլ պիտանի գիտելիքներ պիտի սորվեցնէ ուսումնազուրկ շինականին : Բանաստեղծը՝ աշխատանքին, հողին, կեանքին, կորովին կազուրիչ երգերը պիտի հնչեցնէ,

և ամենքը մէկ պիտի կազմեն հողեցունց համարը հայ մտքի և կեանքի վերածնութեան : Ու ո՛րքան որ մէկզկէն հայրենի վերքերը սպիանան, ո՛րքան ցաւերն ամալուին ու գրկանքները դարմանուին՝ այնքան աւելի պիտի ընդլայնի ու ճոխանայ ազգային մտաւորական կենսաւետումը ծրարիւրը, որուն իրագործումին ստաջին քայլը, այլ որուն նաև ամբողջական կատարման խորհրդանշանը պէտք է ներկայանայ «Միութիւն»ը :

Հայ գրականութիւնն ու հայ գեղարուեստը ճակատագրուած չեն, անշուշտ, մինչեւ վերջը ստուերին մէջ ու պատերուն տակ մնալու : Չեւք մը, հօօր ու տիրական ձեռք մը, պիտի երկնայ հարկաւ որ մը արժանաւոր հայ արուեստագէտն ու հայ գրագէտը ապահովելու համար իր տաղանքին աղաա ու անարգել ընդամումին մէջ :

Ու «Միութիւն»ը հո՛ն պիտի ըլլայ՝ Հայկական Աշխարհին յուշածու և միջնորդ հանդիսանալու՝ անոր ստանձնած գարգացական ու քաղաքակրթական գերին ճշգրիտ ու կատարեալ ճանաչողութեանը :

«Խօսքերը կը թափն, կը ցնդին, բայց գործերը կը մնան» կ'ըսեն : Խօսքերը չեն կորսուիր, և անոնք գործեր ըլլալ կը սկսին արդէն այն օրէն իսկ որ թուղթի վրայ կ'արձանագրուին :

Հ. Բ. Բ. Միութիւնը ամբողջ վիտացող, յուսացող, երազող, մտածող աշխարհ մը ունի իր բարոյական լայնածաւալ միջնորդութիւն մէջ : Աննշան խմբակ մը չէ՛ ան այլևս որ անկիւններու մէջ իր խորհուրդները վարտար : Հոյնիբու ամբողջ զանգուածներ կ'եռուզեան այսօր Հայկական Միութեան գրօշին տակ : Անհրաժեշտ էր որ այսպիսի մեծ ընկերակցութիւն մը ունենար իր արժանաւայել բեմը : Եւ ահա «Միութիւն»ը այդ պակասն է որ կուզայ լրացնել այս ստաջին քայլով :



ՀԱՅ. ԲԱՐՅՊ. ԸՆԳՉ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՆԻ ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅԸ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԵՐԸ

Մեր ազգային ներկայ իրականութեան մէջ տարակոյս չիկայ այլեւս թէ՛ Ազգային Սահմանադրութիւնը և Հայկական Ընդհանուր Միութիւնը գեղեցկազոյն յղացումներն են ժամանակակից հայ կեանքի մէջ, որ նոյնանալով իրար կ'ամբողջացնեն՝ ցեղային ինքնապահպանման և ընկերային վերականգնումի դուռ հայկական համազգայնական գեանքին վրայ :

Ազգային Սահմանադրութիւնը օրինաւոր վաւերացումն իսկ էր հայ ազգին ինքնուրոյնութեան և միանգամայն երաշխիքը անոր կրօնա-կրթական ինքնօրինութեան : Ազգը, մեծամեծներու բռնատիրութեանը ենթարկուած, կը ձերբազատուէր այլեւս Ազգային Սահմանադրութեամբ, որ ասպարէզ կուտար հայ խիղճին, հայ կամքին, հայ միտքին՝ անկախօրէն ինքնազարգանալու և արտայայտուելու, իբրև պատմական ցեղ մը՝ որ երկինքին տակ իրեն յատուկ տեղ մը ունի, և իբրև քաղաքակրթամէտ ցեղ մը՝ որ չուզեր զանդազիւ ազխութեան և աղքատութեան անհարթ ճամբաներուն քովն ըլլալ :

Բայց Ազգային Սահմանադրութիւնը հայ մտատիպարը չէր, բոլոր և ամբողջ անիկա, շատ շատ, հայ նուազագոյն պահանջներուն օրինադրումն էր : Յեղին ներքին կեանքը կարգի դնող վարչական մեքենան էր անիկա պարզապէս : Բայց այդ կեանքը հետզհետէ իր աւիւնը կը կորսնցնէր և կ'ուժաթափէր, քանզի այդ կեանքին կը պակասէր մտերիմ համադրութիւնը և ներքին համադրժակցութիւնը, երբ, միւս կողմէ, արտաքին բոլոր վատ ազդակները կը համերաշխէին քանդելու ինչ որ գեռ ունէր այդ կեանքը ուժ՝ վերապրելու համար աղետաւոր անցեալէն և սպառնալից ներկայէն :

Պէտք էր պատասպարուել վտանգին դէմ, պէտք էր ստեղծել նոր ուժ մը՝ որ կենսաւորէր ցեղին անարին կեանքը, ուժ մը՝ որ հետզհետէ արժանի ընէր անիկա խաղաղութեան որուն կարօտ ունէր և քաղաքակրթութեան որուն յօժար էր :

Հայ յեղափոխութիւնը, որ հայրենասիրական այնքան զժբաղը, որքան զմայլելի խելայեղութիւնը եղաւ հազարաւոր խեղապաշտներու և երազացնորներու, որ եղաւ մանաւանդ մեր յուսահատական վերջին գերագոյն ճիզը՝ արդար որքան և անհրաժեշտ դատի մը, նուիրագործուած հազարաւոր հերոսներով և մարտիրոսներով, աւա՛ղ, իրեն հետ բերաւ արին և աւեր, աւեր և արին . . . :

Ի՞նչ կը մնար այլեւս Հայութեան ընել, Չգե՞լ որ վերջին արեան կաթիլը հոսէր, վսեմօրէն . . . ձգե՞լ որ վերջին երազն ալ թռչէր, բոլորը իրարու ետեւէ կորսնցնելէն վերջ, գիւցազնարա՛ր . . . :

Ազգին ցաւերովը՝ այլապէս ըմբռնուած հայրենասիրութեամբ մը շահագրգռուող Հայեր կային, հոս ու հոն : Անուսարսափի առաջին տպաւորութիւնները քիչ մը մաշած էին արդէն, ջարդ ու քանդի արհաւիրքները հաղիւ տեղի տուած էին տոնմային կենսաբնազգին : Պէտք էր քով քովի գալ, պէտք էր ձեռք ձեռքի տալ, պէտք էր հայ

սիրտերէն պատնէշներ կանգնել՝ սպառնացող վտանգին դէմ, պէտք էր հայ կամքերէն նոր կեանք մը ստեղծել, ինքնաբաւ և դերահօր՝ նոր կորով մը ներարկելու չափ ազգին, որ այլեւս ինքնիրենը բոլորովին պիտի այլասերէր ու փճանար, ձգուելով իր անողորմ ճակատագրին :

Քանզի կարծես սեւ ձեռք մը գրած էր հայ պատմութեան մէկ սպիտակ էջին վրայ — Հայը պէտք է ջնջուի . . . :

Այսպիսի ինքնասթափ մտածումէ մը, այսպիսի կենսատիպ մտայնութենէ մըն էր որ ծնաւ Հայկական Բարեկործական Ընդհանուր Միութիւնը : Անիկա իրեն դաւանանք ունէր «Միութիւնը Զօրութիւն է» և իր բնաբանն էր «Հայը Հայրով և Հայրու հաւնար» :

Ի՞նչ աւելի գեղեցիկ, ի՞նչ աւելի վսեմ խոյալ Հայուն համար, անխտիր, ո՛ր աստղին տակ և ո՛ր դրօշին տակ որ կ'ապրի ան, և ի՞նչ աւելի ընդարձակ ասպարէզ ազգաշինութեան գործաւորներուն համար, քան Հայկական Ընդհանուր Միութիւնը :

Անիկա՛ միութեան գիծը, բախտին մէկ հարուածովը աշխարհիս ամէն մէկ կողմը ցրուած ու տարտղնած, մտոցուած ու կորսուած Հայերուն միջեւ : Անիկա՛ օգնութեան վարտա մը, հայ շինականին համար՝ որուն լուծքը և ցանքը առին տարին, հայ գործաւորին համար՝ որուն օճախը ու թէգիւհանք քանդեցին, հայ տարագրին համար՝ որ կըտոր մը հող կ'ուզէ և գլխուն բարձ մը : Անիկա՛ ինքնօգնութեան դպրոց, որովհետեւ ինք միայն պիտի սորվեցնէ Հայուն օգնել Հայուն, երբեք չի գնելով իր յոյսը օտարին վրայ՝ որ անտարբեր է և գրացիին վրայ՝ որ շահասէր է : Անիկա, վերջապէս, բարիքին գերագործութիւնը և անկախութիւնը հռչակեց :

Բայց անոր գերը առաւելապէս բարոյական է, որովհետեւ անոր կազմը հիմնուած է համազգային շինիչ սկզբունքներու վրայ և անոր նպատակը կը բղխի աւելի քան դուռ մարդասիրական վե՛ր զգացումներէ : Հայրենիքին բարօրութեան գործին նուիրուած ազգաշին մեծագոյն ձեռնարկն է, որ իր շուրջ բոլոր անհատները և հաստատուները բոլորելու հմայքն ու զաղտնիքը ունի :

Քանզի, երբ գեռ բռնակալութեան բէժիմը կը տիրապետէր, առաջին անգամ, Միութիւնը ելաւ քարոզել թէ իր կազմովն իսկ ինք խտիր չի գնէր Հայուն միջեւ, և թէ իր դրօշը կը հովանաւորէ հուսաարատէս, առանց սեռի, դաւանանքի, դասակարգի և կուսակցական խտրութեան, Հայութիւնը համօրէն ու ամենուրեք :

Միութիւնը եկաւ նաև քարոզել թէ իր նպատակն է օգնել Հայուն անխոստայիս, իր հայրենի հողին վրայ տառապող թշուառ Հայուն, և Հայ ըլլալուն պատճառաւ իրաւազրկուած և հալածուած Հայուն :

Եւ իր ձայնը յուզեց աշխարհիս ամէնէն խոր անկիւնները գտնուող սիրտի տէր բոլոր ազգասէր Հայերը, որովհետեւ այդ ձայնը Բարիքի սիրահրաւէր փողահարն էր, որովհետեւ այդ ձայնը Նախախնամութեան մը քաղցրութիւնը ունէր, որովհետեւ անիկա ողորձ էր ինչպէս Գութը և խոստումնաւոր ինչպէս Հաւասաքը :

Իսկ այսօր, հայ ներկայ իրականութեան մէջ ո՛ր գեանքը աւելի պիտի յարմարէր հայ կամքին, հայ տաղանդին, հայ դրամին՝ զարու միանալու կողք կողքի, դալու աշխատելու ձեռք ձեռքի, քան բարեկործական և ազգաշինական հանգամանքը՝ զոր որդեգրած է Հայկական Ընդհանուր Միութիւնը :


Բայց և այնպէս, հակառակ այդ երևութային սահմանափակումին, կա՛յ արդեօք գործ մը որ կոչուած ԸԼԼայ այնքան սխալմատիկօրէն վեր հանելու՝ ինչ որ Հայը ունի նկարագիր և կորով, վերականգնելու՝ ինչ որ Հայը վրայ տուաւ՝ քանդուած օճախներ, ջարդուած կեանքեր, յախշտակուած իրաւունքներ, երաշխաւորելու Հայուն ինչ որ ձգտում ունի ան դէպի քաղաքակրթութիւնը, մտաւորական և սնտեսական ձերբազատումով, դէպի լաւագոյն կեանք մը, որուն անվիճելիօրէն իրաւունք ունի իր դարաւոր կեանքովն և պատմական հիմքովը, — կա՛յ արդեօք գերազանց և գերազօր դաշինք մը, նախաձեռնութիւն մը, ձեռնարկ մը, քան Հայկական Ընդհանուր Միութիւնը :

Իր նպատակը ուրեմն աւելի բարձր է և բազմակողմանի քան զուցէ ինչ որ չարտայայտեր քանի մը անձուկ բառերու տառական իմաստը . իր նպատակը ստուգիւ շատ աւելի բարձր է քան ինչ որ չերեւար, բայց որ կը բացատրուի իր աստիճանաւոր թէև անվերապահ իրադրժոժովը, ըսել կ'ուզենք՝ Հայուն ընկերային ազատագրութիւնը և սնտեսական գերակայութիւնը :

Եւ ատիկա արդէն դարուս գլխաւոր զօրութիւնն է, որուն ոչ միայն իրաւունք ունի նկրտելու մերինին նման փոքրիկ ու աղէտ ու աղքատ և անօք՝ ԸԼԼայ իսկ սակայն գերազանցապէս ընդունակ և ձեռնարկէց աղջ մը, այլ որուն և անհրաժեշտաբար պէտք ունի՝ զիմագրաւելու համար ինքը շրջապատող հակընդդէմ տարրերուն բռնական ու համայնակուլ բնազդներուն, և վերականգնելու համար այն ազէտքներէն վերջ, զոր դարերէ ի վեր կրած է և զոր պիտի կրէ տակաւին, աւա՛ղ, մինչև որ իր կրթութեամբն ու հարստութեամբը բարձրանայ ընկերական այնպիսի զիրքի մը, որ քաղաքակրթ աշխարհին յարգանք աղղէ և իր դոյութեանը սոխաճացող վստանդները ամբլութեան դատապարտէ :

Այս տեսակէտով, Հայկական Ընդհանուր Միութիւնը ոչ միայն լրացուցիչ մասն է Ազգային Սահմանադրութեան, այլ և նոյնիսկ և մանաւանդ օգտակար տարր մը եւ սատար մը երկրին Պետութեան՝ որուն բարեկարգիչ և քաղաքակրթիչ գերին ծառայելու կոչումը ունի իր բնոյթովը և ծրագրովը :

Անոնց համար որ երէկի յուսախարութիւններէն ընկճուած հողի մը վերջին սիրտանքը կը փնտռեն, ինչպէս և անոնց համար ալ որ վաղուան յոյսերուն կը բանան իրենց սիրտերը խանդակաթ, բոլոր անոնց որ՝ եսին բանտարկեալը ԸԼԼայէն աւելի այլափրութեան առաքեալը ԸԼԼայուն մէջ կը դաւանին կեանքին նպատակը և միանգամայն փառքը, ամէնուս համար որ Հայ ենք, ամէնուս համար որ տառապեցանք իրրեւ հայ և տեսանք հայ տառապանքին բոլոր անազանդները, Միութիւնը պաշտելիօրէն աղնիւ և բարի գործն է որ կը ներկայանայ այսօր հայ խղճմտութեան առջև, և որուն եղբայրական դրօշին տակ միացած՝ միսթարական է զանեւ կեանքին գեղեցկադոյն վայելքները՝ Սէր և Բարիք :



2. Բ. Ը. Միութեան Ընդհանուր Բարոտօղարութիւնը զիւստական այնպիսի պաշտօն մը չէր գոր կարենար քացնել ո՛ր և է կարող ու բարեխիտց զպիր :

Բարախուն նոզի մը պէտք էր որ միանգամայն բանի վարպետ մը ըլլար, տիրարար կատարելու համար այն գերագանց դերը որ Միութեան ներքին յարաբերութիւններն ու նաորդութիւնները վարելու ամենօրեայ կենսական աշխատանքին մէջ կը կայանայ, և որ Ընդհանուր Բարոտօղարին բաժին կ'իլնայ :

«Ստացանք, առարկեցինք, նկատի առինք, նաշիւր փակեցինք ին.» ըսելով չի վերջանար այս բարոտօղարութիւնը : Ամեն սրտի յարմար կոչ մը, ամեն մտաբնութեան պատշաճ ոճ մը, ամեն պարագայի ներդաշնակ արտայայտութիւն մը պէտք է, բոլոր նամակրութիւնները, բարեացակամութիւններն ու ձեռնտուութիւնները ապացուցելու, կապելու, ամրագնդելու համար Միութեան Գործին :

Եւ Մայեզեան այս ձիզին մէջ կը դնէ բանաստեղծի, օրենքի մարդու և նանրային գործիչի իր բազմակողմանի ձիրքը :

Անիկա իր բարոտօղարութիւնը կը գործադրէ իր պարագոյ և նաճոյքի ժամերուն, ինչպէս արուեստագետ մը գորգուրանքով պիտի աշխատեր իր ստեղծագործւած մէկ պատկերին կամ արձանին վրայ :

Խղճամիտ, բժախնդիր, պատշաճաւոր, Մայեզեան կարգի, մերտի, նամաւարութեան մարդրն է, բայց խանդակաւորեալն ալ մարդը :


«Առանց գործի խօսքը մեռեալ է», այո՛, բայց «առանց խօսքի գործն» ալ շատ նագուղեպ, զրտելու համար անկարելի, գէր մեր նարակական կեանքին մէջ : Խօսքը արդէն գործաւոր կը սկսի, գործին մաս կը կազմէ ա՛յն վայրկեանէն իսկ կըր կը սանձանուի որոշ գործունէութիւն մը կամ նանրօգուտ շարժում մը ստեղծելու :

Վանան Մայեզեան, 2. Բ. Ը. Միութեան Ընդհանուր Բարոտօղարի իր նանգամանքով, այդ ստեղծագործ խօսքն է գոր կը նացնէ ամեն օր «Բարեգործական»ի Մասնաճիւղերուն, ներկայացուցիչներուն, ու բոլոր անոնց՝ որոնց բարեացաճամութեան կամ անձնու իրութեանն բան մը ունի :

շանելիք ազգանուէր այս մեծ հաստատութիւնը :

Եւ, այսպէս, իր նամակները քերթուածներ կ'ըլլան երբեմն, իր շրջաբերականները՝ նրապարակագրական կոչեր, և իր տեղեկագիրները՝ խղճամիտ ուսումնասիրութիւններ :

Ու բանաստեղծի իր քմայքը բեռ ու բոխքը կ'առնէ՝ կըր Միութեան ի փիւռու աշխարհի ցրուած անդամները՝ տօնական միեւնոյն կարգախօսով կամ եղբայրակցական միեւնոյն խորհրդանշանով խրանելու, ոգևորելու առիքը կը ներկայանայ :



Վ. Մ Ա Լ Է Ջ Ե Ա Ն
ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ 2. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱԴՊԻՐ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ
ԵՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՏՈՒՂԱՐ
ՏԵՕԸԼԵՆՍԻՄԵԱԳԻՐ «ՄԻՈՒԹԻՒՆ», ՊԱՇՏՕՆԱԹԵՐԻ

Վանան Մալեգեան գրայնիկ քերթոյի իր խրատ ալ քիչ մը ետեւան մեկուսացումը չի փնտեղ երբէր:

Անիլա, շատ անգամ, իր քնարէն բամուկացաւ, նախնային կեանքին ու իր պայքարներուն խառնուելու նամար:

Կիլիկեան արեւուն վրայ, շեշտաւորական վաղորդիկն տարուեցաւ, և ինք ամիս կրեց մանցու տաճանքը բրբական գնտաններու:

Եգիպտոս, իրեն նամար, նախ, սպարիմովի ու կազդուրման նանգրուանն եղաւ, և նոս էր որ, իր քաչքայուած առողջութիւնը վերստանելէ ընտոյ, տակաւ ի յայտ բերաւ և արմեցոյ իր մտաւորական բարձր ընդունակութիւնները:

Խառն-Պատարաններու մտա փաստարան, Մէրր Վանան Մալեգեան իր գրական արդէն շատուած դափնիները ճիսացոյ՝ եգիպտոսայ մամուլին մէջ, նրապարակագրական գեղեցիկ էջեր ստորագրելով՝ Արփիարներու, Քէլեկեաններու, Թէրեկեաններու, Մկրտիչեաններու, Մուշեղներու կողքին:

Իր խօսքին նմայքը շատ անգամներ եգիպտոսայ մտաւորական նամակներու մէջ շատուած անցոյց:

Բայց Յամանեան Սահմանադրութեան վաղորդայնին էր որ նասարակական գործիչի իր խանդավառութիւնը գերագոյն բախով մը պոսրկաց:

Իրեն Ս. Ռ. Կոստանցոյեան նիւնաղիլիներէն մին, Վանան Մալեգեան ժամանակ մը ամենէն աւելի գրայեցաւ նոր կեանքի ու գործունեութեան ծրագիրներով որոնք մեծ մասամբ բուրբի վրայ պիտի մնային . . .

Բաղարական նոր ստարակի մը նուագակները կը ժպտէր իրեն: Տօր. Տաղարական, Տիրան Քէլեկեան, Վանան Թէրեկեան և ուրիշ-

ներ արդէն մեկներ էին անվերապարձ, ու նուուեր Մալեգեանի պետական ու ազգային յորձանքներու մէջ: Ազգեցիկ ու նեղինակաւոր բարեկամներ գինը Պոլիս կը կանգէին, փայտուն զիբեր ու տիտղոսներ շողացնելով իր աչքին. . . Մալեգեան Պոլսոյ **ԳՈՐԾՈՍ** թատապեր էր նոս երկար տարիներ, — վկայ իր «Տարագրի-Յուշատար»-ը, — և անշուշտ փորձութեան վայրկեաններ ունեցաւ, վերադառնալու Վասիլիին, Մտապին, Հայքիին ու բոլոր այն պաշտակի վայրերուն որոնք իր կրիտատարը պատրանքները ու կրագանքները շրջապատել օրօրեր էին՝ ընկալուց ճոցերու սկս. . .

Բայց նոս ալ ուրիշ զօրաւոր տարիանքէ մը բունուեր էր Մալեգեան, տարիանք մը՝ որ կը կատարէր գինը կամ նագիւ մէջ-երկու ամսուան բացակայութիւն կը բոցատրեր իրեն ամառնային արձակուրդի ամիսներուն:

Եւ այդ տարիանքը, այդ պաշտամունքը՝ Հ. Բ. Ը. Միտրիան էր, որուն բոլորանուեր փաբեր, որուն նու նոցնացր էր ալիս Վանան Մալեգեան:

Հիմա չի գոջար, անշուշտ, եգիպտոս մնացած բլլալուն նամար: — Հինգ տարիէ ի վեր իբարու յաջորդոյ անատր նիասրափումները՝ ամենուս ալ ջուր խառնել տալին մեր գինիին. . . Պոլիսը, նուուէն միշտ նրապարիչ, ներսէն անյատակ վիճ մը եղաւ, տակայն, յախանական պջրունին՝ որուն գիրը զարան մըն էր բունուեր դատմութիւններու դաժան խարկանքներու. . . Մալեգեան գնաց, քանիցս, աչքովը տեսաւ արդէն:

Հ. Բ. Ը. Միտրեան Կեղը, Վարչ. Ժորժոյ Ատենապիլին ու Ընդհանուր Բարատուարը իր մտաւոր նասունութեան բովանդակ խանդովն ու կրթովովը չծուած կը մնայ այնպիսի ազգաշէն ճիգի մը որ յուսախարութիւն չի վերապաներ ընաւ իր անձնուերներուն . . . :



ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ԿՈՒՊԱՐ

ԱՏԵՆԱՊԵՏ (ՅԿԵԱՆՍ) ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ

† ԱՐՐԱՆՍ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂ

† ԳՐԻԳՈՐ ՄԷՍՈՒՄԷՏԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ

ԵՐՈՒԱՆԴ ԸՂԱԹՕՆ ՊԷՅ

ՓՈԽ-ԱՏԵՆԱՊԵՏ ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ

ԳԷՈՐԳ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՏԻԿԻՆ ԸՂԱԻՆԻ Գ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈՒԵԱՆ

ՏՕԲԹ. ՊՕՂՈՍ ԿՈՍՏԱՆԳԵԱՆ



Յ Ո Ւ Յ Ա Կ

Միութեան հիմնադրութենէն մինչև առայժմ (1906—1913), Միութեան եւ շահ մասի տարի կամ նուէր արձանագրուած բարեւեր ազգայիններու անունները ըստ տարեկան նշանակուած են :

Նշանակ. Ասկի	Նշանակ. Ասկի	Նշանակ. Ասկի	
ԼԵՒՈՆ ՊԷՅ ՅԱԿՈԲԵԱՆ	4138,70	ԱՌԱՔԵԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	100,—
ՏՕՔԹ. Պ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ	3500,—	ԶԱՐԵՂ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	100,—
Գ. ՄԵՕԲԷՄԷՏԵԱՆ [Խանգ.] (Կառկ)	3000,—	ՎԱՅՐԱՍ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	100,—
ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ	2416,25	ԿՈՍՏՈՒՇԻ ԵՒԱ Տ՝ԱՐՇՈՏ	100,—
ԳԷՈՐԳ ՍԱՐԳԻՍԵԱՆ ԵՒ ՏԻԿ. ՍԱՐԳԻՍԵԱՆ	1950,—	ԱՐԱՄ ՊԷՅ Տ՝ԱՊՐՕ	100,—
ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ	1000,—	ՎԱՅԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ	100,—
ՎՍԵՄ. Ա. ՓԱՇԱ ԲԱՐՅՈՂ [Խանգ.]	1000,—	ՏԻԿ. ԵՐԱՆՈՒՇԻ ՅԱԿՈԲԵԱՆ	97,50
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ	964,30	ՄԱՏԹԵՈՍ ԽԷՐԵԱՆ	96,90
ՍԵՂԻՍ ԴԱԻԹԵԱՆ	802,50	ԶՕՐԱԵԱՆ ԵՂԲԱՐՔ	77,15
ՌԱՓԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ	771,50	ԱՆՏՕՆ ՇԱՃԵԱՆ	77,15
ՏԻԿ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ	500,—	ԿԻԼԻՔԷՆԿԵԱՆ ԵՂԲԱՐՔ	60,—
ՄԱՐՔԻՉՈՒՇԻ Ռ. ՎԷՆԹՈՒՐԻ ՃԷՆՕՐԻ	497,—	ԵՐՈՒԱՆԴ ԹԸՆԿԸՐ	57,86
ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ (Կառկ)	438,75	ԵՐՈՒԱՆԴ ՊԷՅ ԱՂԱԹՕՆ	50,—
ՎՍԵՄ. ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ	400,—	ՅԱԿՈԲ ՊԷՅ ԲԱՐՅՈՂ	50,—
ՏԻԿ. ՆՈՅԵՄԻ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ	400,—	ՅՈՎԱԷՓ ԲԷՄՊԷՃԵԱՆ	50,—
ՕՐ. ԱՆՆԱ ԶԱՄԻԶ	390,—	ՕԼԻՎՕ ԵՒ ՊԱՔԸՐՃԵԱՆ	48,75
ՎՍԵՄ. ՅՈՎԱԶՆԵՍ ԷՅ. ԱԼԼԱՅՎԷՐՏԻ	390,—	ՏԻՐԱՆ ՓԷԼԻՊՈՍԵԱՆ	45,75
ԱԹԱՆԻԿ ԷԳՆԱԵԱՆ	385,75	ԳՎԲԻԷԼ ԷՅ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ	43,87
ԱԳԱՅԱՆ ԹԱՅԱՊՐՈՒՆԵԱՆ	385,75	Բ. ԵՒ Ե. ԳԱՐԷԿԵՉԵԱՆ	43,87
ՅԱԿՈԲ ՔՐՔԵԱՇԱՐԵԱՆ (ԲԵՐԽԱՇԻՆ)	359,77	ՄԿՐՏԻԶ ԷՍԱԵԱՆ	43,87
ՅՈՎԱԶՆԵՍ ՊԷՅ ՄԱԹՈՍԵԱՆ	300,—	Մ. ԷՔՍԷՐՃԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ	43,87
ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԵԱՆ [Խանգ.]	200,—	ԵՂԲԱՐՔ ԹԱՅԱՊՐՈՒՆԵԱՆ	43,87
ՍԵՐՈԲԷ ՍԸՎԱՃԵԱՆ	192,88	ԵՂԲԱՐՔ ԻՓՐԱՆՈՍԵԱՆ	43,87
ՎԷՇ. ՍԱՅԱԿ Բ. ԿԱՅՈՂԻԿՈՍ ԿԷԼԻԿՈՅ	177,50	ԳՐԻԳՈՐ ԿԻՍԻԿԵՐՏԱՆ	43,87
ԱՐԹԻՆ ՊԷՅ ՐԷՅԻՉԵԱՆ [Խանգ.]	150,—	ՇՐԱՆԴ ՊԱՊԱԵԱՆ	43,87
ՄԻՔԱՅԷԼ ՊԷՅ ՐԷՅԻՉԵԱՆ	150,—	ԽԱԶԱՏՈՒՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ	38,57
ԱՐՄԵՆԱԿ ԿԱՍՏԱՐԱԿԱՆ	126,75	ԿԱՐ. Յ. ՏԷԼՍԻՉԵԱՆ	38,57
ՏԻԳՐԱՆ ԿԱՍՏԱՐԱԿԱՆ	117,—	ՄԻՇՐԱՆ ԳԱՐԱԿԵՉԵԱՆ	30,—
Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ	109,—	ՅԱԿՈԲ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ	30,—

Ժամանակակից հայ ընկերութեան ամենէն ինքնատիպ դեմքերէն մին կրնայ նկատուիլ Տիգրան Խան Քէլեկեանը:— Տիգրան մը որուն մեջ կուսակցութեան գիծեր ժողովուրդի զանազան շահերուն կը խառնուին, առանց բան մը կորսնցնելու իրենց հարազատութենէն, կարծես զիրար ամբողջացնելով, իրարու հետ տարբանայով, բիւրեղանայով:

Կենսագրագրարի ասպարեզին վրայ բեւե համետ աստիճանէ մը նետուած՝ Տիգրան Խան Քէլեկեան նուաճողի, յայրակամի բոլոր անհրաժեշտ ձիրքերովն օժտուած էր, կորով, յանդուրձանքով:

նորին, բաղդը նշմարելու և զայն որսալու գերագանց յատկութիւնը մարմնացնելով իր անձին մէջ:

Իր դրսերեւոյթը «բարի նախի» մը — ինչպէս կ'ըսեն — տպագրութիւնը կը գործէ վրադ, ու կը զգաս քե ներկայութեանը կը գտնուի մարդու մը որ հզօրապէս շինուած է դժուարին հետապնդումներու, տաժանքոտ ճիգերու և ամենի խիզախումներու զինագրաւումին համար՝ ներքի աշխարհին մէջ: Կը զգաս, միեւնոյն ատեն, քե վեճանձնութիւնը կը լոյսի այս հարուստ խառնուրտքէն, ոչ ետքէն իւրացուած, մտածուած, համակերպուած առաքինութեան մը պէս, այլ ընդամենին, բնական ու աղբիւրի առատութեամբ ժայթքող վեճանձնութիւն մը, որ մեծ մեծերն ընել կուտայ ամենապարզ ու ամենաբնական կերպով:



Տ Ի Գ Ր Ա Ն Խ Ա Ն Ք Է Լ Է Կ Ե Ա Ն
 Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ա Ն Գ Ա Մ Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
 ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ
 ԳԱՆՁԱՊԵՏ Հ. Բ. Ը. Մ. ԲԱՐԵՅԻ ՄԱՍՆԱՅՈՂՈՎԻ

Արեւելեան նին արուեստի բանկարժեք բեկորները, որոնցմով միշտ շրջապատուած է և որոնց խորունկ նմանութիւնը, տիրացած առօրինակի հոգի մը զարգացուցած են այս մեծ առեւտրականին մէջ: Ասով կը բացատրուի տալու, նուիրելու, զոնարեղելու այն անվերապահ յոժարութիւնը որ երբէք չի պակսիր իրեն ամեն հանրային կոչի կամ անհատական աղերսի առջեւ:

Բնիկ Կեսարացի, Տիգրան Խան Քէլեկեան, իր դատարարական ատեն և Կ. Պոլսոյ մեջ Յակոբ Գուրգենի Հայկական Կրթարանէն, և երկար տարիներ իր հանգուցեայ եղբորը, Գեորգ Ազա Քէլեկեանի գործակցելէ վերջ, արտասանման անցած է, և երկու պայի ու Ամերիկայի միջազգային հրապարակին վրայ աջբառու դիրք մը շինած է ինքզինքին իրր անքի՛՛՛ն:

Տիգրան Քէլեկեան Նիւ...

Եօրքի Պարսկական պատուակալ Հիւպատոս Եղած Է և Շիրակոյի ցուցանակներն Պարսկական Գոմիսեր. այդ առթիւ Է որ Շահնն ստացած Է Խանութեան տիտղոսը:

Բացի Նիւ-Եօրքէն ու Փարիզէն, Քէյէկեան Խան Գանիբէի մէջ ալ տուն մը հաստատած Է՝ եզիպտական ննուրիներն ուսումնասիրելու և բանկագին ստացումներ սպասուելու համար:



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ ԿՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԷՆՔԵ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԸ

Արեւելքի մէջ կատարած իր յաճախակի ճամբորդութիւններով նոյակապ հաւաքածուներ կազմած Է՝ որոնց ամենագլխաւորը — և իր տեսակին մէջ անգուգական — Լոնտօնի Սաուրն Քենսինկըրն մուսեօնը ցուցադրած՝ պարսկական յախճապակիներու նրաշալի շարք մըն Է նարիւր հազար ոսկիներ արժող: Այս հաւաքածոյին մասին եւրոպական մեծ մուսեօններու տնօրէնները և ականաւոր մասնագետներ դրուատալից էջեր ստորագրած են, յայտարարելով թէ «Արեւելեան արուեստին պատմութեան համար անգին յիշատակարան մը կը ներկայացնէ ան»: Այս, ինչպէս և արեւելեան նկարագարող կերպաներու ժողովածուները գեղեցկագիտական շքեղ գործեր են՝ որոնց մէջ կը ցոյան Քէյէկեան Խանի ճաշակն ու նմտութիւնը:

Տիգրան Խան Քէյէկեան սքօրդի մարդն ալ Է, գործի ու գեղարուեստի մարդուն նեո: Շանքիլի իր ակտունները կը պարունակեն ազնուագ-

գի ձիեր՝ որոնք Փարիզի մեծ արշաւերուն մէջ յաճախ մրցանակներ շահելով՝ իրենց տիրոջ անունը կը պանծացնեն:


Հայուն սիրելի անունն Է ան:

Տիգրան Խան Քէյէկեան ազգովին յարգուած Է իր անթիւ բարեգործութիւններուն համար — մեծ մասամբ մուսիմ մէջ կատարուած — որոնց կորոյն Է անուարակոյս Որբանոցը՝ զոր կանգնեց Տեօր-Եօլի մէջ իր հանգուցեալ եղբոր Գեորգ Ադա Քէյէկեանի յիշատակին, այս առթիւ արժանաւորապէս դատուելով Հ. Բ. Ը. Միւրեան Բարերար Անդամներու շարքին մէջ:

Իրեն Խորհրդական Անդամ Կեդր. Վարչ. Ժողովի, Տիգրան Խան Քէյէկեան Հ. Բ. Ը. Միւրեան կը բերէ կազմուիչը հաւատքը նորանոր շքեղ իրականացումներու. խոյանքի մարդն Է ան որ անկարելիին արձամարանքը կը ներշնչէ և յոյսը՝ ապագայ մեծագործութիւններու: Իր շենշող ներկայութիւնը յաւատեսութեան, ինքնավստահութեան տիրական նօր մը կը դնէ Միւրեան խորհուրդներուն մէջ և ակտիւ կը խրանէ ամենուն ներսիդին՝ քաղելու ազգայնութեան արգաւանդ ու լուսաւոր ճամբին:



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՅՈՒՄՈՒՄԻ ԿՈՐԱԿԱՌՈՅՑ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԸ



տանայ, նշանակելի մասնակցութիւն մը ունեցած Է Գանիբէի Ազգ. Առաջնորդարանի վարչական ժողովներուն մէջ, և մասնաւորապէս շահագրգռուած Է մեր տեղական դպրոցական գործով, որուն մասին իր սրտցաւ նոգածութիւնը քանիցս յանձնառու լրած Է զինք ան-



Կ Ա Ր Ա Պ Ե Տ Պ Է Յ Շ Է Ր Ի Տ Ճ Ե Ա Ն ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻՆ

Միտայի վրայ փորագրուելիք նուրբ ու տօնմիկ դիմատուեր մը: Բառատուն տարուան այս եզիպտահալը իր Խզմիրեան ծագումէն կը պահէ: Խարազատ շնորհը արևմտեան Հայու այն նազուագիւտ տիպարին, որուն գաղտնիքն ունի յոնիական մեր քոյր գաղութը:

Կարապետ պէյ Շերիտճեան, հանգրատեան կոչուած պետական բարձր պաշտօնատար, քառասուն տարուան դիւանագիտական ասպարեզ մը բոյորած Է այս երկրին մէջ: Հակառակ ասոր՝ Գիգիբական յոգնութեան ո՛չ մէկ նշան ցոյց կուտայ: Իր կայստա. ու ժրջատուն դեմքը իր գեղուղէշ հասակը, իր տիրական կեցուածքն ու շարժուածքը տարիքի ամեն կասկած կը տարանբժնէ: Ե մշտագայար երիտասարդութեան մը նմայրովը կը պարտուեն իր համակրելի գրտերոցը:

Կենցաղագէտ մարդն Է ան գերագանցապէս, և բառին ազնի իմաստով՝ կենցաղատէր մարդն ալ, այսինքն անոնցմէ, որոնք ապրելու արուեստը արքիսի պէս գործ կը դնեն, որոնց ապրումին վաշեցութիւնը կրրէր չիջնար, չի գիշանիր ետական գունկութիւններու, այլ որոնք իրենց եսին պաշտամուները (le culte de soi) կը մշակեն բարձրօրէն, գեղեցկութիւն, պայծառութիւն, ներդաշնակութիւն փնտռելով ու ստեղծելով իրենց շուրջը: Պատեան առաջ՝ անոր իտեալին զերմեռանդ հաւատացեալ մը:

Եզիպտոսի պետական շքեղութեան ու վառքի շքանին՝ Նուպարներու, ա՛՛ Ապրօներու գուրգուրտ նայուածքին տակ՝ ապրած Է եզիպտական միջազգային ամենապերճ ոյրտներուն մէջ, արմրկելով տեղացի ու օտար պաշտօնական ու բնկերական ամենանշանաւոր ներկայացուցիչները:

Ատկէ՛ իր մեծ նմտութիւնը ամեն տեսակ propofօլներու, կենցաղագիտական, յարաբերական կանոններու և աննրամեշտ ձեւակերպութիւններու, որոնց մասին մեր սովորական անգիտութիւնը այնքան ձախորդ կերպով զգալի կ'ըլլայ յաճախ մեր ազգային-վարչական տիրոյքին մէջ:

Կարապետ պէյ Շերիտճեան, իրրե եզիպ-

դամակցելու նոգարարներեանց ու յանձնաժողովներու:

Հ. Բ. Ը. Միւրեան Կեդր. Վարչ. Ժողովոյ անդամ, Կարապետ պէյ Շերիտճեան մին եղած Է այն տասնեակ մը անձնաւորութիւններէն, որոնք՝ Ն. Վ. Պօղոս Նուպար փառայի նովաւաւորութեան տակ՝ նախ տաճարակրեցին Միւրեան գաղափարին կրկունքը, ապա անոր

դաշակներն եղան, զայն փայլալեցին, անոր զարգացումին խանդադատագին հսկեցին, և այսօր իրաւամբ կրնան պարծենալ անոր բարգաւաճութեամբն ու նուիրագործումովը :

Մտաւորական, սիրանար գեղեցիկ դպրութեանց և արուեստներու, Շերիտանան պէշ յօժարակամ ստանձնեց Հայկական Միութեան Կեդրոնական Գրադարանավետի պատուակալ պաշտօնը՝ իր ընտիր ու ճոխ գրադարանը նուիրելով Միութեան :

Եւ հիմա, նաճողք մըն է աւանել պետական այս նախկին բարձրաստիճան պաշտօնատարը, որ յաճախ կուգայ ժամերով յամենայ Միութեան Գրադարանին մէջ դասաւորելով գիրքերը,

հսկելով անոնց կանոնաւոր շարքին, ընդունելով գրենական նոր նուիրատուութիւնները և բըղբակցելով բոլոր այն բարեւեր ազգայիններուն հետ որոնք, արամաղիր են ճոխացնելու Միութեան Մատենադարանը :

Կարապետ պէշ Շերիտանան բանկագին արժեք մը, կարևոր ուժ մըն է Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչ. Ժողովին աշխատութեանց մէջ, ուր իր վարչական գիտակցութիւնը, կեանքի իր մեծ փորձառութիւնը, ինչպէս նաև իր վարուողութեան, **տուարէի** գերագանց յասկութիւնները գինք յաճախ բեկադրիչը կ'ընեն նրբին՝ այլ խիստ պիտանի մանրամասնութիւններու, որոնք մեծ ամբողջներ կը լրացնեն :



ԽՈՐՀՐԳԱԿՅԱԿԱՆ Ա. Բ. Ը. Մ. Ա. Ժ. ՈՂ. ՈՎ.

Հ. Բ. Ը. Մ. Ի. Թ. Ե. Ա. Մ. Ե. Ի. Կ. Ս. Ե. Ի. Մ. Ա. Ն. Ա. Ժ. ՈՂ. ՈՎ. Ն. Ե. Բ. Ո. Ի.

1—2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1912 ԻՆ ՊՈՍԹՕՆԻ ՄԵՋ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ

Թ. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉ. ԺՈՂ. ՈՎ. Ի

(ԱՐՏԱԳԱՂԹԻՆ ԴԷՄ)

S.

Մեր ազգին գոյութեանը սպառնացող միւս աղէտը, աղէտքներուն մեծագոյնը, այս պահուս Ազգային Ժողովէն սկսեալ մինչև յետին ազգայինը մատնած է ամենադառն մտահոգութեանց :

Երկրին անապահով վիճակը, մէկ կողմէն, և անտեսական ահաւոր տագնապը, միւս կողմէն, ստեղծած են այնպիսի ծանրակշիռ ու դժուարակնձիռ կացութիւն մը, որ մեր տարաբախտ հայրենակիցներէն շատեր, կորովազիրի, բոլորովին վհատած, կուրօրէն կը խուճապեն տարաշխարհ, յուսալով գտնել այլու բարօրութիւնը՝ զոր իրենց հայրերուն բնագաւառին մէջ այլևս անկարելի դարձեր է իրենց գտնել :

Աւա՛ղ, այդ յոյսերը սակայն շուտ կը ցնդին, որովհետև արտասահմանի մէջ՝ հալածական գաղթականներուն կը սպասէ այլապէս տխուր և տաճանելի կեանք մը, — անորութիւն, անգործութիւն, անբարոյականութիւն, և աստիճան անանշատ եղող կեանքին բոլոր դառնութիւնները՝ որ օտարութեան մէջ զոհը անգործէն կ'ընկճեն ու կը քայքայեն, մինչև որ՝ մուսլ խորշի մը մէջ, յաճախ վերջին անկարելի հայրենաբարձութեան մը մղձաւանջէն տանջահար, անհունապէս հեռու՝ սիրտի հատորներէն զոր երեսի վրայ թողուցին, պանդուխտի ամենէն դաժան վախճանովը կը մեռնին :

Հայկական Բարեգ. Ընդհ. Միութիւնը, որուն գլխաւոր ձգտումն է հայրենի հողին հաւատարիմ պահել հայ ժողովուրդը, և որուն բուն նպատակն է՝ բնագաւառին մէջ իսկ սատարել Հայութեան մտաւորական ու անտեսական բարեւաւումին, իր սիրտէն վիրաւորուած՝ արտագաղթի այս նոր խուճապին առջև, խորապէս կ'ըմբռնէ այդ հոսանքին վտանգը, և պարտաւոր կը զգայ ազգովին ուխտադրուած պայքարին մասնակցիլ ամենամեծ չափով :

Կեդր. Վարչ. Ժողովը, գիտակից իր պաշտօնին ծանրութեանը, և իր ազգանուէր կոչումին մէջ իսկ անհունապէս վրդովուած, այս կնճառից վայրկեանին՝ թախանձագին կը հրաւիրէ Միութեան բոլոր Մասնաժողովները, և անոնց շուրջ այնքա՛ն անձնուիրաբար բոլորուած հազարաւոր անդամները, որպէսզի գերմարդկային ճիգեր թափելով առաջը առնեն այս մեծ աղէտքին, համոզուած թէ՛ բնութեան և բռնութեան միւս բոլոր աղէտքներէն շատ աւելի ծանրօրէն և գահավիժօրէն ազգային գոյութիւնը վտանգելու բնոյթը ունի արտագաղթը :

Պէտք է մեր տառապակոծ և յուսահտուր հայրենակիցները համոզել թէ՛ վայրկեանը երբեք այս աստիճանի բախտորոշ չէ եղած, և Հայուն պարտականութիւնը երբեք այնքա՛ն մեծ՝ հայրենի հողին կառչելու, նոյնիսկ յուսահատօրէն :

Այս ցեղը աւելի ահաւոր շքաններու կուրծք տուած, աւելի քանդիչ փոթորիկներու դիմագրաւած է : Այս ցեղը դարերէ ի վեր վերապրած է արիւններու և աւերներու մէջէն, և հիմա՛ որ չարիքին զօրութիւնները անբաղդատելիօրէն նուագած են, հիմա՛ որ առաւելապէս «բաղաբական» և «անտեսական» պատճառներ միայն կը բնորոշեն անոր դասալքութիւնը հայրենիքէն, չենք հասկընար թէ՛ ինչո՞ւ անոր կը պակսի, այսպէս, իր ճակատագիրը բիջ մըն ալ տանելու կրելու կորովը, մինչև որ իրեն համար ալ բարօրութեան արդար իրաւունքը վերջապէս իրականութիւն դառնայ իր երկրին մէջ :

Կեցուցէ՛ր արտագաղթի այս ազգակործան հեղեղը, հայրենակիցներ : Ձեր բոլոր կամբերովը, ձեր բոլոր լանջքերովը, ձեր բոլոր ճակատներովը ծառայէ՛ր այդ աղէտին դէմ, և ըրէ՛ք որ անոր թափը կտարի, թէ՛ ներսէն դուրս արգելափակելով հոսանքը, և թէ՛ դուրսէն ներս անոր դէմ հանելով ետ դարձողներու շարան շարան կարավաններ :

Միութիւնը ձեզի հետ պիտի ըլլայ ազգային ինքնապահպանումի ճիգին մէջ՝ իր բոլոր բարոյական և նիւթական միջոցներովը, և մենք գերազանց հոգը պիտի ունենանք կարելի եղածին չափ ամորելու այն վերքերը, որ արտագաղթի չարիքը կը սնուցանեն իրենց թարախովն ու արիւնովը :

Ի դիմաց Հ. Բ. Ը. Միութեան

Գանիրե, 31 Յուլիս 1913

ԿԵԳՐ. ՎԱՐՉ. ԺՈՂ. ՈՎ.

Մարտեան Անանուն Հնկերուրեան Հնդնա-
նուր-Տնօրէնը՝ արտասանմանեան Հայու ամենէն
համակրելի տիպարներէն մին է : Տոմիկ հմայք
մը կը յատկանշէ իր ամբողջ անձը, և կ'ատինք-
նէ, կը գրաւէ քեզ՝ իրեն նեա առաջին հարու-
միդ իսկ :

Արուեստագետի կամ գրական մարդու գե-
ղեցիկ գլուխ մը, յանկուցիչ դիմագծերով և սե-
ռ գերագանցապէս արտայայտիչ աչքերով : Իր
խօսուածքին նրապոչը, իր շարժումներուն ու
նկատուկացին հանօրէնը կը շեշտեն՝ մարդկա-
յին ազնիւ խնորի մը
անմիջական տպաւո-
րութիւնը, զոր կը կրես
իր ներկայութենէն :

Թօքառացի նինաւորց
ու յարգուած զարմի մը
շառաւիղ՝ Տիար Փիլիպ-
պոսեան եգիպտանայ
մտաւորական շրջան-
ներու մէջ փնտռուած
դեմք մը դարձեր է՝ իր
դիւրանադորդ, վնաս-
ձրն ու սրտաց բնա-
ւորութեամբը, իր հան-
րային շահագրգռութիւն
ներովը, ինչպէս նաև՝
կարգ մը ընթացիկ բա-
րոյութիւններու մասին՝
իր ժպտուն անտարբե-
րութեամբը, ջրտնու հա-
մար արձամարձանքովը :

Հակառակ իր ընկե-
րական փայտուն դիրքին,
ուր մերոնցմէ շատեր
ամպածրար, անմատ-
չելի ու յամալական կեց-
ուածքներ պիտի առ-
նէին, Տիար Փիլիպպոս-
եանի ընկերականու-
րիւնը անվերապան,
անխնայ ու ինքնամա-
տոյց բան մը ունի որ
գինքը սիրելի կ'ընծայէ
ամենուն, երբ ապատե-
ներու և «շնորհքով մար-
դերու» մեր խոժոռ փա-
ղանգին կոչմէ մեղադ-
րելի գիշում մը, գուցէ



Տ Ի Բ Ա Ն Փ Ի Լ Ի Պ Պ Ո Ս Ե Ա Ն
ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴՈՍ Է. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԳԱԿԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻՆ

նուատուցում մըն ալ նկատուի իր այդ վար-
մունքը :

Այս ինքնատիպ մարդը կատարեալ ուսմ-
կավար մը, ինչ կ'ըսեմ, ընկերվար մըն է, նո-
գիով : — Այն յայնատարած գործին մէջ՝ ուր
4-5000 բանօրներու և պաշտօնականներու փոք-
րիկ սպարապետութիւն մը ստանձնած է՝ Տիար
Տիրան Փիլիպպոսեան սովորական իմաստով
բարօքնի մը ցուրտ տիպարը մարմնաւորելէ
շատ նեղի՝ գիտցած է այնպիսի կարեկից նո-
գածութիւն մը տաձել աշխատանքի անձա-
ռանգներուն հանդէպ՝
որ գինքը իրաւամբ ժո-
ղովրդական դարձու-
ցած է անոնց շարքե-
րուն մէջ անխափը :

Մարդկային աշխա-
տաւոր տաձանքին նը-
կատմամբ այս խորունկ
համակրութիւնը՝ տեսակ
մը երակտագեա գորո-
ւյի անկիւն ապահոված
է իրեն՝ Մարտեան Տան
ժառայող մեր նաչրե-
նակիցներուն սրտին մէջ,
և ասոնք մասնաւոր
խանդաղատանքով մը
կը վերաբերուին իրենց
«Տիրան Էֆենտիին» զոր
մեծ բարեկամի, անվը-
րեպ իրաւարարի, ան-
պատիր պաշտպանի
պէս բան մը կը նկա-
տեն իրենց համար :

Տիար Տիրան Փի-
լիպպոսեան Վենետիկի
Մուրատ - Ռաֆայելեան
վարժարանի այն շրջանի
աշակերտներէն է : — Ինչ-
պէս իր պատուական
պաշտօնակիցը՝ Տիար
Բիգանդ Մասրաֆ, ինչ
պէս Արփիար, Տանաս-
եան և մեկ քանի ուրիշ-
ներ — որոնց Ալիշան-
ներ ջամբեցին ազգա-
յին ոգին և նաչրենա-
սիրական սուրբ նուրը :
Այդ սերունդին մարդի-

կը՝ ինչ դիրքի ալ հասած ըլլան, չեն կրնար
ուժացած ըլլալ ցեղին փրկագործման խոնարհն,
և չեն ընկրկիր շտիկ շիտակ երեսէկ անոր նար-
կադրած քաղաքացիական պարտաւորութիւն-
ները : Իմաստութիւնը գաղափարական մտա-
վախութեան հոմանիշ չէ անոնց համար, ո՛չ ալ
պանպանողականութիւնը՝ դասաչքութեան : Ռիտ
մը կայ որ չի դրժուիր, և որուն կրակը կեանքն
ի բուն կը միայ մարդուս ներսիդին, ո՛րքան ալ
նարք ըլլայ ճամբան իր քայլերուն առջև, ո՛ր-
քան ալ իր շրջափառը մոռացումին նեշտա-
նրակը քեղադրանքներովն առցուն :

Եւրոպայի մէջ Տիար Փիլիպպոսեանի եր-
կարամեայ քնակութիւնն ու յաճախակի ճամբոր-
դութիւնները՝ առանց նուազեցնելու, մաշկեցնելու
իր ճշմարիտ Հայու զգացումները, զարգացու-
ցած, նրբացուցած են իր վայելչասիր ու գեղեց-
կապաշտ հակումները :

Ապրիլն ալ արուեստ մըն է, և պէտք է գիտ-
նայ գեղեցիկորէն ապրիլ՝ երբ միջոցները չեն պակ-
սիր մանաւանդ : Տիար Տիրան Փիլիպպոսեան կեն-
ցացի արուեստագետ մըն է : Եւ ասիկա պզտիկ
առաւելութիւն մը չէ իրեն համար՝ սորուած ըլ-

լալով մեր միջակորեար բարբերուն զձձուրիւնն
ու տախակութիւնը :

Հանրային մարզին մէջ, իբրև եգիպտանայ
Կարողիկ Հասարակութեան աչքառու անդամնե-
րէն մին, և իբրև Է. Բ. Ը. Միտրեան Վարչ-
ժողովի խորհրդական, Տիար Փիլիպպոսեան կա-
րերը դեր մը կը կատարէ, առանց իր վրայ խօ-
սեցնել տալու :

Հանրութեան աչքին քիչ անգամ կ'երևայ ա-
նիկա, վասնզի իր մէջ կը պակտի ցուցադրուե-
լու մարմնաչք, ստնքայու տրամադրութիւնը : Այս
մարդը անոնցմէ, ա՛յ տեսակինն հատնելու վրայ
կողոլ ա՛յն նագուագիւտներէն է որ պէտք կոչած
ՏՕԳՈՎ ազնիւ սկեպտորենէ մը ունին՝ տարա-
պալմանօրէն յուրջի, մինչև իսկ կողերականի
բառնելու համար իրենց այս կամ այն չափով
հանրօգուտ հանգամանքը :

Տիար Տիրան Փիլիպպոսեանի բարեգործելու
ժեարին մէջ իսկ խորհրդապան ու համեստ բան
մը կայ որ խոնարհներուն արժանապատու-
րիւնը կը փրկէ, և մերք մեկուսի նալուածքով
մը պիտի բուէր կարծես ներողութիւն խնդրել
բարեարեակն . . . :




Է. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՅԱԻՐԷԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ
[ՈՐՈՒՆ ՆԱԵՆՁԵՆՆՈՒԹԵԱՄԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ Է ՆԵՐԿԱՑ ՈՍԿԵՄԵՏԵԱՆԸ]

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Վ Ա Ն Ն Օ Թ Ե Ր

Բնիկ Թօքատցի, որի Գէորգ Մէօթէմէտեանի որ 65 տարի առաջ Զակազիկ գաղթելով արմտիքի վաճառականութեամբ զբաղած է: Գրիգոր Մէօթէմէտեան 17 տարեկան հասակին մէջ Թօքատէն Կ. Պոլիս փոխադրուած է իր եղբոր Յարութիւնի հետ, ուր առնն մը սեղանաւորութիւն ընելէ վերջ՝ Զակազիկ եկած է հաստատուիլ: Իր հօր մահուընէ վերջ, մղում տուած է բամպակի առևտուրին և սեղանաւորական գործերու ալ ձեռնարկած է, հետզհետէ փայլուն դիրքի մը հասած է, հողեր գնել և շահագործելով: Իր ուղղամտութիւնը առածի կարգ անցած է ամբողջ Շարգիլէի նահանգին մէջ՝ ուր կեդրոնացուցած էր իր գործառնութիւնները: Ամուրի էր, և իր զուգուբանքին առարկայ ըրած է իր եղբորորդիները, անոնց դաստիարակութեան հանձնարարութեամբ: Ազգասէր, մասնաւոր խանդավառութեամբ մը ունէր մանուանդ իր ծննդավայրին հանդէպ ուր ստէպ նպաստներ կը դրկէր և ուր դպրոցական փոքր կալուած մը գնելու համար յատկացուցած է գումար մը: Զակազիկէն անցնող Հայերուն պաշտպանն էր: Ա.Թէնը գտնուած առնն, շարդերէն փախչող Հայերուն օգնած է. Զակազիկի Հայ գերեզմանատան կարգադրութեանց մէջ կարևոր դեր ունեցած է և տեղւոյն նորակազմ դպրոցին ամսական կապած էր: Իր պարկեշտ և աշխատասեր կեանքին վերջին և զեղեցկագոյն գործը եղաւ Միւթեան ըրած կը ձերտնին, Զակազիկէն յատկապէս Գահրէ եկաւ և Առաջնորդարան ներկայանալով իր կտակը արձանագրեց: Ինչպէս յայտնի է, Միւթեան կտակած է 4000 եգրպտ. ոսկիի մօտ արժողութեամբ հողեր, որոնց տարեկան եկամուտն է շուրջ 200 ոսկի. հասոյթներովը Թօքատի մէջ հող մը գնելով իր անունին վարժարան մը պիտի կառուցուի: Գրիգոր Մէօթէմէտեան այս պարտքը ազգին հատուցանելէն վերջ, 1910 Մարտ 23ին մեռաւ և իր յուղարկաւորութիւնը մեծափայլուն հանդիսաւորութեամբ կատարուեցաւ Զակազիկի մէջ: Իր եղբորորդիները ազնուաբար փութացին հաստատուիլ կտակը և կտակագրին բացման առթիւ 30 ոսկի ևս նուիրեցին Միւթեան: Անոնցմէ Տ. Արմենակ Մէօթէմէտեան, զեռտի փաս-

տարանը, Ռումանիոյ մէջ Մասնաձիւղներ հիմնելու նախաձեռնութիւնը ունեցաւ երկու տարի առաջ, և այսօր իր հրատարակած «Յուսարեր» թերթով ազդու սատար մը կը հանդիսանայ Միւթեան փրօփականտին:




Գ Ր Ի Գ Ո Ր Մ Է Օ Թ Է Մ Է Տ Ե Ա Ն

Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ա Ն Գ Ա Մ

Հ Ա Յ Կ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Դ Շ . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Ողբացեալ Գրիգոր Մէօթէմէտեանի հետ ճըշմարիտ Հայու տիպար մը անհետացած է. կեանքն ի բուն իր պարտքը կատարելէ վերջ, մահուան սեմին վրայ ևս ազգին պարտանատոյց եղաւ. իր զովելի գործը պէտք է օրինակ ծառայէ ունեւոր Հայերուն, որ բարի յիշատակ մը չի ձգած կեանքէն կ'անցնին:



Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Յ Ո Ւ Շ Ա Ր Ձ Ա Ն Ը

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Գրիգոր Եղեայան (Grégoire d'Elie) ծնած է 1833 Մայիս 25 ին Կ. Պոլիս: Իր կրթութիւնը ստացած է Գանիրէի Ս. Աստուածածին եկեղեցոյ Հոգեւորներին մէջ Պետրոս Թաթևեանէ, և յետոյ Համիլթընի անգլիական վարժարանը, Րէֆա պէյի լեզուաբանական վարժարանէն շրջանաւարտ կ'ըլլայ և կ'անուանուի Գանիրէի Ռուսական Հիւպատոսարանի Թարգման գրեթէ մէկ տարի: 1878 ին կ'ըլլայ Ռուսական Հիւպատոսարանի Քանչէլէր (այս անունով կը ծանցուէր Եղեայան):

1887 ին Փոլս - Հիւպատոսի պաշտօնը կը ստանձնէ կատարեալ ձեռնհասութեամբ և մեծ շքերջանակներու մէջ կը գնահատուի իր դիւանագիտական արտակարգ կարողութեանը համար: Ստացած է բազմաթիւ պատուանշաններ՝ Օսմանեան, Ռուսական, Իտալական և Պարսկական, ևն.: Անդամ էր Եւրոպական խել մը Բարեկրթական Ընկերութեանց: Ռուսական Հիւպատոսարանը մտնելէն առաջ՝ երկար տարիներ փաստարանութեամբ զբաղած է, և իր իրաւագէտ կարեօր ծառայութիւններ մատուցած է Ազգ. Առաջնորդարանին, զանազան դատերու առթիւ, շնորհիւ իր օրէնքագիտական հմտութեան և ամենարձր յարաբերութեանց՝ զոր մինչև վերջ մշակած է եզրկատական աւագանիին հետ: Եղեայան աւելի ծանցուած է օտարներէն և տեղացիներէն բան եզրկատանայերէն: 1863 ին Գաւառական Ժողովին անդամ եղած է և առեն մ'ալ Քաղաքական Ժողովի ատենակցութեանը վարած է: Վերջապէս, Եղեայան մին եղած է Հ. Բ. Ը. Միութեան հիմնադիր անդամներէն, և Կեդր. Վարչ. Ժողովի խորհրդական անդամ Միութեան գործին փարած է: 1911 ի Յունիս 10 ին թրիւս-



ՈՂԵԱՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՂԵԱՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵՍ ԲԱՐԵՐԱՐ ԻՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄ

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ե Դ Բ. Վ Ա Ր Զ. Ժ Ո Ղ Ո Վ Ի

րանի՝ ի նպատու ուսանողական պլուսերու հաստատութեան (առանց դաւանանքի խտրութեան):

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Արրահամ փաշա Բարթող, բնիկ Կեսարացի, տղայ տարիքէն Աղեքսանդրիա հաստատուած, երբօրորդին էր ծանօթ վարժապետ Արրահամ Կիւլպէնկեանի, որ Պոլսէն եզրկատոս գաղթած և սիրուած էր Խտիվ Մ'օհամմէտ Ալիէն ու անոր սեղանաւորը եղած էր, նուէր ընդունելով ընդարձակ հոգեր և իշխանական պալատ մը: Խալիպա Արրահամ իր զիւղը՝ Տէսուէնէս շէնցեկով հոն 1851 ին «Թաղէոս-Բարձոյիմէոս» անունով մատուցած շինած է: Իր մահուընէն վերջ եղբայրը Ազա Բարթող Եիւլպէնկեան շարունակած է վայելել խտիվական զերգաստանին համակրութիւնը: Իր օրդին, Արրահամ փաշա Բարթող ծնած է 1850 ին, նախնական կրթութեանը առած է Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին մէջ, իրեն դասընկեր եղած է Կիլիկիոյ արդի կաթողիկոսը Շնորհ Սահակ Բ.: 1874 ին ամուսնացած է սեղանաւորապետ Եուսուֆեանի աղջկան հետ, որ յայտնի է իր բարեսիրութիւններով, մահուանը 1896 ի գաղթականներուն նկատմամբ: Թագաւոր փաշայի մահէն վերջ, հետեւելով անոր օրինակին, Արրահամ փաշա նուիրուած է ազգային գործերու, և ազգապատկան կալուածներու միւթէվէլլին եղած է երկար տարիներ: Իր առատաձեռնութիւնը առածի կարգ անցած է: Իր ծախքովը նորոգած է Աղեքսանդրիոյ եկեղեցին: Քանի մը տարի առաջ Աղեքսանդրիոյ ազգային սահմանադրական պալարներուն հետեանքով, այլևս բաշուած էր հանրային առաքարէզէն, մասնաւոր բարեգործութիւններու մէջ փնտուելով յագուրդը

իր ազգասիրական զգացումներուն, որոնք միշտ վառ մնացին: Արրահամ փաշա մին եղած է Հայկ. Բարեկ. Ընդհ. Միութեան հիմնադիրներէն, որուն Բարեբար Անդամն էր. Միութեան նուիրած է հազար եզրկատական ոսկի և անոր նկատմամբ կը տամէր անկեղծ զուրգուրանք մը, ջերմ հաւատացողն ըլլալով անոր նա-



ՈՂԵԱՅԵԱՆ ԱՐՐԱՀԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂ


ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

խախնամական կոչումին: Իր սրտին ազնուութեամբը կը վայելէր միջազգային համբաւ, և

այս երկրին վերին շրջանակներուն մէջ յարգրւած էր՝ այնքան իբրև բարեգործ՝ որքան ելմը տազէտ: Ստացած է բազմաթիւ պատուանշաններ՝ օսմանեան, ռուսական, պարսկական, ըսպանիական ևն: Վերջերս, երկրին տնտեսական տագնապէն մեծապէս փաստուած ըլլալով, բաւական մտահոգութիւններ ունեցաւ՝ որ քայքայեցին իր արդէն հիւանդ մարմինը, ու իր մահուընէն

վերջ հասկցուեցաւ որ բարեգործութեան ասպետը իր կրցածէն և ունեցածէն շատ աւելին կուտար: Իր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ, ազգային հանգամանքով, 16 Դեկտեմբեր 1911ին և ընդհանուր սուգի ու յարգանքի բացառիկ արտայայտութիւն մը եղաւ: Բարձր. Խտիվին արտօնութեամբ, իր մարմինը թաղուեցաւ Աշէք-սանդրիոյ Հայոց եկեղեցիին շրջափակին մէջ:



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ 6րդ ՏԱՐԵԳԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ ԳԱՀԻՐԷԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԻՆ ԽՄԲԱՆԿԱՐԸ (5 Մայիս 1912)

Պ Ե Տ Ր Ո Ս Պ Է Յ Գ Ա Փ Ա Մ Ա Ճ Ե Ա Ն

Արիւնոտ մանագոյժ մը հասաւ, որ մը, Վասպուրականէն:

Վանի քաղաքապետ և Հ. Բ. Բ. Միւրեան Տեղական Մասնաժողովին Հիմնադիր և Ատենապետ՝ Պետրոս պէյ Գափամասեան ըսպաննուած էր մութին մէջ դարանակալ ձեռքէ մը, երբ, իրիկուն մը իր տունէն դուրս կ'ելլէր ընտանեօք, այցելութեան երբայր համար մերձաւորի մը:

Ու այդ սև զիշերէն ի վեր կարծես անոր մուսկ սոջամուռջովը պարուրուած մնաց սև ոճիբը:

Թրքանայ Մամուլը բացորոշ լուսարանութիւն մը չի բերաւ և ղեկավարան այս դէպքին մասին:

Մարդասպանին և կամ մարդասպաններուն խնդիրներ անձանոր մնաց:

Ու լա՛ւ էր որ այսպէս ըլլար, վասն զի այս անտուգութիւնը տեսակ մը մեղմացում դրա ոճիբին արտարտ իրականութեան մէջ, վասնզի, այսպէս, անուկի բան մը պիտի ըլլար, ցեղին համար, յոյսի ու անձկութեան այս գերագոյն օրերուն, իր խոշտանգուած ծոցին մէջ բաց աչքով տեսնել կալենի Գործին դմուակ ու բարաշուք լսուումըն ու լսուածացումը...

Ազգային Խղճմութանը՝ այդ խռովիչ ու տղեկարշ հաւանականութեան հանդէպ, այդ դառն ու անխուսափելի անդադարձումի հարկին տակ՝ պետք ուներ կամաւոր ինքնախաբերութեան մը, կամ ակամայ պատրանքներու... Եւ, արդէն, այս անձկոտ ու ցաւազին զգացումով չէր որ, պան մը, հոգեին սպասեցինք, որ այս ոճիբն

այ դասուէր Հայաստան Եղեռնի սովորական ու անվերջ դրուագին մէջ, և անոր անիծապարտ պատասխանատուութիւնը վերագրուէր այսպէս արիւնախանձ ու մոլեգին մախանքին: Բայց, աւա՛ղ, կարելի չեղաւ ընդ երկար յուսայ Գափամասեանի խորհրդաւոր մա՛ր նմանցնելու, նոյնացնելու Գագագեանի անգութ այլ բացալայտ վախճանին նետ: Տեղականներու ոճիբը բողոքի ամենի աղաղակներ խլէր էր բրբանայ ազատական, այլ մանաւանդ պայքարող մա-



Ո Ղ Բ Ա Յ Ե Ա Լ
Պ Ե Տ Ր Ո Ս Պ Է Յ Գ Ա Փ Ա Մ Ա Ճ Ե Ա Ն
Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ
Հ Ա Յ Կ Բ Ա Ր Ե Գ Ը Ն Դ Հ Խ Ռ Ւ Թ Ե Ա Ն

մուլէն, Գափամասեան պէյի լեղակարծ ու մրին սպաննութիւնը անաւոր լուրերան մը կը բաղխէր... Ձե, ասիկա առիթ մը չէր կրնար ըլլայ մեզի ծառանայու Հայուն յաւիտենական հարստահարիչներուն դէմ, և լուրերնը՝ այս դէպքին մէջ՝ միակ ապաւենն էր անոնց համար որոնք պիտի խորշիկն ցցուի իրենց ազգակիցներէն ոմանց դէմ, անմեղ արեան մը հաշիւը պահանջելու, ինքնին ունայն նախանձախնդրութեամբ:

Լուրերն մը, որ խոստովանութիւն մըն է, կարծես, Հայուն կողմէ իր մէկ ներքին դժբաղդ ու անխոստովանելի ցախին, եղբայրասպան կորսցման, հոգեկան աղանդակումի, ինքնակեր կատաղանքի ցաւազար նուպայի մը, այն միջոցին խկ, ուր ամեն ժամանակե աւելի պետք ունինք ազգային ներքոմ ներդաշնակութեան, և խորունկ ու եղբայրական համերաշխութեան մը: Ու մենք չենք որ պիտի ուզէինք խզել՝ ոչբացեալ Պետրոս պէյ Գափամասեանի եղբայրական մահուան շուրջ այդ լուրերը, որ «լուրեան դաւադրութիւն» մը ըլլալէ շատ նետի,

« լուսրեան խոստովանութիւն » մըն է, այս անգամ :

Մենք չենք որ պիտի սիրուն ունենայինք, այս էջերուն մէջ, խառնելու նայ-ընկերական կազմին ներքին վերքերը : Մենք կը նաւատանք որ ազգային խղճմտանքը խուլ չի մնար գաղափարի ազատութեան գոնորուն արդար աղերսին, և երբ ան դարգահին ու ժողովրդեան մը բարոյա-յայտունեցաւ ներկայ դեպքին մէջ, ըսել չէ թէ անտարբերօրէն մարտնչ Արեւի արեւը . . . :

Մեզի նամար, վերին առօրեան միտքարա-կան էր նաստատեց, այս առօրե, նայ յեղափո-խակամութեան ամենէն նեղինակաւոր ներկա-յացուցիչներէն մեկուն, ողբացեալ Սիմոն Չա-ւարեանի կողմէ՝ վրդովուած մտածումի ինքնա-բեր բախով մը՝ նրապարակային խարանդը Հայ Ստրուկին, որ առիւծ կը կարի արեւակից սիրարին, անգէնին դէմ, երբ այնքան նագու-ղիպօրէն ընդունակ կը նանդիսանայ քաղաքա-ցեական արտրեան ու առնութեան ձեւերուն՝ գորուոր ու գինուած օտարին, բշտամիին առջև :

Հինա, ախոս, Չաւարեանին ձայնն ալ կը-ուած է առ յաւեո . . . :

Հ. Բ. Ը. Միտքինը երկրի իր ամենէն անձ-նրէր ու ձեռնաս աշակիցներէն մեկուն կը-րուսան է որ ողբաց յանձին Պետրոս պէյ Գա-փամաճեանի :

Հայրենաշինութեան ու ազգային վերակազ-նումի աշխատանքին նամար՝ Օսմ. Սահմանադր-րութենէն լսող՝ Հայաստանէն մեզի ընծայող ինքնամատոյց ու խանդավառ ձեռնադրութիւն-ներուն մէջ աջբառու նանգամանքով մը կը շեշ-տուէր իր գերագանց բաժինը :

Պետք էր տեսնել թէ ի՞նչ շերմուտանդ նա-ւատքով, ի՞նչ բոլորանուէր շանդորութեամբ Պետրոս Պէյ Գափամաճեան փարած էր Միտ-րեան փրոփա՛նանին և անոր ազգաշէն գոր-ծունէութեան : Իր ինքնագիր նամակները նոն են, Միտրեան **արեւի**ներուն մէջ, յայտարար իր մեծ ու սրտագին նայրենասիրութեան : Անոնք ցոյց կուտան, իրե՛ց անվերապան, պարզունակ, գրեթէ միտմիտ **բոնովը**, թէ՛ քաղաքական ու քաղաքացեական կարծիքներէ ու ըմբռնումներէ վեր՝ ցեղին ճշմարիտ շանդուն, անոր նիմու-կան բարեկաւումին ու բարօրութեանը ծառայե-

լու պարտքին գիտակցութիւնը կայ, որուն մէջ ո՛չ ոքէ վար կը մնար եղերարող նանգուցեալը :

Պետրոս Պէյ Գափամաճեան մասնաւոր հո-գածութիւն մը, խանդակար գուրգուրանք մը կը տածէր Վասպուրականի կրթական գործին : Իր կրիտասարդ տարիքէն սկսեալ՝ անիկա տրոփած էր միշտ ոգևորուիչ նորանա սերունդներու դաստիարակութեան, բարոյական ու մտաւոր յաւազոյն պատրաստութեան խոսեալով :

Ու չենք կրնար՝ իր նուաւոր ու դեռ քարմ նոյակոյտին նանդեալ՝ յուզուած վերջիշումը չընել նոս՝ այն գերագանց դերին, որ ողբացեալ Գա-փամաճեան Պէյ ունեցաւ Հ. Բ. Ը. Միտրեան Վանի Վարժապետանոցի կառուցման ու կազ-մակերպութեանը մէջ, բացի իր բերած ներքական գոնարերութեան կարևոր բաժինէն՝ ոգի ի բոխն աշխատելով այդ եզակեան նաստատութեան ամ-բասպնումին և տեսականութեանը :

Եւ ըսել թէ իր կեանքին վերջին սիտովան-քը պիտի բլլար Վարժապետանոցի բացման այն փառաւոր նանդեալը, որուն կը մասնակցէր, և զոր իր եղերական մանր պիտի կանխէր նագիւ ամիս ու կեսուան ժամանակամիջոցով մը :

40 տարի առաջ, երբ Վանի ծխական դրու-րացները անբաւական էին և իբրև բարձրագոյն ուսումնարան կը նաստատուէր Հայկազեան Վարժարանը, անոր բացման նանդեանին՝ նոյն ին-քրէն կրիտասարդ Պետրոս Է. Պ. Գափամաճեանն էր որ կը կարդար տեղեկագիրը նորարաց ու-սումնարանին :

40 տարի վերջը, Վանի մէջ աւելի բարձր փարձարան մը կը բացուէր, և կրկին Պետրոս Պէյ Գափամաճեանն էր (**միւրեմայից** և Բաղա-բապետ) որ կը կարդար տեղեկագիրը . . . :

Եւ անո՛ւ այս շինարար կեանքն էր, նայրե-նի խաղաղ զարգացման մեր անդատանին այս փաստակաւոր մշակը, որ մուրի՛ն մէջ դարա-նակալ ձեռքերէ գնդակահար՝ ինկաւ, խորտակ-ուեցաւ :

Բայց իր պատուական որդին՝ Տ. Սեյ Գա-փամաճեան չընկրկեցաւ՝ այդ եղերական ման-ուան առքած գզուանքէն և զայրոյքէն ազդու-ելով, այլ, նաւատարիմ իր հօր յիշատակին, գո-վելի գոնարերութեամբ մը գլուխ նանեց սկսուած գործը :



Ս Ե Գ Բ Ա Ք Գ Ա Ի Ի Թ Ե Ա Ն

Գահիրէի ՀայուՅեան պապան, եզրպատարը-նակ Ակնցիներուն նահապետը, և եզրպատանայ Գաղուժին ամենէն վաղեմի ու սիրուած դէմքն էր որ անհետացաւ Սեղրաբ Գալիժեանի ման-ուամբ :

Բնիկ Ակնցի, ծնած 1835ին, երիտասարդ տարիքէն այս երկիրը եկած և տ'Ապրօներու ու Նուպարներու ծառայութեանը մտնելով՝ գիտցած էր արժանանալ անոնց բարձր գնահատումին և անպայման վստահութեանը : Մտաւորապէս կէս գարէ ի վեր մասնակից ու վկայ եղած է եզրպա-տանայ այդ երկու ա-կանաւոր գերգատան-ներուն փառքին : Իբրև վերջի Տիրքան փաշա տ'Ապրօի Սեղրաբ Գա-լիժեան կարևոր դեր մը կատարած է տեղույս ազգային կեանքին մէջ, և ճանչցուած ու յար-գըւած է քաղաքիս ա-բար ու միջազգային շրջաններէն :

Հանգուցեալը շա-րունակ մասնակցած է Գահիրէի Ազգ. երեսի-ժողովին, Քաղաք. Ժո-ղովներու անդամ եղած, և ազգային հոգարար-ձեռնարկներու և մաս-նաժողովներու մէջ զբա-նուած է միշտ : Իր ժողովրդականութեանը, արուեստական կամ բռնագրութիւ ոչինչ ու-նեցած է, «Սեղրաբ է-ֆէնտին» — այսպէս կը կոչէին գինըր մեծ ու պզտիկ — իր բարի ու պարկեշտ մարդու ան-խարդախ նկարագրին, իր հեզանամբոյր ու դիւրանաղորդ բնաւո-րութեան, իր անձնուէր ու անսպառ այլափ-րութեան կը պարտի այն անվերապան յար-գանքն ու սրտագին խանդաղատանը զոր վա-յելած է միշտ եզրպատանայ Հասարակութեան մէջ :

Էպպէս ընկերական մարդ՝ Սեղրաբ Գալիժե-ան եղած չէ այն ապատեններէն, որոնք կեանքի նիւթական յաջողութեաններուն մէջ բարոյա-պէս կ'այլանդակուին, կ'ուժանան երէկուան հա-մակրութեաններէն ու կը խստանան յոխորտ, կո-կոզավիղ ու ամբարտաւան կեցուածքներու մէջ :

Աշխարհիկ յարարերութեաններու ամբողջ ու-նայնը ճանչցած, մարդկային հոգիին բոլոր ծալ-քերուն մէջ կարգացած՝ Սեղրաբ Գալիժեան ժպիտ մը կը պահէր անցեալին բոլոր պատրանքներէն ու հրայրքներէն, ժպիտ մը, որ հագիւ դառ-նութեան երանց մը կ'արտայայտէր, և ու-րուն մէջ համակեր-պած սկեպտիսմիւն մը կը յղանար, բարու-թեամբ, ներողութեամբ ու կարեկցութեամբ ծանրարեուն . . . :

Կեանքը չարհամ-արնեց, անոր հաւա-տաց, այնքան որքան իր ֆիզիքական կորովը թոյլ կրցաւ առ իրեն, կեանքին հաւատաց ապրուած օրին ու վայր-կեանքին ընծայած նա-րաւոր գոնուանու-թեան ու բերկրանքին չափով : Եւ երբեք հե-տամուտ չեղաւ անխա-ցուժի ու երջանկու-թեան վաղուան մը տեն-ջանքներուն : Փարթա-մուժեան ու հարստա-ցումի խեղալ մը չի հե-տապնդեց, ի՛նք որ այն-քան ձեռնտու գիրքի մը մէջ էր այդ խեղալին հասնելու համար : Թըր օրին վաստակեցաւ ու վատնեց, իրեն համար համեստ բարօրութեան մը ապահովելու և իրեն շուրջը ուրախութեան ու սիտիանքափութեամբիակ մտահոգութեանը մէջ : Ինք ընտանեզուրկ ապրեցաւ, Թերես աւելի լայն հայրութիւն մը տարածելու համար իր բոլորտիրը . . .



Ո Ղ Բ Ա Յ Ե Ա Լ
Ս Ե Գ Բ Ա Ք Գ Ա Ի Ի Թ Ե Ա Ն
Պ Ա Տ Ո Ի Ո Յ Ա Ն Դ Ա Մ
Հ Ա Յ Գ . Բ Ա Բ Գ . Ը Ն Դ Շ . Մ Ի Ո Ի Թ Ե Ա Ն

Կէ թէ Կէ յայտնեցաւ վրայ, ճիշտնոյն ուրիշ կրկնելով
 Իրեց պայտօսի սկզբը, ճիշտնոյն յօսարմարտեանը
 եւ Խարանգի սկզբնային գործարարն Վրայնսթեյն
 Գրականութեան եւ Ընտրութեան յարակից պայ-
 տնակները, առաջ իրաւաստիքի օրինակաւ հասանա-
 թեան ակնկէցէ ստորակէտ ը իսկ չի փոխելով:

Տ. Գ. Բ. Վրայնսթեյն

Գեորգ. Վարդ. Գրայնսթեյն

- Լիշեանցի *Պօղոս Գրայնսթեյն*
- Փար. Լիշեանցի *Եւստակիոս Կէրէպի Կարապետ*
- Փար. Լիշեանցի *Երոտան. Գ. Վարդապետ*
- Լիշեանցի *Մանուկ*
- Գաւջուցի *Սո. Արտաշես*

Միքայիլ Գրայնսթեյն


Յ. Բ. Բ.

Ստեփան Գրայնսթեյն

Գրականութեան,
 1 Դեկտեմբեր 1910 (Տ.Տ.)



Քաղուած կտակներու եւ նուիրատուութեանց տումարէն



Տարօրինակ ճակատագիր մը:
 Քառորդ դար առաջ, Պոլիս, Գատրքեօյի
 Ս. Թագաւոր եկեղեցին համեալ զպրատնէն էր
 Փարիզարնակ այս պատուական Հայր, որ տա-
 րի մը առաջ՝ 25.000 ֆրանքի իշխանա-
 կան գոնարեութեան յետոյ մը՝ Միւրեան
Բարեւար Անդամի տիրոջին կ'արժա-
 նանար:

Երուանդ Յակոբեան...
 Շատերուն յայտնութիւն մը եղաւ այս
 անունը: Քիչերուն — իր ծանօթներուն —
 ասկան աւելի մեծ եւ սխալի յայտնու-
 րին մը եղաւ ան:

Ու այս վերջինները յիշեցին զինքը
 աղու աչքերով, վտիտ, տմբոյն երեսա-
 սարդը, որ ամբողջ բաղեցին զուրգու-
 րոտ աղապատանքը կ'առինքներ, երբ էր
 նրեշտակային ճայնին միտակ զեղեղան-
 քովը ջերմեանոյ նոզինները կը վերացներ,
 մանաւանդ տօնական օրերուն... Յիշեցին
 իր անշարժ սեւեռուն կեցուածքը ժամուն
 դասին մէջ, երբ կ'երգէր, առանց գլխու
 ամենաբերեւ տատանումի մը, ստուերա-
 ցեալ, զրեք աննիւրականացեալ ներկա-
 յութեամբ մը, աչքերուն տարբեր մեր տի-
 րացուններուն սովորական գալարատանջ
 տիպարէն:

Երուանդ Յակոբեան կ'երգէր, ու խան-
 դաղատումի արցունքներով կը տամկանա-
 յին բարեպաշտներու եւ բարեպաշտութիւն-
 քու աչուրները: Իր ճայնը վերաւոր սիրտի
 մը նոճիւնն էր, կարծես, որուն անդիմադ-
 րելի քաղցրութիւնը կը պարուրէր, կը բա-
 փանցէր ամենէն դաման եւ այլամերձ նո-
 զիններն իսկ ու գանձը կը ստիպէր կրելու
 անձանօր ու ցաւագին զեղեցկութեան մը
 սարսուռը:

Ու Ս. Թագաւորի սիրուած երգիչը
 աննեաղացաւ օր մը:

Խաչեալին առջեւ իր երեսարարը երագնե-
 րուն վրիպումը, զուցէ իր համը սերերուն
 սուաբանքը լացող Յակոբեանը չէր ուզած հա-
 մակերպիլ կեանքի պարտաւի մը նսնին,
 անիկա կամքի անտարբեր ուժ մը զգացած էր իր
 ներսիցին, եւ օրին մեկը տիրացուի շապիկը նե-
 տելով իր ուսերէն, շիվ-շիտակ դիմեր էր դեպի
 գործի աագարեզը: Երգէն — իբրեւ փոխան-
 ցում — առեւտրական մարզին բեաւոյնով:

Երաժշտական գերագանց գործիքին՝ դաշնակի
 յարդարութեամբ ու յանձնակատարութեամբ
 սկսեր էր, տասնեակ տարիներ լնոյ մարգա-
 րիտի իբրեւ կարեւոր վաճառական յայտնա-
 գործուելու համար Փարիզի նրապարակին վրայ:



Ե Ր Ո Ւ Ա Ն Գ Յ Ա Կ Ո Ւ Ե Ա Ն

ԲԱՐԵՐԱՐ ԱՆԳԱՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Ե. Աղաթոն պէյ «Միւրիւն»ի մէջ շարք մը
 յօդուածներով պատկերացուցած է Տ. Երուանդ
 Յակոբեանի կեանքին այդ անձանօր ու աւան-
 դափնալային դրուագը, զոր ներկայ «Ոսկեան-
 տեան»ին մէջ կ'արժէր վերամփոփել իր բացա-
 րիկ շանկանութեանը համար:

Տ. Երուանդ Յակոբեան՝ մինչեւ Ովկիանիոյ
 վայրի կողմները մարգարտարարի իր արկա-
 ճալից ճամբորդութիւններէն վերադարձին, կո-

կիկ նարատրեան մը տիրացած, իր առաջին պարտականութիւնը նամարեց անկէ: բաժին մը նանկ իր բազմակարօտ ցեղին, և առանց շահակնոտ լոխորտանքի, մեկ գրքով 25.000 ֆրանքի չէք մը դրկեց Հ. Բ. Բ. Միութեան վսեմ. նախագահին, հետեւեալ նամակով, որուն նամատրեանը իրաւամբ գմայլանք ազդեց ամենուն, իբրեւ մեր բարբերուն մէջ անոր արեւոյ մը.

Վսեմ. Պօղոս փաշա Նուպար
Նախագահ Հ. Բ. Բ. Միութեան
Կեդր. վարք. ժողովին.

Վսեմ. Տէր,

Ես հարուստ մէկը չեմ, բայց հայրենիքս անմէջ աւելի կը սիրեմ:

Նկատելով որ Հ. Բ. Բ. Միութիւնը, զոր Դուք հիմնեցիք, զերազանցապէս հայրենասիրական գործ մըն է և հաստատութիւն մը որ երկար տարիներէ ի վեր երազուած էր Հայ հայրենասէրներէ և որ կոչուած է մեծագոյն բարիքն ընել Հայաստանի մեր դժբաղ հայրենակիցներուն, Ձեզ կը յղեմ ներկակ 25.000 ֆրանքի չէք մը՝ մեր սիրելի Միութեան համար, և կը խնդրեմ Ձեներ, որ իմ համեստ նուիրատուութեանս տարեկան տոկոսը սահմանէիք Սասունի Տարլօրիկ զիւղին պէտքերուն. պէտք ըսելով կը հասկնամ նոյն զիւղի դպրոցին, որբերուն, երկրագործութեան քաջաւերումին օգնել:

Ձեր վսեմութիւնը կատարելապէս ազատ է ծախակոտ վերոյիշեալ տոկոսները իր օգտակար ու նպատակաշարժար դատած կերպով Տարլօրիկ զիւղին համար:

Եթէ, որ մը, ընչ մը աւելի շաջողութիւն ունենամ իմ համեստ գործատուութիւններու մէջ, հաստատ մտադրութիւնն ունիմ, և այս ամենամեծ հրճուանքով, աւելի մեծ գումար մը դնել մեր սիրելի Միութեան տրամադրութեան տակ: Թող տուէր ինձ, Վսեմ. Տէր, այս առթիւ օրհնել Ձեզ՝ ստեղծած ըլլալնուդ համար Հայկական Միութիւնը, որ միակ ապահով միջոցն է Հայաստանի մեր տարաբաղ եղբայրներուն նախապահիրը բարեկաւելու:

Նուպարեան պանծալի անունը երախտագիտութեամբ կ'արտասանուի և պիտի արասանուի բոլոր Հայերէն:

Հաճեցէք ընդունիլ, Վսեմ. Տէր, խորին երախտագիտութիւնը համեստ Հայու մը, որ պիտի օրհնէ Ձեզ մինչեւ իր կենաց վերջին օրը:

Բարիք, 9 Յունվար 1913 Ե. ՅԱԿՈՒԲԵԱՆ

Յ. Գ.— Կը համարձակիմ խնայել Ձեր վսեմութեան թէ իմ համեստ հարատուութեանս մեծ մասը՝ կտակած եմ Հ. Բ. Բ. Միութեան: Կտակագիրս կը գտնուի Քրէտի Լիօնէի Բարիկ կեդրոնատեղին ունեցած դրամարկիս մէջ:

ՆՈՅՆ

Տ. Երուանդ Յակոբեանի այս ազնուական մեարին առթիւ՝ եզիպտական կորովի նրապարակագիր Լեւոն Մկրտիչեան «Միութիւն»ի մէջ կը գրէր.—

«Եթէ ամէն հայ հարուստ Երուանդ Յակոբեանի զգացումը և բմբռնողութիւնը ունեցած ըլլար՝ այս ազգը սրտզապէս հրաշքներ կրնար գործել:

«Եւ որքան ալ համեստ, որքան ալ ազնուօրէն անկտա է պատուական նուիրատուն:

«Կարդացէք Վսեմ. Պօղոս բաշայի ուղղած իր նամակը և բաղդատեցէք անոր ոճը մեզ կարգ մը բարձրելու մեծատուններու յիսորտանքներուն հետ: Մարդը մէկ անգամէն հագար ոսկի և յետ մահու իր հարստութեան կէտ նուիրելը ա՛յնքան խոնարհ նախադատութիւններով, ա՛յնքան անզգալի բօնով մը կ'իմացնէ, կոր որ՝ եթէ նամակը ուշադրութեամբ չի կարդա՝ կը կարծես թէ Բաշային աղերսագիր գրած է, յիշեալէն չնորս մը խնդրելու համար...»

«Ասիկա ալ ասպցոյցն է նուիրատուին հոգիի բարձրութեան, ա՛յնքան տարբեր մեր կարգ մը չտես հարուստներուն ամբարտաւան կեցուածքներէն...»


«Երուանդ Յակոբեան մին է այն հայերէն՝ որոնք բմբռնած են թէ Ազգին նիւթապէս օգնելը պարտականութիւն մըն է և ո՛չ երբէք ճնորհ:

«Մտադներ որ շատնան մեր մէջ Երուանդ Յակոբեանները, փոխանակ այն ուղուարդներուն որոնք ոսկին ոսկիին վրայ դիզել միայն գիտեն և որոնք ո՛չ իրենց անծին ո՛չ ալ իրենց համայնքին ո՛րեւէ օգուտ կը բերեն:»

Ռ. ՄԱՐԿՈՍԵԱՆ ԵՒ Ա. ԹԱՀԹԱՊՐՈՒՆ

Տ. ՈԱՓԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ.— Փարիզի հայ գաղութին ամենէն յարգուած ու խակապէս խիստ ուշադրաւ դէմքերէն մին: Բարութեան ու առատածեռնութեան մարմնացում մը: Տիար Ռոսիկի Մարկոսեան, բնիկ Պոլսեցի, Թանկագին գունաւոր քարերու իբրեւ բօնէսէտ, հեղինակութիւն մը հանդիսացած է Փարիզի

Տ. ԱԳԱԹԱՆ ԹԱՀԹԱՊՐՈՒՆ.— Բնիկ Կեսարացի, երկար տարիներէ ի վեր Փարիզ հաստատուած, կատարեալ ճէնթրլուց մը, իր վեհանձն ընաւորութեամբը անվերապահ համակրութիւնը կը վայելէ բոլոր անոնց որոնք մօտէն ծանօթ են իրեն և իր նախասիրած մեկուսի բարեգործութիւններուն: Փարիզի և Պոլսոյ մեր ազգային բարձր շրջաններուն մէջ սիրուած դէմք մըն է Տ. Ազգաթան Թահթապարուն, որ Հ. Բ. Բ. Միութեան Պաստոյ Անդամներու շարքն անցաւ՝ Տ. Ա. Էրնեստի և Ռ. Մարկոսեանի հետ՝ 10,000 ֆրանքի գոհարեութեան իր բաժինը բերելով:



Ռ. Ա. Փ. Կ. ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴԶ. ՄԻՈՒԹԵԱՆ

մէջ: Ուսանող սերունդներու նախաինամութիւնը եղած է ան, աւելի քան բաւոր դարէ մը ի վեր: Տիար Ռոսիկի Մարկոսեան Հ. Բ. Բ. Միութեան Պաստոյ Անդամ հռչակուեցաւ, երկիցս 10000ական ֆրանք նուիրելով Միութեան, առաջինը՝ իբրեւ մուտք, և երկրորդը յօգուտ Տարօնի Առվարինջ զիւղին: Բայց այդ նուիրատուութիւնները միջանկեալ թիւ մըն են միայն այս նշմարտապէս բարեգործ Հայուն գոհարեութեանց շարունակելի շարքին մէջ:



Ա. Գ. Ա. Թ. ԱՆ ԹԱՀԹԱՊՐՈՒՆ

ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴԶ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԺԱ. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ

(ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ [2Է])

Տ.

Ինչպէս բազմիցս յայտարարած ենք, եւ արդէն Հիմնական Կանոնագիրն ալ որոշապէս կը տրամադրէ, Միութիւնը բաղաբաղան ո եւ է նպատակ կամ ձգտում չունի եւ չի կրնար ունենալ հետեւարար բաղաբաղան ո եւ է գործունէութիւն բացարձակապէս արգիլուած է Միութեան անունով եւ Միութեան հովանիին տակ :

Միութիւնը խակապէս բարեգործական հաստատութիւն մըն է, գերազանցօրէն ազգաշինութեան գործն է: Անոր բոլոր ու միակ գործութիւնը՝ միութեան մէջ կը կայանայ, հայ ցեղին բոլոր տարբերուն եւ ուժերուն անպայման ու անվերապահ համերաշխութեան վրայ հիմնուած է: Այդ պատճառաւ է որ Միութիւնը իր կազմին եւ գործելակերպին մէջ չընդունիր ո եւ է խտիր, ըլլա՛յ սեռի, ըլլա՛յ կրօնքի, ըլլա՛յ համոզումի: Ամէն հայ, առանց դացաւութեան, կրնայ անդամ ըլլալ այն մեծ ընտանիքին, որ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւն կը կոչուի, ո՛ր դասակարգին կամ կուսակցութեան ալ պատկանի: Միութիւնը մէկ պայման ունի՝ հայ ըլլալ: Կը բաւէ կարգապահ եւ պարտաճանաչ հայ ըլլալ, կը բաւէ Միութեան Կանոնագիրը կէտ առ կէտ ընդունիլ եւ յանձն առնուած անդամաբաժինը կանոնաւորապէս վճարել: Մինչեւ այսօր աս եղած է ուղղութիւնը՝ որուն խղճմտօրէն հետեւած է Կեդր. Վարչ. Ժողովը: Ասոր ապացոյց է ոչ նուազ՝ այն վերապահութիւնը զոր ժողովս անդրուելիօրէն ցոյց տուած է, նոյնիսկ ծանրակշիռ հանգամանքներու մէջ, երբ ասիէ առաջ հակառակորդներ տեղ տեղ Միութեան դէմ կը գործէին եւ երբեմն հրապարակ կը նետէին վարկաբեկիչ զրոյցներ: Աւելորդ է ըսել որ ընդհանրապէս բննադատութիւնները արդիւնք էին թիրախացումեան, բանի որ կը գտնուէին այնպիսի անձեր որ կը շփոթէին Միութեան ուղղութիւնը եւ գործելակերպը, անիկա վարդաբերուն անհատական գործունէութեան հետ: Սակայն մենք միշտ անաղմուկ գործնեցիկ, ամէն օր օգտուելով փորձառութենէ, ամէն օր կրկնապատկելով մեր ջանքերը, եւ մեր բնարանը եղաւ միշտ՝ գործով հերքել զբարատութիւնները: Այսօր, ուրախ ենք յայտարարելու թէ, ազգային վերածնունդեան եւ համերաշխութեան աւելի լայն եւ վեհ ըմբռնումով մը, երէկի հակառակորդները հետզհետէ կը զինաթափուին, եւ նոյնիսկ անոնցմէ շատեր ազնուութիւնը կ'ունենան ի հարկին խորհրդակցելու ժողովիս հետ եւ աջակցելու անոր:

Չանացիներ, մեր հաւատարմներուն անկեղծութեամբ, ո՛րքան եւ մեր գործունէութեան աներկբայութեամբ, ցոյց տալ թէ՛ Միութիւնը ո՛չ միայն չի հետապնդեր բաղաբաղան նպատակ մը, այլ եւ երբե՛ք չի ժխտեր կամ չի նախընտրեր այս կամ այն խմբակցութիւնը: Միութիւնը իր նպատակին մէջ կը սահմանափակէ եւ պէտք է սահմանափակէ իր գործը. այլապէս իր գոյութեան իրաւունքը պիտի կորսնցնէր անիկա, այլապէս իր շինարար գերը պիտի վտանգուէր՝ պաշակտուով եւ բանդումի ասպարէզ բանարով:

Այսօր մենք համոզուած ենք աւելի քան երբեք թէ՛ Միութեան յաջողութիւնը կախում ունի ազգային անհատներու եւ կազմակերպութիւններու բարոյական ու նիւթական օժանդակութենէն. բանգի ոչ մէկ հայ անհատ, ոչ մէկ խմբակցութիւն պիտի սակարկէ Միութեան իր համակրութիւնը, ցորբան, հաւատարիմ իր հիմնական սկզբունքին, Միութիւնը ո՛չ մէկ վարդապետական կամ կուսակցական հաւատումի կամ ժխտումի կը ձգտի, եւ, միայն հետապնդելով իր ազգաշին նպատակը կը զգուշանայ ամէն տեսակ գաղտնի հնարքներէ կամ հրապարակային պայքարներէ:

Ներկայ յայտարարութեամբ՝ ժողովս հարկ կը տեսնայ անգամ մը եւս Միութեան Մասնաժողովներուն ամենալուրջ ուշադրութեան յանձնարարել այս տեսութիւնները, մէկ քանի Մասնաժողովներու նկատմամբ վերջերս հրապարակ նետուած զրոյցները չբերու մտահոգութեամբ, վստահ թէ՛ Միութեան բոլոր անդամները եւ աշխատակիցները, ուր եւ երբ որ ըլլայ, խղճմտօրէն պիտի հետեւին Միութեան վարիչ ուղղութեան, եւ պիտի զգուշանան յաւէտ Միութեան ժողովներուն ու հանդէսներուն մէջ՝ ո եւ է բննադատութեամբ կամ յարակուսներով շեղելու այդ բացարձակ ուղղութենէն, — միշտ բնաբան ունենալով՝ գործել քան խօսիլ, շինել եւ ոչ թէ քանդել:


Ի դիմաց Հ. Բ. Ը. Միտրեան

ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎ

Գահիրէ, 31 Օգոստոս 1913

Տ Օ Ք Թ. Պ Օ Ղ Ո Ս Կ Ո Ս Ա Ն Գ Ե Ա Ն

Ազգայինքնի մը չէ՛ Տօքք. Պ. Կոստանդ, մեր մէջ հասկցուած իմաստով: Հագիւ քէ կեանքին մէջ անգամ մը նստած ըլլայ «ժողովական»ի ո՛ւրէ արտոյ վրայ: Իր ազգասիրութիւնը չի նմանիր ամենեւին մեր «ազգային»ներն առ. հասարակ հասկցուածին:



Պաշտօնակաւ հանգամանք կամ պատուանշան չի փնտռեր անիկա, եւ աւելի սիրալոյս ժար կ'արտայայտուի մեկուսի ու մտերմիկ խօսակցութիւններու մէջ՝ քան աղմկայոց ժողովարաններու սեմէն ներս, ուր յաճախ դատարկամիտ ու կոկորզակիչ յաւակնութիւններ կը տնքան...

Տօքք. Պ. Կոստանդ բառին լիակատար իմաստով մ՛տաւորական մըն է եւ միևնույն ատեն գերազանցապէս ընկերական մը:

Իր ընկալուց իմացականութիւնը, գիտութեան, գրականութեան եւ գեղարուեստի բոլոր ճաշակներովն ու լոյսերովը ճոխացած, անու-

Մարդիկ կան, որոնց ծանօթութիւնը, կարծես կը սիրուի, կը կազդուրէ ու կը սրտապնդէ մեզի՝ նանրային ու ընկերական կեանքի սովորական ճամբաներուն մէջ կրուած գունդութիւններուն, նանդուրծուած տափակութիւններուն ու արմկուած միջակութիւններուն գգուախտանխտանքներէն, եւ որոնց մտերմիկ նալմը ցեղին ամենամաքուր նալարտութիւնը կը ստեղծէ մեր ներքինի:

Այս հագուազեա տիպարներն է Իզմիթի հայրական «առաջի» քաղաքացին՝ Տօքք. Պօլոս Կոստանդը:

Ռիմը կրնայ իր մասին խակական ու ամբողջական գաղափար մը տալ գինը չի ճանչցողներուն:

Այս մարդը բարոյական անդիմադրելի գեղեցկութիւն մըն է որուն շին կարող չի սիրանարուիլ բոլոր անոնք որ մօտեցած են իրեն: Անեղծանելի հմայք մը, մոգական հրապոյր մը կ'ազդէ իր պարզ ու համեստ անձը, որ դիւրական տեսիլքի մը պէս կը յաճախ միշտ որ դիւրապէս մտածումը իր տարակալ բարեկամներուն:

Ինչ ունի ան՝ գինքն այսքան համակրելի ընծայող... Գժուար է նակիրձօրէն պատասխանել այդ հարցումին: Պէ՛տք է ճանչնայ մարդը:

նօրէն կը ծառայէ իրեն իր աշխարհիկ յարաբերութիւններուն մէջ, միշտ շանկան ու հրապուրիչ ընծայելով իր խօսակցութիւնը: Չմայելի causeur, ճշմարիտ վայելք մըն է արդէն Տօքք. Կոստանդի նետ խօսակցիլը: Ականաւոր բծիկը այնքան հաճութեամբ, այնքան խորին հասկացողութեամբ կը մօտենայ իմաստասիրական,

Տ Օ Ք Թ. Պ Օ Ղ Ո Ս Կ Ո Ս Ա Ն Գ Ե Ա Ն

ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Ե Ի

ԱՏԵՆԱՊԵՏ ԻԶՄԻՒԹԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԵՆ

գրական ու գեղեցկագիտական նարցերուն՝ որ-
քան երբ պիտարանական երևոյք մը բացատ-
րել ուզէր: Այս գիտունին մէջ արուեստագետի
նոգի մը կայ որ երբեմն կը պտօրկայ, և ոչինչ
աւելի խանդաղատիչ է քան իրեն նետ գլուխ-գը-
լի գտնուիլ խանդաղատութեան այդ վայրկեան-
ներուն ուր Տօքք. Կոստանդ իր բամանքիները
կը վերլիշէ և ամբողջ Միւսէն գոց կ'ըսէ ձեզի,
սքանչելի աւելնով մը և ա՛յնքան զգայուն ու
սրտագրաւ շէշտերով:

Ֆրանսայի երկրորդ Կայսրութեան միջոցին
Փարիզ կրբուած, Տօքք. Պ. Կոստանդ խորա-
պէս կրած է Ֆրանսական մտքին բազմազան
ազդեցութիւնը: Թերեւս չէ եղած Հայ մը, որ
իր ցեղին նարագատ գաւալը մնացած ըլլայով
նանդերձ՝ այսքան **Փրանսականացած**, այս-
քան ձուլուած, տարրացած ըլլայ Ֆրանսական
տիպարին մէջ: Տօքք. Պ. Կոստանդ նանգատեան
կրբուած Ֆրանսացի նամալարանական բրօ-
ֆետէօրի մը տպաւորութիւնը կը բողոք վրայ,
իր **sof**, խոնուն, կոկիկ երեւոյրովը, այլ մա-
նաւանդ իր բազմակողմանի, վերլուծող ու նա-
մարող մտքովը:

Այս բոլորէն պէտք չէ նետեցնել քէ «Մե-
րոտ»ի նշխնակին եղբայրը գրքունակ խորքով
մարդ մը եղած ըլլայ:

Գրքերը, միմիայն գրքերը չի պիտի կրբ-
նային երբեք կազմաւորել այն charmant եակը
որ Տօքք. Պ. Կոստանդն է:

Կեանքը ո՛չ նուազ կարեւոր ու վճռական
գործօն մը եղած է այս շրջել աննատականու-
րեան ձեւակերպումին նամար:

Ու Տօքք. Կոստանդ այնպէս սերտած,
բախտ է կեանքի մատենար: Ապաքէն ապ-
րած մարդու յպոտն իմաստութիւնն է որ
կը ձուլագայրէ իր ձիւնափայլ դէմքին վրայ:
Երազի ու պատրանքի բոլոր ուշիներէն վերա-
դարձած, նոգեկան բոլոր լքումներն ու անդոն-
ները ձանչցած, Տօքք. Կոստանդ կեանքի փոր-
ձաւորեան գանձեր կը տաճարակրէ իր ներ-
սիւնին, ու բերեղացեալ այն գիտակցութիւնը,
բարոյական այն պայծառութիւնը որով կը նայի
այսօր իրերուն ու մարդերուն, կարողարով միայն
ձեռք չէր կրնար անշուշտ բերած ըլլալ գանտը:

Հասարակական ասարեգին մէջ ինչպէս
որ **ագգայիննի** մը չէ նանդիսացած բնա՛ւ, աննատական-բնկերային շրջանի մէջ ալ մտա-
ւորական **սիրացու** մը չէ եղած, այլ տոնմիկ
շնորհով մը օժտուած, նիմնապէս ուսած, բայն
շանագրգռութիւններու յագորդը նետապնդած և
շուկայէն դուրս, կեանքի աւելի շինիչ, բնադրա-
կան ձամբաներու մէջ զարգացած մարդն է ան:

Ռամկութիւնները չեն մտակցած իրեն, կեղ-
ծիքը չէ լքուած իր անապակ նոգին, արձանա-
պատուութեան գիշումներէն, խղճմտանքի սա-
կարկութիւններէն վեր մնացած է ան և իր ան-
բաղաւոր ու բարձր նկարագիրը զինք սիրելի,
մեծարելի ընծայած է ոչ միայն իր պատկանած
նամայնքին, այլ ամբողջ Իզմիրի միջազգային
նասարակութեան ուր ամեն շրքունք յարգանք-
քով ու նիացումով կ'արտասանէ Տօքք. Կոս-
տանդ անունը:

Պետք է ըսել, սակայն, քէ այս անգուգա-
կան Հայուն կեանքին մէջ Հ. Բ. Ը. Միւրիւնը
մեծ յեղաշրջում մը յառաջ բերաւ՝ Օսմանեան
Սահմանադրութեան փառորդային: Ազգին
նասարակական մարգերէն դուրս, տեսակ մը
«փոյտակրէ աշտարակ»ի մէջ ապրող Տօքքորը
— որ ամեն բարենպաստակ կրէի նիւրական գո-
նոյութեան իր բաժինը տալով կը գոնանար մին-
չեւ այն ատեն — բանկարծ նրապարակ իջաւ,
անուրին տակ տեսարակ մը առած, և դուռնէ
դուռ, խանութ խանութ սկսաւ դիմել, Բարե-
գործականին անդամներ արձանագրելու նա-
մար... Իզմիրի նայութիւնը սրան մը ազշանար
մնաց իր սիրական Տօքքորին ստանձնած այս
խանդաղատ, առաքելութեան նանդեպ: Ու կ'ըմ-
բանէր քէ ի՛նչպէս նարիւրներով փութացին ար-
ձանագրուիլ Հ. Բ. Ը. Միւրեան տունարին
մէջ. շատ ջանցած՝ Իզմիրը Բարեգործականին
ամենէն նոգօր ու պարտաճանաչ Մասնաձիւղե-
րէն մին տուած էր արդէն:

Հայի. Ընդհ. Միւրեան Կեղր. Ժողովը
իր կրախտագիտութիւնը չուշացաւ յայտնել իր
անձնուէր աշխատակցին, Միւրեան **պատշոյ**
անցումներու շարքին մէջ արձանագրելով իր
անունը:

Եւ անա՛ որ մըն ալ Տօքք. Պ. Կոստանդ
Բարեգործականին տարեկրութեանց մէջ ցարդ
նշանակուած գոնարբութիւնները գերազանցող
ձեւով մը, **Բարեւար Անցում** կը նոչակուէր
իր այնքան կարողին փարած Հ. Բ. Ը. Միւ-
րեան:

Իր իշխանական նուիրատուութեան մէջ
անգամ Իզմիրի Մասնաժողովին մեծայարգ
Ատենապետը նամաւորեան գզլիւիջ օրինակ
մը կուտար Միւրեան փոխանցած իր կա-
ուածներուն արժէքը նուագագոյն գնանատուի
մը վերածելով, մինչ խակականին մէջ 4000 ու-
կիւն շատ աւելի կ'արժէն Իզմիրի Պէլլափարա-
յին վրայ կանգնող այդ ջորս տուները:

Հայկական Միւրիւնը ապագային կրնայ
դեռ մեծամեծ նուէրներ ընդունիլ նայ փարքամ
բարեւորներէ, առանց ատոր նամար այլապէս

նարար գգայու. բայց Տօքք. Պոդոս Կոստանդի
մը այս աղուոր ձեարը անտարակոյս Բարեգոր-
ծականին նամար բացառիկ գոնանակութեան
պարագայ մըն է, փասնցի նիւրական մեծ աջակ-

ցութենէ մը աւելի՛ բարոյական նոգօր վկայու-
րիւն մըն է առիկա՛ նոյակապ Հայու մը կողմէ
ընծայուած՝ Հայկական Բարեգ. Ընդհ. Միւ-
րեան:

Հ. Բ. Ը. ՄԻՒՐԻՆԻ Ի ԶՄԻՐԻ Ի ՄԱՍՆԱԿՈՂՈՎ.



Մ. ԷԲԻՋԼԵՐ Մ. ՍՕՐՈՒԹԵԱՆ Յ. ԱԼՓԻԱՐ Յ. ՀԱՐԵՆՑ
Մ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ Ղ. ԷՍԱՅԵԱՆ ՏՕԹԹ. Պ. ԿՈՍՏԱՆԴ Կ. ԱՐԱՊԵԱՆ

Երբ որ բացուին դռներն յուսոյ եւ մեր եկեղեցի փախ տայ ձմեռ. շահկա՞մ տեսնել զիս Կիլիկիա...


«Ազատութեան» տարագիրը Հ. Բ. Ը. Միւրեան ծոցին մէջ գտաւ սխալմանքն իր հօտը սեւաւորոջ սուգին:

Աղետարշ, գրեթէ եղբարական սրտամտար մը եղաւ Մուշեղ Սրբազանի գործակցութիւնը Հայկա՛ւան Միւրեան նեա:

Եկեր էր, յոյսի ու ոգեւորութեան արեւոտ օր մը, Բարեգործականի Կեդրոնին մասնաւոր հոգածութեանը ենթարկելու Ատանայի իր հովուական շրջանին կրթական պահանջները, Կիլիկեան Գիւղատնտեսական վարժարանի մը ծրագիրը պարզելու և անով շահագրգռելու Միւրեան վարիչները: Բայց նազիս այս իմաստով բանակցութիւններու մտած էր, կրք՝ յանկարծ՝ Ատանայի ջարդին բօրը կը հասներ նայկական օրակարգին մէջ ողնջացնելու ամեն շինարար ծրագիր, և ճգնաժամային անմիջական օգնութեան միակ նարցի մը վերայ կեդրոնացնելու Ազգին բովանդակ խնայեղ ուշադրութիւնը:

Մուշեղ Սրբազան, ստեղծագործ աշխատանքի իր սիրայի երազներուն մէջ ջակջակուած, սանձնուած՝ անձկագին աճապարանքով մը շոգեմաւ նետուեցաւ՝ կրքայ իր վերապրող արիւնագանգ ժողովուրդին տիրութիւն ընկելու համար... Բայց կիլիկեան ավերեւ տարածմեքժըւած՝ Ատանայի դժբաղդ Առաջնորդը ստիպուեցաւ վերադառնալ Եգիպտոս, որ երկար տարագրութեան մը առաջին նանգրուանն եղաւ այլեւս իրեն համար:

Իր վշտակոծ հոգիին համար Հ. Բ. Ը. Միւրեանը ամոքիչ ապաւեն մը եղաւ հոս: Նախ եկեր էր ապանովելու անօր օժանդակութիւնը առաջադրուած նայրենաշէն ձեռնարկներուն ի սպաս: Հիմա կուգար ինքն իսկ աջակցիլ անօր՝ Կիլիկեան Արհաւիրքին զոներուն դարման նասցնելու համար:



Գ Ե Ր. Մ Ո Ւ Շ Ե Ղ. Ա Ր Բ Ե Պ Ի Ս Կ. Ս Ե Ր Ո Ք Ե Ա Ն

Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ

Հ Ա Յ Կ. Բ Ա Ր Ե Գ. Ը Ն Դ Շ. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

կարծես Բարեգործականին ի նպատակ վատնել իր կորովն ու պերճախօսութիւնը:

Մուշեղ Արքեպիսկոպոս Սերոբեանի արտասանմանեան գործունեութիւնը Հ. Բ. Ը. Միւրեան առաքելայի իր խանդավառ ու արդիւնաշատ նետապնդումն եղաւ առաւելապէս՝ Եգիպտոսի, Երուսալի և Ամերիկայի նայ գաղութներուն մէջ:

Առանց վարանելու կարելի է բռնել թէ Մուշեղ Սրբազան ժողովրդային լայն խաւերու մէջ ամենամեծ փրօվականտիսըրը հանդիսացած է

Ու ամենօրեայ հոգեւին աշխատակցութիւն մը եղաւ ասիկա Բարեգործականի Կեդրոնին, Տեղական Մասնաժողովին և Ատանայի Առաջնորդին միջև: Հանգանակիչ մասնաժողովներու նիստերուն ներկայ կ'ըլլար, անաստական դիմումներ կը կատարէր, բախանձագին կոչեր կը խրմբագրէր և ամենուրեք իր խոսքից խօսքին ազդու սատարը կը բերէր Միւրեան ստանձնած օգնութեան փրկարար գործին:

Այս դժբաղդ պարագաներուն բերումով Հ. Բ. Ը. Միւրեան փրօվականտին մասնակցիլ սկըսած՝ Մուշեղ Սրբազան իր արկածեալ հօտին կողմէ երախտագիտութեան պարտք մը սեպեց

ցարդ Հ. Բ. Ը. Միւրեան: Երուսալի և Ամերիկայի մէջ իր կազմած ու վերակազմած Մասնահիւղերուն, ինչպէս նաեւ իր կատարած բանախօսութիւններուն թիւը բերեալ կրնայ հաւասարիլ Միւրեան միւս բոլոր գործիչներէն մինչև այսօր ստեղծուած մարմիններուն և արտասանուած ձեռքերուն համագումարին, կամ թիւ պակաս կը մնայ ատկէ:

Այս տենդային գործունեութիւնը գարմանք և հիացում պատճառելու բնորն ունի, կըր մանաւանդ նկատի առնուի թէ Մուշեղ Արքեպիսկոպոս բացարձակ անձնախրութեամբ մը օրինակելի հանդիսացած է այդ ամբողջ առաքել-

ութեան ընթացքին, մինչ իր արժանիքներուն աննշան մեկ մասն իսկ ներկայացնելու անկարող եկեղեցականներ — անդինըրը, դրամ դիգելու զբաղած — իրենց անտարբերութեամբ միայն ուշագրաւ եղան՝ Բարեգործականին հանդէպ:

Գեր. Մուշեղ Արքեպիսկոպոս Սերոբեանի Միւրեան մատուցած անգնանատելի ծառայութեանց փոխարէն՝ իրրեւ դուզն բարոյական վարձատրութիւն՝ Կեդր. Վարչ. Ժողովը՝ շնորհապարտ զգացումներով՝ Նորին Սրբազանութիւնը դատած է Բարեգործականի Պատուոյ Անդամներուն շարքին մէջ:



Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Զ Ի Գ Ա Ն Կ Ո Յ Ի Մ Ա Ս Ե Ա Ճ Ի Ի Դ Ի Ն

Դ Ա Շ Տ Ա Ն Ա Ն Դ Ե Ս Ի Ն Խ Մ Բ Ա Ն Կ Ա Ր Ը

Յ Ո Ւ Յ Ա Կ

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԱՄՍԱՎՃԱՐ ՀԱՏՈՒՅԱՆՈՂ ԱՆԳՍՄՆԵՐՈՒ
(Եզիպտ. 100 Ղրուշը 26 Ֆրակի հաշուով)

Եզիպտ. Ղրուշ.	Եզիպտ. Ղրուշ.	Եզիպտ. Ղրուշ.	
ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ	1200,—	ՎԱՀԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ	100,—
ՏԻԿ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ	500,—	ԿՈՄՍՈՒՀԻ ՏՄՐՇՕՏ	100,—
ԼԵՒՈՆ ՊԷՅ ՅԱԿՈՒԲԵԱՆ	487,50	Ի. Ե. Ա.	100,—
ՏԻԿ. ՆՈՅԵՄԻ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ	400,—	ՄԻՀՐԱՆ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ	100,—
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՅ ՄԱՅՈՍԵԱՆ	400,—	ՏՕՔՔ. ՄՈՒՇԵՂ ՎԱՅԿՈՒՆԻ	100,—
ՄԱՐՔԻՋՈՒՀԻ ԻՆՃԷ ՃԷՆՕՐԻ	385,75	ԿԱՐԱՊԵՏ Մ. ՆՇԿԵԱՆ	100,—
ՏԻԿ. Ե. ՅԱԿՈՒԲԵԱՆ ՓԱՇԱ	325,—	ՅԱԿՈՒ ՊԷՅ ԲԱՐՅՈՂ	100,—
ԱՌԱՔԷԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	200,—	ՅՈՎԱՆՔ ԲԵՄՊԷՃԵԱՆ	100,—
Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ	200,—	ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈՒԲԵԱՆ	97,5
ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ	200,—	ԱՅԱՆԻԿ ԷԳՆԱԵԱՆ	96,5
ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ	200,—	ԵՐՈՒԱՆԴ ԹԸՆԿԸՐ	96,5
ՄԱՏՅԵՆՍ ԽԷՐԵԱՆ	200,—	ՎԱՀԱՆ ՏԻԼՍԻՋԵԱՆ	96,5
ԱՐԱՄ ՊԷՅ ՏՄԱՊՐՕ	200,—	ԳՄԲՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ	87,75
ՄԻՔԱՅԷԼ ՊԷՅ ՐԷԻՋԵԱՆ	200,—	ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԼԼԱՀԵՐՏԻ	87,75
ԵՂԲԱՐՔ ԿԻԼՊԷԼԿԵԱՆ	200,—	Թ. ԵԻ. Ե. ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ	87,75
ԿԱՐԱՊԵՏ ՏԻԼՍԻՋԵԱՆ	193,—	ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆ	87,75
Գ. ԵՍԱՅԵԱՆ ԵՒ ԸՆԿ.	162,50	ՄԿՐՏԻՋ ԵՍԱՅԵԱՆ	87,75
ՌԱՓ. ՄԱՐԿՈՍԵԱՆ	160,—	Մ. ԵԻ ՈՐԴԻՔ ԷՔՍԷՐՃԵԱՆ	87,75
ԵՂԲԱՐՔ ՋՕՐԱԵԱՆ	154,25	ԵՂԲԱՐՔ ԹԱՀՅԱՊՐՈՒՆԵԱՆ	87,75
ՕԼԻՎՕ ԵՒ ՊԱՔԸՐՃԵԱՆ	146,25	ԵՂԲԱՐՔ ԻՓՐԱՆՍԵԱՆ	87,75
Տ. ԵՒ ՏԻԿ. Թ. ՍՊԱՐՔԱԸ	123,—	ԳՐԻԳՈՐ ԿԻՍՏԻՇԿԵՐՏԱՆ	87,75
ՄԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԵՒ ԱՋՆԱՌՈՐԵԱՆ	113,75	ԱՆՏՕՆ ՀԱՃԻՊԻԱՐ	87,75
ՍԱՐԳԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ	113,75	ԵՂԲԱՐՔ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ	87,75
ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ	100,—	ՅԱԿՈՒ ՅԱԿՈՒԲԵԱՆ	87,75
ԵՐՈՒԱՆԴ ՊԷՅ ԱՂԱԹՕՆ	100,—	ՄԻՀՐԱՆ ՆԱԳԳԱՇԵԱՆ	87,75
ՋԱՐԷՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	100,—	Մ. ԵԻ Գ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ	87,75
ՎԱՀՐԱՄ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ	100,—	ՍՏԵՓԱՆ ՍՊԱՐՔԱԼԻ	87,75
ԱՐՄԵՆԱԿ ԿԱՄԱՐԱԿԱՆ	100,—	Պ. ԵԻ ՈՐԴԻՔ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ	87,75
ՏԻԳՐԱՆ ԿԱՄԱՐԱԿԱՆ	100,—	ՍԵԹ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ	87,75
ԳԷՐՐԳ ՍԱՐԳԻՍԵԱՆ	100,—	ԲԻՋԱՆԴ ՄԱՍՐԱՑ	83,33

Այն օրն որ Հ. Բ. Ը. Միութենը իր պաշտօնական մուտքը գործեց թուրքիոյ սահմաններն ներս, ոչ միայն իր նպատակները հասցնելու նաև արդի նպատակները կարողանալով իրականացնելու, այլ իր կազմակերպական ցանցերը տարածելով նպատակաւորաբար նամա՛ր այլ քրքանայ քարեկեցիկ տարրերուն օժանդակութենէն, ա՛յլ օրն Ն. Վ. Գարրիէ Էֆենտի Նորատունկեան ինքնին նշանակուած էր ստանձնելու նամար Միութեան Կ. Պոլսոյ Կեդրոնական Մասնաժողովին Ատենապետութիւնը:

Ու պէտք է անմիջապէս ըսել թէ Նորին Վրժանութիւնը չի գլացաւ Բարեգործականին իր սիրայօժար աշակցութիւնը, և անոր ի պատիւ իր զինքին ներկայութիւնը, իր անունին նմայքը:

Նորատունկեան Էֆենտիին քրքանայ պետական մարդերու խնայարքին կը պատկանի որոնք ազգային վարչական գործերու նոգածութեանը մեջ զբաղուած, կարծես ի պաշտօնէ կրցուած են անոնցմով զբաղելու, անոնց նանդեպ պատասխանատուութիւններ ու պարտականութիւններ վերցնելու: Ասիկա իրենց տեսակ մը անխտապիտի ստորագիտիւն էր նին թեմին տակ:

Հ. Բ. Ը. Միութենը՝ քաղաքական նոր կարգերուն նեա՛ կուզար քրքանայ կեանքի իրականութեան մեջ ապարեզ կարգաւոր յառաջդիմական բոլոր կամաւոր ուժերուն, և Ն. Վ. Գ. Էֆ. Նորատունկեան առաջիններէն կը նամար Միութեան ազգայէն ճիգին լծուելու: Նախկին Նախարար, Ծերակուտական, Ազգային Ժողովոյ Ատենապետ, Մանասարեանի


նամակայ, Նորատունկեան Էֆենտի իր անունէն բազմազարդ ու բնուատարեայ վիճակին մեջ չի դադրեցաւ իր բարոյական ամբողջ ազդեցութիւնը գործ դնել Մալաթիայի հայութեան նպատակ կարեւոր բաժինը ապահովելու նամար Բարեգործականին նետապնդած հարեւանուէր ձեռնարկներուն: Եւ երբ ցարդ չի տրուեցաւ իրեն բաղձացուած յայն նամամատուցներով իրագործուած տեսնել Պոլսոյ մեջ Միութեան օժանդակութիւնը, ատոր պատճառն առաւելապէս եղան իրարու յաջորդող փորձերու իրազարմարութիւնները, որոնք ինքնամիտի ու երկարաշունչ աշխատանքի նարատուութիւնները պակսեցուցին պոյսանայ նատարական կեանքին մեջ:

Հայկական բարեմուտականց ներկայ աւետարներ օրերուն, կարելի է յուսայ որ Միութեան նամար արգասանդ գործունեութեան նոր շրջան մը պիտի բացուի թրքանայոց Կեդրոնին մեջ: Եւ Ն. Վ. Գարրիէ Էֆ. Նորատունկեան՝ իր սկսած գործակիցներով՝ ազդու դեր մը պիտի ունենայ, անշուշտ, Բարեգործականի նորագոյն գործունեութեան մեջ:

Երկու տարի առաջ Եգիպտոս կատարած իր այցէն՝ նմայիչ տարատուութիւն մը մնաց Միութեան տեղադրանքներուն ու նամակիրներուն վրայ, որոնք բաղդն ունեցան շրջապատելու զինքը Սեմիթամիս Ծրեչին մեջ ի պատիւ իրեն տրուած թէպատկանի մը շարքը, և որոնց յիշողութեան մեջ իր նորը, սովորն ու խոնուն սիրուէրը անշնչելի կը մնայ:



ՎՍԵՄ. ԳԱՐԻԷԼ ԷՖ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ



Միութեան նիւնադիրներէն՝ անոր Կեր-
Վարչ. Ժողովին առաջին Ատենադպիրն ու
Ընդհանուր-Քարտուղարն եղած է Տօքթ. Ն.
Տաղաւարեան, որ՝ Օսմանեան Սահմանադրու-
թեան նշակումին նետ Քուրքիա վերադառնա-
լով՝ պետական և ազգային կեանքի մէջ այն-
քան աջքառու դերեր ստանձնեց նինգ տարիէ
ի վեր, առանց սակայն վայրկեան մը մոռնալու
իր սիրելի Միութիւնը:

Տօքթ. Ն. Տաղա-
ւարեան, Հ. Բ. Ը. Մի-
ութեան Կ. Պոլսոյ Մաս-
նաժողովին Ատենադը-
պիրը, դեպի ներքին
գաւառները կատարած
իր ճամբորդութիւննե-
րուն ընթացքին, զա-
նազան նոր Մասնա-
ճիւղներ կազմեց, և Բա-
րեգործականին նաշույն
ամենակարևոր ուսում-
նասիրութիւններ կա-
տարեց երկրին մէջ:

Իր ցուցմունքներուն
վրայ և յաճախ իր քե-
լադրութիւններով՝ նաչ-
րենի նամայնքներու
սահմանուեցան ներա-
կան նպաստներ և
գործնական աջակցու-
թիւններ:

Տօքթ. Ն. Տաղա-
ւարեան՝ իր գիտական
բազմակողմանի պա-
շարով և իր փորձառու-
կան նմուշներով՝ գե-
րազանցապէս ձեռննաս
ու օգտակար ուժ մը ե-
ղաւ՝ Քուրքիոյ մէջ՝ Հ.
Բ. Ը. Միութեան տրամադրուած՝ իրաւամբ
վայելելով այս վերջնոյն անպայման վստահու-
թիւնը:

Անխոնջ ու անդալին գործունէութեան
մարդն է Տօքթ. Ն. Տաղաւարեան, որ պետա-
կան պաշտօնակցի, ազգային ժողովականի,
բնիշխի, նամային գործիչի իր բազմազան բզ-
բադրումներուն ու նա ի նա վազբերուն մէջ ժա-
մանակ կը գտնէ գիտական ու բանասիրական
երկասիրութիւններ պատրաստելու, նրատարա-

կելու, ինչպէս նաև Միութեան նետապնդած
կրթական, տնտեսական և մշակութական ծը-
րագիրները մշակելու կամ ուսումնասիրելու:

Սերաստիոյ այս պատուական զաւակը նայ
մեծանուն նայրենասէրին երիմեանի նայրական
պաշտպանութիւնը վայելած է Երոզայի մէջ
իր ուսանողութեան շրջանին, և ատով իսկ
ներշնչուած, տագորուած է նայրիկեան ազգասի-
րական լուսազոյն բեղազ-

րանքներէն ու աւան-
դութիւններէն: Աւելի
քան քառորդ դարեր ի
վեր Քրքանայ յառաջ-
դիմական շարժումին
մէջ Տօքթ. Ն. Տաղա-
ւարեան իր աշխատան-
քի բաժինն ունեցած է՝
Գաղղբէօյի Արամեան
Վարժարանի Տնօրէնու-
թիւնէն մինչև Ազգային
Ժողովոյ այսօրուան
Փոխ — Ատենապետու-
թիւնը:

Այն սերունդէն է որ
երէ պաշարի ու անձ-
նագոյնութեան ներուներ
չի տուա Ազգին, խա-
ղաղ-զարգացման մեկ
քանի արժանաւոր ուսն-
վիրաներ արտադրեց,
և ատնց կարգին իր
տեղն ունի, ապահովա-
բար, Տօքթ. Ն. Տաղա-
ւարեանը:

Հ. Բ. Ը. Միութիւնը
իր այս Պատուոյ Ան-
դամին մէջ կը նաշուէ
իր ամենէն խանդավառ
ու գործունէայ գործիչ-

ներէն մին, որ ամեն վայրկեան պատրաստ է
պատասխանելու իր կոչին, ստանձնելու նամար
ամենէն դժուարին առարկութիւնները:

Հ. Բ. Ը. Միութեան Կ. Պոլսոյ Մասնաժո-
ղովը որ՝ իրրե քրքանայ կեդրոնական մար-
մին՝ ամենակարևոր դեր մը ունի կատարելիք
Բարեգործականի նայրենասուէր ձեռնարկներուն
վերաբերմամբ, յանձին Տօքթ. Ն. Տաղա-
ւարեանի կը լինու, անտարակոյս, իր գլխաւոր
սիրներէն մեկուն վրայ:



Տ Օ Ք Թ . Ն Ա Ձ Ա Ր Է Թ Տ Ա Ղ Ա Ի Ա Ր Ե Ա Ն
Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ
Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Դ Հ . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
Ա Տ Ե Ն Ա Դ Դ Ի Կ . Պ Ո Ւ Ս Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի

Հայ-Կաթողիկ հասարակութեան ամենէն
համակրելի ու եղբայրական դէմքերէն մին է
Տ. Արտաշէս Հիւրմիւզ: Վեներաբիլ կրթուած,
Մխիթարեան լուսազոյն շրջանի նայրենասի-
րական շունչէն անշէջ ոգևորութիւն մը պա-
հած է իր ներսիղին: Անոնցմէ է որոնք յա-
րանուանական վերապահութիւններով չեն մե-
կուսանար մեր ազգային կեանքէն և ցեղին
ընդհանրական համակրութիւններուն մէջ կը
սիրեն սարկիլ: Տիար Արտաշէս Հիւրմիւզ Հ. Բ.
Ը. Միութեան Կ. Պոլսոյ Մասնաժողովին Գան-
ձապետութիւնն ստանձնած է, իրեն յատուկ
սիրայօժար կամաւորութեամբ մը, որ սակար-
կել չի գիտեր ո՛ր և է անձնուէր ծառայու-
թիւն և որ երաշխիքը կ'ընծայէ լուրջ և տե-
ւական աշխատակցութեան մը:



Ա Ր Տ Ա Շ Է Ս Հ Ի Ի Ր Մ Ի Ի Զ
Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ Հ . Բ . Ը . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
Կ . Պ Ո Ւ Ս Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի



Հ . Բ . Ը . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Կ . Պ Ո Ւ Ս Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը
Գ . Ն Ո Ր Ե Տ Ո Ւ Ն Կ Ե Ա Ն Է Ժ Է Ն Տ Ի , Ա Տ Ե Ն Ա Պ Ե Ի Տ
Ա . Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն Ս . Գ Ը Ն Ա Տ Ե Ա Ն Գ . Մ Ս Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն
Տ Օ Ք Թ . Ն . Տ Ա Ղ Ա Ր Ե Ա Ն Ս . Գ Ա Ր Ե Կ Ի Օ Ջ Ե Ա Ն
Ս . Հ Ի Ի Ր Մ Ի Ի Զ Գ Ի Ն Ս Ա Պ Ե Ա Ն Մ . Է Ս Ս Ե Ա Ն
Գ Ի Ն Ա Տ Ե Ա Ն Ս Գ Ի Ն Ա Տ Ե Ա Ն Ս Ե Ն Ե Ն Ա Պ Ե Ի Տ
Գ Ի Ն Ա Տ Ե Ա Ն Ս Գ Ի Ն Ա Տ Ե Ա Ն Ս Ե Ն Ե Ն Ա Պ Ե Ի Տ
Գ Ի Ն Ա Տ Ե Ա Ն Ս Գ Ի Ն Ա Տ Ե Ա Ն Ս Ե Ն Ե Ն Ա Պ Ե Ի Տ

Ու տեսայ: Ու կ'երթար նաւը փոթորիկներու մէջէն: Անասնման առաջատա-
նաւը, մթին, վշտակոծ, սրտակեղեք կերպով եղերակահն:

Ո՞րչափ ժամանակէ ի վեր մատնուած էր խաւարին արհաւիրքներուն. ո՞վ զիտէ-
թերեւս երկար տարիներէ ի վեր, թերեւս դարերէ ի վեր: Պալտոս կզգլին մարգարէին
զրիչին արժանի նաւն էր այն, տեսածս ժամանակներու մշուշին մէջէն դուրս ելած,
անդրաշխարհային, աւելի մտացածին քան իրական, գոյութեան գաղտնիքէն մեղի բա-
ներ մը պատմելու եկող, մարդկային տառապանքին կենդանի պատկերը իր վրայ շալ-
կած այդ երազային բանը:

Ո՞ր կ'երթար. ո՞վ զիտէ: Ուրկէ՞ կուգար. զիտե՞նք: Միայն, ինչ որ յայտնի
կ'երեւար, հալածական, շարչարուած, խոշտանդուած, չորս ծագերուն բոլոր բռնաշունչ
և անտեղիտալի ուրուականներուն խաղալիք նաւն էր: Առաջատաները տեղ տեղ ծակ-
ծրկուած էին, և սակայն երկինքին շունչը կը վարէր զանի, թէպէտ հիւանդագին,
թէպէտ գանդաղաշարժ:

Հիւրամերձ ափունքներէ՞ վտարուած արդեօք. հաւանական է. վասն զի յողնած,
յողնած, պարտասած, ողեսպաւ կ'երթար, կ'երթար յայտնի էր որ առանց զիտնալու
թէ ո՞ր կը զիտէր:

Ու շունչս բռնած, լսելով արիւնիս շրջանին հեւքը երակներուս մէջ, կը զիտէի
այդ նստմ բանին անցքը հեռուն, մթնշաղին մէջ: Եւ կը հարցնէի ինքնիրեն թէ ի՞նչ
էր այդ երեւոյթը, երազներուն ամենէն ակունքներուն արտակոյնը, ամենէն ահաւոր-
ներուն ահեղագոյնը, աւելի խորհրդաւոր քան Արդոնաւորդներուն անդրուվարը, քան
անյայտելի Արմազայի ամպանման տորմիլը, քան Վասքօ տէ կամայի մը կամ Գոլում-
պոսի մը անձանթախոյղ նաւերը, քան հին և արդի ժամանակներու բոլոր այն ծովա-
յին հրէշները, որ անծայրածիր լոյծ անապատին ծոցը կը ձեղքեն կ'անցնին՝ նոր աշ-
խարհ մը գտնալու կամ հին աշխարհ մը կրակի և արիւնի մէջ խեղդելու համար:

Եւ կ'երթար, կ'երթար նաւը, սաղեցուցիչ ուրուական մը սեւ միջոցին մէջ,
մէկ երկու ազոտ լապտերներ հագիւ լուսաւորելով անոր անորոշ և անբացատրելի
գնացքին յուսահատութիւնը: Եւ ընդապա իմն կը նշմանէի ուրուանկարները անհամար
ճամբորդներուն, որոնց մէջ կը տեսնուէին ճագատ ձերուսիներ՝ երթացած թեւերնին
դէպի երկինք տնկած, հերարձակ կիներ՝ յուսահատութեամբ իրենց բազուկները գա-
լարելով, ու կականաբարձ բերաննին բացած, ու աչքերնին սոսկումէն ձեփ ձերմակ,
ամէնքն ալ սպասելով բանի մը կամ մէկու մը եր չէր գար, չէր գար, չէր գար. ամէն-
քըն ալ ներկայացնելով ազիտորմ տեսարանը սգազգեաց ուխտաւորներու որ ար-
ցունքներով լեցուած նայուածքնին կը բեւեռեն անողորմաբար անտարբեր աստուա-
ծութեան մը խուսափուկ ու տարտամ պատկերին:

Ակներեւ էր որ այդ նաւորդները, իրենց անվերջանալի ճամբուն մէջ, հանդի-
պած էին ու մտաեցած փրկութեան ափունքներուն, որոնց վրայ խոնուած օտար բազ-
մութիւն մը, թէպէտ այս անուն աղէտքին ի տեսիլ սահմոկած, սակայն անտարբեր
մտացած էին և մերժած էին բանալ անոնց առջև իրենց նաւահանգիստը, ի՞նչ կ'ըսեմ,

բուռնցք ցուցուցած էին անոնց թշուառութեանը: Յայտնի էր որ բովանդակ մարդ-
կութիւնը թշնամի էր անոնց ու կը վանէր, կ'արտաքսէր իր գուռներէն, ինչպէս՝ գրեթէ
միշտ՝ գոհ ու երջանիկ մարդիկ կը վեճտեն տառապեալ աղքատն ու տնանիլը:

Ու կ'երթար, կ'երթար նաւը անծայրափակ միջոցին մէջ, ի դուր փնտռելով
հիւրնկալ նաւահանգիստ մը, ողորմած ծովափունք մը, որ մթազգեաց հորիզոններուն
գաղտնիքին մէջ կը ծրարուէր:

Ո՞վ Տէր, ի՞նչ պիտի ըլլայ այդ նաւը: Ե՞րբ վախճանը այս անուր, այս զար-
հուրեցուցիչ աղէտքին: Գիթութիւն:

Բայց ահա նաւուղիներ կը ներկայանան՝ վտանգուած նաւուն բազմութեան
մէջէն դուրս ելած, ու կը ստանձնեն նաւը վարելու և ապահովութեան նաւակայք մը
առաջնորդելու գործը:

Այդ նաւուղիներէն և ոչ մէկը սակայն կրնայ գտնալ ճշմարիտ ուղին, փրկու-
թեան ճանապարհը: Անոնցմէ ո՞րը այնպիսի ուղիութեան մը կը սկսի հետեւիլ, որ
յայտնապէս պիտի տանի նաւը վերստին դէպի այն խուժաղուժ մարդերը ուրկէ ա՛յն-
չափ շարչարանք, ա՛յնչափ հալածանք գտաւ ան: Ո՞րը աւելի խաւարած՝ ցամաքնե-
րու ճամբան ձեռք կ'ստնէ: Ո՞րը կ'ուղէ տանիլ զայն դէպի վիթխարի և թխալայրդ
խութեր ու խաբակներ, ուր ամէն բան մէկ ակնթարթի մէջ պիտի խորտակի, պիտի
սուզի և շիջանի:

Կորո՛ւստ, կորո՛ւստ, կորո՛ւստ . . . :
Ողորմեցէ՛ք նաւուն, երկնաւոր և երկրաւոր զօրութիւններ. յափշտակեցէք
զանի անխուսափելի անգուճոյէն: Ե՛րբ, լուսաւորուէ. երկինք, զթութեան շո՞ղ մը.
վի՛շ, սիրտիանքի նայուածք մը:

Ու նաւը կ'երթար շուարած, դեղեւուն, խելակորոյս, մ.ձ վտանգի առջև սալ-
շահար ու թովուած, կարծես օրհասականի մը խուլ հանդիւնը խոկալով, մատախուղնե-
րու մէջտեղ մոլորած անարգիլ խլեակի, կզգլի մը նման՝ զոր երկրաշարժի անաղին ան-
սահման պատուհածք մը մօտ է կլլելու:

Պիտի կորսուի, լմեցա՛ւ . . . :
Ոչ:

Ահա նոր նաւուղի մը յատա՞ջ կը մատչի: Զահի մը չողիւնը ունի իր նայուածքը:
Վտահութեան ժպիտ մը իր շրթունքներուն վրայ կը ճառագայթէ: Արի և հզօր, սըր-
տասնդիչ բառեր կը ցանէ իր շորտին: Կը շրջապատուի, կ'ողջուեսուի: Լայն ճակաբը
պատկառանք և յոյս կը ճնցունէ սիրտերուն մէջ: Կորովաբեր նայուածքը գնայլանքի,
սիրտիանքի ծաղիկներ կը բուսցնէ հողիներուն մէջ:

Հրամաններ կը սփռէ իր շուրջը. կը հնազանդին: Ե՛րբն ծուէն եղած առա-
գասանները կը նորոգուին: Խորտակուած քճքճած սարուածները, զեկ, թխակ, թոչա-
բան, մալուխ. անուարդ, ամէն բան կը յարգարուի կը վերաշինուի:

Նաւը, տկարութեան, լքումի և խորտակումի քունը կը թօթափէ, ու կը սկսի
յատա՞ջանալ, աւելի վստահ, աւելի ամբապլինդ:

Մատախլաթազ հորիզոններուն աղջամուղջը կը սկսի տակաւ փարատիլ: Եր-
կինքը իրբեւ հրաշքով կը լրթանայ:

Ապրիլն, ո՛վ հզօր և արի նաւուղիդ: Յաւիտեանականին անբաւ օրհնէ՛նքը քու զուարթածաղիկ զլիսուդ:

Ազնիւ, ո՛վ հզօր և բարի նաւուղիդ: Հաշտ ու բարեկամ նաւահանդիսաբը ծայր սուաւ: Յուսոյ և մխիթարութեան առաւօտը ծաղկեցաւ:

Յառաջացի՛ր, այ՛ սյրի և բարի նաւուղիդ: սրբազան զործդ ի զլուխ հանէ սիրի հանես:

* * *

Հարկ կայ միթէ ըսելու, սիրելի հայրենակիցներ, որ այդ նաւը հայութիւնն է, և արի ու հզօր նաւուղիդ՝ այն վրկաւէտ Միութիւնը, Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութիւնը, որուն անունը հրճուանքէ ու ժողնապէս արօրիկ կուտայ ամէն հայ լանջք, եփրատէն սկսեալ մինչև Նիսիարա, ու Նեղոսի աղբիւրներէն սկսեալ մինչև Գանուբի սկունքը: Բարեգործական Միութիւնը, հեռոյնէ աւելի հզօր, հեռոյնէ աւելի լայնածաւալ, որ կոչուած է դարմանել հայ խորունկ վէրքը, ուժ տալ մեր ցեղին և կազմուբել, նման անասնման ճիւղերով ծառի մը որուն շահեկան հովանին կը ստրածուի հայ ազգին վրայ թափելով իր անշախելի բարիքները:

Օրհնեա՛լ, յաւիտեան օրհնեա՛լ Հայկական Միութիւնը, և անունք որ յղացան և անասան հիմերու վրայ հաստատեցին զայն:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱԼԵՊԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ
Նախագահութեամբ Վ.Ն. Սանակ Բ. Կիլիկիոյ Կարողիկոսին



Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

- | | |
|--|---------------------------------|
| Վ.Ե.Ն. ՍԱՀԱՅ Բ., Կամողիկոս Կիլիկիոյ, | |
| Գ.Ե.Ր. ՄՈՒՇԵՂ ԱՐՔԵՊԻՍԿ. ՍԵՐՈՐԵԱՆ, | |
| ԵԱԳՈՒՊ ԱՐՔԻՆ ՓԱՇԱ, | Փոխ-Ատենապետ Կեղր. Վարչ. Ժողովի |
| ՄԿՐՏԻՉ ԱՆԳՐԱՆԻԿԵԱՆ, | Գանձապետ » » » |
| ՎԱՀԱՆ ՄԱՒԵՉԵԱՆ, | Ատենադպիր » » » |
| ԱՌԱՔԵԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ, | Խորհրդական » » » |
| ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ՇԷՐԻՏՃԵԱՆ, | » » » |
| Մ. ՄԱՐԿՍՍՅԱՆ ՊԷՅ, | » » » |
| ՏԵՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ, | » » » |
| † ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՆԵԱՆ | |
| ՏՕՔԹ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ, | |
| ՏԵԿՈՆ ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ, | |
| ՏԵԿՈՆ ՆՈՅՆՄԻ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ, | |
| ԼԵԻՈՆ ՊԷՅ ՅԱԿՈՐԵԱՆ, | |
| ՕՐԻՈՐԳ ԱՆՆԱ ՉԱՄԻՉ, | |
| ՄԱՐԻՉՈՒՇԻ ՌՕՊԷՐԹՕ ՎԼԵՐՈՒՐԻ ՃԷՆՅՐԻ (ծնեալ ա՛Մարթ) | |
| ՅՈՎՀԱՆՆԵՅԱ ԷՖԷՆՏԻ ԱԼԼԱՉՎԵՐՏԻ, | |
| † ՍԵՐՈՐԹ ԳԱՒԹԵԱՆ, | |
| ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ, | |
| ԼԵԻՈՆ ՍԵՄԵՐՃԵԱՆ, | |
| ԱԹԱՆԻԿ ԷԳՆԱՆԵԱՆ, | |
| ՌԱՓԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ, | |
| ԱԳԱԹԱՆ ԹԱՉԹԱՊՐՈՒՆԵԱՆ, | |
| † ՊԵՏՐՈՍ ՊԷՅ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ, | |
| ՏՕՔԹ. ԱՐՐԱՀԱՄ ԱՅՎԱՉԵԱՆ, | |
| ՅԱԿՈՐ ԲՐԲԵԱՇԱՐԵԱՆ, | |
| ՏԵԳՐԱՆ ՉԱՄՔԷՐԹԷՆ, | |
| ՍԵԹ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ, | |
| ՎԱՀԱՆ ՔԻՐՈՔՃԵԱՆ. | |



Ամերիկայի Գաղութին նախագետն է ան: Եւ իսկապէս այս պատուական ծերունին իր անձին մէջ կը խտացնէ նասարակական տեսակ մը անուն նախորդեան բոլոր որդեգրող ու կա-րելից յատկութիւնները:

Տարագրութեան այդ նեոստոր նանգրուա-նին վրայ՝ ուր որդա-ցեայ երիտասարդ սերունդներ այնքան յաճախ կը տապա-լին, կ'ոտնակոխեն իրենց երեկուան կրօնքերը, Տօքք. Ա. Այվազեան կը մնայ՝ իր բարոյական պատ-ուանդանին վրայ՝ ամենքէն սիրուած ու բարգոյած դէմք մը: Եւ ասիկա իրեն նա-մար, արժանիքի ան-նշան տիտղոս մը չէ, ապահովարար:

Մեծերուն նեո մեծ, առանց ողնա-լարի քերամներու կամ խցմտանքի սակարկութիւններու, պզտիկներուն նեո նամետ, առանց կեղծ ժողովրդակա-նութեան մը դար-պասներուն գիջանե-լու, Տօքք. Այվազեան՝ իր ուղղամտութեամ-բուն ու բարութեամ-բը՝ ձեռք բերած է նեղինակութիւն մը զոր նագիւ թէ յա-ւակներն բամնէլ ի-րեն նեո բերես ա-ւելի փայլուն ձիր-բերով օժտուած ուրիշներ:

Դուրպիքի մեծ ճամբուն վրայ, իր դուռն ու սիրտը բաց են բոլոր վշտակիրներուն ու շուարածներուն նամար: Տօքք. Այվազեան, նան-գրտեան կոչուած բաղասպետական բժիշկ, իրեն դիմող ամեն դժբաղդի ցաւին վրայ կը ծռի, ինչպէս պիտի նակեր նիւանդի մը նեասարտ. անջքին կամ տենդալատ. ճակատին:

Անդրատյանտեան տարագիր նայութեան


մէջ արձագանգող բոլոր ազգօգուտ ձեռնարկ-ներն անպայման վայելած են իր ազնիւ նոգա-ծութիւնը և իրմով վաւերացած, նամակրելի, անմխտելի դարձած են որոշ շրջանակներու մէջ:

Տօքք. Ա. Այվազեան նախասահմանուած էր Ամերիկայի Գա-ղութին մէջ Հ. Բ. Ը. Միութեան ամենէն ջերմուտանդ ախոյ-նաններէն մին նան-դիսանայ, քանի որ Միութիւնը կուգար կերպով մը բնդգրկել այն բոլոր գեղեցիկ ու ազգաշէն խեղա-նէրը որոնցմով մեր սիրելի Տօքքորը խան-դավատուեր էր իր երիտասարդ տարի-քէն սկսեայ՝ երբ Պո-լիս կ'ազակցեր Մի-ացեալին և մեր եր-բանի կրքական ու բարեգործական նաս-տառութիւններուն:

Եւ իսկապէս ան-վերապահ անձնուի-րութեամբ մըն է որ Տօքք. Ա. Այվազեան Ամերիկայի մէջ փա-րեցաւ Միութեան վը-րօխականտի և կազ-մակերպութեան գոր-ծին: Բաղաթէ քա-ղաք շտապեց, իր պարզուկ այլ սրտոս խօսքին կշիռը բե-րելով նրապարակա-լին ժողովներու մէջ ուր՝ Բարեգործակա-

նին նշանակութիւնը կը պարզուեր մեր ամերի-կայի եղբայրներուն: Տօքք. Ա. Այվազեանն է որ նախագանեց Հ. Բ. Ը. Միութեան Ամերի-կայի Մասնահիւղերու 1912ի Պատգամաւորա-կան Համաժողովին որ տեղի ունեցաւ ի Պոսթօն՝ նոր բուսական մը բանայով Ամերիկայի մէջ Բա-րեգործականին առջև:

Տօքք. Ա. Այվազեան ամենէն յանկուցիչնե-րէն մին է այն նայ բժիշկներէն որոնք միեւնոյն



Տ Ե Ր Ք . Ա Ք Բ Ա Հ Ա Մ Ա Յ Վ Ա Ջ Ե Ա Ն
Պ Ա Տ Ո Ւ Ռ Յ Ա Ն Դ Ա Մ Հ . Բ . Ը . Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն
Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ Ն Ի Ռ Ի Ը Ր Բ Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ե Ն

ատեն մեր նասարակական կեանքին մէջ գոր-ծիչի առաջնակարգ դերեր կատարած են:

Եւ Հ. Բ. Ը. Միութիւնը նպարտ է իր շար-քերուն մէջ նաշուելով ատոնցմէ քանիներ, ինչ-պէս Տօքք. Պ. Կատանդ մը՝ Իզմիր, Տօքք. Ա. Շմատունեան մը՝ Հայեպ, Տօքք. Ն. Տաղա-



ւարեան մը՝ Պոլիս, Տօքք. Ա. Այվազեան մը՝ Ամերիկա, ինչպէս դեռ ուրիշ յարգելի բժիշկ-ներ՝ որոնց ատենապետութեան ներքև կը բար-գաւաճին Միութեան Մասնաժողովներէն շատեր, ինչպէ՛ծ Ֆրեզնօ, Երուսաղէմ, Այնթապ, Տիար-պէքիր:



Հ Ա Յ Ե Ա Յ Ա Ն Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ . Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Բ Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն
Ո Ւ Ե Ս Թ - Շ Ո Պ Օ Բ Ը Ն Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ


ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Միութեան Ամերիկայի մեջ ծառայման մասին խորհրդակցութիւններ կատարելու և միջոցներ տնօրինելու նպատակաւ, Միութեան Ամերիկայի Տեղական Մասնաժողովները, 1 և 2 Սեպտեմբեր 1912ին, Պոսթօնի մեջ, խորհրդակցական Համաժողով մը գումարելով, Շրջանակային Ցանձնաժողով մը ընտրած են, Միութեան նետեալ գործօն և անձնուէր անդամներն.—


- ՎԵՐ. Կ. Մ. ՄԱՆԱՎԵԱՆ
- Տ. ՎԱՀԱՆ ՔԻՒՐՔՅԵԱՆ
- Տ. ԿԱՐԱՊԵՏ-ՓՈՒՇՄԱՆԵԱՆ
- ՎԵՐ. Խ. Կ. ՊԷՆՆԷԵԱՆ
- Տ. Կ. Յ. ԳԱՐԱԿԻԼԵԱՆ
- Տ. Գ. Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
- Տ. Ա. Պ. ՍԷԼԵԱՆ

- Ատնապետ
- Ատնաղպիր
- Գանձապետ
- Խորհրդական
- »
- »
- »



Վ. Ե. Կ. ՄԱՆԱՎԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ



ԿԱՐԱՊԵՏ Ք. ՓՈՒՇՄԱՆԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Յիշեալ Ցանձնաժողովը, որուն ընտրութիւնը վաւերացուած է Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ, սրաշտօն ունի՝ նսկել Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Հիմնական Կանոնագրին տրամադրութեանց և Կեդր. Վարչ. Ժողովին նրանազներուն կետ առ կետ գործադրութեանը, ձեռք առնել այն բանաւոր միջոցները՝ որ պիտի ծառայեն Միութեան տարածելու և զօրացնելու Ամերիկայի նայ գաղութներուն մեջ, միտմ տայ Միութեան Ամերիկայի Մասնաժողովներուն գործունէութեան և անոնց վրայ կատարել վերին նսկողութիւն, շատցնել Միութեան անդամներուն թիւը, ձեռք բերել նուիրատուութիւններ և կտակներ, կազմել նոր Մասնաձիւղներ, և սարքել նանդեաներ ու նրապարակային ժողովներ:

Ցանձնաժողովին սրաշտօնը բացառիկ է և սանձաւարակ Ամերիկայի շրջանակին համար: Անիկա, ի նարկին, պիտի կատարէ միջնորդի դեր մը՝ Կեդր. Ժողովին և Ամերիկեան Մասնաժողովներուն միջեւ: Աւերորդ է բոլոր անվտուրի կը մնան Հիմնական Կանոնագրին բոլոր տրամադրութիւնները, որոնց համաձայն Տեղական Մասնաժողովները Կեդր. Ժողովին կը վաւերացուն և անոր նետ ուղղակի կը յարարելին, ըստ առաջնոյն՝ անոր ոլրկելով գանձուած դրամները և անոր ներկայացնելով իրենց նամարատուութիւնը:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊՈՍԹՕՆԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻՆ ԽՄԲԱՆԿԱՐԸ

Ուրեմն, Հ. Բ. Ը. Միութեան եօթներորդ տարեգարձը պատենութիւն թո՛ղ ըլլայ մեզի որ ազրու դարի մը տանք այս հոյակապ ձեռնարկին:


Թուրքիոյ վերջին դէպքերը ծնունդ տուին ծանրակշիռ հետեւանքներու, որոնք սերտ կապ ունին Հայութեան ասպարային հետ ալ: Բայց, որպէս զի Հայութիւնն, իբր ինքնուրոյն հասարակութիւն, ասպարայ ունենայ՝ պէտք է որ իր բնիկ հողին վրայ ապրի, աճի Պայման մըն է ասիկա, առանց որուն «Հայաստան» բառը պիտի մնայ սոսկ պատմական բացատրութիւն մը, և Հայութիւնը պիտի դառնայ արձամարնելի քանակ մը: Իսկ այդ պայմանը ձեռք կը բերուի ոչ թէ խօսքով, լացով կամ ցոյցով՝ հապա գործունէութեամբ, անազմուկ, անդուլ և դրական գործունէութեամբ: Հայը պահել իր երկիրն մէջ, ու զօրացնել անոր անտեսական, բարոյական ու մտաւորական կեանքը, ահա՛ գործունէութիւնը, ճշմարտապէս ազգասիրական, զոր կը կատարէ, և պիտի կատարէ Հ. Բ. Ը. Միութիւնը: Թերեւս չա՛տ երկար թուի ճանապարհը, որ պիտի հասցնէ հանգրուան. թերեւս, բայց ա՛յս է ամենէն ապահով անխտանդ ճանապարհը, ու մանաւանդ միակը որ բաց է մեր գողցոջ քայլերուն առջև... Միւս կողմէ, համոզութիւնք որ Հ. Բ. Ը. Միութեան հետապնդածը, ինչպէս որ քաղաքական նշանակէտ մը է, զգացողական, բանաստեղծական հեռապատկեր մըն ալ է: պարզապէս Իրաւունքի, Արդարութեան խնդիր մըն է: Այն աշխարհը, որուն սահմաններուն մէջ, մտ 20-25 դար ապրած է Հայ ցեղը, ամենադժուակ պայմաններու մէջ իսկ մշակելով քաղաքակրթական վիճակ մը, պէտք է առնամուռ ըլլայ նոյն Հայ ցեղի խաղաղ բնակութեան և վայելումին, ինչպէս Ռուսական դրօշին՝ այնպէս ալ Օսմանեան կամ Պարսկական դրօշին ներքև: Իր բնակարաններէն դուրս, երկրապնդիս վրայ չկայ հող մը ուր Հայը կարենայ արմատ արձակել և ուճանալ: Ինքնասպանութեամբ բնադղն իսկ կը պահանջէ որ մենք հաւատարիմ մնանք այն հողին, զոր դարերով սոռցած են մեր նախնիքը, աշխատութեան քրտինքով ու մարտիրոսութեան արիւնով... Այդ աշխարհը, բնական բազմատեսակ ճոխութեամբ օժտուած՝ օտարազգիներու նախանձախտ մրցումին առարկան է իր անտեսական փառաւոր ասպարային համար: Արժան է որ Հայն ալ, իր ներկայ բնակակիցներուն հետ, թիւրքին, Բելաբախին և ուրիշներուն հետ միասին օգտուի այդ ասպարային: Ու անտարակոյս պիտի օգտուի, եթէ միայն ճանչնայ հայրենաւանդ իր ժառանգութեան յարգը, ու տէր մնայ անոր, դժգոյի իրականութեան առջև անհուկ: Հրեայ ցեղը, մեղմէ աւելի հալածական ու վայրաս վատին, վերջին 25 տարուան միջոցին ետապատիկ բազմապատ Պաղեստինի մէջ, նուրամուտ դաղթականներով: Եթէ մենք չը սրտասնդենք մեր հայրենաբնակ ազգակիցները, և անտարբերութեամբ դիտենք անոնց յուսակաւոր բնկճումը կամ դաղթումը, ժամանակ պիտի դայ, ու չկամ կանուխ, որ ազազուն տերեւներ պիտի մնան Հայութեան հնաւոր կազմիչն, և Պատմութիւնը, իր գատավճիռներուն մէջ անողք, այսպէս պիտի արձանագրէ մեզի համար — անա՛ ազգ մը որ արժանի չի ասպրեղա, ու մեռաւ:

* *

Ով որ կը ցանկայ դիմադրել այդ չարիքին թո՛ղ աջակցի Հ. Բ. Ը. Միութեան: Հազարներ կան այսօր արտասահմանեան գաղութներուն մէջ, որ ամենայն դիւրութեամբ կրնան անդամակցել, առ նուազն երեք տոլար տարեկան: Եւ ինչպէս կ'արդարանայ ո՛ր է Հայութեան խոստովանութեան մը որ կը պահանջուի ազգին անտեսական վերածնութեան, ուրիշ խօսքով՝ ազգային պահպանութեան գործին հա-

մար: Կանոնադրի այս կամ այն յօդուածին, կեդրոնի կամ Մասնաժողովի այս կամ այն անդամի անխարկող դիտողութիւններ, և կամ վարչական այսինչ կամ այնինչ անօրինակութեան վերաբերող առարկութիւններ, նոյն իսկ թէ ըլլան հիմնաւոր, պէտք է ազգէն մեր սրտին ու մտքին, եթէ մեր հայրենասիրութիւնը բաւական տաք է, և մեր հայեացքը ոլորտը բաւական լայն: Եւ մի՛ թէ երեւակայելի է ընկերական մարմին մը որ անխտիր մեր ամենուս ուղած եղանակով կազմակերպուի ու ամենուս հաւնած անձերով կառավարուի Ռուսի երբ ազգին բոլոր պաշտօնական պետերը, — Լուսաւորչական, Բողբալական և Կաթուղի, — ու ազգին նշանաւոր մտաւորականներէն շատեր, անխառն համակրանքով կը խօսին Հ. Բ. Ը. Միութեան մասին, ամենուս կը մնայ վստահօրէն թութախել կասկածը և վազել խտացնել շարքերը: Պարագաներ կան որոնց մէջ անձնական համոզումի կամ զգացումի մը զոնողութիւնը այնչափ հայրենասիրական է, որչափ կեանքի զոնողութիւնը: Այս կերպով միայն կարելի է փայլեցնել հնամենայն յարեան ոգին, և իրականացնել հանրածանօթ առածը թէ՛ Միութիւնը Զօրութիւն Ե:

* *




Վ. Ե. Բ. Խ. Կ. Պ. Ե. Ե. Ե. Ա. Ն. Խ. ՈՐԸՐԿԱԿԱՆ Ը. Բ. Ը. Մ. Ի. Բ. Ե. Ա. Ն. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԵՐՁԱՆԱԿՍՅԻՆ ՅԱՆՁՆԱԳՈՂՈՎ

և ուղիղ կը գտուն: Անոնք կրնան սակայն ստարիկ զուս մարդասիրական նպատակի, եզրայրական, քրոջական ձեռնառութեան դէմ: Աչքի առջև ունինք ժողովուրդ մը, աշխատասէր և ընդունակ, որ իր միջավայրին համար քաղաքակրթութեան գլխաւոր աղբակը եղած է, և աւելի մեծ չափով կրնար ըլլալ, եթէ պատենութիւն տրուէր իրեն: Այդ ժողովուրդը զժբախտ պարագաներու զոն, և միշտ ծանր հարուածներու ենթակայ, սովի և կոտորածի վերջին սարսափներէն հաղիւ աչք բացած՝ այսօր կը տուայտի պատերազմի աղէտներէն: Ուժասպառ և սրտաբեկ այդ ժողովուրդը խնամել, պիտի թարեւ, կազդուրել ու բարձրացնել — ահա՛ Հ. Բ. Ը. Միութեան նպատակը և գործը:

Արդ, ինչպէս մեկնել այդ տեսակ կազմակերպութեան մը հանդէպ անտարբեր կեցուածքը այն Հայերուն ու Հայուհիներուն, որոնք, թերեւս իրենք ալ երբեմն ճակատ կեանքի գառնութիւնները, այսօր բարեկեցիկ վիճակ ունին, անձնական ամէն ինչ վայելքի համար առատօրէն կը ծախեն, և սակայն չեն ուզեր ամիսը զոնե՞ 25 միկր

զոհել իրենց կարօտ ազգակիցներուն օգտին... Մեր այդ սիրելի բարեկամներէն ով որ կարենայ, երեւակացութեան ուժով, գէթ վայրկեան մը ինչն իր վրայ զգալ ցաւի, տառապանքի ճնշումը, թերեւս պիտի խոստովանի թէ՛ սոսկ ինքնիրեն համար ապրող անձը, ոչ միայն իր պարտքին մէջ կը թերանայ, այլ և ճշմարիտ հաճոյքէ մը կը զրկուի :

Հիւսիսային Ամերիկան զերազանցօրէն մարդասիրական այն երկիրն է որ, վիթխարի գործունէութեանց և հսկայ նուիրատուութեանց շնորհիւ, հազարաւոր մշակներ կը զրկէ աշխարհիս չորս կողմերը, Քրիստոնէոսայ քաղաքակրթութեան բարիքները ծաւալելու: Ամերիկայի Հայ գաղութին համար քաղաքաբուրութիւն մըն է, փառք մըն է, եթէ կարենայ հետեւիլ այդ պատուական օրինակներուն: Պատմական Հայրենիքին նուիրուած հոգածութեան ու զոհաբերութեան ոգին կրնայ ազնուացուցիչ Իտէալ մը գառնալ նաև Ամերիկայի նոր սերնդին համար, և ամբաստան կապել անիկա Հայութեան հետ, երբ օր մը մոռցուած ըլլան Հայ լեզուն և աւանդութիւնները — ինչ որ ականջը հաւանականութիւն մըն է: Բայց որպէս զի ապագայ սերունդը այդ Իտէալով ներշնչուի, պէտք է որ մինքրամենքս այսօրու ընէ մշակներ, հետաւոր հայրենիքին սէրը, այն հաւատքով որ Հայաստանի ծառայելը կը նշանակի Քաղաքակրթութեան ծառայելը, ինչպէս ըստ կլասիցիս:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՅԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՓԵԹԵՐՍԸՆԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԿԵՐՈՅԹԸ

ՀԱՅԿ. ԲԱՐՅԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՍԵՓԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

ԹԻԻ	ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՎԱՅՐԸ	ՀԻՄՆ. ԹՈՒՆԿԱՆ	ԹԻԻ ԱՆՈՎԵՐՏ	ԹԻԻ ՊԱՇՏՈՆ	ՏԱՐԵԿԱՆ ԾԱՆՔ. ՕՈՒՎ. ՎՐԸ.
Ա.— ՄԱՍՆԱԺՈՂՈՒԹԵԱՄ ԶԱՅՈՑ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ					
Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն					
1	Վան (Վարժապետանց).....	1911	60	13	82296 —
2	Միւսթարդիկ (Բարձր. Կախարհք).....	1913	—	—	—
3	Սդերդ (Մաղկոց).....	1910	253	9	19336 —
4	Տեհ.....	1910	90	4	4958 50
5	Զոց.....	1911	56	3	2592 —
6	Ռևիստան.....	1911	41	3	1998 —
7	Գուսիկ.....	1911	56	4	2320 —
8	Հազո.....	1911	82	5	4687 50
9	Մարաֆան.....	1911	27	2	1760 50
10	Տուսասաֆ (Յոփ).....	1911	36	3	1779 50
11	Հազո.....	1910	100	5	6210 —
12	Կրաշիւրա.....	1911	84	4	3010 —
13	Պիշիկ (Քերիփ).....	1911	34	1	1296 —
14	Կիւնիսիւնի.....	1911	35	1	1296 —
15	Հաշիկ.....	1911	52	2	3240 —
16	Հեշիկ.....	1911	38	2	1348 —
17	Պաշիկ.....	1911	45	1	1600 —
18	Կիւնիկ Ապի (Խաքուկա).....	1911	20	1	1324 —
19	Թըրպիկ.....	1912	—	—	—
20	Հիւսիսան.....	1912	—	—	—
21	Տալուսի.....	1912	—	—	—
22	Հասիսաֆ.....	1912	—	—	—
23	Քիֆան (Սիլիս).....	1912	—	—	—

ԹԻԻ	ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ ՎԱՅՐԸ	ՀԻՄՆ.	ԹԻԻ	ԹԻԻ	ՏԱՐԵԿԱՆ ՄԱՆԻՔ
		ԹՈՒՍԱԿԱՆ	ԱՇՈՎԵՐՏ.	ՊԱՆՏՅՈՆ.	Օսմ. Ղր.Շ.
24	Հաղնիսց	1913	—	—	—
25	Խոզար	1913	—	—	—
26	Միլիշան	1913	—	—	—
Կ Ի Լ Ի Կ Ի Ա					
27	Տորք-Նոյ (Քեղեկեան Որբանոց)	1912	90	12	132680 —
28	Վահկայ	1910	112	3	3239 —
29	Շար Տերե	1911	100	2	1509 —
30	Աղբիւրան	1909	92	3	2160 —
31	Կարան	1909	103	2	2160 —
32	Քեպուսիյի	1911	85	2	3996 —
33	Եարվուզ	1912	—	—	—
34	Տեօնիկ	1912	—	—	—
35	Ֆրնիսրնազ	1912	—	—	—
36	Գարսուրան	1912	—	—	—
Բ.— ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ ԱՋԴԱՆՈՒԻՐ ՀԱՅՈՒՇԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ					
Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն					
37	Սղերդ	1912	110	4	2700 —
38	Միլիսարդին	1912	46	2	1080 —
Կ Ի Լ Ի Կ Ի Ա					
39	Շիլիլիլի	1912	27	2	1080 —
40	Ֆրնիսրնազ	1912	57	1	2700 —

ՆՈՒՆ.— Վերոյիցեալ վարժարաններուն համար Միութիւնը հետեւեալ գումարները կը ծախսէ սարուէ սարի.— Վանի վարժարաններին համար 450 Օսմ. Ասկի, Տորք-Նոյի Քեղեկեան Որբանոցին համար 1100 Ա.նգլ. Ասկի, Միւճարդինի Կեդր. Բարձր. վարժարանին համար 100 Օսմ. Ասկի, Միացեալին վարչութեան վստահուած 33 Նախնական վարժարաններուն համար բնորոշը 660 Օսմ. Ասկի, և Ազգայնուէրի վարչութեան վստահուած 4 Աղջկանց վարժարաններու համար 100 Օսմ. Ասկի.— համագումար 2520 Օսմ. Ասկի: Իսկ յիշեալ վարժարաններուն մնացեալ ծախիւք կը հոգսցուին տեղական և այլ մասնաւոր նպաստներով:

Վարժարաններու ոմանց մանրամասնութիւնները դեռ Կեդրոն չեն հաղորդուած:

Բնիկ Հալեպցի, Տ. Վանան Քիւրքճեան ազգային կրթութեան ուսմիլիւր մը նանդի-սացած է Այնթապի մէջ՝ որ այսօր Կիլիկիոյ մուսուրական կեդրոնը կը նկատուի իրաւամբ:

Ամբողջ Այնթապցի սերունդ մը Տ. Վանան Քիւրքճեանի նանդեպ ինքզինք երախտաւարտ կը դաւանի՝ անկէ առաջնորդուած ըլլալով տոնմային դաստիարակութեան և մայրենի լեզուի ուսման նուիրական ճամբուն մէջ:

Տ. Վանան Քիւրքճեան, աւելի քան քառորդ դար առաջ, նախաձեռնութիւնն ունեցած է շարժումի մը որուն գեղեցիկ ու խոստմնայից արդիւնքն է ներկայիս Կիլիկեան Բարձրագոյն Ռատմնարանին հիմնարկութիւնը Այնթապի մէջ:

Մուսուրական իր նագրագիւտ ձիւքներուն՝ Տ. Քիւրքճեան կը միացնէ կամքի անտվոր ուժ մը, որուն մէկէ աւելի տիրական ազգացոյցները տուած է կրթական ու նասարակական գործիքի իր երկար ու բնամատր ասպարեզին մէջ:

Ազգային աղետներուն նետանքով արտասանման տարագրուած՝ Տ. Վանան Քիւրքճեան՝ իր անվատ ձեռներեցութեամբ հիմնած ու տարիներով վարած է Կիլիկիոյ մէջ նախական որբանոց մը: Հոն նաստատուած է նաեւ նամեա մամուլ մը, որուն տակին ի լոյս բնծարած է Բակուրեան ծածկանունով իր մէկ երկու շանկեան ու կուռ ուսումնարանները, ինքզինքն ազգացոյցանելով այնքան քաջակրթով գրագետ՝ որքան բանիրուն դաստիարակ:

Կիլիկիոյ իր որբանոցին այդ փոքրիկ մա-

մուն է որ ետքն Եգիպտոս փոխադրուելով կեանք տուած է Եգիպտոսայ ամենէն տեական նրատարակութեան՝ Տ. Քիւրքճեանի հիմնած Լուսաբերին, որ Լուսաբեր-Արեւ եղաւ՝ իր հիմնադրին մեկուսացումէն յետոյ, տարիներ վերջը Յուսաբերին մէջ ձուլուելու համար:

Տ. Վանան Քիւրքճեան՝ իրեն նրազարակալիք՝ կարեւոր դեր մը ունեցած է նա՝ Հ. Բ. Ը. Միութեան երեսուցի ու գոյաւորութեան շրջանին: Իր Լուսաբերը՝ կարելի է ըսել՝ առաջին օրկանը եղած է Բարեգործականին:

Բայց Տ. Քիւրքճեանի դերը ատով չի վերջանար Միութեան ի սպաս, որուն առաջին առաքելացն եղած է դեպի արտասանման մեր նուաւոր գաղութները:

Իրմով սկսաւ Հ. Բ. Ը. Միութեան կազմակերպումը Ամերիկայի Տարագրութեան խրամատուած շարքերուն մէջ:

Իսկապէս քաջութիւն պետք էր այդ առաքելութեանն ըստանձնելու համար այնպիսի՝ ատեն մը կրր ամերիկեաց կրիտասարգութիւնը գրեթէ բոլորովին տարուած էր լեզափոխական նուժիւ փրօփականով մը անտեղիտայի շուէրէն:

Այդ քաջութիւնը չի պակսեցաւ Տ. Քիւրքճեանին, որ եթէ Ամերիկայի մէջ նրաշքեր չի կրցաւ գործել մինչև օսմանեան նոր թեմին նուշակումը, գրեթէ մինակ մարտակցաւ Բարեգործականին աղերքը լսելի բնելու համար ամերիկեաց նասարակական կեանքի բնդանուր դաժան միտքին մէջէն, և ճամբայ նարքեց իրմէ վերջ հասնելիք ուրիշ նմայքոտ ու պերճախօս ձայներու, ինչպիսին պիտի ըլլար



Վ Ա Հ Ա Ն Ք Ի Ի Ր Ք Ճ Ե Ա Ն
ՊԱՏՈՒՈՅ ԱՆԳԱՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱԳՊԻՐ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԶԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

մանաւանդ Գեր. Մուշեղ Արքեպիսկոպոս Սե-
րոբեանը:

Միութեան ծառայումն աւելի ազդուապես
ծառայելու նպատակաւ է որ, իբրև Միութեան
Ամերիկայի Ընդհանուր Քարտուղար, ժամանակ
մը «Հայ» անուն նանդեա մը նրատարակեց,
Պոսթօնի Մասնաժողովին նովանիին ներքև, եւ
անոր միջոցաւ այս ազգաշէն ձեռնարկը ծա-
նորացուց Ամերիկայացւորեան:

Տ. Վանան Բիւրքանեան Ամերիկայի մեջ
նշանաւոր ուսանող մը նանդիսացաւ քիտունի
սեմին վրայ, Հարրվերտի իրաւագիտական դա-
սարանացրը բոլորելով և իբրև փաստարան ան-
կախ զիրք մը ստեղծելով ինքզինքին Պոսթօնի

պէսյառաջադէմ կեդրոնի մը մեջ:

Հ. Բ. Ը. Միութեան այս անխոնջ աշխա-
տորը ամերիկայայ մամուլին մեջ կարեւոր դեր
մը կատարեց ի նպատակ իր սերելի նաստատու-
րեան, որուն եօրնամակին առօրե իր նրատա-
րակած մեկ ամիով ուսումնասիրութիւնը օգտա-
կար նկատեցինք արտագրել ներկայ «Ոսկեմատ-
եան»ին մեջ:

Այս նրատարակութիւնը մամուլի տակ գրա-
նրւած միջոցին, Միութեան կեդր. Վարչ. Ժո-
ղովը, փափաքելով իր գոնունակութեան նրա-
պարակային նանգամանք մը տալ, իր վաղնի
և անձնուէր աշխատակիցը Պատուայ Անդամնե-
րու ցուցակին մեջ արձանագրեց:



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՆԻ ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅԻՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ԽՄԲԱՆԿԱՐԸ

Մ Ե Ս Բ Ո Պ Ն Ո Ւ Պ Ա Ր Ե Ա Ն

Իգմիրի նաչուրեան աղեգարդ ու սիրուած
դէմքերէն Տ. Մեարոյ Նուպարեան վերջին նա-
ւատարիմ ներկայացուցիչն է քրքրանայ մու-
տորական այն մեծ սերունդին որ Յոնիականի
ափերուն վրայ նայ վեզուն ու մտածումը ծաղ-
կեցուց:

Հայկա՛յան դպրութեանց այս անխոնջ վաս-
տակաւորը, քրանասնայ աշխարհարար մեր
բաւազոյն բառարանին նոյակապ նեղինակը,
որուն այնքան բան — կամ բառ — կը վար-
տինք այսօր զրիջ շարժողներս, օտար դասա-
կան գլուխ-գործոցներու մեր այս անգուզական
բարգմանիչը, սովորական տեսակէն գրական
աշխատատար մը չէ եղած մեր նանրութեան մեջ:

Առանց **ամայլեօս** մը ըլլալու, գրակա-
նութիւնը քեւ իր կեանքի գործն ու ամենօրեայ
գրադումն ընտրած՝ Տ. Մեարոյ Նուպարեան
բացարձակապէս անշահախոյր սպասարկու
մը եղած է այդ ապերախտ ստաբիլիզիւն. ոչի՛նչ
ակնկալած է իր երկատիրութիւններէն, բարե-
բախտարար չի գոնուելով իր ապրուտար անոնցմէ
սպասելու նարկին տակ:

Տունիկ ծագում մը գինք գերմ կացուցած է
այդ անբաղձալի պատանականութենէն:


Տ. Մեարոյ Նուպարեան մեր գրականու-
րեան նագուզալիս իշխաններէն մին է, և իր
արդէն մատի վրայ նամբուող բաղդակիցներուն
մեջ ամենէն աւելի առկետական առատասոր-
տութեամբը յատկանշուած է, ամենէն աւելի
գործ արտադրելով ու տալով:

Բաց պէտք չէ կարծել քե դպրութեանց
այս ձերունագարդ մագիստրոսը, բանասերի իր
«Փոյտիք աշտարակ»ին մեջ կըզիացած, ան-
բնդունակ ըլլայ ազգային նամակրութիւններու:

Ամենախի՛ն:

Տ. Մեարոյ Նուպարեան ամենէն **բնկերա-
կան** տիպարներէն մին է գոր Իգմիրի գերա-
զանցապէս ընկերական նաչութիւնը նաշ-
ուած ըլլայ իր ծոցին մեջ: Անիկա միշտ շա-
ուած հագրգուած է իր պատկանած նամայնքին
մտաւորական, կրթական ու գեղարուեստական
բոլոր արտաբայտութիւններովը: Աւելի քան կես
դարէ ի վեր Իգմիրի մեջ չէ պատանած նայ
բառերական ներկայացում մը, նամբոգ մը,
դպրոցական նանդեա մը, որ Տ. Մեարոյ Նու-
պարեան ներկայ ըլլայ յախտենական ժպիտը
շքերտուն վրայ և մշտապարար ծիծաղի մը
ախորժը իր բարի՛, բարի՛ սրտին մեջ պատ-
րաստ . . .

Մամուրեանի այս կենդանի եղբայրակցին
նոզին, սակայն, բոլիչք չառներ միայն Գօրտե-
լիօյն Իգմիր, ուր ամբողջ երկսեռ սերունդներ
յարգանքով ու խանդաղատանքով կը շրջապա-
տեն գինքը. . . : Նուպարեան, առանց երբեք **ագ-
գայիննի** մը եղած ըլլալու, աւելի սրտցաւ ու
անկեղծ նայրենաւոր մըն է քան անոնք որ
ագգային գործերու սանձանին մեջ կը լսածին:
Յեղին ճակատագիրը իր երիտասարդ օրերէն



Մ Ե Ս Բ Ո Պ Ն Ո Ւ Պ Ա Ր Ե Ա Ն
Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՉ. ՄԻՈՒԹԵԱՆ

նոգածութեան առարկայ մը եղած է իրեն՝ կըր
Մէլքիօսայի առաջին րիւերուն մեջ կը վեր-
բռնէր արեւելեան և նայիական նարցերու առն-
ջութիւնները:

Տ. Մեարոյ Նուպարեան, որ տակաին մե-
ծաբանակ անտիպ աշխատութիւններ ունի, ազ-
նրական ժեսով մը Հ. Բ. Ը. Միութեան ազ-
գանուէր նպատակներուն նուիրեց իր 500 ոսկի
արժողութեամբ մեկ կաշուածը:

Տիար Մեարոյ Նուպարեան ժամանակակից
Հայութեան ամենէն մաքուր, օրինակելի ու
գրաւիչ դէմքերէն մին է, անտարակոյս:

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՇՈՒԵՑՈՅՑԸ
 (1906-1912)

	Եգ. Ոսկի
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ.....	21872
ՄԱՍՆԱԻՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ.....	12028
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ.....	17718
ՄԱՍՆԱԻՈՐ ԵԿԱՄՈՒՏ.....	12814
ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ.....	861
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ.....	Եգ. Ոսկի 65293

(Եգիպոս. Ոսկին = 26 Ֆրանկ)

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՍՏՆԵՐՈՒ ՀԱՇՈՒԵՑՈՅՑԸ
 (1906-1912)

	Եգ. Ոսկի	
Ա. — ՀԻՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԷՆ		
Այսինքն Անդանալճարներուն 5/6 և և		
և Հիսն. Դրամագրոյի տկրակներէն.....	12585,52	
Բ. — ՄԱՍՆԱԻՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԷՆ		
1) Կակիտրոշ և սրբապատկար և քար և քար		
Կսակ և Նախրասուրբիներէն.....	5532,73	
2) Բացառիկ Հանգանակութեանց գու-		
մարներէն.....	6512,22	12044,95
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՆՊԱՍՏՆԵՐՈՒ.....	Եգ. Ոսկի	24630,47

Ս Է Ր Ե Ի Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Քանի խելքս կը հասնի, այսինքն մտաւորապէս քառասուն տարիէ ի վեր, եկեղեցիները «Տէր Ողորմեա» ի ժամանակ, Հայր Աստուծոյն «Ազգիս Հայոց Սէր Միութիւն» կը հայցենք: Բայց այս խնդիրքը ո՛չ իմ օրովս սկսաւ, ո՛չ ալ պապիս պապին օրովը: Ո՛վ գիտէ, քանի՜ դարէ ի վեր, մեր խելացի Դաւիթները ներշնչուին ունեցած են Սէր Միութիւն հայցելու Ամենակարողէն:

Զարմանալի է սակայն որ Աստուած խուլ ականջ կարած է այս աղերսին, առանց անշուշտ յուսահատեցնելու մեր պատուական ժողովուրդը որ կը շարունակէ, ահա այսպէս հարիւրաւոր տարիներ, ամէն կիրակի խնդրամատոյց ըլլալ:

Տարօրինակ չէ՞ որ ճշմարտօրէն հաւատացեալ հայեր մինչև ցարդ անդրադարձած չըլլան թէ՛ ի՞նչու համար Աստուած նկատողութեան առած չէ մեր ժողովուրդին



Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն ՏԻԱՐՊԷԲԻՐԻ ՄԱՍՆԱԴՈՂՈՎ, ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄՐ ԱՍԵՆ. Տ. ԶԱԻԷՆ ԱՐԲԵՊԻՍԿ. ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆԻ (ՏԻԱՐՊԷԲԻՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ)

խնդիրքը և ինչու գոհացում չէ տուած անոր: Զի, վերջապէս, Սէր և Միութիւնը աղուոր բան մըն է և Աստուած աղուոր բաներուն թշնամի չէ:

Ես պիտի բռնեմ որ, եթէ քիչ մը խորհելու ըլլանք, պիտի համոզուինք թէ՛ Աստուծով գանդատելու իրաւունք չունինք այս առթիւ: Աստուած հրաշքներ կը գործէ, խնդիրքներու գոհացում կուտայ, ա՛յն պարագային միայն՝ երբ մարդիկ, իրենց ամբողջ կարողութիւններովն հանդերձ, անձեռնհաս և ապիկար են կիճիւ մը լուծելու, դժուարութիւններ հարթելու: Իսկ բարոյովն անհետեւանք կը թողու ա՛յնպիսի խնդիրքներ՝ որոնց կարգադրութիւնը և բարուք լուծումը, իրենցմէ, մարդոցմէն կախում ունին:

Աստուած, տիեզերքը ստեղծած ասան, դրած է ինչ ինչ հիմնական օրէնքներ՝ որոնց խղճամբար գործադրութեան և պահպանման ինքն է վերին հսկողն ու վերակացուն. դուն հարիւր ազգէ՛, հարիւր պաշտօնէ՛, Անիկա նշանախեց մ'անդամ չի շեղիր իր Օրէնքներէն: Այս սուսակէտով, Աստուած կարգապահութեան զերազոյն օրինակը կ'ընծայէ Մարդկութեան: Կը հետեւի ուրեմն թէ՛ երբ մենք հայերս՝ բնութեան անշեղլի օրէնքները ըմբռնելու և անոնց հետեւելու ուշիմութիւնը և կարողութիւնը չունինք և յաճախ նոյն այդ օրէնքներուն դէմ՝ կը գործենք, պէտք չէ յաւակնութիւնն ունենանք որ մեր այս «յանցաւոր» վիճակին մէջ կրնանք Աստուծոյն հտոր՝ խնդրել:

Արդարեւ, Սէր և Միութիւնն ունենալը մեր ձեռքն է: Եթէ մենք բաւականին խելացի մարդիկ ըլլանք, եթէ մեր ուղեղները պէտք եղածին պէս զարգացնենք, եթէ գիտնանք միայն, մեր ողբալի և մեղի անհատապէս վնասող ետականութիւնը ջնջել, պիտի այն ասան համոզուինք որ մեր համայնքին և ազգին իսկ շահը կը պահանջէ «Սէր և Միութիւն» ունենալ:

Ինչ է արդեօք սէրը եթէ ոչ շան ձը: Մայրը և հայրը կը սիրեն ինչո՞ւ համար: Որովհետեւ անոնք քեզի մեծցուցեր, քեզի խնամեր, քու օգտիդ համար աշխատեր են: Պիտի սիրելի՞ր գտնանք, եթէ քեզ լքած, քու գժբաղլութեանդ պատճառ դարձած ըլլային: Կը սիրեն գաւակը, ինչո՞ւ համար: Որովհետեւ, հախ, անիկա քու արիւնիդ և ոսկորիդ մասը կը կազմէ, քեզմէ բան մը, խոշոր բան մը տուած ևս անոր. երկրորդ, վասնզի անոր մեծնալը և բազմանալը քու ձեռքովդ անկուած ծաղիկի մը կամ՝ ծառի մը տպաւորութիւնը կը գործէ վրայ, անոր բարոյական և նիւթական գեղեցկութիւնները քու ետք կը փայլալեն, դուն այդ վիճակէն բարոյական շահ մը ունիս: Բայց կը սիրեն՞ այն գաւակը որ կը գառնայ ոճրագործ: Անշուշտ ո՛չ. ինչո՞ւ: — Զի ո՛չ միայն քեզ ո՛ր և է շան շարտապրեր, այլ բարոյապէս թէ՛ նիւթապէս քեզի կը վնասէ իսկ:

Ես կը զարմանամ երբեմն այն կարգ մը քննադատութիւններուն վրայ՝ որոնք կ'ուղղուին այս կամ՝ այն հարուստին հասցէին իր բարերարութեան առթիւ.

— Էֆէնտիմ, կ'առարկին, իր հողուն համար չըբտու ետ՛, իր փառասիրութեան յագուրդ տալու համար տուաւ...:

Ես պարզապէս կ'ողբամ այս կարգի ողորմելի քննադատներու վրայ, որոնք մարդկային ընդհանուր օրէնքներու մասին տարբական գաղափար մը անդամ չունին:

Ինչ կը նշանակէ «հողուն համար ընելու» բացատրութիւնը: Եթէ չեմ սխալիր՝ արքայութիւն երթալուն կ'ակնարկուի: Բայց արդեօք ասիկա ալ շան ձը, և փառասիրութեան աւելի արժէքաւոր շան ձը չէ...:

Կան մարդիկ ալ, որ Աստուծոյ գոյութեան չեն հաւատար, այսու ամենայնիւ և առանց փառասէր ըլլալու, բարեգործութիւն կ'ընեն: Այս վերջինք, ի տես մարդկային

թշուառութեան, կը կարեկցին և կ'ողորմին, կ'օգնեն, մինչև անգամ խնդրենքին՝ կը զոհեն:

Ինչպէ՞ս պիտի բացատրենք այս վերջին երեւոյթը — Շահով, միշտ շահով: Երբ մարդու սիրտը ուրիշի մը թշուառութեամբ կը մորմոքի՝ անիկա չի կրնար գոհացում գտնել մինչև որ իր կրցածը չընէ: Եւ թշուառութիւնը ամօքելու համար, ապա ուրեմն՝ սրտին՝ գոհացումը ինքնին շան ձըն է:

Գանք հիմա Միութեան: Այս մասին, կարծեմ, երկար բարակ խօսելու պէտք չունիմ: Ինձմէ՛ սուսջ շատեր բազմաթիւ օրինակներով ապացուցած են թէ՛ Միութիւնը՝ Զօրութիւն է:

Մարդս պարզապէս ապուշ ըլլալու է հաւաքական ոյժին արժէքը կարենալ արհամարհելու համար:

Եւ այդ ապուշը, ներկեցէ՛ք, սիրելի՛ ժողովուրդ, մենք հայերս, «ծառայականներս» ենք...:

Շատ հեռուները չերթանք: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը օրինակ ամենք:

Ահաւասիկ գործ մը որ Հայաստանի գոյութենէն ի վեր՝ մին է եղած այն հազուադէպ երեւոյթներէն զոր երբէք արտագրած ըլլանք, այսինքն Ոյժ: Եւ այդ Ոյժը կը սրտախնդ, պէտք է անկեղծ, չխտակ մարդ ըլլանք, Պօղոս Փաշա Նուպարին, ու միայն Պօղոս Փաշա Նուպարին...:



Հ. Ա. Յ. Ա. Ա. Ն. Բ. Ա. Բ. Գ. Ո. Բ. Ը. Ե. Գ. Հ. Ա. Ն. Ո. Ի. Բ. Ե. Ա. Ն.
Հ. Ա. Լ. Գ. Ի. Տ. Ե. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Օ. Բ. Ա. Գ. Ա. Կ. Մ. Ա. Ն. Ա. Բ. Ո. Ղ. Ո. Կ. Ե. Բ. Ո. Ի. Խ. Մ. Բ. Ա. Ն. Կ. Ա. Բ. Ը.

Ես, այս կերպով, Ն. Վսեմութեան շուրջը գտնուող պատուական դործակիցներուն բարձր արժանիքը նաեմացնել չեմ ձգտիր, քան լիցի: Ընդհակառակը, ինձի համար Անդրանիկեան մը, Աղաթոն մը և Մալգեղեան մը նոյնչափ կարեւորութիւն ունին որչափ Պօղոս Փաշան, բայց ես խնդիրը կը քննեմ մեր ժողովուրդին հողերանութեան տեսակէտով և կը պնդեմ որ կթէ Պօղոս Փաշան այս դործին գլուխը եղած չըլլար՝ Հ. Բ. Ը. Միութիւնը չսխալի կրնար պէտք եղած խորունկ վստահութիւնը ներշնչել և նեւեւարար իր այսօրուան Ոյժը ներկայացնել:

Արդ, ի՞նչ կը պատահի — Շահասէրին մէկը կ'եղէ Հ. Բ. Ը. Միութեան դէմ գրել, ի հարկէ իր շահը պարակելով և Փաշային իբրև թէ մէկ սխալը բռնելով, (օ՛հ, անքան վիւրին է մարդոց սխալները բռնել, անոնց համար, մանաւանդ, որոնք այս ակտէն կը տառապին): Այդ շահասէրը անշուշտ իր տարրին մէջն էր. քանի որ իր շահը կը պաշտպանէր: Եւ սակայն իր գրածները կրնային վնասել Հանրութեան Շահին որ ամէնուս ալ շահն է. դոնէ ևս այդպէս կը կարծես: — Ու երբ Հանրութեան Շահը կը խօսի՝ անհասներու շահերը պէտք է լռեն: — Ասիկա ալ Աստուծոյ կողմէ զըրուած արեւելքական օրէնքներէն մէկն է:

Բայց ըստած է թէ՛ տիրացու էինք ու տիրացու պիտի մնանք: Մեր ողորմելի ուղեղները ո՛չ Միրել և ո՛չ ալ Միանալ գիտեն, զի մենք աշխարհի վրայ գուցէ միակ ժողովուրդն ենք՝ իր հաւաքական շահերուն զիտակցութենէն էականօրէն զուրկ, զի մեր ետին շահերը, մինչև իսկ մեր անհատական շահերը, չըմբռնելու տեսակէտով կուրցուցած են մեր աչքերը:

Եւ սակայն, կրնանք մինչև աշխարհիս վերջը, կիրակի օրերը, պատարային, «Տէր Ողբամեա»ի տանն, «Ազգիս Հայոց Սէր Միութիւն» հայցել:

Ասանկ ողորմելի ուղեղներով՝ ո՛չ Սէր կրնանք ունենալ, ո՛չ ալ Միութիւն . . . :



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆՔԻՊԻ ԳՆԻՌՈՒՄ ՄԱՆՈՒՆ-ԱՆԳԱՄԵՆԲԸ

Մարդերուն ամենն պատուականն ու յանկուցիչը:

Յախտնական սգաւոր, կեանքի ճամբուն վրայ իր մենաւոր գնացքը կը շարունակէ զըլխանակ ու խոնուն, իր կակիծին մէջ ինքնամփոփ, անով պարուրուած, անոր արտմուրեանը օծուն, բայց անկէ անմեկն սպրեյու իր անդառնալի կամքին մէջ ո՛չ մեկ այլամերժ դառնութիւն դնելով, ո՛չ մեկ դաժան ծամածրուումի գիշանելով, այլ՝ ընդհակառակը՝ գիտնալով քաղցրօրէն ժպտիլ բոյր անոնց որոնց նետ նպումի կուգայ, գիտնալով մանաւանդ կարեկցօրէն ծուխ ուրիշներու ցաւին վրայ . . .

Իր ընտանեկան բոյնին վաղածամ քայքայունովը անողորօրէն անիրաւուած, Տ. Լեւոն Սեմերճեան անոնցմէ չէ որոնք շուտով կը մտնան, բայց ոչ ալ անոնցմէ՝ որոնք ամուլ ընդվզումներու մէջ կը յամենան անկարելի յագուրդը փնտռել նոզկան իրենց անշէջ մորմոքին. այս մարդն այն խիստ նագուազիւտներէն է որոնք ստոյիկեան նամակերպութեան տիրական կեցուածքով մը կը փոխարինեն ճակատագրին վայրագ նարուածները, արձամարնելով **ԱՎՈՒԿԱՆՆԵՐ** իսկ որ պիտի պզտիկներ իրենց սուգին նուիրական մեծութիւնը, և բարեգործութեան սխրայի մեքերով իրենց սիրելի մեռելներուն յիշատակը կը կորոյն, կարծես ճակատագրի ոճրագործ յայրանակներուն դէմ:

Ինքնաշխատութեամբ՝ գրագրի նամատ գիրքէ մը բարձրանալով՝ Պոլսոյ և Եգիպտի նրապարակներուն վրայ վաճառականական կարեւոր գիրքի մը տիրացած, Տ. Լեւոն Սեմերճեան, առանց մեծանարուտ մը ըլլալու, աւելի քան 3000 ոսկի արամաղրեց Սկիւտարի ձեռնարանին վերաշինութեամբ:

Պոլսանայ կրթական այս նինաւորց նաստառութիւնը՝ Իճաթիի բարձունքին վրայ՝ ճըշմարիտ ներշնչարան մըն է բիզանդական մեր բարեկեցիկ դասուն նամար: Անիկա բարձրա-

բարբառ կը նուցակէ թէ ինչպէս սրտի տեր Հայը իր ունեցածին մեկ երրորդը, նոյնիսկ կէսը կըրնայ գոնարեթէ իր պատկանած նամայնքին . . .



Լ Ե Ի Ռ Ն Ս Ե Մ Ե Բ Ճ Ե Ա Ն

Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Գ Ա Մ

Հ Ա Յ Գ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Դ Շ . Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն

Տ. Լեւոն Սեմերճեան՝ իր այս մեծագործութենէն քիչ ետքը՝ 500 ոսկիի լիպեւէ ազանովագրութիւն մը փոխանցեց Հ. Բ. Ը. Միութեան, որուն այդ առիւտ արժանաւորապէս դատուցաւ **Պատուոյ Անդամներու** շարքին մէջ:

Բայց անոնք որ մտեն ճանչցած են անգուզական ազնուութեամբ մը օծուած այս Հայը՝ վստահ են թէ Լեւոն Սեմերճեան անունը տակաւին ուրիշ ո՛չ նուագ վնասուր բարեգործութեանց նետ ոսկեղրուագ պիտի արձանագրուի նալիական տարեգրութեանց մէջ:

Ա. սանայի կոստրածիև առքիչ

Ատանայի կոստրածին լուրը եզրիպտոս հասնելուն պէս, Ատանայի կարօտեալներուն օգնու- թիւն փութացնելու նպատակաւ, Միութեան Կեդր. Ժողովին հովանաւորութեան տակ Գահիրէի մէջ նախապէս կազմուած Հանգանակիչ Մասնախումբը ընդհանուր կոչ մը հրապարակ հանեց՝ ի նպատակ Կիլիկիոյ տարաբախտ աղէտեալներուն: Ամէն կողմէ կարելոր մասնակցութիւններ եղան բացուած հանգանակութեան: Միութեան Աղերսանդրիոյ Մասնաժողովն ալ իր շրջանակին մէջ

Է Լ - Ա. Չ. Չ. Ա. Ր. Ի. Մ. Ե. Ծ. Ե. Յ. Խ. Ի. Ն. Ֆ. Է. Թ. Վ. Ա. Ն.

(ԲՆԱԳԻՐ - ՊԱՏՃԵՆԸ)

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

المردم وعده
وبسمة فقد افلتنا في الصحف الميضية على اخبار مومنة واشاعات سيئة عنده صلى الله عليه واله في اوقات الازمة فنزل
سنة الفلك المشاير ونحن بعد بعينهم يستدرون على بصرهم المسيحية فيقتلواهم بغير عدل ولا فقه ولا حكمة
نفسه ما وقع ابنا منه هذه الاشاعات ورجونا انه تكون باطلا لانه لا يصدق بينه وبين غيره من علماء
ويعلم البيه وسفك الدم والارض بالاس كاذبة المسلم المسمى واليهودي في ذلك ستور
فيا ايها المسلمون في تلك الامم وغيرها احذروا ما نزل الله عنه في شريعة القرآن واحفظوا الرماز
والحرمات وما اوردوا ولا تستدلوا على احد من الناس فان الله لا يحب المفسدين
« لو يذكروا بعد الزينة لم يشا تلوكم في الدنيا ولم يحجزكم منه ولا يذكروا بغيرهم وتشتتوا اليوم انه اليوم
اشهد عليه »
يا ايها المسلمون ما اورد في دينكم ما يحزر عليكم بغيره في كتابه وسنة رسوله والفقهاء عليه صرة
والقول على ما فيه غيبه وكلمه
ان تعذبه عاهدوكم بالعتق منكم والذية جاؤكم من اي الذرية يتيكم حقا منه ان تناك في رعايتكم
ان تستقيموا له ما ستموا له وان تشكروا ما نسيتموه منه انفقكم واحللكم وانه يمشي ايامه من بينكم
قوة لهم ومدة قوتكم عزاء وعزاء وانه ينفق امة الايام وكان شتمه وشتمه ما تشكروا عنه ما حكمه رسالته
ولا يولد ما دنا من امره عزيمه ووضع يديهم على عليم ابوالقاسم اخذاه على السليمة من شرمه
راجه عليه صدام
فيا ايها المسلمون لو سجدوا لله سجدة ابدت لكم الله ملكا او نزلت عليكم كتابا او اجتمع بينكم
فان هذا مما يوقره اليه فليعلموا انهم يوقرونه ويقره الله عليهم في شئونهم انهم احسن شوقه
وقر اسما به الصافية خير فدية. ولو انكم لم تستمعوا لولا اسما به الصافية ولم تفقهوا سدا لانه لملكتم عليكم
سماحة الاستمارة شاكم. وليعلموا انهم مقيضوا. ورجعتهم عند سفك الدم منظرها
واعلموا انهم لا يبيعون انفسهم حقا فقتلوا فقتلوا بغيرهم انهم وما ارضيتكم ببيكم واشركتكم بغيرهم
المسلمية عليكم غيرة على دينهم انفسهم فقتلوا بغيرهم انهم مقيضوا. ورجعتهم عند سفك الدم منظرها
انفسهم انفسهم بدينكم بغير انفسهم في شتمهم جميعه
او فاشتمهم كما قال بيكم في شتم انفسهم بغيرهم انهم مقيضوا. ورجعتهم عند سفك الدم منظرها
وانه رجلا يردد من صيرة ارميهه عانا
وقال عليه الصلوة والسلام: من عرفني عرفني من اصابته شيئا من امره
فرض الله على من سمع قوله على ما وعده ورجعوا. وقوله انهم بيمينهم انفسهم بيمينهم انفسهم
منهم يستقيم وسوسه على رجسهم ولو قوة الايام بيمينهم انفسهم بيمينهم انفسهم
سليم
شيخنا محمد الوديع


ո ե է ջանք չի խնայեց: Մի- ութեան բարեկամութիւնները եւս փութացին կազմել Տիկ. Մասնախումբ մը, որուն օ- տարագրի տիպիները եւս սիրա- յօժար բերին իրենց օժանդա- կութիւնը: Այս Մասնախումբը 500 անգլ. ոսկի արժողութեամբ մեծաքանակ հանդերձեղէն եւ այլ անհրաժեշտ աւարկաներ փութացուց Կիլիկիա եւ յետոյ վիճակահանութեան մը ձեռ- նարկեց: Աղերսանդրիոյ մէջ Միութեան Մասնաժողովին ա- ջակցող անդամութիւնները իրենց ձեռքովը 2000 որբի հագուստ կարեցին:

Այդ անաւոր կոտորածին զոհներուն տառապանքները նողկանքով ու կարեկցու- թեամբ խտուն այնպիսի բուռն զգացում մը յագաջ բերին, որ ոչ որ զանդադեցաւ պա- տասխանելու Միութեան սրբ- տաշարժ հրաւերին:

Հանգանակութիւնը ար- տադրեց 5400 եզրիպտ. ոսկիի գումար մը (աւելի քան 140000 փրանք), զոր Կեդր. Ժողովը որբ օրին հասցուց իր տեղը, մէկէ աւելի վերքեր դարմա- նելու փութկոտութեամբ:

Բաց աստի, Տիկնանց վի- ճակահանութեան զոյսցաւ 800 եզրիպտ. ոսկի, որուն 310ը խուճապէն եզրիպտոս գաղթող Կիլիկիցի աղէտեալներուն հա- մար ծախսուեցաւ, 500 օսմ:

ոսկիի նպատակի զումարին հետ, զոր Միութիւնը յաջողեցաւ ձեռք բերել Օսմ. Կառավարութենէն՝ շնորհիւ Բարձր-Գոմիսէր Վ.սեմ. Բէուֆի փաշայի, գաղթականներուն վերադարձին համար: Իսկ մնացորդը, 420 ոսկի, յատկացուեցաւ Քէլէկեան Որբանոցին, զոր բիչ վերջ Քէլէկեան Խանի ինքնայօժար նուիրատուութեան հետեանքով՝ Միութիւնը բացաւ Չոր-Մարգուանի մէջ: Միութեան վարիչները եւ աշխատակիցները չի զոհանարով նիւթական օգնութիւններով, իրենց կարգին բարոյապէս ըրին նաեւ ինչ որ մարդիօրէն կարելի էր՝ կասեցնելու համար խուճ- դութիւնները եւ ամօրելու համար զոհներուն տառապանքները: Այդ առթիւ, յաջողեցաւ նաեւ ձեռք բերել, Գահիրէի կրօնական համալսարանին էլ-Ազգարի, որ Մահմէտական աշխարհին մէջ անագին հուշակ ունի, Մեծ-Շէյխին յոյժ հեղինակաւոր ֆէթվան, որով մեծանուն Շէյխը կրօնական փաստերով կը պախարակէ Կիլիկիոյ ջարդն ու աւարը: Այդ ֆէթվան հեռագիրով եւ հազարաւոր օրինակներով Թուրքիոյ կարեւոր կեդրոնները զրկուեցաւ անմիջապէս, Իհնան պէյ Սապրի ազը- օրէն 90 եզ. ոսկի նուիրած ըլլալով այդ ծախքերուն համար:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՐԻՐ ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԵՐՍԻՆԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԽՄԲԱՆԿԱՐԸ

Յ Ա Վ Ո Ք Գ Ը Բ Գ Ե Ա Շ Ա Բ Ե Ա Ն

Բնիկ Հաճրնցի, Կիլիկեան այդ բարձունքին էր որ ձայն կուտար օր մը Հ. Բ. Ը. Միութեան իմացնելու համար թէ 1000 ոսկի կը տրամադրէ անոր:


Տարօրինակ բան... Հայրենի ժողովուրդէն շարունակ հասնող օգնութեան աղերսներուն մեջէն նուիրատուութեան այս տիրական պատգամը չէր կրնար գարմանախառն հիացում մը չազդել ամենուն:

Տ. Յակոբ Գրքեաշարեանի պարագան վերին աստիճան բեղադրական էր, գրեթէ խորհրդանշական: — Անիկա կ'ըսէր մեզի թէ բնագաւառի հայութիւնը զիտէ տայ, գոնաբերել էր ունենայ, կարող ըլլայ, թէ ան ամեն բան դուրսէն, հեռուներէն, արտասահմանէն չի սպասեր, և իր ծոցէն այ ընդունակ է տալու բարերարներ:

1000 ոսկի՝ Հաճրնէն, ուր այս գումարը վիթխարի հարստութիւն մը կ'ենթադրէ: Իսկապէս մտածել տուող երևոյթ մը չէ՞ ասիկա, և սերձախօս դաս մը չի կա՞յ ատոր մէջ՝ մեծ կեդրոններու մեր փարթամ դասուն համար:

Տ. Յակոբ Գրքեաշարեան, վերջերս, ուխտաւորի հանգամանքով Միութեան Կեդրոնը այցելեց, առիթ ընծայելով մեզի մօտէն ճանչնալու զինքը:

Կարճահասակ, մանրուկ, ջղուտ ձերուհի



Յ Ա Վ Ո Ք Գ Ը Բ Գ Ե Ա Շ Ա Բ Ե Ա Ն

Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ

Հ Ա Յ Կ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Դ Զ . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

մըն էր, որուն մէջ մեծ սիրտ մը ազնիւ փառասիրութեան բուռն գգացումով մը կը բարախէր:

Եկեր էր տեսնալու Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան վսեմ. Նախագահը և անոր յայտնելու Հաճրնի ժողովուրդին յարգանքն ու երախտագիտութիւնը:

Ու դիւրին է երեւակայել թէ ինչ անտուրի հաճոյք մը եղաւ Փաշային և Միութեան վարիչներուն համար հիւրասիրել, շրջապատել այս պատուական ձերուհին, որ Հայ բնատունիկ տանուտէրի ախպարը կը ներկայացներ, և որուն միակ տնէջանքն էր 1000 ոսկի գոնաբերութեան իր առաջին իշխանական մտարը կրկնել, ամբողջացնել, զայն 2000ի բարձրացնելով իր կեանքի վերջալոյսին մէջ:

Տ. Յակոբ Գրքեաշարեան եզիպատակն երուսաղէմ մեկնեցաւ, անկի հայրենիք վերադառնալու համար:

Ձեր ուզած պարտքի տակ ուխտի երբայ, ուստի անձամբ նոր չէք մը եւս յանձնեց Միութեան Կեդր. վարչութեան, որպէս զի հանգիստ սիրտով ձամբայ իյնայ:

Ուխտը ընդունական ըլլայ, կարի՛ճ ձերուհի: Հ. Բ. Ը. Միութեան համար անխառն հպարտութիւն մը սխտի ըլլայ թե՛ ունենայ իր **Բարեբաւ Անցածներու** շարքին մէջ:



Մ Ի Ւ Թ Յ Ի Լ Ն Ա Թ Ա Ն Ե Ա Ն

Իբրև Հ. Բ. Ը. Միութեան Կիլիկիոյ Ընդհ. Բարտուղար և Միացեալ Ընկ. Կրթական Տեսուչ, Տ. Միր. Նաթանեան իր խղճամիտ պաշտօնավարութեամբը կարելոր ծառայութիւններ կը մատուցանէ Միութեան: Հմուտ մանկավարժական սկզբունքներուն, որպէս և հողագէտ, իր մասնագիտական կարողութիւնները երեք տարիէ ի վեր սպաս դրած է երկուրոյր ընկերութեանց:

Տ. Միր. Նաթանեան Միութեան կարելորագոյն գործիչներէն մին է: Իր մասնաւոր հսկողութեան տակ կը գտնուի Միութեան Բէլէկեան Ոբբանոցը և ինք է որ կը վարէ Տէօրթեօլի ամառնային վարժապետանոցը:



Տ Է Օ Ր Թ — Ե Օ Լ Ի Ջ Ա Մ Ա Ռ Ե Ն Ա Յ Ի Ն Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ա Ն Ո Յ Ի Ն Խ Մ Բ Ա Ն Կ Ա Ր Ը Բ Ե Լ Ե Կ Ե Ա Ն Ո Ր Ր Ա Ն Ո Յ Ի Բ Ա Ր Զ Ր Ա Գ Ո Յ Ն Կ Ա Ր Գ Ի Ս Ա Ն Ե Ր Ո Ւ Մ Ա Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

ԿԻՆԵՐՈՒ ԴԵՐԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՄՈՒՇԵՂ ԱՐԲԵՊԻՍԿ ՍԵՐՈՒՅԱՆ

Որչափ ատեն աշխարհք դրախտ մը չէ, և կեանքը՝ իր ընկերային համագրու-
թեան մէջ՝ պատարուն երջանկութիւն մը, բարիքն ու բարեգործութիւնը մեծագոյն
վերը պիտի խաղան զրկումի ու տառապանքի բեռը թեթեւցնելու համար մարդկային
ուսերէն:

Յաջողութեան և երջանկութեան վերելքը զիւրին չէ ամենուն համար: Ընկե-
րական սանդուխը վերելակող ճամբորդները ո՛չ միեւնոյն ֆիզիքական ոյժը ունին, և
ո՛չ միեւնոյն իմացական կաբողութիւնը: Այդ վերելքին նպաստող պայմաններն ալ
միեւնոյնը չեն ամէն ժամանակ ու ամէն մարդու համար:

Մըջիւնները երբ տեսնեն, թէ իրենցմէ մէկը իր պաշարի բեռին ծանրութեան
պատճառով ճամբուն վրայ կը քաշկռտուի յոգնարեկ, խմրովին անոր օգնութեան կը
զիմեն:

Մարդկութեան պարտականութիւնն ալ միեւնոյնն է: Պէտք է օգնութեան
փութալ անոնց, որոնք կեանքի բեռին տակ կը կրած, կը քաշկռտուին յաջողութեան ու
երջանկութեան ճամբուն երկայնքը, և որոնք պէտք ունին օժանդակ ձեռքերու և
սրտերու:

Մարդկութեան բարոյական անանկութիւնն ու անձնասպանութիւնը կըսկսին



Հ.Ս.ԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄՈՒՇԵՂ
ԳԱՀԻՐԷԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԳԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

հոն, ուր օժանդակութեան պահանջը կ'անտեսուի, սիրտերը կը խզուին իրարու հետ,
և մարդկային-ընկերական դասակարգերը կ'ամուսնալուծուին իրարմէ, ընկերական փո-
խադարձ յարաբերութիւններու մէջ:

Այդ սպառնալի խրամատը մասամբ կը լնու ընկերական բարեգործութեան
օգին:

Ընկերական շարիքներու աղբիւրը պէտք է վնասուի կեանքի երկու ծայրահե-
ղութիւններուն մէջ. այսինքն չափազանց երջանկներուն և չափազանց զրկուածնե-
րուն մէջ: Կեանքին ու յաջողութեան միջինը ընկերական փոթորիկներ չունի զրեթէ:
Ալեկոծութեան խռովքը կը բուսնի կեանքի երկու աւազկերներուն վրայ:

Բարեբախտաբար բացարձակ ճշմարտութիւն գոյութիւն չունի, ո՛չ Պլատոնի
խօսքին մէջ, թէ «ճաշխանեղ հարուստ մը չի կրնար առաջինի ըլլալ», և ո՛չ ալ
աւետարանական պատգամին մէջ, որով երանի կը արուի աղքատներուն: Ընկերական
չարիքը հաւասարապէս կը բուսնի տառապանքէն ու զրկումներէն յոգնարեկ հողիին,
ինչպէս երջանկութեանէն յափրացած սրտերուն խորը: Բայց մանաւանդ փուշերը կը
բուսնին անմշակ և խնամոտ ձեռքէ զրկուած դաշտերուն մէջ: Ընկերական ոճիւրը, և
բարոյական քայքայումը յաճախ զրկումի և տառապանքին արդիւնքը եղած են: Նկա-
րագիրը աւելի շատ խանդարուած է անմիջական պէտքերու գոհացումին հարկին
առջեւ:

Վերէն դէպի վար երկնցած օժանդակութեան ձեռք մը ընկերական սպականու-
թիւններու մէջ ամենէն փրկարար դեղթափն է մարդերու մէջ բարոյական թունաւո-
բումին առաջը առնելու համար: Քրիստոնէութիւնը իր կրօն և իր բարոյական
այդ վերէն դէպի վար երկնցած օժանդակութեան ձեռքին դերազօր յայտնութիւնն է
եղած:

Միեւնոյնն է նաև բարեգործութիւնը:

Կինը բարեգործութեան ճամբուն մէջ ամենէն աւելի յարմարութիւնը ունի իր-
րև միութեան դիմ ծառայելու ընկերական սանդուխին երկու հեռաւոր ծայրերուն մի-
ջև: Կնոջ սիրտը լաւագոյն անկիւնաքայն է ընկերական այդ մեծ շնորհքը կատու-
ցանելու համար: Ոչ ոք պէտք եղածին չափ պիտի կրնար զգալ տառապանքի մը
անաւոր սարսուռը, ո՛չ ոք աւելի պիտի կրնար չափ ու չոզ կաթեցնել վիշտի ու ցաւի
մութ անկիւններուն վրայ, բան ղօր մը սիրտը:

Ամերիկա, որ հակայ հարստութիւններու և անանուն զրկումներու խառնարան
մըն է, ամեն օր վկան կ'ըլլայ այս ճշմարտութեան: Օժանդակութեան, մխիթարու-
թեան, սփոփանքի գործը վարողներն կրնան են Ամերիկայի մէջ: Եւ անոնք այս բանը
կ'ընեն, ո՛չ թէ շիւքսի, ցոյցի կամ ժառանգի համար, այլ կ'ընեն պարզապէս բարո-
յական և ընկերական պէտքի մը գոհացում տալու համար: Կիներու ձեռքով և զուտ
Ամերիկեան ինքնասպանութեամբ կազմուած Ընկերական Գաղութները (settlements) հիա-
նալի արդիւնք արտադրած են մեղմելով ո՛չ միայն զրկուածներու տառապանքը, այլ
և հարթելով նախանձի ու զիամութեան զգացումները, որոնք վարէն կը ծնին դէպի
ընկերական առանձնաշնորհուած դասակարգերը: Սերըզնիներու հիմնադիրները հա-
բուտ գասակարգի կրնան են, որոնք քրիստոնէական-բարոյական մաքուր և անշահա-
խնդիր զգացումներով վահանուած, կը թողուն իրենց ձօխ պալատները, և կուզան

հաստատուիլ աղքատ, չքաւոր և թշուառ մարդերու թաղերու մէջ. կ'ապրին անլոյս և օղազուրկ սենեակներու մէջ, աւելի մօտ յարաբերութիւններ մշակելու համար ան-
 ժառանգներու այդ մշտակոծ սերունդին հետ, և պարզ ու ժուժկալ կեանք մը կը վա-
 րեն, և իրենց կեանքն ու գրամը կը յատկացնեն զիրենք չըջապատող դժբախտներուն
 սորվեցնելու և տալու համար «Ֆիլիքական մաքրութեան, բարոյականութեան, ժուժ-
 կալութեան և ընկերական համերաշխութեան» աղնիւ օրինակը:

Ամերիկան բոլոր մեծ քաղաքներուն մէջ, ուր հարստութիւնն ու աղքատութիւնը
 ինքզինքնին կը ցուցադրեն աւելի աչքառու կերպով, տասնեակներով կը հաշուեն
 իրենց մէջ Սեքըրըններ, որոնց աղնիւ վարիչներուն, ընկերվարականները չարամտա-
 բար պաշտօնա մարդասերներ կամ մեքսիկո-գուալապալիտներ (silk stockings) անունը
 կուտան: Շիքսկոյի մէջ օրիորդ ճան Ատամս էր որ հիննեց առաջին Սեքըրընը,
 Hull House, և տան և հինգ քսան տարիներէ ի վեր գրեթէ 18—20ի կը հասնի
 անոնց թիւը:

Կնոջական բարեգործական այս ձեռնարկը ապարդիւն չէ մնացած: Դժբախտու-
 թեան և թշուառութեան մութ անկիւններու մէջ այսօր աւելի լոյս, աւելի գոհունա-
 կութիւն, աւելի խիղճ ու ժպիտ, աւելի մաքրութիւն, աւելի բարոյական կայ, չնոր-
 հիւ այդ Սեքըրըններուն, չնորհիւ ապրուած օրինակին և դաստիարակութեան, որ
 այդ հաստատութիւններուն միացած University Settlementներն և գալրոյները կուտան:

Ո՞ր է Հայ կինը, երբ Հ. Բ. Ը. Միութիւնը կը գործէ: Հազուադէպ իրողու-
 թիւն մըն է Հայ կնոջ մասնակցութիւնը Հայկական Բարեգործականին: Ես չեմ հաւա-
 տար թէ Հայ կինը գրկուած ըլլայ այն աղնիւ զգացումներէն, որով օժտուած են
 անգլոփրանսական իր քոյրերը: Մենք չենք սնուիր, որ բարեկեցիկ Հայ Տիկիները
 իրենց մեքսիկո գուլպաները ցուցադրեն Հայաստանի համատարած թշուառութեան
 դիրքը, ուր աւերակներու վրայ, և մարած օճախներու մօտ իրենց այրիացած, սգաւոր
 և արիւնով պատանքուած քոյրերը կը հեծնն խայց նոյնիսկ հեռաւոր ժպիտ մը, հոգա-
 ծութեան շունչ մը, գուրգուրանքի մեղմ մը, միացած իրենց գրամական օժանդակու-
 թեան, կարող պիտի ըլլայ կեանք ու ժպիտ բուսցնել կուրծքէն անոնց, որոնք իրենց
 պէս մայրեր են, և որոնք երէկ իրենց պէս երջանիկ էին և զուարթ՝ զաւակներու, ամու-
 սիններու կեանքին յենած:

Խորշակահար եղած այդ կեանքերը, որոնց ձեռք կը կարկառէ Հ. Բ. Հ. Միու-
 թիւնը, աւելի շատ և աւելի շուտ պիտի ծաղկին, եթէ Հայ կինը իր օժանդակութեան
 բաժինը բերէ այն նախախնամական գործին, որ Հ. Բ. Ը. Միութեան անունով կը
 բնորոշուի, և կը գործէ, արդիւնաւորապէս, Հայ կեանքը և Հայ նկարագիրը շինելու
 համար:



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՉ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՆՁԵՍԹԵՐԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՉ. ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՆՏՕՆԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

Հ Ա Յ Կ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Դ Շ . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Ա Ր Ժ Ե Թ Ո Ւ Ղ Թ Ն Ե Ր Ը

(ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵ ԴՐԱՄԱՏԱՆ ՄՕՏ ՊԱՀ ԴՐՈՒԱԾ)

1. — ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳՂՈՒԽԻ ՀԱՇՈՒՈՅՆ		Եգ. Ոսկի
197	Աֆսիսի Գահիրեի Ջարի Ընկ.	984,855
1087	Աֆսիսի Ժռիսանս » »	8820,503
600	Աֆսիսի Օււլ. Պարսֆի 3 1/2 %	576 —
250	Օպղիկասիսի Աղեֆասեր. Թրաւիլայի (Բրիլիգիժիե) .	952,394
700	» » Նոււկիլիջ	700,495
22000	Գերմանական Փոխառութիւն 3 %	936,960
125	Աֆսիսի Եգիպտական Գրեթի Զօնսիեի	2368,530
45	» » Նեշընըլ Պակգի	890,535
257	Օպղիկասիսի Եգիպտ. Գրեթի Զօնսիեի 3% (1903)...	2698,661
4	» » » » 3% (1886)....	55,753
1	Օււլ. Բոււկիլի Երկարուդի	8,404
1900	Եգիպտական Իւնիփիե 4%	1875,760
16	Աֆսիսի Սիւրբի Ե Բաժիկերի Ե՛ժիբբ	50 —
10	» Պակգ օֆ Ապիսիլիաի	40 —
250	» Բրիլիգիժիե Պեհերու	1102,970
2	Օպղ. Տեօյճ Օրիսիւր Հակեթու Էնսիւրբի 4% (1909)	95 —
		22156,820

2. — ՄԱՍՆԱԻՈՐ ԴՐԱՄԱԳՂՈՒԽԻ ՀԱՇՈՒՈՅՆ		Եգ. Ոսկի
4	Ռանք Օււլ. Իւնիփիե	72,907
1	» Իսալս Կան 3 3/4 %	39,925
5	Օպղիկասիսի Թիւնիփիե 3% (1892)	89,108
5	» Գրեթի Զօնսիե Ե Զրանս 3% (1879)	97,692
10	» Վիլ Ե Բարի 2% (1892)	164,715
3100	Եգիպտական Իւնիփիե 4%	3013,850
1	Օպղիկասիսի Օււլ. Բոււկիլի Երկարուդի	8,486
4	Պօ՛ն 1889ի Զուգանակի	1,312
25	Աֆսիսի Ժռիսանս Գահիրեի Ջարի Ընկ.	202,035
75	» Եգիպտական Գրեթի Զօնսիեի	1512,540
2	Օպղիկասիսի Գրեթի-Անսրաբ (1889)	21,872
		5224,442

3. — ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳՂՈՒԽԻ ՀԱՇՈՒՈՅՆ		Եգ. Ոսկի
25	Աֆսիսի Եգիպտ. Գրեթի Զօնսիեի	504,665
50	» » Նեշընըլ Պակգի	767,205
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ		1271,870
		28653,132

Ը . ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Կ Ե Դ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Վ Ա Ր Զ . Ժ Ո Ղ Ո Վ Ի

(ԵՊՍՍԻ ԵՆԳՐԱՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ)

Տ .

Հակառակ որ Կեղր. վարչ. ժողովո ընդհանուր ազգայնաբար եւ այդ մասին շրջաբերականներ եւ գեղարվեստներ ալ հրատարակած է (տեսնել Միութեան Ծրոյցի Տեղեկագիրը եւ «Միութեան» 9, 15 եւ 16րդ թիւերը), ազգային մարմինները, եւ մասնաւորապէս կարօտ համայնքները, ընդհանուրապէս ուշադրութիւն չեն ընէր գործադրելու այն պայմանները՝ առանց որոնց դժուար եւ երբեմն անհնար է նկատի առնել նպատի խնդրանքները:

Արդարեւ, ամէն օր կը ստանանք նպատի բազմաթիւ խնդրագիրներ, որ աւելի սրտայոյզ նկարագրականներ են բան ունէ հիմնաւոր առաջարկ: Գրեթէ երբեք լուրջ ծրագիր մը չի ներկայացուիր Կեղր. ժողովին, այլ տարտամ պահանջներ, առանց ունէ ստոյգ ծանօթութեան, առանց ունէ շահեկան թելադրութեան:

Արդ, կը յանձնարարենք նպատի խնդրանքները փոխանակ ուղղակի Կեղր. ժողովին զըրկելու, անկատար ձեւով, Միութեան աւելույն կամ մերձաւորագոյն Տեղական Մասնաժողովին կեղր. եւ կամ Միութեան գաւառի պատուիրակներուն, իսկ եթէ այդ շրջանակին մէջ Հ. Բ. Բ. զրկուին եւ կամ Միութեան գաւառի պատուիրակներուն, իսկ եթէ այդ շրջանակին մէջ Հ. Բ. Բ. զրկուին Մասնաճիւղ չունի՝ վիճակին Ազգ. Առաջնորդարաններու միջոցաւ զրկուին, որպէս զի այդ պաշտօնական մարմինները իրենց կարգին առիթ ունենան տեղւոյն վրայ խնդիրը ուսումնասիրելու եւ իրենց կարծիքը միեւնոյն ատեն յայտնելու, բացորոշապէս, ճշգրտութեամբ եւ հաւատարմութեամբ հանդերձ:

Հետեւաբար բացարձակապէս կ'ազգայնաբարենք թէ՛ այսուհետեւ նկատի պիտի չառնուին, հակառակ վերոգրեալ հրահանգին անկանոն կերպով՝ այսինքն ուղղակի Կեղր. ժողովիս զրկուած նպատի խնդրանքները, երբ մասնաւոր գոնէ անոնց չընկերանար Միութեան տեղական Մասնաժողովին եւ կամ Միութեան Ընդհ. Գարտադարին վկայագիրը: Նոյնպէս աննկատ պիտի մնան այն խնդրագիրները, որոնց մէջ բացորոշապէս եւ մանրամասնաբար չեն նշանակուած խնդրանքին բուն շարժառիթը, ուզած նպատակն անկեր, առարման եւ գործածութեան եղանակները, եւ վստահութիւն ներշնչող ամէն երաշխիքներ:

Պէտք է նաեւ գիտնալ թէ Միութեան զրկու ի վիճակի չէ նկատի առնելու անհատական, ուսանողական եւ հրատարակական նպատի խնդրանքները, նոյնիսկ եթէ անոնք համարօգուտ են ունենան: Եթեմեան ձեռնարկի վերաբերեալ խնդրանքներուն եւս գոհացում տալ անկարելի պիտի ըլլայ առայժմ: Իսկ իբրեւ հացագին՝ դրամական օգնութեան անմիջական խնդրանքները պիտի ըլլայ առայժմ: Իսկ իբրեւ հացագին՝ դրամական օգնութեան անմիջական խնդրանքները այն ատեն միայն բացառաբար նկատի պիտի առնուին, երբ բացայայտ եւ կամ ամենալուրջ ներքին խնդրանքներով հաստատուած անակնկալ աղէտքի մը հետեւանք են:

Աւելորդ ըլլալ վերջապէս յայտարարել թէ՛ Միութեան կրթական վարկերուն մեծագոյն մասը սեփական վարժարաններու արահայրուած ըլլալով, նախընտրապէս ուշադրութեան պիտի առնուին հողագործ եւ արհեստաւոր համայնքներու անհրաժեշտ կարիքները, պայմանաւ սակայն որ այս մասին համետ եւ գործնական ծրագիրներ ներկայացուին Կեղր. ժողովիս, եւ այդ ծրագիրները տեղւոյն վրայ մշակուած ըլլան Միութեան ներկայացուցիչներուն հետ խորհրդակցաբար:

Պէտք չէ մոռնալ թէ Միութեան զլխաւոր նպատակն է հայրենի հողին հաւատարիմ մնացող, բայց նիւթապէս թշուառ վիճակի մը մատնուած՝ կարօտ համայնքներուն տնտեսապէս օգնել եւ անոնց վերականգնումին աշխատիլ իր ներկայ միջոցներով:

Այս ուղղութեամբ Կեղր. ժողովս որոշած է գործել եւ իր ձեռքէն եկածը բնել այսուհետեւ: Հետեւաբար կը խնդրենք ուշադրութեամբ հետեւիլ ներկայ հրահանգներուն:

Խորին յարգանքով
Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան
ԿԵԴՐ. ՎԱՐԶ. ԺՈՂՈՎ

Գահիրե, 3 Յուլիս 1913

Մ Ի Հ Ի Ա Ն Ղ Ա Ջ Ա Բ Ո Ս Ե Ա Ն

Ո՞վ չի ճանչնար զինքը եգիպտոսացոյ մեջ: Գանիբի յայտնի երեսփոխան, նախկին վարչութեանց անդամ, Հ. Բ. Ը. Միւրեան Տեղական Մասնաժողովին Առնեապետ, Ս. Միւրեան Ղազարոսեան՝ երէ ո՛չ մեկն այ ունենար իր այս ու դեռ ուրիշ նանրային տիտղոսներէն՝ դարձեալ ծանօթ ու սիրելի պիտի ըլլար իր պատկանած նանրութեան, ա՛յնքան բնատուր, զրեքէ նախասանմանեալ բան մը կայ իր անձին վրայ որ զինքը ժողովրդական կ'ընծայէ:


Չես գիտեր որոշապէս թէ ժողովուրդի զաւա՛կ մըն է ան, — այսինքն կենսապայքարի անժառանգ շարքերէն յառաջ եկած է, — բայց՝ այդպէս ըլլալ կամ ոչ՝ Ս. Միւրեան Ղազարոսեան, ինքնաբերաբար, Գանիբի նախընտան ամենէն ժողովրդական դեմքերէն մին դարձած է տարիներէ ի վեր ժողովրդականութիւն մը՝ գործնական զիրքի աստիճանական բարձրացումը չեղծանել, և որ կ'արդարանայ իր նկարագրին բոլոր յատկանշական գիծերովը:

Միւրեան աղան — այսպէս կը կոչեն զինքը նամ-նախիկն մինչև Բրաս ար չ'Օրերա — անկեղծութեան, պարզութեան ու բարութեան խոշոր մարմնացում մըն է:

Երբ մտամնացում կ'ըսեմ, անշո՛ւշտ, նկատի ունիմ թիչ մը իր ֆիզիքական գանգուածեղ կազմը: Մարդիկ կան որոնց մարմինը գերազանցապէս կը ներդաշնակի իրենց նոգեկան կերպարանքին. առատութեան, յորդութեան ու գեղումի չես գիտեր ի՛նչ անսանմանելի արտայայտութիւն մը ունին կարգ մը գիլուրիներ, կորուրիներ ու բանձրութիւններ:

Անկարելի պիտի ըլլար, օրինակի նամար, Միւրեան աղան երեւակայեց տօժոյն ու վտիտ կեղեւի մը տակ: Այն բարեմոյն, սրտաց ու **ՏԷՎՕՃԷՆ** երեւոյքը, որ իր բարոյական ետրեան իսկատիպ պատկերացումն է, այլապէս պիտի չի կրնար գծագրուիլ:

Իր պարզութեան մեջ բարդ, սակայն, Ս. Միւրեան Ղազարոսեան այնքան ալ դիւրաւ ուրուագրելի դիմատուր մը չէ:



Մ Ի Հ Ի Ա Ն Ղ Ա Ջ Ա Բ Ո Ս Ե Ա Ն
ՊԱՏՈՒՌՈՅ ԱՆԴԱՄ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ
ԱՏԵՆԱՊԵՏ ԳԱԶԻՐԵԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻՆ

Արեւելցի **ԽՈՂԱՏԱՅԻ**, Պոլսահայ աղա մարդու, Չուխաճի Խանէն վկայեալ Խան Խաչիցիի և եգիպտահայ նարագատ **ԱԳՂԱՅԻՆԻ** յաւագոյն յատկութիւնները կը զբանեն Միւրեան աղայի անձին վրայ՝ կատարեալ **ԸՆԵՐՎԷՆԻ** մը բարեկրթութեանը մեջ նայած, տարրացած:

Պապա մարդ մըն է ան, բառին ամբողջական ու ազնուական իմաստովը:

Երէ դեռ երիտասարդ չըլլար՝ պիտի փորձուէին զինքը «Հայրիկ» կոչել, ա՛յնքան **ԽԱՅՐԱԿԱՆ** է ամեն բան իր վրայ, ա՛յնքան **ԽԱՅՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ** պատշաճած է իր կեցումքին, իր նիստուկացին, իր շէշտերուն ու մեակերուն:

Իր տարագին մեջ անխոյր, կարծես չի կոճկուած բան մը կայ, որ անոր վայելչութիւնը չի նուագեցներ, այլ բերես տեսակ մը արնամարմանք է լոկ ձեռքներումի: **ՃԷՍ** միշտ ետեօք, թիչ մը քովնախ, իր մեծ ու կոր զլխուն վրայ՝ որուն մագերթ ժամանակէն առաջ ձերմկի սկսած են: Լեցուն դեմքը կը զարդարեն բաւ պիսեր, և բարի ժպիտ մը իր պայծառութիւնը կը դնէ անոր վրայ:


Իր նպումը ազանովութեան խորունկ տալուրութիւն մը կը գործէ, այնպէս կը զգաս թէ

ամբողջ ետրեւոյ, կեանքի գերագոյն զաղտնիքն իսկ պիտի կրնայիր վտանիլ իրեն անվարան...

Աղամանդի վաճառական, իրեն նամար կարելի է ըսել որ՝ կեանքն ի բուն աղամանդի նետ շփուելով՝ աղամանդի մաքրութիւն մը առած է իր նոզին, այնքան ստույգ է որ անընդունակ է այս մարդը կեղծիքի կամ նենգ ու պղտոր զգացումներու:

Ս. Միւրեան Ղազարոսեանի նմանները մեր նանրային կեանքին մեջ այնքան աւելի վերնորոտած են որքան նացուագիւտ: Բանիբուն, առանց մտաւորական այն ունայն ու յաճախ պատիր ջնարակին որով կը փայլին մեր կարգ մը նորահաս ազգային ժողովականները, Միւրեան աղան **ԱԳՂԱՅԻՆԻ** ամենէն **ԸՆԵՐՎԷՆ** ու նամակրելի տիպարը կը ներկայացնէ:

Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՊԷՅ



Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՊԷՅ
ՊԱՏՈՒՌՈՅ ԱՆԴԱՄ
ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՉ. ՄԻՈՒԹԵԱՆ

Անշանախելի, ուղղամիտ, բուխիր ու զոնարելոյ. խոնարհներուն, զրկուածներուն ու արժանատիներուն նամար շահագրգռութեան ու կարեկցութեան միշտ պատրաստ նոզին է ան, առանց ամբոխավար խրոխտանքներու և ախնոտ ու ցուցախնդիր փառասիրութիւններու:

Հանրային իրեն նամար անձնասիրութեան զոնորութիւնը մեծագոյն զոնարերութիւններէն է որուն մարդս յանձնառու կ'ըլլայ: Փոքրորութիւններու, ինքնախնդրութիւններու և ճշման կենրիկներու միջավայրի մը մեջ՝ այդ գերագանց առաքինութիւնն ալ՝ թիչերու նետ՝ արուած է մեզ նաստատել «Բարեգործական»ի տեղույս ամենէն ջերմ ու անձուեր աջակիցներէն մին նանդիսացած այս պատուական եգիպտոսացուն վրայ:

Եգիպտոսաց զաղուրին ամենէն երուպականացած և սակայն դարձեալ սիրտով նայ մնացած գերազանցապէս նամակրելի դեմք մը, Մարկոսօֆ պէյ, գոր անտանելի նիւանդութիւն մը վերջերս բոլորովին զգետնած է դժբախտարար:

Մարկոսօֆ պէյ Հ. Բ. Ը. Միւրեան նիմանդիներէն մին, երկար տարիներ վարած է Կեդր. Վարչ. ժողովի խորհրդական-անդամի պաշտօնը:

Իր նամենուած խօսակցութեան նմայքը խանդաղատանքով կը յիշեն իր բարեկամները, ինչպէս և իր անթիւ բարերարեայները երախտագիտութեամբ կը յիշեն ազնուական մարդասերը՝ որ աչքը գոց և ձեռքը բաց կ'երբար միշտ բարեգործական ամենազգի դիմումներուն:

Մարկոսօֆ պէյ նարկադրուած ըլլալով նրաժարելու Միւրեան վարիչի պաշտօնէն, Կեդր. Վարչ. ժողովը իրեն տեղ խորհրդական անուանեց Ս. Միւրեան Ղազարոսեանը, որ այդ առթիւ իրաւամբ **Պատուոյ Անդամ** կ'ըլլայ, բան մը գոր իր դիմատուրը մամուլին յանձնուելէն վերջ միայն նոս յաւելագրելու նաճոյքը կ'ունենանք:

ՄԵՐ ԱՅԼԱԳԱՒԱՆ ԵՂԵՆՑՐԿԵՐՈՒՆ

Ե. Ա. Ա. Թ. Օ. Ն.

Մենք Հայերս փոքրաթիւ ազգ մըն ենք. եթէ ամէնքնիս իրարու մօտ և մէկ երկրի մէջ գտնուէինք՝ մեծ բարեք մը եղած պիտի լինէր. բայց ընդհակառակը ցիրուցան բաժնուած ենք Թուրքիոյ, Ռուսիոյ, Պարսկաստանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Ռուսմանիոյ, Աւստրիոյ և Հնդկաստանի պէս զանազան հեռաւոր երկիրներու մէջ:

Իբր թէ այս աշխարհագրական բաժանումը չէր բաւեր, կրօնական բաժանում մը եւս ունինք՝ շուսաւորչական, կաթոլիկ եւ բողոքական: Այս բաժանումը այնքան ազխտաբեր պիտի չը լինէր, եթէ վերոյիշեալ երեք դաւանանքներու վերաբերող Հայերս ազգասիրաբար ունենայինք իրարու հանդէպ եղբայրութեան և համերաշխութեան զգացում. բայց, աւանդ, որ, ազխտութեան և մոլեռանդութեան երեսէն, տեղ տեղ լուսաւորչական Հայը իր կաթոլիկ և բողոքական եղբայրներուն պաղ աչքով կը նայի, կաթոլիկ Հայն ալ իր լուսաւորչական և բողոքական եղբայրներուն հաշտ աչքով Հայերով անոնցմէ հեռու դռնուիլ կ'ուզէ, և այսպէս նաև բողոքական Հայն ալ:

Միթէ ցաւալի չէ՞, միթէ ամօթ չէ՞ տեսնել արդէն քայքայուած և նոյնիակ իր գոյութիւնը գրեթէ վտանգուած ազգի մը պատկանող աի մը Հայեր, որ միեւնոյն նախնայրները և միեւնոյն հայրենիքը ունեցած են, դաւանանքի խտրով իրարու հետ այսչափ ցուրտ վերաբերութիւն ունենան, և նոյնիակ երբեմն զիրար ատեն, իբր թէ կրօնքը լինէր պատճառ, մինչդեռ ամէնքնիս ալ գիտենք որ քրիստոնէութիւնը անխտրապէս և ընդհանուր առումով սէր և միութիւն կը քարոզէ. բայց անկողմնակալ լինելու համար փութամ ըսել թէ բարեբաղդաբար վերոյիշեալ մտայնութիւնը ընդհանուր չէ. շատ տեղեր, ինչպէս Պոլիս (մասնաւորապէս Բերայի և Միջագիւղի թաղերը), և Ամերիկա, լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական Հայեր իրարու հետ սիրով են և կրօնքի խտիր չեն գներ իրենց յարաբերութեանց մէջ:

Մենք Հայերս կապիկի պէս Եւրոպացիին նմանիլ կ'ուզենք և անոր ամէն ըրածը ընելու կ'աշխատինք. սա գէշ բան չէ, բայց Եւրոպացիին մինակ գէշ ունակութեանց հետեւելու չենք, այլ անոր ազգի կողմերն ալ ընդունելու և գործադրելու ենք. օրինակով խօսիմ որ հասկնալի ըլլամ:

Անգլիոյ մէջ կը գտնուին Հայերուս պէս երեք կրօնական բաժանումներ, անկլիքան, կաթոլիկ և բողոքական. բայց Անգլիոյ ժողովուրդը երբէք կրօնքի խտրութիւն չի գներ Եթէ կիրակի օր մը Անգլիա գտնուիք, պիտի տեսնէք որ ամէն ոք իր դաւանանքին յատուկ եկեղեցին կը յաճախէ. բայց կրօնավայրէն դուրս, ամէնքը իրարու ձեռք կուտան, մէկ հոգի և մէկ մարմին կը կազմեն. պիտի չը հանդիպէք Անգլիացիի մը որ այլազաւան Անգլիացիին համար գէշ խօսի, տարբեր դաւանանքէ ըլլալուն:

Ռուսմն, Հայեր, նամանաւանց դաւաճացի Հայեր, մենէ զարգացեալներուն, մենէ աւելի քաղաքակիրթ ազգերու օրինակին հետեւեցէք:

Եգիպտոս ընակող Հայոց թիւը 10—12 հազարի կը հասնի. հոս եւս մեր մէջ կան երեք այլազաւան յարանուանութիւններ. բայց շատերու ուրախալի է տեսնել որ, անոնց մէջ մազի չափ պաղութիւն կամ խտրութիւն չը գտնուելէ զատ, ամենքնիս իրարու հետ շատ սիրով ենք, մեր մէջ կատարեալ եղբայրութիւն կը տիրէ:

Եգիպտոսի հայութիւնը, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ազգաչէն և մարդասէր գործին ծնունդ տուաւ — և ասոր համար Եգիպտոսեան Հայը ինքզինքը հպարտ կը զգայ — իր անդամներուն շարքին մէջ ունի շատ մը կաթոլիկ և բողոքական Հայեր. նոյնպէս իր բազմաթիւ մեծ ու փոքր Մասնաժողովներուն մէջ ունի կաթոլիկ և բողոքական վարիչներ: Գահիրէի կեզը. Վարչ. ժողովին երկրորդ ատենապետն է Վսեմ. Եագուպ Արթին փաշա, ինչպէս խորհրդականներէն մին է Տիար Տիւրան Փիլիպպոսեան, որ մեր գաղութին ականաւոր կաթոլիկներէն են: Հալէպի Մասնաժողովին ատենապետն է Տօքթ. Շմաւոնեան, իյարբերդի Մասնաժողովին ատենապետն է Բրօֆ. Նիկ. Թէնէքէճեան: Սօֆիայի Մասնաժողովին ատենապետն է Պատ. Շահվէլեան, պատուական բողոքական Հայեր: Վիեննայի Մասնաժողովին ատենապետն է Գեոր. Գարբիէլ վարդ. Մէնէվիչեան, ականաւոր Միթիթարեան Միաբանը: Այս թուարկումը երկար պիտի ըլլայ. բայց յիշենք վերջապէս Կ. Պոլսի Մասնաժողովի գանձապետ Տ. Արտաչէս Հիւրմիւզը, պատուական կաթոլիկ Հայ մը, և խորհրդականներէն Տ. Վահան Մատթէոսեանը, սիրուած բողոքական Հայ մը:

Երբ ցաւանակից եղբայրներուս ուզելով կը կրկնեմ — հետեւեցէ՛ք մեր օրինակին, սիրեցէ՛ք ձեր Հայ կաթոլիկ և բողոքական եղբայրները. նոյնիակ, եթէ անոնք ձեզմէ հեռու փախչին՝ դուք անոնց մօտեցէ՛ք. մի՛ մոռնաք որ միեւնոյն ազգին զաւակներն էք:

Մեր Առաջնորդներէն, Գերապայծառներէն և Պատուելիներէն կը խնդրենք որ իրենց քարոզներուն և խօսակցութեանց մէջ յորդորեն ժողովուրդը որ քիբէ՛ իր Հայ եղբայրը, ատենց իր դաւանանքին նայելու: Լաւ գիտեմ որ կան քաղաքներ ուր Հայ



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՉ. ՄԻՈՒԹԵԱՆ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

կաթովիլը Հայութիւնը չընդունիր, եւ լատին եմ. Հայ չեմ՝ կ'ըսէ. առիկա սպիտու-
թեան հետեւանք է. անոր այդ ընթացքէն վշտանալով անկէ պահելու չէ. քանզի
որ երբ որ մը անոր սպիտութիւնը փարատի, ձեզմէ պակաս ազգասէր պիտի չի լինի ան

Ուշադիր եղիք, ո՛վ Գերապայծառներ եւ վերապատուելիներ, որ ձեր վարած
զպրոցներուն մէջ, մանաւանդ աղջկանց վարժարաններուն մէջ, ազգային լեզուն աւան-
դուի եւ լաւ աւանդուի. ձեր պարտքը պէտք է ըլլայ լաւ հայեր եւ հայունհիներ
պատրաստել. հետեւաբար թող մի սաք որ օտար բաթէրաններ ձեր մանուկները ձեր
ձեռքէն խլին:

Այն կաթովիլը որ իր մայրենի լեզուն կը խօսի եւ կը գրէ, միշտ Հայ կաթովիլ
կը մնայ. բայց այն Հայ կաթովիլը որ հայերէն չի գիտեր, փոխանակ մինչեւ վերջը,
որդոց որդի, Հայ կաթովիլ մնալու, իր պատկանած փարախէն կը բաժնուի շուտով
եւ կ'օտարանայ, կը լատինանայ: Ո՛վ չի գիտեր Սուրբոյ լատինացած Հայ կաթովիլնե-
րուն ցաւովի վախճանը. անոնք ամբողջ Հայութեան համար կորսուած են:

Ո՛վ Գերապայծառներ, կ'աղաչեմ որ ներչնչուիք Ալիշաններու ոգիովը եւ հրա-
ւիրէք ձեր հօտին բարեկեցիկ Հայ կաթովիլները՝ որ առանց խտրանքի Հայութեան
նուիրուած Հայի. Բարեգ. Ընդհ. Միութեան անդամակցին: Թո՛ղ մեր Կեդրոնի գործա-
կիցներուն Եագող Արթիւն փաշաներու, Մաթոսեաններու, Փիլիպոսեաններու, Մաս-
րաֆներու գովելի օրինակին հետեւին:

Իսկ դուք, մեր պատուական Հայ բողոքական եղբայրները, դուք ձեր պատկա-
հան լեզուն կը սիրէք, օրհնեալ լինիք, բայց առիկա բաւ չէ, սիրեցէք նաև ձեր
լուսաւորչական եւ կաթովիլ եղբայրները, մօտեցէք անոնց, մի մոռնաք որ ձեր մեծ
հայերը կամ մեծ մայրերը անոնց ալ նախածնողներն էին. ժողովարանէն դուրս Հայու
խտիր պէտք չէ զոյութիւն ունենայ: Մի՛ մոռնաք որ ամէն բանէ առաջ Հայ էք:



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵՐՋԻՓՈՒՆԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա. Մ Ս Օ Ր Ե Ս Յ Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ք Ե Ր Թ

Հ Ա Յ Կ Ա Վ Ա Ն Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Ր Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

«ՄԻՈՒԹԻՒՆ»Ի 201 ՏԱՐԵՇՐՁԱՆԸ

Ուրախ ենք յայտարարելու որ ներկայ թիւին նեա «Միութիւն» կը բոլորէ իր երկրորդ Տարե-
շրջանը:

Երբեք յաւակնարկն չունեցանք, եւ չենք կրնար ունենայ, այս նամատ նրատարակութեամբ
ազգային մամուլին մէջ տեղ մը գրաւել:

«Միութիւն»ը նրատարակուցաւ առաւելագոյն իբրև մեր Ընկերութեան Պաշտօնաբերքը, եւ իր
ամսօրեայ տեղեկատուութիւններովը ալ նպատակին ծառայեց որքան կը ներին իր միջոցները:

Ձանացիք իր նեղ սխնակներուն մէջ կարեւոր տեղ մը տալ նաև օգտակար տեսութանց եւ
գործնական գիտելիքներուն, նաւասարապէս մատչելի ընելով մտաւորականին եւ շինականին:

Շատ բան չէ անշուշտ այս ամենը, բայց իբրև նախափորձ ձեռք բերուած յաջողութիւնը ան-
շուշտ քաջաբերական է:

Շատեր գիտել տուին մեզի որ անբաւական է այս բերքը, պէտք է մեծցնել ծաւալը եւ գոնե
շարքաբերքի վերածել անիկա. ոմանք ալ սուղ գտան անոր տարեգինը:

Հակառակը չենք պնդեր: Բայց պէտք է նկատի առնել որ «Միութիւն» կը նրատարակուի իր
սեփական նատյրներով, առանց բեռ ըլլալու Հ. Բ. Ը. Միութեան սնուելին վրայ. նաև թէ՛ ներկայ
նատյրները չեն բոյաւորեր որ առաջարկուած փոփոխութիւնները գործադրենք նոր շրջանէն սկսեալ,
մանաւանդ որ Միութեան յատուկ տարարանի մը կազմութիւնը բաւական ծախքերու դուռ բացաւ:

Մենք սակայն վիայոյս ենք թէ Միութեան նարխարար Մամուլագրութիւնը եւ նագարաւոր ան-
դամները, ըմբռնելով Պաշտօնաբերքի օգտակարութիւնը, գովելի նախանձախնդրութեամբ մը պիտի
ջանան ուժ տալ այս նրատարակութեան: Յաւալի է որ անդամներուն մեծագոյն մասը դեռ բաժա-
նորդագրուած իսկ չէ:

Իրաւունք ունինք ուրեմն սպասելու որ մեր բարեկամները բմբռնեն իրողութիւնը եւ օգնեն մեզի,
«Միութիւն»ը նեղցնեալ դնելու նամար բողձացուած բարձրութեան վրայ:

Ամեն պարագայի մէջ մեր բնարանն է՝ կամաց բայց նաստատ:

Մեր խօսքը վերջացնելէ առաջ, պարտք կը զգանք մեր խորին շնորհակալիքը յայտնել թե-
րիս նուիրատու բաժանորդներուն, ազնիւ աշխատակիցներուն, եւ ամեն անոնց որ չի գլացան մեզի
իրենց օժանդակութիւնը:

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ն

«ՄԻՈՒԹԻՒՆ» Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ք Ե Ր Թ Ի

(«Միութիւն», թիւ 24)

«ՄԻՈՒԹԻՒՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԻՔԻ ԲԱԶՄԱԹԻՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Ո Ղ, Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ն Ե Ր Ո Ւ

(Ի ՆՊԱՍՏ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՆԻ ԱՅՈՒ ԲԱՐԵՆՊԱՏԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆՅ)

ԲԱԺՆԵԳԻՆ		ԲԱԺՆԵԳԻՆ	
Տիկ. Նոյնի Գալանտան (Բարիզ)	100	Օ. Տիրատուր (Գահիրէ)	5
Տիկ. Երանուհի Յակոբեան փաշա (Բարիզ)	50	Պետրոս Յովսէփեան (»)	5
Լևոն պէյ Յակոբեան (Բարիզ)	50	Յ. Տէր Յովակիմեան (»)	5
Ե. Աղաթոն պէյ (Գահիրէ)	50	Լևոն Կիւմիշլիբեքեան (Բարիզ)	5
Յովնաննա պէյ Մարտեան (Աղերսանդրիա)	30	Ժիրայր Կամբեան (»)	5
Ա. Աւետիբեան (Իզմիր)	30	Գրիգոր Մինասեան (»)	5
Գ. Կիւլպենկեան (Լոնտոն)	24	Տօքթ. Պ. Կոստանդ (Իզմիր)	5
Ոմն (Նիւ-Եօրք)	23	Ասրգիս Թագոբեան (»)	5
Տիգրան Խան Քելեկեան (Բարիզ)	20	Տ. Հանքեան (Խարթում)	4
Կարապետ Մարտեան (»)	20	Ա. Իզմիրեան (Օմուրման)	4
Յակոբ Գալպանեան (Գահիրէ)	15	Ա. Մուղալեան (Աղերսանդրիա)	4
Կ. Տիսիբեան (Միլան)	11	Յովհ. Ազարեան (»)	4
Ա. Կամարալեան (Աղերսանդրիա)	10	Արամայիս Պէկեան (»)	4
Միք. Պէյ Քելիբեան (»)	10	Եագուպ Արքին փաշա (»)	4
Մ. Անդրանիկեան (Գահիրէ)	10	Նուպար Գարամանեան (»)	4
Յակոբ Յակոբեան (»)	10	Ամիրայեան Եղբարք (»)	4
Բիւզանդ Մարաթի (»)	10	Անմանեան (Թրիւսթ)	4
Տիգրան Փիլիպոսեան (»)	10	Յ. Մանուկեան (»)	4
Մ. Քիւրքճեան (Խարթում)	10	Տ. Միսիրաբեան (ԹանՅա)	4
Երուանդ Չատեան (Վիեննա)	10	Ա. և Ս. Վանեան (Խարթում)	3
Հրանտ Պաքրճեան (Գահիրէ)	8	Մուրաա Մեօրեմեան (Զակազիկ)	3
Երուանդ Փրնկըր (Բարիզ)	8	Տիգրան Մարտիրոսեան (Լաիրնէ)	3
Մ. Փափագեան (Մանչեսթըր)	5	Տօքթ. Ա. Յովնաննեան (Պուտարէշ)	3
Գ. Յարութեան (Խարթում)	5	Մաղ. Արքեպ. Օրմանեան (Կ. Պոլիս)	3
Չամբրքեան և Բնիկ (Անվերս)	5	Տիգրան Չամբրքեան (Ժրնէլ)	3
Մ. Ղազարոսեան (Գահիրէ)	5	Մ. Հիւսէյճեան (Վիլնէնա)	3
Կ. Պէյ Շեքիանեան (»)	5	Յովհ. Արամեան (Ֆիլիպէ)	3
		Տիգրան Մուրաաեան (Բարիզ)	3

Վ.ս.մ. Պոզոս փաշա Նուպար եգ. Ոսկի 100 նուիրած է:

ԾԱՆ.— «Միութիւն» ի տարեկան բաժնեգիրն է 6 ճրանկ կանխիկ:



(ԿԵՍԱՐԻՈՅ ԵՐԵՐ ԿՐՈՆԱՊԵՏԵՐԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՈՎԱՆԻՆ ՑԱԿ Կ'ԵՂԱՅՐԱԿՅԻՆ)

Մ Ի Մ Ո Ռ Ն Ա Ք . . .

Աւելի քան վեց տարի է, աճա՛, որ Հ. Բ. Բ. Միութիւնը՝ մեր ազգային իրականութեան մէջ ներուժ ու հարազատ երկունքով մը ծնունդ առած՝ արդիւնաւորապէս կը գործէ, իր դերին սիրտցաւ, գրեթէ երկիւղած գիտակցութենէն առաջնորդուելով քայլ առ քայլ ու անսպթաք:

Յեղին ինքնապահանջութիւն հաւաքական անտեղիտալի ընդդէմ արտայայտութիւնն եղաւ նախ անկախ Հայրենաքանդ Հայրիքին աճապարտութեանը դէմ խաղաղօրէն մաքառելու, ազգային քայքայումի գահալիժ հոսանքները խուլօրէն կասեցնելու, անոնց բաց վէրքերն ու վիհերը անմիջականօրէն դոցելու, և զրկանքի, հալածանքի ու արհաւիրքի տակ ճղմուած Հայութեան կենսականութիւնը կարելի եղածին չափ ինչպէս անձկայրեաց ու խելայեղ ճիգով մը:

Ապա, որ մը, քաղաքական անակնկալ ու աւետուոր յեղաշրջումի մը հետեւանքով, ազգային յարատեւ գարմանումի այս աշխատանքը հետզհետէ սկսաւ փոխուիլ ազգային վերաշինութեան ստեղծագործ գաւառներէ:

Եւ երբ զլուծի աշխարհին դուռներն ու ճամբաները բացուեցան հայ տարադրութեան առջեւ, ա՛յն ատեն իսկապէս յայտնի եղաւ կուտակուած նիւթական ու բարոյական աւերին վիթխարի համեմատութիւնը, կատարուած աղէտքին անցատակ խորութիւնն ու անասման տարածութիւնը:


Ամոքումի բաշխարհիվներուն արդէն իսկ անբաւական ուժերը պիտի չի կրնային, անշուշտ, բաւել նոյնհետայն վերականգնումի հակայական պահանջներուն: Մանաւանդ որ Հ. Բ. Բ. Միութեան պէս հեռանաւ մեծ առաջադրութիւններու վրայ հիմնուած բարեգործական-զարգացողական հաստատութիւն մը՝ իր ծրագրովն իսկ պարտադրուած էր զգուշանալ որը օրին սպասելէ իր տրամադրած բոլոր միջոցները:

Ի՞նչ ընել, այդ պարագային՝ ընկրկիլ ներկայացող, հարկադրուող գործին բազմակնճիւղ դժուարութիւններուն առջեւ, երբ տասնեակ ասորիներէ ի վեր երազուած անկաշկանդ գործունէութեան գերազանց պատեհութիւնն էր որ կը ներկայանար, երբ ինքնամիտիւմի ու խաղաղ-զարգացման աճիւն բազմացուած շրջանն էր որ կը բացուէր:

Հ. Բ. Բ. Միութիւնը իր կոչումին գասալիք չէր կրնար ըլլալ. ընդհակառակը, այդ կոչումին վերութեանը հաւասարելու բոլորամուէր թափով մը փարելու էր ազգային վերանորոգութեան անցեւորած գիւղի ձեռնարկին: Միութիւնը իր էպպէս շինարար ու արդաւանդ փուլին մէջ թեւակոխած էր այլեւս, և ասիկա կարծես երկրորդ դասաթիւն մը, ճշմարիտ վերածնունդ մը եղաւ իրեն համար: Եւ կոչը զօր այս սովորական հնչեցուց Հայութեան հոգիին մէջ, համազգային արձագանգում մը ունեցաւ հին ժողովրդային գանգուածները Միութեան գրոչին յատեցան ու յարեցան ամէն կողմէ, բարերար ձեռքեր Միութեան երկնցան մօտէն թէ հետուէն, և Միութիւնը իր գտած այս անվերապահ ու ջերմեռանդ աջակցութիւններէն զօտեւնդուած՝ աւելի ինքնավստահ կամաւորութեամբ մտաւ հայրենի սահմաններէն ներս, գէպի հոն ուրկէ սերմցուի, լծկանի ու հոգի կարօտ գեղջուկներ, աշխատանք պողատող գիւղաքաղքերի համայնքներ, հայ ու լոյս աղբրող օրբութիւններ կը կանչէին ինքը կողմը գաղին . . . :

Սկսեալ ամէն շքեղ ու հանրօրուտ շարժումի հանդէպ՝ առաջին խանդավառութիւնները միշտ յորդապելով վրէլան անհատական ստատարութիւններով ու լիաշուքի յանձնառութիւններով: Յետոյ, յաճախ, մոռացումն ու անտեսումը կուզան տակաւ մեղմացնել, մարեցնել գոհօղութեան խանդաբորբ կրակը հոգիներու ներսիդին: Ուրախալի է, սակայն, հաստատել թէ Հայի. Միութիւնը, այս տեսակէտով, յուսալրիտման ոչ մէկ պարագայի հանդէպ դանուեցաւ ցարգ: Հայ ժողովուրդը երկրի թէ Արասահմանի մէջ, չորս տարիէ ի վեր՝ յարածուն համակրութեամբ մը՝ կը բուրբուի Միութեան շուրջը, կ'ընդգրկէ, ի՛րը կ'ընէ անոր ազգաչէն ճիգը: Գլխախտարար, ժողովրդային օժանդակութիւնները, ո՛րքան ալ հետզհետէ աւելի ընդարձակ աստիճանի մը վրայ տրամադրուին Միութեան, դարձեալ բաւարար չեն, գէթ առայժմ, անոր առջեւ ծովացող պահանջները գոհացնելու համար: Ամէն օր նոր առաջարկներ, նոր խնդրանքներ, օգնութեան նոր աղբրներ ու աղաղակներ կը հասնին մեզի, մին միւսէն աւելի անհրաժեշտ, մին միւսէն աւելի ըստիպողական, մին միւսէն աւելի աղիւսարչ: Եւ միւսնոյն վարիչ մարմինը, շատ անգամ, սրտի ցաւազին սեղմումներով է որ ստիպուած կը զգայ հայրենի կարօտութիւնգամ, սրտի ցաւազին սեղմումներով է որ ստիպուած կը զգայ հայրենի կարօտութիւններուն մէջէն իր ղևսրակն ընել, մէկը զոնէլ միւսին, մէկէն գեղջիլ՝ միւսին բաժին հանելու համար, երբ գիտես որ, անդին, ուրիշ մը, և անհամար եղիկել՝ ուրիշներ, իրենց կարգին կը սպասեն սարսուղին . . . :

Եւ գեւ աւելին կայ, ու թերեւս ասիկա ամենէն ընտրոշն է Միութեան ձեռք բերած գործնական փորձառութիւններուն: Հայրենի համայնքի մը օգտին ու է հաստատութիւն մը հիմնել ձեռնարկած եւ, գիտական բոլոր մանրամասն դնահատումներով և սեղին վրայ ուսումնասիրութիւններով ճշգուած ծրագիր մը ունիս աչքիդ տակ:



Հ Ա Յ Ե Ա Կ Ա Ն Բ Ա Բ Ե Գ Ո Ր Ծ . Ը Ն Գ Է . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
Գ Ո Ւ Բ Կ Ա Զ Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը

Մտի՛ր իրագործումի ճամբուն մէջ. բրիչի առաջին հարուածը զոր կ'իջեցնես, կարիքի անդունդ մը կը բանայ առջիկ, և երբ ահազին զոնորութեամբ հազիւ անխիա զոցած ըլլալ կը կարծես, յանկարծ, կը տեսնես որ նոյնքան խորունկ վի՛ մը բացուեր է անոր աւընթեր, ա՛յնքան ճշմարիտ է որ ամէն բան պէտք է ստեղծել, զի ամէն բան կը սրտի, մեր տարաբա՛ղջ հայրենիքին մէջ:

Զոհարերութի առատածեան ու տիրական ժեսթեր պէտք են, ուրեմն, լրացնելու համար ժողովրդային լուսաներու և նախընթաց վեհանձն ժեսթերու շնորհիւ ձեռնարկուած հոյակապ զործեր:

Այս հարկին առջեւ է որ մեր մտածումը կ'երթայ, կը յածի, կը մոլորի, այս պահուս, դէպի կառույտ թշուա՛ններու և ընկալուչ ջրաքաղաքներու այլուրութիւնը, ամէն անոնց ետեւէն — մեր վարթամ ու բարեզու՛թ այն ազգայիններուն — որ ամառնային արձակուրդի այս եղանակին՝ իրենց տարեկան խոնջէնքը, իրենց իմաստուն երազանքը կամ իրենց օրերուն ծանրացող բեռը սիրողարար ու յուշօրէն կը պտտցնեն քաղցր զովութիւններու և կազդուրիչ գաղջութիւններու միջեւ: Եւ ակամայ կը փորձուինք ողևկոչել զթութեան անձանօթ սրտիկ մը, որ անոնց ճամբուն վրայ պիտի ելլէր, և անոնց ականջն ի վար մեղքօրէն, խորհրդապահօրէն, պիտի հծծէր:


— Մի՛ մտնաք . . . :

Մեր բարեբաւակ հայրենակիցները՝ զորմի աօրեայ հոգերէն ու մտազբաղումներէն զերծ՝ տարւոյն այն միջոցը կ'ապրին հիմա՝ ուր իրենց հողին ամենէն աւելի արամաղիր է լսելու բարութեան կոչերն ու թունդ ելլելու անոնցմէ: Բնութեան անապակ պայծառութիւններուն զիրկը, կենսապայքարի դաման ժխորէն հեռու, անոնք աւելի յստակ պիտի տեսնեն — մեր հայրենի մտայլ իրականութիւնը, և աւելի խորապէս ու ինքնաբերաբար պիտի մղուին բարեգործութեան սիրալի ու սիրտարար խոյանքներուն:

Ո՛ր էր թէ՛ ամառնային թախտոյցածումներու զխորածով՝ իրենց հաճելի հանդիպումներուն մէջ իրարու յիշեցնէին Հ. Բ. Ը. Միութեան զործը, և աշխանային իրենց վերադարձէն առաջ՝ իրենց մեծագործ առաջադրութիւններուն աւետիսը հասնէր մեզի:



Հ. Բ. Ը. Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն Գ Ո Ւ Է Ն Ո Ս — Ա Յ Բ Է Ս Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի



Ս Ե Թ Գ Ս Փ Ա Մ Ա Ճ Ե Ա Ն
Պ Ա Տ Ո Ւ Ո Յ Ա Ն Դ Ա Մ Դ Զ. Բ. Ը. Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն
Ա Յ Ե Ն Ա Պ Ե Տ
Վ Ա Ն Ի Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի

Տ. Սեր Գափամանեան արժանի գաւակն է պատուական Հայու մը, Պետրոս պէյ Գափամանեանի, որ 1912ի վերջերը գոն գնաց իր անկաշկանդ համոզումներուն և անկեղծ անձնօրէութեանը:

Զուգելով կիսկատար ձգել իր ողբացեալ նոր քուկրած գործը, որ վանի մէջ Միութեան և վարժապետանոցին նոզին եղած էր, ինքնայոժար բառաջ նետուցաւ, և անխնայ ջանքերուն աւելցնելով նաև շուրջ 300 օսմ. ոսկիի գոնարկութիւն մը, անցեալ տարի Միութեան յանձնեց վարժապետանոցին շէնքը: Այդ աօրիւ փառասօր հանդես մը տեղի ունեցաւ, որուն մասնակցեցան վանի կուսակալն և Հիւպատոսները:

Տեղւոյն Մասնաժողովին վերակազմութեան տարի, Միութեան անդամները բարգաւաճ արտայայտութիւն մը ընկաւ ազնիւ փորկոտութեամբ, Տ. Սեր Գափամանեանի վերապանեցին՝ իր նոր եղբրական մասնամըրը բախոր մնացած առեւտրականութեան արողը:

Բանի մը շարք առաջ, Միութեան կեղք վարք, ժողովը իր երախտագիտութեան տուրքը վճարեց այդ ազգասեր երիտասարդին, Պատուոյ Անդամներու ցուցակին մէջ արձանագրելով իր անունը, բարոյապես և նիւրապես մատուցած ծառայութեանը փոխարեն:



Հ Ա Յ Վ Ա Վ Ա Ն Բ Ա Ր Ե Գ Ը Ն Դ Շ Ա Ն Ո Ւ Ր Մ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն Վ Ա Ն Ի Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ա Ն Ո Յ Ո Ւ Ս Ո Ւ Ե Ց Ա Ն Ո Ւ Մ Բ Ը



Յ. Բ. Ը. Միութեան Սամսոնի Սամսոնյանի Սամսոնյանի Տանգար
1918, 2/6 Յունիսի Գիշեր, Լուսանկարատան

ՍԱՄՈՆԻ ՄԱՍՆԱԿՅԻՂԻՆ ԿԱՂԱՆԳԻ ՀԱՆԴԵՍԻՆ ԽՄԱՆԿԱՐԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԵՐԳԸ

ԽՕՍԳ Վ. ՄԱԼԻՋԵԱՆԻ
ՆՈՒԱԳ Յ. ՄԻՆԱՆԵԱՆԻ
MAESTRO

Andante piano **f.**

S. Marcia **mf.**

f.

ՄԱՆ. - Նեղիկ բնույթ-պատճենը փոխելով առ աջին կն է: Տեքը պիտի ծախուի և ճամբի:

Հ Ա Յ Կ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Գ Ն . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն
Կ Ե Գ Բ Ո Ն Ի Ա Ն Ջ Ն Ո Ւ Է Բ Գ Ո Ր Ծ Ա Կ Ի Յ Ն Ե Ր Ը

Յ Օ Ք Փ . Պ . Ս Ե Բ Ո Ր Ե Ա Ն



Պ Ա Տ Ո Ւ Ա Կ Ա Լ Բ Ժ Ի Շ Կ

Հ Ա Յ Կ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Գ Ն . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ. Բ. Շ. Միտրեան ամենն զերմ համա-
կիրներուն շարքին մէջ կը գտնուի Տօ.քր. Պ.
Սերոբեան, որ երբէք չի սակարկեր իր ծառայ-
ութիւնները յօգուտ Միտրեան:

Բժկական-առողջապահական բոլոր ծրա-
գիրները և տեղեկագիրները, որ կը հասնին
Միտրեան կեդրոնը, իր գործաբաս նոգածու-
րեան առարկայ կ'ըլլան միշտ: Միտրեան կի-
լիկեան առողջապահական ձեռնարկներուն կը
նետեի քննարոյժ նախանձախնդրութեամբ:
Պաշտօնարկերին մէջ ինք է որ կը վարէ առող-
ջապահիկ նօրերը:

Տօ.քր. Պ. Սերոբեան Եգիպտոսայ Գաղու-
բին մէջ գնահատուած է իբրև նմուտ բժիշկ:

ինչպէս Միտրեան շրջանակներուն մէջ սիրուած
է իբրև անկեղծ և ջերմեռանդ բարեկամ մը:

Տօ.քր. Սերոբեանի նամար Միտրեանը սուրբ
բան մըն է, որուն երբէք չի ներքեր որ մէկը դպչի:
Թերեւս առիկա է իր միակ աններողութիւնը:

Եգիպտոսի Կրթական Նախարարութեան
զինուսին վրայ, Տօ.քր. Պ. Սերոբեան վարժա-
րաններու յատուկ շարք մը առողջապահական
դասագիրքներ նրատարակեց, որ մեծ գնահատ-
ման արժանացան:

Աստուծէ մին Հայերէնի բարգմանել տարով,
յարգելի բժիշկը Հայոց Միացեալ Ընկերութեանց
նախկեց վերջերս:

Կ Ա Ր Օ Պ Ա Լ Ե Ա Ն



Պ Ա Տ Ո Ւ Ա Կ Ա Լ Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ

Հ Ա Յ Կ . Բ Ա Ր Ե Գ . Ը Ն Գ Ն . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Տարիներէ ի վեր Միտրեան տրամադրած
է իր տաղանդը, բզնի չի զիտցող ազնու-
րեամբ մը:

Իրեն կը պարտինք Միտրեան Բեյեկեան
Որբանոցի յատակագիծը, ինչպէս Գանիբի ամե-
նէն զեղեցիկ շենքերէն մէկ քանին՝ որ բարձր
կը բռնեն նայ տաղանդին վարկը:

Տ. Կարօ Պալեան երկար ատեն Գանիբի
Մասնաժողովի աշխատութեանց ևս մասնակ-
ցած է: Ու երէ նմա գործօն զերով մը ջերե-
ւար, առիկա չարգիլը ինքը որ Միտրեան վա-
րիչներուն քովն ի վեր իր աշխատութեան բա-
ժինը բերէ ամեն անգամ որ նարկ ըլլայ:

Եգիպտոսայ մտաւորականութեան գերա-
զանցապէս զեղարուեստագէտ ներկայացուցիչ-

ներէն մին է Պալեան: Իր ուղղամտութիւնը և
անկեղծութիւնը, որ բերել և ծանածուկ ջեն
զիտեր, այդ պատճառաւ իսկ կրնան քիչ մը
բարդ ցոյց տալ իր նկարագիրը, բայց կարելի
չէ չի նիւնայ իր կորովին վրայ, որ հանրային
իրին հանդէպ ընդվզումի կեցուածներ կուտայ
իրեն կրբան:

Տ. Կարօ Պալեան այս պահուս մամուլին
յանձնած է խիստ շանկեան երկ մը, զոր կը
նուիրէ Հայոց Միացեալ Ընկերութեանց: Բնա-
գաւառի ազգային վարժարաններու շինութեանց
մասին նմուտից ուսումնասիրութիւն մըն է,
առողջապահական և մանկավարժական ար-
դիական ըմբռնումներու վրայ նիւնուած, որ մեծ
պակաս մը լրացնել կրուած է:




Հ Ա Յ Կ Ա Յ Ն Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ . Ը Ն Գ Ն Ա Ն Ո Ւ Է Բ Գ Ո Ր Ծ Ե Ա Ն

Շ Ա Ր - Տ Ե Ր Է Ի Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Ն Ո Ւ Տ Ա Ն Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Խ Մ Բ Ա Ն Կ Ա Ր Ը

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ԱՓՐԻԿԷԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ



Հ. Բ. Ը. Մ. ԱՏԻՍ-ԱՊԱՊՈՅԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ




	Անդամ
1. ԳԱՀԻՐԷ	542
2. ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ	158
3. ԽԱՐԹՈՒՄ	63
4. ԱՏԻՍ-ԱՊԱՊԱ	65
4 ՄԱՍՆԱԺՈՂՈՎ	828




ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ԽԱՐԹՈՒՄԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՈՐ

Անդամ

1. Կ. ՊՈԼԻՍ	541
2. ԷՏԻՐՆԷ	74
3. ՌՕՏՈՍԹՕ	66
4. ԻԶՄԻՐ	441
5. ՏԱՐՏԱՆԵԼ	49
6. ՊՐՈՒՍԱ	69
7. ՊԱՆՏՐՄԱ	42
8. ՊԱՐՏԻԶԱԿ	38
9. ՄԱՆԻՍԱ	29
10. ԱՖԻՈՆ-ԳԱՐԱ-ՀԻՍՍՐ	39
11. ԱԳ-ՇԷՀԻՐ	98
12. ԷՆԿԻՐԻՒԻ	31
13. ԵՈՋՂԱՏ	54
14. ԶՕՐՈՒՄ	11
15. ՄԵՐԶԻՖՈՒՆ	124
16. ՍԱՄՍՈՆ	132
17. ԶՈՄԱՔԼԸ	10
18. ԳԱՅՍԵՐԻ	147
19. ԿԷՄԵՐԷԿ	61
20. ԷՎԷՐԷԿ	21
21. ՖԷՆԷՍԷ	70
22. ՅՈՄԱՐԶԱ	10
23. ԱԶԻԶԻԷ	27
24. ԿԻՐԻՆ	28
25. ՅՈՔԱՏ	92
26. ՍԸՎԱԶ	229
27. ԱՐԱԲԿԻՐ	43
28. ՄԱԼԱԹԻԱ	20
29. ՏՐԱՊԻԶՈՆ	35
30. ԲԱԲԵՐԴ	10
31. ԷՐԶՐՈՒՄ	42
32. ԷՐԶԻՆԿԵԱՆ	113
33. ՎԱՆ	118
34. ՄՈՒՇ	51
35. ԱՌՎԱՐԻՆՋ	16
36. ԽԱՐԲԵՐԴ	134
37. ՊԻՔԼԻՍ	22
38. ՀԱԶԶՕ	20
39. ՀԱԶՐՕ	17
40. ՄՂԵՐԴ	30
41. ՄԻՒՖԱՐՂԻՆ	39
42. ՏԻԱՐՊԷՔԻՐ	111
43. ՏԷՐԻԿ	9
44. ՄԷՐՏԻՆ	15
45. ՌԻՐՖԱ	53
46. ՀԱԼԷՊ	183
47. ԻՍՔԵՆՏԷՐՈՒՆ	22
48. ՄԵՐՍԻՆ	95
49. ԱՏԱՆԱ	85
50. ՅԱՐՍՈՒՍ	16
51. ՍԻՍ	38
52. ՄԱՐԱՇ	19
53. ԱՅՆՅԱՊ	109




54. ՏԷՕՐԹ-ԵՕԼ	55. ՇԱՄ	23
55. ՔԻԼԻՍ	29. ԵՐՈՒՍԱՂԷՄ	18
56. ՊԷՅՐՈՒԹ	28. ՊԱՂՏԱՏ	58
= 59 ՄԱՍՆԱԺՈՂՈՎ		4209



Ա. Մ. Ե. Բ. Կ. Ս. Բ. Մ. Ա. Ս. Ե. Ա. Ժ. Ո. Գ. Ո. Գ. Ե. Ե. Բ. Բ.

	Անդամ		Անդամ
1. Ֆրեզնո	286	19. Շարթեբեր	40
2. Պոսթոն	243	20. Բիսլի	40
3. Բրոզիսեյն	119	21. Պրիչոթեր	38
4. Զիբուչո	105	22. Սան-Ֆրանչեսկո	37
5. Նիի-Եորթ	94	23. Տիբրոթ	34
6. Որսոյր	94	24. Նիի-Պրիբորդ	30
7. Իսթ-Քեյմրիչ	93	25. Շեվերչիլ	29
8. Որեյթ-Յոթոթեյն	92	26. Միսլորո	29
9. Լիլ	82	27. Պիլիչեթեյն	27
10. Երեյ	77	28. Թրոթ	26
11. Ֆանիլեր	60	29. Որթերթանիլ	26
12. Պրիլեյոս-Աթրեյ	58	30. Քիլիլեյն	25
13. Լոս-Անճելոս	53	31. Սելիս-Փիթոսի	23
14. Զելսի	51	32. Սիբիթիլ	23
15. Բոթաթթ-Սելթրիլեյոս	49	33. Սելֆոլ-Միլիպոլիս	22
16. Պրաթթեյն	46	34. Ելիլերս	21
17. Բաթթրեյն	42	35. Սանթիլ-Միլիթի	21
18. Որիթթիլիլ	40	36. Լորեյն	21

	Անդամ		Անդամ
37. Միլեթեր	20	47. Նիի-Պրիթեյն	13
38. Ֆրիթեր	19	48. Ֆրիթեր	12
39. Նիի-Շեվեր	18	49. Լոթիլիլ	10
40. Սելթի	18	50. Լեյթիլիլ	8
41. Պրիլիլ	17	51. Ֆիլիլիլ	—
42. Նեյթիլ	16	52. Սիլիլիլ	—
43. Բոթիլիլ	16	53. Բիլիլ	—
44. Ինթիլիլ	15	54. Լոթիլիլ	—
45. Բիլիլիլ	14		
46. Սիլիլիլ	14		
		54 Մ. Ա. Ս. Ե. Ա. Ժ. Ո. Գ. Ո. Գ. Ե. Ե. Բ. Բ.	2406



Ե. Բ. Ո. Գ. Ո. Գ. Ե. Ե. Բ. Բ. Մ. Ա. Ս. Ե. Ա. Ժ. Ո. Գ. Ո. Գ. Ե. Ե. Բ. Բ.

1. Բարիլ	60	5. Պրիթիլիլ	17	9. Վիլիլ	41
2. Սարիլիլ	18	6. Անվերս	25	10. Շարթեբեր	6
3. Լոթիլիլ	29	7. Ժեյլիլ	12	11. Նիլիլ	45
4. Սանթիլիլ	129	8. Միլիլ	17	11 Մ. Ա. Ս. Ե. Ա. Ժ. Ո. Գ. Ո. Գ. Ե. Ե. Բ. Բ.	399

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ Ի Ն Ա Ռ Թ Ի Ի

Հ. Բ. Բ. Միտրեան Հիմնադիր և Կեդր. Վարչ. Ժողովի ցկեանս Ատենապետ Վ.սեմ. Պօղոս Փաշա Նուպար, որ շուրջ երկու տարիէ ի վեր Եւրոպա կը գտնուէր, Գանիի վերադարձին առ-
քի՛ նամակրական խորհրդապահ ըստ մեծ վայելուց արտայայտութեանց առարկայ եղաւ:

Ինչպէս յայտնի է, Ամենայն Հայոց Վեմ. Կարողիկոսը, իբրև Ազգին Պետր, Ն. Վ.սեմու-
րեան յանձնած ըլլալով Ազգային Պատուիրակութեան Նախագահութիւնը՝ Եւրոպական Պետութեանց

մօտ Հայկական Բարենորոգումներու կեն-
սական հարցը նետապնդելու համար,
Վ.սեմ. Պօղոս Փաշա Նուպար ողջամիտ
հայրենասիրութեամբ և հիանալի անձնուի-
րութեամբ կատարեց իրեն վստահուած
փափուկ և կնճռալից պաշտօնը, և, շնոր-
հի իր բարձր տաղանդին ու քաղաքագի-
տական իմաստութեան, յաջողեցաւ ձեռք
բերել այնպիսի գործնական արդիւնքներ,
որ ամէն տեղ Ն. Վ.սեմութիւնը անխտիր
երախտագիտութեամբ ողջունուեցաւ իբրև
անգուգական գործիչ և ազգային բա-
րերար:

Եզիպտանայ Գաղութրը և Հ. Բ. Բ.
Միտրեան կեդրոնի վարիչներն ու անդամ-
ները, մասնաւորապէս, անբացատրելի նը-
պարտութեամբ և ուրախութեամբ ընդու-
նեցան իրենց մեծանուն համաքաղաքացին
և նախագահը, և ընդհանուր խանդավա-
ռութեան ցոյց մը եղաւ այն պատմական

ընդունելութիւնը, զոր Վ.սեմ. Պօղոս Փաշա Նուպար շատ սիրալի կերպով ըրաւ Եզիպտանայ Պատ-
ուիրակութեան, 8 Մարտ 1914 Կիրակի օրը, Հելիօփօլիսի իր նորակերտ փառաւոր ապարանքին մէջ:
Յիշեալ Պատուիրակութիւնը, բաղկացեալ 52 ժանօր ազգայիններէ, որ կը ներկայացնէր Գաւառ.
Ընդհ. Ժողովը, Բաղար. Ժողովը, Հայ-Կարօլիի և Հայ-Աւետարանական Հասարակութիւնները, Միտ-
րեան Կեդր. Ժողովը և Մասնաժողովը, Բաղար. Կուսակցութիւնները և Համերաշխական Մարմինը,
բոլոր Պաշտօնական Ժողովները, Հոգարարձութիւնները, Կրթական և այլ Բարենպաստակ Ընկերութիւն-
ները, ինչպէս և Գաւառի Գաղութները, բարի գալուստ մտայրելով Ն. Վ.սեմութեան՝ փութաց Ազգին
միանամուռ երախտագիտութեան բարգմանը նախնականայ:

Ստորև կը գնենք այն ուղերձը որ այդ առթիւ մատուցուեցաւ Ն. Վ.սեմութեան:

«Վ.սեմութեան Տէր,

«Յանուն Եզիպտանայ գաղութին, անասեման ուրախութեամբ կ'ողջունենք Ազգային
Գասին անխոնջ և անճնուէր ախոյեանին յազրախան վերադարձը, և նուիրական պատիւ կը սե-
պենք մեր ամենախորին երախտագիտութիւնը յայտնել Ձեր Վ.սեմութեան՝ այն հայրենասէր շան-
քերուն համար զոր շուրջ երկու տարի անբնդիաս ու անվիաս վասնեցիք Հայկական Բարենորո-
գումներու յաջողութեան համար, այնպիսի անսպասու և անդով և անսպասու սաղանդով, որ,
իբրև համագրիներ և համախաղաղացիներ, մեր սիրելի հպարտութեամբ իջը գեղուն:

«Ներեցիք մեզի, Վ.սեմութեան Տէր, արձագանգն ըլլալ միևնոյն ժամանակ համայն
Հայութեան անկեղծ ու միանամուռ գգացումին, և մեր բոլոր հոգիովը գոչել այն շառքի:

«Անցցէ՛ Պօղոս Փաշա Նուպար:»



Յետոյ, Եզիպտանայ Պատուիրակութիւնը, Գանիի Ազգային սրահին մէջ, 12 Ապրիլ 1914
Կիրակի օրը, Պատուով քէլի նրաւիրած ըլլալով Վ.սեմ. Պօղոս Փաշա Նուպարը, այդ առթիւ ևս մե-
ծարանքի խանդավառ արտայայտութիւններ եղան:

Պատուիրակութեան Նախագահը Վ.սեմ. Եագուպ Արքին Փաշա սրտախոյզ ուղերձ մը կար-
դաց, որիկ օրուան նախնաստեղը խորապէս զգածուած՝ ողջագուրեց իր մեծանունու ձերունի բարե-
կամբ, այդ համրոյրին մէջ խորհրդանշելով Հայ-Եղբայրութեան դաշինքը: Երկու մեծ նայերուն աչքերը
արցունքոտած էին: Հոգեցունց տալուորութիւն մը գործեց այդ տեսարանը:

Տ. Բիզանդ Մարաֆի ևս, յանուն Կարգադիր Մասնախումբին, խօսք առնելով, գե-
ղեցիկ ճառ մը արտասանեց, և Եզիպտանայոց կողմէ իբրև յիշատակ մագաղար մը ընծայեց Վ.սեմ.
Պօղոս փաշա Նուպարի, նրաշախի գործ մը, նկար՝ մեծատաղանդ նկարիչ Տ. Ե. Տեմիրճեանի: Այդ
նկարին ընագիր-պատճենը կ'արտագրենք յաջորդ էջին մէջ:

Գեր. Բարգէն Եպիսկ. Կիւլեւերեան, որ հիւրաբար Գանիի կը գտնուէր, Կիլիկիոյ նայու-
րեան երախտագիտութիւնը յայտնեց Ն. Վ.սեմութեան և վերադառնալով Փաշային յայտնած փափա-
քին ու մտայրանքին՝ նաւաստիք տուաւ քէ ազգային միութիւնը այսուհետև պիտի չիկրնայ խան-
գարուի:



Ա Ռ Ա Ք Ե Ղ Պ Է Յ Ն Ո Ւ Պ Ա Ր

Նուպարեան գերդաստանին յետին շառա-
վաղը, Առաքել պէյ Նուպար ժառանգած է իր
մեծ-նոր Նուպար Փաշայի նետաստեղութիւնը և
իր մեծանուն նոր ողջամտութիւնը:

Պօղոս փաշա Նուպար, յանձին իր գա-
ւակներուն՝ Առաքել, Ջարեհ և Վահրամ
պէյերու, ունեցաւ եռանդուն աշխատակիցներ,
որ քէ՛ ազգային դասին նետաստեղութիւնն առ-
քի, և քէ՛ Հ. Բ. Բ. Միտրեան ղեկավարու-
րեան մասին, իրենց անխոնջ նորը կողքին
իվեր, իրենց երիտասարդ կորովին նրալքն ու
նմայրը կը բերեն սիրայօժար:

Առաքել պէյ Նուպար, բարձր կրթութեամբ
դաստիարակուած ազնուական տիպար մըն է:
Իբրև կրթագետ, արդէն ներկայութիւն մըն
է, և Եզիպտական շատ մը շահագործական
ընկերութեանց վարչական նորը ստանձնած է
մեծ ձեռննասութեամբ:

Առաքել պէյ Միտրեան մեծ նաւաստ-
ցեաներէն մին է և այժմէն անոր ապագայ կա-
րեւորագուն գործիչներէն մին ըլլալ կը խոս-
տանայ:



ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ Հ. Բ. Բ. ՄԻՌԻԹԵԱՆ
Խ Ո Ր Շ Ր Դ Ա Կ Ա Ն Կ Ե Դ Ր. Ժ Ո Ղ Ո Վ Ի



ԸՊՎԱՆՆԵՐ ԳՐԱՄԱԳԼՈՒԹԻՆ

ՆԱԽԱԿԱԶ ԸՉՊԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԸՆԹԱՆՔ ԵՒ ԸՆԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՄԵՐՆԵՐ ԶԻՅԱԿԱՆ ԳԼՏԻՆ

ԻՌԱՆ ԵՊԻՏՈՒՄՆԵՐԵՆԻՍՏ
ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ 12 ԱՊՐԵԼ 1914

ԵՊԻՏՈՒՄՆԵՐԵՆԻՍՏ ԵՊԻՏՈՒՄՆԵՐԵՆԻՍՏ ԵՊԻՏՈՒՄՆԵՐԵՆԻՍՏ
ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐ-ՄԱԳԱՂԱԹԸ

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ը 1913 Ի Ն

Թ Ո Ւ Ա Ն Շ Ա Ն Ն Ե Ր Ո Ւ Մ Է Ջ Է Ն

	ԵԳ. ՈՍԿԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱՄԱԳԼՈՒԹԻՆ (անձեռնմխելի)	26183
ՄԱՍՆ ԱԻՈՐ ԳՐԱՄԱԳԼՈՒԹԻՆ (կտակ և նախաճառքի)	14907
ՊԱՀԵՍՏԻ ԳՐԱՄԱԳԼՈՒԹԻՆ (սխարհական նպաստի)	1340
	<u>42430</u>
ԸՆԴՀ. ՀԱՍՈՅԹ (1906-1913)	79542
	<u>79542</u>



ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿ. ԳԱՆԻԷԼԵԱՆ



ԷՏԿԱՐ ՓԱՓԱՋԵԱՆ
ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ
ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

**ԿԵՍԵՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ի ՆՊԱՍ Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ն Ն**

1. Տ. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՆԵԱՆ (Գրկշամ կայքի) Կ. Ո.
Բոլիս № 99116, Օ. Ո. 100 87,75
 2. Տ. ԼԵՒՈՆ ՍԵՄԵՐՉԵԱՆ (Նիս-Եօրր կայքի)
Բոլիս № 1051706, Ա. Ո. 550 536,25
 3. Տ. ՍԱՐԳԻՍ ԹԱԳՈՐԵԱՆ (Էրիթկայ կայքի)
Բոլիս № 1139795, Ֆր. 10000 335,75
 4. Տ. ՍԱՄՈՒԷԼ ԹՓԱԼԵԱՆ (Ինիսոն տը Բարի)
Բոլիս № 146333, Ֆր. 11500 443,61
 5. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿ. ԳԱՆԻԷԼԵԱՆ (Գրկշամ կայքի)
Բոլիս № 206018, Ֆր. 10000 385,75
- ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵԳ. ՈՍԿԻ 1839,11

ԱՍՏԻՃԱՆԱՅՈՅՑ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

1906—1913 ԿՍԱՐԱԾ ՅԱԲԱԶԳԻՄՈՒԹԵԱՆ

ԲԱՂԴԱՏԱՅՈՒՅԱԿՆԵՐ

	ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԹԻԻԸ
1906	815
1907	787
1908	718
1909	2643
1910	3947
1911	6499
1912	8019
1913	8533

	ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԹԻԻԸ
1906	2
1907	3
1908	4
1909	32
1910	61
1911	96
1912	126
1913	142

	ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՅԼՈՒԹԸ
1906	5518
1907	2238
1908	962
1909	1297
1910	5094
1911	4262
1912	2501
1913	4311
ԵԳ. ՈՍԿԻ	26183

ԱՊԱԳԱՆ ՀՈՂԱՏԷՐԻՆՆ Է

Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Մի քանի անդամներ խոսած ենք հողի կարևորությունը վրայ, բայց դարձեալ և միշտ պիտի խօսինք այս մասին, մինչև որ մեր հայրենակիցք լաւ մը համոզուին թէ՛ հողագործութիւնը երկրի մը հարստութեան առաջին սղորն է, հետեւաբար ամէն յառաջգիւմութեան գլխաւոր պայմաններէն մին:

Վերջերս Օսմանեան կառավարութեան ընդունած վարչական բարենորոգումները մեծ այժմէութիւն մը տուած ըլլալով այս խնդրոյն, կուզանք դարձեալ կրկնել մեր խորհուրդները:

Քիչեր թերեւս պէտք եղածին չափ ուշադրութիւն ըրած ըլլան այն խիստ կարևոր արածումութիւններուն զորս կառավարութիւնը շնորհած է եւրոպացի դրամատէրներուն, այն է՝ Անատոլուի մէջ՝ Պաղատաի գծին հետ կապուելիք երկրորդական երկաթուղիներու և նոր նաւահանգիստներու շինութիւնը:

Այս աշխատութիւնները, որ բարենորոգմանց հետ զուգընթացաբար պիտի կատարուին, նոյնքան կարևորութիւն ունին մեզ համար՝ որքան վարչական բարենորոգումները, վասն զի այդ երկաթուղիները և անոնց առաջնորդող խճուղիներն են որ երկրին անտեսական զարգացման մեծ մղում պիտի տան:

Երբ Պաղատաի գիծը աւարտի, որ Եւրոպան թուրքիոյ միացնող գծին շարունակութիւնն է, և որ մտաւոր ապագայի մը մէջ դէպի Ափրիկէ, Հնդկաստան և Չինաստան պիտի երկարէ իւր թեւերը, երբ այս գծին վրայ զան բարգոլին այն երկրորդական խիստ կարևոր գիծերը որոնց շնորհիւ մեր հայրենիքը պիտի կապուի, մէկ կողմէն Միջերկրականի հետ և միւս կողմէն Սեւ ծովու հետ, այն ատեն մեր այսօրուան անշուք և աղքատիկ հայրենիքը՝ այդ հսկայ և ամենակարևոր պողոտային վրայ եղաւ:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՖԷՆԷՍԷԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

կան գիրք մը պիտի գրաւէ, և երկրագունդիս ամէն մասերուն հետ ուղիղ և արագ յա-
րաբերութեան մէջ մտնելով, աշխարհիս ամենէն բարգաւաճ երկիրներէն մին պիտի
ըլայ. հետեւաբար, պէտք չէ զարմանալ, երբ ըսենք թէ, այսօրուան անարժէք, այլ
բարեբեր հողերը ո՛չ թէ տանապատիկ, այլ հարիւրապատիկ, աւելի պիտի արժեն,
և վա՛յ անոր որ ձեռքէ հանած պիտի ըլլայ այսպիսի թանկագին աղբիւր մը:

Ուրիշ կէտ մըն ալ կայ որ կարեւոր է նկատողութեան ատենը: Վերջին պատե-
րագններէն յետոյ թուրքիոյ Ասիական մասին նկատմամբ Եւրոպական կառավարու-
թեանց կարգադրութիւններուն հետեւանք, մանաւանդ երկաթուղիներու, նաւահան-
գիստներու և այլ շինութեանց պատճառաւ, տարակոյս չկայ թէ Եւրոպացիք առիթ
պիտի գտնեն մեր երկիրը խուժելու և ընականաբար զօրաւոր մրցման պիտի բող-
խինք անոնց հետ մեր գործառնութեանց ամէն ճիւղերուն մէջ. բայց եթէ կայ բան մը
որուն մէջ չպիտի կրնան մեզ հետ մրցիլ, այն ալ հողագործութիւնն է, վասն զի այդ
բանը մեր կամքէն կախում ունի. առանց հողի հողագործութիւն չըլլար և ոչ ոք մեզ
չտոկար մեր հողերը անոնց յանձնելու:

Ուստի պէտք է զգուշանալ շրջուցիչ առաջարկութիւններէն և ի մտի ունենալ
որ առանց հողի հայրենիք չըլլար. ջանանք որ մեր հողերը օտար ձեռքերու չանցնին,
զի հակառակ պարագային, մենք մեր երկիրն մէջ՝ Եւրոպացուց գործաւորները կամ
բննակիրները պիտի ըլլանք շատ չանցած . . . :

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՈՒՐՈՍՈՒՄՆԵՐԸ

Միութիւնը նրասարակ նամած է գեղարուեստական նուիրատուներու փոքրապիւ պրակներ:
Այդ պիտուն նուիրատուներուն վրայ մանրանկարած է Միութեան գեղեցիկ խորհրդապատկերը
(տե՛ս էջ 15):

Եւրաբանցիկ նուիրատուի գինն է 1/2, 1 և 5 ֆրանք: Ըստ այնմ պրակները 3 տեսակ են.—
Սեփ I (1/2 ֆր.), Սեփ II (1 ֆր.) և Սեփ III (5 ֆր.): Առաջին երկու Սեփները 20 և 50 նուիրա-
տուն պարունակող պրակներ են, իսկ երրորդը միայն 20:

Միութեան կեդր. ժողովը և Տեղական Մասնաժողովները սոյն նուիրատուները կանխիկ
պիտի ծախեն միմիայն պրակով, բայց նուիրատուները իրաւունք պիտի ունենան իրենց գնած պրա-
կին մէջի նուիրատուները վերջը նետգնեակ նստով ծախելու իրենց բարեկամներուն, ըլլա՛յ նայագգի
քի օտարագգի, որով յաճախ առանց ներքական գոնուրեան դրական բարիք մը ըրած պիտի ըլլան:

Միութեան նպատակին ծառայելու նամար նաճելի և մատչելի եղանակ մը, որ անտարա-
կոյս անտարբեր պիտի չի բոջու Միութեան նագարաւոր անդամները և բարեկամները:

**Գինի Միութեան Կեդրոնատեղին, Տեղական Մասնաժողովներուն և Միու-
թեան Ներկայացուցիչներուն:**

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՈՒՐՈՍՈՒՄՆԵՐԸ



Թ. Գ. Ա. Ր. Ա. Ր. Ա. Ր.
(Դիւանապետ)



Հ. Գ. Բ. Ա. Ն. Ե. Ա. Ն.
(Բարաւոցար)



Լ. Գ. Ռ. Փ. Ա. Լ. Ե. Ա. Ն.
(Հաշուակալ)



Յ. Ա. Ղ. Ա. Պ. Լ. Ա. Ր.
(Գրաշարապետ)

«ՈՍԿԵՄԵՏԵԱՆ» Ի
Տպագրութիւնը աւարտած է
15 Մայիս 1914 ին

«ՈՍԿԵՄԵՏԵԱՆ» Ի
Գինն է { Թղթակագմ = Ֆր. 5
Կաշեկագմ = Ֆր. 15

ԾԱՆ.— Ներկայ «Ոսկեմատեան» ի գիմասոււերները, բացի վերջին մէկ ֆանիկն,
խմբագրուած են Տ. Սուրեն Պարբեւեանի կողմէ:



Ե. Տ Է Մ Ի Բ Ճ Ե Ա Ն (Նկարիչ)



Ա. Ֆ Է Ն Տ Ե Ա Ն (Փորագրիչ)



Ո Ր Ո Ն Յ
Տ Ա Ղ Ա Ն Դ Ի Ն
Կ Ը Պ Ա Ր Տ Ի Ն Ք

Միութեան խորհրդապատկերը եւ լու-
շարձանը, «Միութիւն»ի եւ «Ոսկեմա-
տեան»ի կողքերը եւ Պօղոս փաշա
Նուպարի մագաղաթը:

«Միութիւն»ի եւ «Ոսկեմատեան»ի
բոլոր պատկերները, խմբանկար-
ները եւ զանազան գլխերները:

Հ Ա Ս Ց Է Ն Ե Ր

Թեղ. 3605

Կ Ե Դ Ի Ո Ն Ա Կ Ա Ն Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ,
33, Շարա Մասապիկ, Գ Ա Հ Ի Ը Է

CONSEIL CENTRAL
de l'Union Générale Arménienne
B. P. 1079, LE CAIRE (Egypte)

Ո եւ է դրամ պէս է դրկել մի միայն Միութեան Գանձապետին հրամանին՝
Mr. M. ANTRANIKIAN
Trésorier de l'Union Générale Arménienne
B. P. 1079, LE CAIRE [Egypte]

«Միութիւն» Պաշտօնաթերթ
«MIOUTIOUN»
Organe de l'Union Générale Arménienne
B. P. 1079, LE CAIRE [Egypte]

Ամերիկայի Շրջանակային Ֆանձնաժողով
Mr. V. KURKDJIAN
Secretary of Armenian General Benevolent Union
District Committee of America
141, Milk St. BOSTON, Mass.

Կ. Պոլսի Տեղական Մասնաժողով
Mr. le Dr. N. DAGHAVARIAN
Secrétaire du Conseil Local de l'Union Gén. Arménienne
33, Rue Taxim, PÉRA, CONSTANTINOPLE

2013

« Ազգային գրադարան »

259/



NL0050465

